



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

САРКИС ГРИГОРЯН

ИСЛАМСКОЕ ГОСУДАРСТВО
ОТ ИСТОКОВ ДО
ПРОВОЗГЛАШЕНИЯ ХАЛИФАТА

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

SARGIS GRIGORYAN

ISLAMIC STATE
FROM ROOTS TO THE
PROCLAMATION OF CALIPHATE

ЕРЕВАН YEREVAN
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ
ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Գ 888

Տպագրության է երաշխավորել
ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պ. գ. թ., դոցենտ **Վ. Ս. Պետրոսյան**

Գրախոսներ՝ ԵՊՀ արաբագիտության ամբիոնի
պրոֆեսոր **Դ. Հովհաննիսյան**

պատմական գիտությունների
դոկտոր **Ռ. Կարապետյան**

Գրիգորյան Սարգիս

Գ 888 Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆության
հռչակում/ Ս. Գրիգորյան.- Եր.: ԵՊՀ, 2016.- 236 էջ:

Սույն մենագրությունում փորձ է արվում ուսումնասիրել 2014 թ. հունիսի 29-ին իրեն խալիֆայություն հռչակած «Իսլամական պետություն» իսլամական ծայրահեղ արմատական կառույցի ձևավորման ակունքները, իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում տեսական և գործնական ակտիվությունն ու ջիհադական պայքարում ունեցած դերակատարությունը: Այդ համատեքստում հեղինակը դիտարկում է նաև արդի մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային գործընթացներում «Իսլամական պետության» ներգրավվածության խնդիրը: Գիրքը նախատեսված է արաբագետների, միջազգայնագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2137-0

© Գրիգորյան Ս., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	9
----------------------	----------

ԳԼՈՒԽ I

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՂԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉ

20-ՐԴ ԴԱՐ	15
------------------------	-----------

1.1 Իսլամական արմատականության ակունքները	15
--	----

1.2 Իսլամական արմատական միտումները 20-րդ դարում. Հասան Ալ-Բաննա, Սաիդ Կուտբ, Սաիդ Աբու Ալա Մաուրդուի	19
--	----

1.3 Իսլամական արմատականություն՝ ֆունդամենտալիզմ, սալաֆիականություն, վահաբականություն	27
---	----

ԳԼՈՒԽ II

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ

ՎԵՐՋՈՒՄ	32
----------------------	-----------

2.1 Իսլամական արմատական միտումների աճը 20-րդ դարի վերջում	32
--	----

2.2 Աֆղանական պատերազմ. Աբդալլահ Ազգամի և Ուսամա բեն Լադենի գործունեությունը, «Ալ-Կաիդա»-ի ձևավորումն ու ջիհադական պայքարի Ցանցայնացումը	36
---	----

2.3 9/11 ահաբեկչական գործողություններն ու իսլամական արմատականության մեջ առկա նոր միտումները	43
--	----

ԳԼՈՒԽ III

ԱՐՈՒ ՄՈՒՍԱՐ ԱԼ-ԶԱՐԿԱՌԻՆ ԵՎ ԻՐԱՔՈՒՄ

ԾԱՎԱԼՎԱԾ ԶԻՀԱԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 50

- 3.1 Իրաքում ստեղծված իրավիճակը, Սադամ Հուսեյնի իսլամական քաղաքականությունը 50
- 3.2 Աբու Մուսաբ Ալ-Զարկաուիին որպես նոր առաջնորդ..... 55
- 3.3. 21-րդ դարի առաջին տասնամյակում իսլամական ծայրահեղ արմատական տիրություն նկատվող գաղափարական նոր հենքը. Աբու Բաքր Նաջի, Աբու Մուսաբ Ալ-Մուրի, Մայֆ Ալ-Ադլ..... 63
- 3.4. Իսլամական ծայրահեղ արմատականությունն Իրաքում Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո 72

ԳԼՈՒԽ IV

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆՆ» ՈՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ

ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ 91

- 4.1 Իսլամական ծայրահեղ արմատականության ներկա միտումները 91
- 4.2 Սիրիական հակամարտությունն ու դրանում իսլամական արմատական խմբավորումների ներգրավվածությունը 100

ԳԼՈՒԽ V

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ 106

- 5.1 «Ալ-Կաիդա»-ն սիրիական հակամարտությունում.
«Զափաթ ալ-Նուսրա» 106

5.2 «Իրաքում և Շամում իսլամական պետության» ակտիվ ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը. «Իսլամական պետության» հռչակումը	111
5.3 «Իսլամական պետության» ղեկավար շրջանակը՝ Աբու Բաքր Ալ-Բադդադի, Հաջի Բաքր, Աբու Ումար Ալ-Շիշանի.....	121
5.4 «Իսլամական պետության» կրոնական-գաղափարական, քարոզչական, ֆինանսական, ռազմական-մարտավարական ներուժը	127
5.5 «Իսլամական պետությունը» Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս	139
5.6 Իսլամականներ-Էթնիկ-դավանական փոքրամասնություններ հակասությունների խորացումը Սիրիայում և Իրաքում (հայերի, քրդերի և եզդիների օրինակով)	154
5.7 Ադրբեջանցի իսլամականների ներգրավվածությունը Սիրիայում և Իրաքում իրականացվող ջիհադական պայքարին	173
ՎԵՐՋԱԲԱՆ	181
Резюме	189
Summary	198
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	206
ՀԱՎԵԼՎԱԾ	219

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հետազոտությունում փորձ է արվում ուսումնասիրել իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող և 2014 թ. հունիսին իրեն խալիֆայություն հռչակած «Իսլամական պետություն» կառույցի ձևավորման ակունքները, իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում տեսական և գործնական ակտիվությունը, ջիհադական պայքարում ունեցած դերակատարությունն ու արդի համաշխարհային զարգացումներում դրա ազդեցությունը:

Սկզբնավորվելով դեռևս վաղիսլամական ժամանակաշրջանում՝ իսլամական արմատականությունն իր ուրույն տեղը գտավ 20-րդ դարի մուսուլմանական երկրների սոցիալ-քաղաքական զարգացումներում և նոր մակարդակի հասավ 1970-ական թթ.: 20-րդ դարավերջին այն, թվում է, սպառել էր իրեն, սակայն 2001 թ. սեպտեմբերի 11-ի բռնարարքները և արդի աշխարհաքաղաքական գործընթացները ապացուցում են հակառակը:

2010 թ. վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումներն ու ցույցերը ցնցեցին ոչ միայն մուսուլմանական, այլև ողջ աշխարհը: Այսպես կոչված «Արաբական գարունն» ու մուսուլմանական երկրներում տեղ գտած փոփոխությունները, իրենց յուրահատկություններով հանդերձ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցության արդյունք էին: Դժգոհության ալիքի վրա սկսված զանգվածային շարժումներում ակտիվություն ցուցաբերեցին իսլամական արմա-

տական ուժերը: Դա պայմանավորված էր նրանով, որ հիշյալ ուժերը, լարվածության սկզբում չլինելով առաջամարտիկ, կարողացան օգտագործել մուսուլմանական հասարակություններում վաղուց նշմարվող հասարակական-քաղաքական դժգոհությունները, փողոց դուրս եկած և վարչակարգերի հեռացումը պահանջող երիտասարդների ներուժը՝ դառնալով գալիք փոփոխությունների կարևոր դերակատարներից մեկը: Ընդհատակյա գործունեության հետևանքով իրենց կազմակերպչական, կարգապահական և կառուցվածքային յուրահատկություններով աչքի ընկած իսլամական արմատականները, որոնք մինչ այդ հիմնականում հեռացված էին քաղաքական պայքարից, հաջողությամբ օգտագործեցին ավելացող իսլամական արմատական միտումները: Սոցիալապես անապահով և չքավորության մեջ ապրող մուսուլման բնակչության որոշ հատվածը իր կենսական խնդիրների և ճգնաժամից դուրս գալու լուծումը տեսավ իսլամական գաղափարախոսության մեջ՝ հետհեղափոխական ընտրություններում վստահություն հայտնելով իսլամական արմատական ուժերին, ինչը նկատվեց մի շարք մուսուլմանական երկրներում:

Իսլամական արմատական կազմակերպությունները, մի շարք երկրներից ստանալով ֆինանսական զգալի աջակցություն, հատկապես Պարսից ծոցի արաբական հարուստ միապետություններից, դարձան հակակշիռ մուսուլմանական աշխարհիկ պետությունների համար՝ փորձելով կառուցել իսլամական ավանդույթների վրա հիմնված պետություն:

Ընձեռված նման հնարավորությունից շտապեցին օգտվել նաև իսլամական ծայրահեղ արմատական կառույցները, այդ թվում ծայրահեղ արմատական ճամբարի առաջնագծում հանդես եկող ու ցանցային կառույցի վերածված «ալ-Կաիդա»-ն՝

փորձելով ուղղորդել մուսուլմանական հասարակական շերտերում աճող դժգոհությունները: Իր ճյուղավորումների և հարող կառույցների միջոցով «ալ-Կաիդա»-ն ներգրավվեց մուսուլմանական երկրներում տեղի ունեցող գործընթացների մեջ: «Ալ-Կաիդա»-ի ուշադրության կենտրոնում հայտնվեցին այն երկրները, որտեղ կենտրոնական իշխանությունների անգործության պատճառով երկրի տարբեր հատվածներ դուրս էին մնացել վերահսկողությունից, և նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ջիհադական պայքարի համար:

2011 թ. մարտից Սիրիայում տեղի ունեցող զարգացումները դարասկզբին հայտարարված միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում մեծ ճնշումների ենթարկվող և վերջին տասնամյակում զգալի կորուստներ կրած «ալ-Կաիդա»-ին և դրան հարող կառույցներին հնարավորություն ընձեռեցին վերագտնել իրենց նոր ձևավորվող տարածաշրջանային զարգացումներում, իսկ «Արաբական գարունը» և դրա շարունակական շղթա հանդիսացող սիրիական հակամարտությունը տվեցին այդ հնարավորությունը: 2011 թ. դեկտեմբերին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Այման Ալ-Չաուսհիրին հայտարարեց, որ կառույցն ակտիվորեն մասնակցելու է Սիրիայում ընթացող հակամարտությանը՝ պայքարելով Բաշար Ալ-Ասադի վարչակարգի դեմ: «Ալ-Կաիդա»-ի առաջնորդի ուղերձն անարձագանք չմնաց, և աշխարհի տարբեր անկյուններից իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ջիհադականները սկսեցին շարժվել դեպի Մերձավորարևելյան տարածաշրջան:

Այման Ալ-Չաուսհիրիի ուղերձին արձագանքեց նաև Իրաքում «ալ-Կաիդա»-ի ճյուղավորումը հանդիսացող «Իրաքում իսլամական պետություն» կառույցը, որին հետագայում հաջողվեց

դառնալ իսլամական ծայրահեղ արմատականության առաջամարտիկը՝ ստվերելով «ալ-Գաիդա»-ին:

Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքը հայտնվեց իսլամական ծայրահեղ արմատականների ուշադրության կենտրոնում: Իրաքի սուննիաբնակ հատվածները վերածվեցին շիայական վարչակարգի և արևմտյան կոալիցիոն ուժերի դեմ կազմակերպվող դիմակայության կենտրոնների: Հենց այդ երկրում «ալ-Գաիդա»-ին հարող հորդանանցի Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող կառույցն ակտիվորեն ներգրավվեց ջիհադական պայքարի մեջ: Այս կառույցի վարքագծում նկատելի դարձան «ալ-Գաիդա»-ի ղեկավար օղակի կողմից առաջադրված ջիհադական մարտավարության ուղուց շեղումներ: Նման վարքագիծն արդեն հուշում էր, որ Ալ-Ջարկաուիի կառույցը հեռուն գնացող նպատակներ ուներ՝ առանձնանալ, կազմակերպել սեփական ջիհադական պայքարը և ընդհանրապես հանդես գալ ինքնուրույն:

«Իրաքում իսլամական պետություն» կառույցը 2013 թ. կեսերից ակտիվորեն ներգրավվեց սիրիական հակամարտության մեջ, իսկ արդեն 2014 թ. սկզբից ռազմական խոշոր գործողությունների անցավ Իրաքի սուննիաբնակ հատվածներում:

Մերձավոր Արևելքում ծավալված ջիհադական պայքարում «Իրաքում իսլամական պետություն» կառույցի ակտիվ գործողություններով իսլամականների կողմից վերահսկվող Սիրիայի և Իրաքի զգալի տարածքներում 2014 թ. հունիսի 29-ին հռչակվեց «Իսլամական պետություն», որով նոր էջ բացվեց իսլամական ծայրահեղ արմատականության պատմության մեջ:

Մենագրությունում ուսումնասիրվում են նաև արդի մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներում իսլամական ծայրահեղ արմատական կառույցների և տարածաշրջա-

նի էթնիկ-դավանաբանական փոքրամասնությունների միջև հակամարտությունները:

Մերձավոր Արևելքում նկատվող քրդական գործոնի ակտիվացման համատեքստում ուսումնասիրման են ենթարկվում քրդեր-իսլամականներ բախումները, ինչպես նաև դիտարկվում են հայկական համայնք-իսլամականներ հակասությունները: Մենագրությունում անդրադարձ է կատարվում նաև իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող կովկասցի, այդ թվում ադրբեջանցի ջիհադականների ակտիվ մասնակցությանը ներկայիս Սիրիայի և Իրաքի որոշ տարածքներում ընթացող ջիհադական պայքարին: Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը կարևոր է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական հայեցակարգի տեսանկյունից: Ադրբեջանի Հանրապետությունում նկատվող իսլամական արմատական միտումների ավելացումը որոշակի սպառնալիք կարող է ներկայացնել ՀՀ-ի և ԼՂՀ-ի անվտանգության համար: Ադրբեջանի քաղաքական և հոգևոր շրջանակներից բազմիցս կոչեր են հնչել ադրբեջանական հասարակությունում ավելացող իսլամական ծայրահեղ արմատական միտումներն ընդդեմ հայկական երկու պետությունների ուղղորդելու վերաբերյալ՝ դրանց հաղորդելով հայտայաց, էթնիկ-կրոնական երանգ:

Մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող ռազմական գործողությունները, էթնիկ-դավանական հակամարտությունները, Միջին Արևելքի քրիստոնեական համայնքների հանդեպ ճնշումները կարող են ուղղակի և անուղղակի մարտահրավեր դառնալ ՀՀ անվտանգությանը: Ուստի Սիրիայի և Իրաքի որոշ հատվածներում 2014 թ. հունիսի 29-ին հռչակված «Իսլամական պետության» ուսումնասիրությունը կարևոր ու

արդիական է դառնում ոչ միայն տարածաշրջանային հասարակական-քաղաքական, հասարակական-կրոնական տեղաշարժերի ու գործընթացների, այլ նաև ՀՀ և ԼՂՀ անվտանգության ռիսկերի գնահատման տեսանկյունից:

Մենագրությունում տառադարձությունը կատարվել է Բրիլի արաբերեն տառադարձության համակարգի միջոցով (Տե՛ս http://www.brill.com/downloads/Simple_Arabic_transliteration.pdf), իսկ անունները, անվանումներն և տեղանունները հիշատակելիս նախապատվությունը տրվել է առավելապես արաբական տերմինաբանությանը:

ԳԼՈՒԽ I

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉ 20-ԸՆԴ ԴԱՐ

1.1. Իսլամական արմատականության ակունքները

Իսլամական արմատականության ակունքները սկիզբ են առնում վաղիսլամական ժամանակաշրջանից, որոնց դրսևորումները գտնում ենք մուսուլմանների սուրբ աղբյուրներում՝ Ղուրանում և Սուննայում: Հետագայում իսլամական արմատական գաղափարները մշակվեցին միջնադարյան մուսուլման հեղինակների աշխատություններում:

Միջնադարյան աշխարհաքաղաքական զարգացումները, մասնավորապես մուսուլմանական աշխարհի դեմ խաչակրաց արշավանքները նպաստեցին մուսուլմանների շրջանում իսլամական արմատական գաղափարների և դրանց բաղկացուցիչ մաս կազմող «ջիհադի» ((Al-Ğihād-الجهاد) «ջա-հա-դա» (ğ-h-d) արմատը արաբերենից թարգմանաբար նշանակում է ջանալ, ջանք թափել, դժվարություններ հաղթահարել և այլն) վերաբերյալ մեկնաբանությունների և եզրահանգումների նոր ալիքի ձևավորմանը: Այս գործընթացներում աչքի ընկավ նաև իսլամական

արմատական գաղափարներով հայտնի Իբն Թայմիյան¹: Ըստ նրա՝ եթե իր ղեկավարած պետությունում առաջնորդը չէր կատարում իսլամի պարտականությունները կամ խրախուսում էր դրանց խախտումը, ապա նա անհավատ էր², իսկ «ջիհադը» Ալլահի կողմից ընդունելիին հասնելու և անընդունելին մերժելու հնարավորությունների իրականացումն էր³: Հետագայում նրա հայացքները դարձան ժամանակակից իսլամական արմատականության տեսական հիմքը⁴:

Խաչակրաց արշավանքներից հետո Արևմուտքն աստիճանաբար սկսեց թելադրող և հետագայում նաև գերիշխող դիրքեր զբաղեցնել համաշխարհային զարգացումներում: Իսլամական աշխարհի և Արևմուտքի միջև անհավասար բախումն ակնառու դարձավ 1798 թ., երբ Նապոլեոն Բոնապարտի ֆրանսիական նավատորմն ափ իջավ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում (հատկանշական է, որ Եգիպտոսում իշխող մամուլները փորձեցին ֆրանսիական հսկայական նավատորմի առաջխաղացումը կասեցնել մետաղյա շղթայով, սակայն այն փշրվեց ֆրանսիացիների հրանոթներից արձակված կրակից):

Եվրոպացիների ռազմական, քաղաքական, արդյունաբերական և ֆինանսական հզորությունը մեծ հարված էր մուսուլմանների համար⁵: Ռազմական բաղկացուցիչ գատ՝ մուսուլման-

¹ St' u **Bonner M.**, Jihad in Islamic History, Doctrines and Practice, New Jersey-Princeton University Press, 2006. pp. 142-144:

² **Коровиков А. В.**, Исламский экстремизм в арабских странах, М., 1990, стр. 35-36.

³ ابن تيمية ، مجموع الفتاوى الرياض ، ١٩٦٤-١٩٦١ ، ص ١٩٢-١٩٣ .

⁴ **Левин З. И.** «Фундаментализм», М., 2003, стр. 19-20.

⁵ St' u **Bonner M.**, նշվ. աշխ., էջ 157:

ները Եվրոպացիներին զիջում էին նաև մյուս բոլոր բնագավառներում⁶:

Դեռևս 18-րդ դարի վերջից մուսուլմանական աշխարհում էլ ավելի լայն թափ ստացած արևմտյան ազդեցությունը որոշ չափով մերձավորարևելյան արևմտականների գործողությունների արդյունք էր, որոնք առաջնորդվում էին արևմտյան աշխարհի տեխնիկական, մշակութային և քաղաքական ձեռքբերումների ընդօրինակմամբ: Այդ հանգամանքը տվյալ ժամանակ բացասական տրամադրություններ առաջացրեց մուսուլմանական հասարակության մեջ⁷:

Եվրոպական արժեքների տարածումը, Եվրոպայի ռազմական վերելքը և Օսմանյան կայսրության թուլացումը նպաստեցին մուսուլմանական շրջանակներում բարենորոգչական շարժման ձևավորման համար⁸: Մուսուլմանական բարեփոխության հիմնադիրները (Ջամալ Ալ-Դին Ալ-Աֆղանի, Մուհամմադ Աբդո, Աբդ Ալ-Ռահման Ալ-Քաուաքիբի և այլն) ձևավորեցին դավանաբանական հիմքերի ամրապնդման սկզբունքները, որոնցից էր նոր ժամանակներում մուսուլմանական համայնքի՝ ումմայի վերելքը Ղուրանի և Սուրնայի հիման վրա՝ որպես մարդու և Աստծո միջև հարաբերությունների կարգավորիչներ: Բարեփոխիչները փորձեցին արմատավորել հոգևո-

⁶ **Ал-Джабарти, Абд ар-Рахман**, Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), М., 1962, стр. 58-67.

⁷ **Lewis, B.**, The Middle East. A brief history of the last 2000 years, New York, Scribner, 1996, p. 306.

⁸ Արևմտյան արժեհամակարգի և գաղափարների ազդեցությունը նպաստեց բարենորոգչական շարժման (ալ-Նահդա- النهضة, արաբերենից n-h-d եզրը թարգմանաբար նշանակում է կանգնել, բարձրանալ) ձևավորմանը մուսուլմանական աշխարհում 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած (տե՛ս The Encyclopaedia of Islam, Volume 7. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1993, p. 900):

րից դեպի բանականի, ճակատագրապաշտությունից և կրավորականությունից դեպի մարդու կողմից իր ստեղծագործական հնարավորությունների ընկալումը, որն աստվածային կանխորոշումների շրջանակներում ուներ ընտրության ազատություն:

Այդ ժամանակ մուսուլմանական աշխարհում կրթված երիտասարդությունը մի կողմից ժամանակակից և մասնավորապես արևմտյան պատկերացումների, իսկ մյուս կողմից՝ ավանդական իսլամական սկզբունքների ազդեցության տակ էր: Մուսուլմանական բարեփոխիչները գիտակցում էին, որ բարեփոխման համար իսլամ դավանողների շրջանում անհրաժեշտ է լուսավորության տարածում: Նրանք կրոնի վերակենդանացումը տեսնում էին առաջին հերթին դեպի իսլամական արմատներ և վաղիսլամական արժեքներ վերադարձի քարոզչության մեջ: Խնդրին բարենորոգչական շարժմանը նախորդած շրջանում սրություն հաղորդեց նաև մուսուլմանական երկրների չափավոր արևմտականացման ճանապարհով գնալը: Դա ընթացավ մուսուլմանական հասարակության վերին խավերում, իսկ ստորին խավերը գերծ մնացին դրանից: Արևմտականացումը հարվածեց մուսուլմանական աշխարհի հասարակական հարաբերություններին՝ վերածվելով ներքին լարվածության աղբյուրի⁹: Այս համատեքստում, իսլամի պաշտպանության նկատմամբ մուսուլմանների վերաբերմունքը թույլ հիմքերի վրա էր դրված¹⁰, և այդ ժամանակից սկսած՝ իսլամական գործոնը սկսեց կարևոր տեղ զբաղեցնել մուսուլմանական հասարակական զարգացումներում, որտեղ առաջին պլան մղվեցին ոչ միայն կրոնը և Մուրբ

⁹ Տե՛ս **Lewis B.**, նշվ. աշխ., էջ 299:

¹⁰ Տե՛ս **Cook D.**, *Understanding Jihad*, Los Angeles-University of California Press, 1997, p 94.

գրքի մեկնաբանությունները, այլև համամուսուլմանական պետության՝ իսալիֆայության ստեղծման ու շարիաթի դրույթների ամրագրման գաղափարները:

19-րդ դարի 70-ական թթ. մուսուլմանական աշխարհում ծագած պանիսլամական շարժումն ակտիվ շրջանառության մեջ դրեց իսլամական գաղափարները՝ նպատակ հետապնդելով այդ գաղափարների ներքո միավորել մուսուլմաններին: Մերձավոր և Միջին Ասիայում իսլամական գաղափարների շուրջ համախմբվեցին մուսուլմանական հասարակական լայն զանգվածները, որոնց միջև առկա հակասությունների հաղթահարման հիմք կարող էին ծառայել նաև իսլամական կարգախոսները:

1.2. Իսլամական արմատական միտումները 20-րդ դարում. Հասան Ալ-Բաննա, Սաիդ Կուտբ, Սաիդ Աբու Ալա Մաուդուդի

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև գաղտնի բանակցությունների ընթացքում Սայքս-Պիկոյի համաձայնագրով¹¹ արաբական աշխարհի հետագա ճակատագրի որոշումը, միմյանց միջև արաբական տիրույթների վերաբաժանումն ու Օսմանյան կայսրության փլուզումը արաբական երկրներում սկիզբ դրեցին հակազաղութային պայքարին, ազգային-ազատագրական շարժումներին, որոնց հետևանքով արդեն 20-րդ դարի 40-ական թթ. ի հայտ եկան արաբական անկախ պետությունները: Այս բոլոր գործընթացների արդյունքում, ինչպես նաև Մուստաֆա Քեմալի կողմից

¹¹ **Հովհաննիսյան Ն.,** Արաբական երկրների պատմություն: Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005 թթ./.-Եր.: Զանգակ-97, 2007, էջ 282:

1924 թ. խալիֆայության և սուլթանության ինստիտուտների վերացումով՝ մուսուլմանական աշխարհում սկսեցին ակտիվանալ իսլամական արմատականները, ի հայտ եկան այդ գաղափարախոսությամբ առաջնորդվող կառույցներ, իսկ արմատական գաղափարները մշակման ենթարկվեցին մուսուլմանական արմատականության մի շարք գաղափարախոսների կողմից¹²: Հասարակական-քաղաքական և տնտեսական ոլորտներում մուսուլմանական աշխարհիկ վարչակարգերի անհաջողությունները նպաստեցին իսլամական արմատական գաղափարների տարածմանն ու այդ գաղափարներով տոգորված կառույցների ստեղծմանը, որոնք պատրաստ էին բացահայտ և ոչ բացահայտ պայքար մղել ինչպես տեղի մուսուլման վարչակարգերի դեմ, այնպես էլ, արձագանքելով իսլամական կոչին, պայքարն իրականացնել այլ վայրերում:

Եզիպտոսում Հասան Ալ-Բաննայի կողմից 1928 թ. ստեղծվեց «Մուսուլման եղբայրներ» (Al-Iḥwān al-Muslimūn-الإخوان المسلمون) կազմակերպությունը: Այն զգալի ազդեցություն ուներ եզիպտական հասարակության տարբեր խավերի, հատկապես հետամնաց շրջանակների վրա: «Մուսուլման եղբայրները» բավական լավ կազմակերպված կառույց էր, որի մոլեռանդ անդամները պատրաստ էին ամեն քայլի, այդ թվում նաև՝ ահաբեկչական¹³ գործողությունների¹⁴:

¹² Армянский вопрос. Энциклопедия, Ред. кол. К. С. Худавердян (отв. ред.) и др. - Ер., Гл. ред. Арм. Энциклопедия, 1991, стр. 163.

¹³ ՄԱԿ-ի ԳԱ-ի մշակած «Ահաբեկչություն» տերմինի սահմանումը հետևյալն է՝ «Ահաբեկչությունը բնորոշվում է որպես յուրաքանչյուր անհատի կամ խմբի անօրինական և դիտավորյալ գործողություն, որը հանգեցնում է ցանկացած անհատի մահվան կամ ծանր մարմնական վնասվածքների, պետական և մասնավոր սեփականության ծանր կորուստների, այդ թվում՝ հասարակական և պետական տարածքների, հասարակական տրանսպորտի,

Կազմակերպության շարքերում առավել արմատական թննակտիվացավ 1950-ական թթ., երբ կառույցը դուրս մնաց Եգիպտոսի քաղաքական գործընթացներում ակտիվ դերակատարությունից: Արմատականների քննադատության հիմնական թիրախը իշխանություններն էին, եգիպտական հասարակությունում արմատացած կոռուպցիան և իշխող վարչախմբի կողմից իրականացվող բռնությունները: Արմատականների գործողությունները հիմնականում ուղղված էին պետական կառույցների դեմ՝ նպատակ ունենալով մուսուլմանական երկրներում ռազմական հեղաշրջման միջոցով հասնել իշխանափոխության:

Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ձևավորմամբ խնդիր դրվեց մտավոր շրջանակներում ծավալված իսլամական արմատական գաղափարների քննարկումը տեղա-

ենթակառուցվածքների օբյեկտներին, շրջակա միջավայրին և այլն: Հանգեցնում է վերոհիշյալ օբյեկտներին պատճառած վնասների, որոնք կարող են տնտեսական մեծ վնասի պատճառ դառնալ, երբ նման արարքի նպատակը, իր բնույթից և գործողության համատեքստից ելնելով, կայանում է բնակչությանը վախեցնելը կամ պետությանն ու միջազգային կազմակերպությանը ստիպելն է կատարելու կամ ձեռնպահ մնալու ցանկացած գործողություն իրականացնելուց» (տե՛ս United Nations General Assembly, Report of the Ad Hoc Committee established by General Assembly resolution 51/210 of 17 December 1996, Sixth session (28 January-1 February 2002) Annex II, art. 2.1.): «Ցանկացած քրեական արարք, որը նպատակ ունի կամ միտված է հասարակության, մարդկանց որևէ խմբի կամ որոշակի անձանց շրջանում սարսափ տարածել, չի կարող արդարացվել, անկախ քաղաքական, փիլիսոփայական, գաղափարախոսական, ռասայական, էթնիկ, կրոնական կամ որևէ այլ նկատառումներից, որոնք կարող են օգտագործվել արարքն արդարացնելու համար» (տե՛ս 1994 United Nations Declaration on Measures to Eliminate International Terrorism annex to UN General Assembly resolution 49/60, "Measures to Eliminate International Terrorism", of December 9, 1994, UN Doc. A/Res/60/49):

¹⁴ **Հովհաննիսյան Ն.**, Արաբական երկրների պատմություն, հ. 3, ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2006, էջ 244:

փոխել հասարակական առավել լայն զանգվածների շրջանակ¹⁵: Իր հիմնադրման սկզբնական շրջանում (1928-1936 թթ.) գործողությունների հիմքում դնելով կրոնական-հասարակական ուղղվածություն՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության հետագա ակտիվությունը կրեց քաղաքական բնույթ¹⁶, որին հաջորդեցին 1952 թ. Եգիպտոսում իշխանության եկած «Ազատ սպաների» կողմից կազմակերպության նկատմամբ ճնշումները ու կեղեքումները: Արդյունքում՝ 1950-60-ական թթ. կազմակերպության մի շարք առանցքային դերակատարներ մահապատժի ենթարկվեցին, իսկ բազմաթիվ անդամներ հայտնվեցին բանտում: Ենթարկվելով ճնշումների և ձերբակալությունների՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը ստիպված էր տեղափոխվել և իր կենտրոններն ու կառույցները հիմնել ոչ միայն այլ մուսուլմանական երկրներում, այլև աշխարհի այլ հատվածներում: Այն աստիճանաբար վերածվեց ցանցային կառույցի՝ տարածելով իսլամական արմատական գաղափարները¹⁷: Այս գաղափարներով տոգորված զանգվածն արձագանքեց 20-րդ դարի վերջում իրականացվող իսլամական կոչերին՝ անմասն չմնալով մուսուլմանական աշխարհում ծավալված գործընթացներից, իսկ Եգիպտոսում կազմակերպության ձախողման պատճառների գիտակցումն ու դրանցից դասեր քաղելը հետագայում կանխորոշեցին իսլամական արմատական տար-

¹⁵ St' u The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume VIII, Leiden, E. J. Brill, 1995, p. 907:

¹⁶ St' u The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume III, Leiden, E. J. Brill, 1986, p. 1068:

¹⁷ **Pargeter, A.**, The New Frontiers of Jihad, Radical Islam in Europe, London, I. B. Tauris, 2008, p. 22.

բեր հոսանքներում նույնիսկ այսօր նկատելի հիմնական միտումները¹⁸:

Արմատականների համար գաղափարական հիմք հանդիսացան եգիպտացի Սաիդ Կուտբի աշխատությունները: Նա մշակեց անհավատության մեջ մեղադրանքի և աշխարհից հեռանալու (Al-Takfir wa al-Hiğrah-التكفير و الهجرة) հայեցակարգի սկզբունքները, որոնց էությունն այն էր, որ աշխարհի կողմից որպես իշխանության աղբյուր շարիաթի մերժումը պատճառ էր ջահիլիայի¹⁹ (մինչիսլամական բազմաստվածության ժամանակաշրջանը) համար²⁰: Ըստ Կուտբի՝ ժամանակակից աշխարհը գտնվում էր ջահիլիայի շրջանում, իսկ վերջինը մարդկանց ազատություն տալով, նրանց դարձնում էր մյուսների ստրուկ²¹: Կուտբը մարդկությունը բաժանում էր ոչ թե մուսուլմանների և ոչ մուսուլմանների, այլ մուսուլմանների, որոնք խստագույնս հետևում էին շարիաթի նորմերին, և անհավատների, որոնց միջև չէր կարող փոխզիջում և հաշտեցում լինել:

Ըստ Կուտբի՝ «Դար ալ-Իսլամի»²² մեջ էին մտնում այն պե-

¹⁸ **Кепель Ж.**, Джихад. Экспансия и закат исламизма, М., 2004, стр. 35.

¹⁹ Ջահիլիան մինչև իսլամի տարածումը բնութագրվող հեթանոսության ժամանակաշրջանն է (տե՛ս Ислам. Энциклопедический словарь., М. 1991, стр. 63):

²⁰ **Bouzid A.**, Man, Society, and Knowledge in the Islamist Discourse of Sayyid Qutb, Blacksburg, 1998, p. 99.

²¹ **Sivan E.**, Radical Islam, Medieval Theology and Modern Politics, New Haven, 1985, p.128.

²² «Դար ալ-Իսլամը», ըստ մուսուլմանական ավանդույթի, դիտվում է «Իսլամի տուն», որը ներառում է այն բոլոր երկրները, ուր գործում է իսլամական օրենքը՝ ենթադրելով հավատքի, օրենքի և ուսմայի երաշխավորված անդամների միասնություն: Մուսուլմանական ավանդույթի դասական մեկնաբանությամբ՝ «Դար ալ-Իսլամ»-ից դուրս ամեն ինչ «Դար ալ-Հարբ» է: Այնուամենայնիվ հայտնի են օրինակներ, երբ հարևան երկրների ղեկավարների հետ հաշտության կնքմամբ թույլատրվել է այդ երկրներին տուրք վճա-

տությունները, որոնց օրենքը շարիաթն էր, իսկ մյուսները՝ «Դար ալ-Հարբ»²³ էին: Կուտբը մերժում էր ազգայնականությունն ընդհանրապես, իսկ աշխարհիկ գաղափարախոսությունը դիտում էր որպես կռապաշտություն, որը՝ Ղուրանի դրույթների համաձայն, ամենամեծ մեղքն էր համարվում: Ըստ Կուտբի՝ մուսուլմաննի համար ազգայնականությունն իսլամին և մուսուլմանական համայնքին պատկանելու մեջ էր, իսկ բոլոր սոցիալական խնդիրները լուծելի էին միայն Ղուրանի հիման վրա²⁴: Սոցիալիզմը, կոմունիզմը և կապիտալիզմը նա համարում էր ջահիլիայի բարձրագույն մակարդակներ, քանի որ այդ աշխարհայացքները հիմնվում էին հոգևորի նկատմամբ նյութականի գերակայության վրա, իսկ իսլամը հիմնվում էր բոլոր հոգևոր, բարոյական, հասարակական և տնտեսական տարրերի միասնության վրա²⁵: Ըստ Կուտբի՝ երբ ճանապարհին կային խոչընդոտներ, և հայտնվում էին նյութական ներգործության գոր-

բելու դիմաց պահպանել ներքին ինքնավարությունը, որը դիտվել է մուսուլմանական պետության գերիշխանության պաշտոնական ճանաչում (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 127):

²³ «Դար ալ-Հարբ»-ը մուսուլմանական ավանդույթը դիտում է որպես պատերազմի տարածք: Ղուրանում աշխարհի բաժանման, պատերազմի տարածքի մասին անդրադարձներ չկան, այն հանդիպում է հադիսներում, որտեղ «Դար ալ-Հարբ»-ի մասին հիշատակումները վերագրվում են Մուհամմադի կյանքի մադինայական շրջանին: Ամեն դեպքում դասական պրակտիկ բնորոշմամբ «Դար ալ-Հարբ»-ը մուսուլմանական տարածքներին հարող երկրներն են, որոնց նվաճման սպառնալիքի տակ այդ երկրների առաջնորդներին առաջարկվում էր ընդունել իսլամ (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 126):

²⁴ سيد قطب، التصوير الفني في القرآن، دار المغارف، ١١١٩، كورنيش النيل-القاهرة ج. م. خ. ص ٨.

²⁵ Отечественные записки, Модернисты и фундаменталисты. N 5, 2003, стр. 304-306.

ծոններ, ապա անհրաժեշտություն էր առաջանում դրանք ոչնչացնել առաջին հերթին ուժով²⁶: Կուտբի «ջիհադի» գաղափարախոսությունը անցումային բնույթ ուներ, սկսվում էր գաղափարական պայքարից և ավարտվում ռազմական բախմամբ՝ մարդուն ազատելով ստրկությունից²⁷: Ըստ Կուտբի՝ եթե բռնի ուժի միջոցով տարվող պայքարը չէր հասունացել, ապա պետք է իրականացվեր «ջիհադի» հետևյալ տեսակը. նախ պետք է մուսուլման առաջամարտիկները համախմբվեին մեկ միասնական առաջնորդի հովանու ներքո, ապա սկսեին գաղափարական պայքար ջահիլիայի վարչախումբը տապալելու համար²⁸: Կուտբը նշում էր նաև անհավատների կողմից գլխահարկի (ջիզիա- (Gizyah-جزية)²⁹ վճարման սկզբունքի մասին՝ շեշտելով, որ ջիզիայի վճարման դեպքում անհավատը չէր ընդդիմանում իսլամին ու դրա կողմից առաջ քաշված սկզբունքներին³⁰:

Արմատական գաղափարների տարածման գործում իր ակտիվությամբ Հնդկաստանում աչքի ընկավ Սաիդ Աբուլ Ալա Մաուդուդին, ով 1948 թ. հիմնադրեց «Ալ-Ջամաա ալ-Իսլամիա» (Al-Ġamāʿat al-Islāmīyat, الجماعة الإسلامية) կազմակերպությունը: Մաուդուդին, քննադատելով արևմտյան ազդեցությունը նոր սերնդի վրա, նշում էր, որ վերջինիս համար անհնարին էին դարձել անկախ միտքը և ինքնուրույն դիտարկումները, քանի որ

²⁶ سيد قطب ، معالم في الطريق ، ص ١٨ .

(տե՛ս <http://www.twhed.com/books/sayed-kttp/m3alm.pdf>)

²⁷ Նույն տեղում, էջ 40. (<http://www.twhed.com/books/sayed-kttp/m3alm.pdf>).

²⁸ St' u **Bonney R.**, նշվ. աշխ., էջեր 216-223:

²⁹ Զիզիան ավանդական մուսուլմանական իրավունքի համաձայն, մուսուլմանական երկրում հարկվող գլխահարկն է ոչ մուսուլմաններից (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 559):

³⁰ **Qutb S.**, In the Shade of the Qur'an, vol. 8, Surah 9 (Leicestershire, UK. 2003) pp. 120-123.

դրանք ճնշվել էին արևմտյան գերակայության կողմից: Ըստ Մաուդուդիի՝ այս ճգնաժամից դուրս գալու համար պետք էր իսլամականացնել հասարակությունը, բայց, ի տարբերություն Սաիդ Կուտբի, որն առաջարկում էր իսլամականացումը սկսել ներքևից, Մաուդուդին կոչ էր անում այն իրականացնել հասարակության վերին շերտերից³¹:

Հասան Ալ-Բաննայի, Կուտբի և Մաուդուդիի գաղափարները տարածվեցին մուսուլմանական աշխարհում և շատ հայտնի (արմատական և չափավոր) իսլամական խմբավորումների առաջնորդներ, տոգորվելով նրանց կողմից առաջ քաշված իսլամի, իսլամական հեղափոխության և «ջիհադի» գաղափարներով, կոչ էին անում գնալ դեպի իսլամական ավանդույթները՝ դիմակայելու Արևմուտքի մարտահրավերներին: Արևմուտքը բնորոշվեց որպես Արևելքում քաղաքական, տնտեսական և կրոնամշակութային շահեր ունեցող թշնամի, հետևաբար պետք էր «ջիհադ» իրականացնել այն մուսուլմանական վարչախմբերի դեմ, որոնք պաշտպանում էին Արևմուտքին³²:

³¹ **Парффи А.**, Extreme Islam, Аллах не любит Америку. Feral House 2001, стр. 65.

³² **Esposito J.L.**, Unholy War. Terror in the Name of Islam, Oxford, Oxford University Press, 2002, pp. 51-60.

1.3. Իսլամական արմատականություն՝ ֆունդամենտալիզմ, սալաֆիականություն, վահաբականություն

*Իսլամական արմատականություն (ֆունդամենտալիզմ)*³³. այս հասկացության գիտական հիմնավորման և նրա զանազան դրսևորումների դասակարգման վերջնական տարբերակում դեռևս չկա: Հետազոտությունների ընդհանրական եզրակացու-

³³ Ֆունդամենտալիզմ հասկացությունը ձևավորվել է ԱՄՆ-ում քրիստոնեության բողոքական ուղղության մեջ: 1895 թ. Նիագարայում տեղի ունեցած Աստվածաշնչյան կոնֆերանսում հոգևորականների մի խումբ առաջ քաշեց 5 հիմնական «ֆունդամենտալ» սկզբունք: Այդ սկզբունքները 1910 թ. հաստատեց Պրեսբիտերական գլխավոր ասամբլեան, որն ընդունեցին մի շարք այլ պահպանողական կրոնական կազմակերպություններ: 1909-1915 թթ. Կալիֆորնիայում Ռ. Թորրին և Լ. Դիկսոնը տպագրեցին 12 հատորից բաղկացած հոդվածների ժողովածու՝ «The Fundamentals» անվամբ, որտեղ մեկնաբանվում էին այդ թեզերը: 1919 թ. այդ սկզբունքները առավել ընկալելի և ըմբռնելի դարձնելու համար 12 հատորը հավաքեցին 4 հատորի մեջ և հիմնականում անվճար շարունակեցին դրա տարածումն ամբողջ ԱՄՆ-ով և աշխարհով մեկ: Բողոքականության մտածողության տրամաբանությունը, որը հիմնվել էր բողոքականության հիմնադիրներ Ս. Լյութերի, Ժ. Կալվինի, Ջ. Նոկսի և մյուսների կողմից, կառուցվել է դեպի առաջնաստեղծ վիճակ քրիստոնեական հավատքի հիմքերի վերադարձի, քրիստոնեությանը խորթ մշակութային և քաղաքական սկզբունքներից հրաժարվելու, մոդեռնիստական ներգործություններից ազատվելու, Սուրբ Գրքի բառացի ընկալման շուրջ՝ ընթանալով դեպի անապական ուղղափառություն, որպես հավատքի սկզբնաղբյուր կամ դավանանքի հիմք: 1919 թ. Ֆիլադելֆիայում հիմնվեց համաշխարհային քրիստոնեական ֆունդամենտալիստական ասոցիացիան, որի անդամները մեղադրեցին «մոդեռնիստներին» և «լիբերալներին» քրիստոնեական արժեքների և Ավետարանի նսեմացման մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան ֆունդամենտալիստները իրենք իրենց կոչեցին ավետարանչականներ, իսկ ֆունդամենտալիզմ տերմինը մնաց շրջանառության մեջ և իր նեղ իմաստով մեկնաբանվում է որպես աստվածաբանական շարժում, որը նպատակաուղղված է պահպանելու այն ամենը, ինչն իրենից ներկայացնում է քրիստոնեության հիմք (ֆունդամենտ) (տե՛ս **Филатов С. Б.**, «Фундаментализм». Возвращение к основам, Протестантский фундаментализм, М., 2003, стр. 109-126):

թյունն այն է, որ իսլամում արմատականությունը հասկացվում է որպես քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար իսլամական զանազան խմբավորումների կողմից պայքարի այնպիսի մեթոդների կիրառում, որոնք միջազգային իրավունքի տեսակետից դիտվում են օրենքի սահմաններից դուրս³⁴։ Սակայն դրան զուգահեռ պետք է փաստել, որ կան իսլամական արմատականությանն ու վերջինիս հետ կապված երևույթների գնահատման և մեկնաբանման յուրահատկություններ։

*Սալաֆիականություն*³⁵։ այս տերմինով կարելի է բնորոշել մուսուլմանական հոսանքների և աստվածաբանների այն ընդհանուր ուղղությունը, որն իսլամի գոյության տարբեր ժամանակահատվածներում հանդես է եկել նոր ձևավորված մուսուլմանական ուսմայում ապրող մուսուլմանների կենցաղով և դավանական կենսակերպով առաջնորդվելու կոչերով։ Այս ուղղությունը հանդես է գալիս իսլամական ուսմունքում և մուսուլմանի ամենօրյա կյանքում որևէ նորարարության դեմ՝ սկսած Ղուրանի խորհրդանշական-այլաբանական մեկնաբանությունից մինչև Արևմուտքի հետ հարաբերությունների արդյունքում իսլամում հայտնված զանազան նորարարությունները։ Այսպիսով՝ իսլամում սալաֆիական զանազան հոսանքները դավանական

³⁴ Исламский экстремизм и фундаментализм как угроза национальной безопасности России, Научный отчет Российского института стратегических исследований / Под. Общ. ред. Е. М. Кожокина, М., 1995, стр. 14.

³⁵ Սալաֆիականությունը (ալ-Սալաֆ ալ-Սալիհուն-السلف الصالحون) իսլամական բարեփոխության նոր հոսանք էր, որը ձևավորվեց Եգիպտոսում 19-րդ դարի վերջում, և որի նպատակն էր իսլամի վերադարձը դեպի Մուհամմադ մարգարեի, առաջին չորս խալիֆների և ուղղափառ նախնիների ժամանակաշրջանի իսլամական ավանդույթները (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume VIII, Leiden, E. J. Brill, 1995, p. 900):

խնդիրների լուծման հարցում առաջնորդվում են «Ահլ ալ-Սալաֆի» (‘Ahl al-Salaf-أهل السلف) փորձով³⁶: Սալաֆիականությունն ընկած էր նաև 18-րդ դարում Արաբական թերակղզում ծագած վահաբական շարժման գաղափարական հիմքում:

*Վահաբականություն*³⁷. 18-րդ դարի կեսին Արաբական թերակղզում Մուհիամադ իբն Աբդ Ալ-Վահաբի կողմից հիմնված վահաբական շարժումը նույնպես կարելի է դիտել ավանդական իսլամի այլընտրանք՝ իսլամի մաքրագերծման տրամադրությունների համատեքստում: Ձևավորվելով որպես կրոնի մաքրագերծմանն ուղղված հոսանք՝ վահաբականությունը հետագայում վերածվեց մուսուլմանական աշխարհի գաղափարական-քաղաքական ազդեցիկ գործոնի, որի հիմքում հաճախ դրվում էր առավել ծայրահեղ տրամադրություններ: Աստիճանաբար մուսուլմանական հասարակական գիտակցության մեջ ներդրվում էր նաև այն ըմբռնումը, որ շատ արմատական մուսուլմանական հոսանքներ վահաբականության հետ ոչ մի առնչություն չունեն³⁸:

Վերոշարադրյալի համատեքստում տարբերություն է դրվում մի կողմից արմատականների, որոնք կոչ են անում վերադառնալ դեպի իսլամական ավանդույթները, իսկ մյուս կողմից՝ սալաֆիականների միջև, որոնց՝ Ղուրանի տառացի մեկնաբանությունը հանգեցնում է բռնի գործողությունների: Այդ առումով,

³⁶ **Makdisi, G.** The Conflict of Traditionalism and Modernism in the Muslim Middle East, Texas, 1966, p. 56.

³⁷ Վահաբականություն՝ 18-րդ դարի կեսին Արաբական թերակղզում հիմնադրված կրոնական շարժում (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume XI, Leiden, E. J. Brill, 2002, p. 39):

³⁸ **Мюриэль Э.**, Ваххабизм и фундаментализм: термины-«страшилки». Центральная Азия и Кавказ, Стокгольм, 2000. N I (7)„, стр. 133.

վերջիններս կարող են բաժանվել չափավորների և ծայրահեղականների³⁹: Այս սկզբունքից ելնելով՝ այսուհետ աշխատության հետագա հատվածներում իսլամական ծայրահեղ արմատականություն, գաղափարախոսություն կամ իսլամական ծայրահեղ արմատական կառույցներ ասելով հասկանալու ենք այն իսլամական սալաֆիական ուղղությունները, որոնք փորձում են բռնության ճանապարհով հասնել իրենց նպատակների իրականացմանը՝ մշակելով սեփական գաղափարական ուղենիշների հիմնավորման համար յուրահատուկ մարտավարական և ռազմավարական հնարքներ՝ այն ներկայացնելով դեպի «Ահլ ալ-Սալաֆի» ժամանակաշրջանը տանող միակ ճշմարիտ և արդարացված ճանապարհ յուրաքանչյուր իրական մուսուլմանի համար:

Իսլամական արմատական ուղղությունների 3 ընդհանրական բնորոշումներն են.

1. Բոլոր իսլամական արմատական հոսանքները բռնի ուժի կիրառման միջոցով են ընդունում Աստծո ճանապարհին տարվող պայքարը:
2. Պայքարը ընթանում է անհավատների և հավատորազնների դեմ, ինչպես ոչ մուսուլմանների, այնպես էլ իսլամական արմատական գաղափարները չկիսող մուսուլմանների դեմ:
3. Պայքարի նպատակը մուսուլմանական ումմայի հաստատումն է:

Այս 3 բաղկացուցիչների համատեքստում իսլամական ծայրահեղ արմատական կառույց բնորոշվող «ալ-Կաիդա» խմբա-

³⁹ **Taheri A.**, Holy Terror. The Inside Story of Islamic Terrorism. Sphere Books Ltd, London, 1989, pp. 12-13.

վորման գաղափարախոսների կողմից 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում առաջ քաշվեցին իսլամական ծայրահեղ արմատական նոր մոտեցումներ, որոնք շատ իսլամական արմատական խմբավորումների համար դարձան նոր ուղենիշների և մարտավարության հիմք արդի ջիհադական պայքարում:

ԳԼՈՒԽ II

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 20-ԴԴ ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ

2.1. Իսլամական արմատական միտումների աճը 20-րդ դարի վերջում

20-րդ դարի վերջին քառորդում իսլամական արմատական գաղափարների տարածման վրա մեծ ազդեցություն ունեցան երկու գործոն. դա 1979 թ. Իրանում Ռուհոլլահ Մուսավի Խոմենիի գլխավորությամբ տեղի ունեցած իսլամական հեղափոխությունն էր և 1970-ական թթ. կեսերից արաբական երկրների կողմից արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ նավթային էմիրատների կիրառումը, որը պատճառ դարձավ նավթի գների բարձրացման: Դրամական մեծ հոսքերը հնարավորություն տվեցին նավթային հսկայական պաշարներ ունեցող Սաուդյան Արաբիային մեծ գումարներ ներդնել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս իսլամի վահաբական գաղափարների տարածման համար:

Չնայած սուննիների և շիաների միջև առկա հակասություններին՝ շիայական Իրանում տեղի ունեցած զարգացումները մեծ ոգևորություն առաջացրին ամբողջ մուսուլմանական աշխարհում, այդ թվում՝ սուննիների շրջանում: Խոմենիի կողմից իսլամական հեղափոխության արտահանման քաղաքականության փորձ արվեց, ինչն անհանգստացրեց ԱՄՆ-ին և մի

շարք մուսուլմանական երկրների, հատկապես՝ Սաուդյան Արաբիային, որը քայլեր ձեռնարկեց իր ազդեցությունը մուսուլմանական երկրներում ուժեղացնելու ուղղությամբ: Այս իրողությունը ստիպեց Սաուդյան Արաբիային, որի համար իսլամական Իրանը դարձել էր տարածաշրջանային գլխավոր հակառակորդ, ավելի մեծ գումարներ ներդնել սեփական գաղափարների տարածման ուղղությամբ⁴⁰:

Աշխարհում մուսուլմանների մեծ թվաքանակը, մուսուլմանական երկրներում դեմոգրաֆիական աճի, ուրբանիզացման և կրթության տեմպերը, մուսուլմանական երիտասարդ հասարակությունը և այլ հանգամանքներ նպաստեցին մուսուլմանական հասարակական-քաղաքական շերտերում ակտիվ երիտասարդ սերնդի ի հայտ գալուն: Վերջինիս գործունեության տիրույթը 1970-ական թթ. մուսուլմանական որոշ երկրների երիտասարդական շերտերն էին, որոնք, հիասթափված մուսուլմանական ազգայնական պետությունների ձախողումներից, սկսեցին տարածվել մուսուլմանական աշխարհում՝ ստանալով սաուդյան-վահաբական շրջանակների ֆինանսական և գաղափարական աջակցությունը, որը հատկապես մեծ թափ ստացավ 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմից և համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո:

Իսլամական արմատականության ակտիվացման պատճառներից էին նաև միջազգային հարաբերություններում երկակի ստանդարտների կիրառումը, ինչպես նաև զարգացող, հատկապես մուսուլմանական երկրներում առկա հասարակական-տնտեսական չլուծված խնդիրները: Իրերի նման դասավորու-

⁴⁰ **Rekness, E.**, The Terrorist Connection. Iran, the Islamic Jihad and HAMAS, Justice, May 1995, Vol.5, <http://www.fas.org/irp/world/para/docs/950500.htm>. (Մուտք, մարտի 11, 2013 թ.):

թյան համատեքստում իսլամական ծայրահեղ արմատականությունը որոշ դեպքերում հանդես էր գալիս որպես համաշխարհային քաղաքականության մեջ հավասարազոր դերակատարում ունենալու համար ուրույն պայքարի և արևմտյան երկրների գերակա դիրքերի դեմ հանդես գալու հնարավորություն, որպես հասարակական-մշակութային ինքնության պահպանման միջոց, ինչպես նաև իսլամական պետություն կառուցելու համար գործողությունների շղթա: Այս առումով իսլամական ծայրահեղ արմատական կառույցները քաղաքական նպատակների իրականացման համար կրոնը ներկայացնում էին որպես գաղափարական գործիք, որն արդարացնում էր բռնությունն իր տարբեր դրսևորումներով: Աշխարհիկ և դեպի արևմտյան արժեքները կողմնորոշված արաբական կառավարություններից իսլամականների դժգոհության ավելացումը նոր ազդակ հաղորդեց իշխանության համար պայքարում բռնության՝ որպես օրինական քաղաքական միջոցի օգտագործմանը: Ջիհադի հայեցակարգը զգալի ազդեցություն ունեցավ ծայրահեղ իսլամական արմատական շարժումներում վերջիններիս գործունեության հիմնական սկզբունքների և մեթոդների հիմնավորման համար: Նրանց կողմից քարոզվող ջիհադի հայեցակարգի առանցքային հիմնադրությոթ անհավատների դեմ բռնության թույլատրելիության վերաբերյալ Ղուրանի դրույթների սուբյեկտիվ մեկնաբանությունն էր: Հայեցակարգի էությունը նաև ողջ մուսուլմանական համայնքի ջանքերով իսլամական պետություն ստեղծելու և մի շարք տարածքների վրա իսլամական իշխանություն տարածելու տեսլականն էր⁴¹:

⁴¹ **Peters, R.**, Jihad in Classical and Modern Islam, Markus Weiner Publishers, Princeton, 1996, p. 3.

20-րդ դարի կեսին ի հայտ եկած ոչ իշխանական իսլամական ծայրահեղ արմատական հոսանքների մեծ մասը զուրկ էր քաղաքական երանգավորումից և իր առաջ դնում էր կրոնական ու սոցիալական խնդիրներ: Սակայն, աստիճանաբար ավելացնելով համախոհների թվաքանակը, վերջիններս սկսեցին կատարել միջնորդի դեր պետության և հասարակական լայն զանգվածների միջև: Պետությունները փորձում էին վերահսկել և իրենց կողմը գրավել այն միջնորդներին, որոնք բաց էին համագործակցության համար, և փորձում էին ճնշել այն միջնորդ կառույցներին, որոնք թշնամաբար էին տրամադրված կամ անտարբեր էին պետական իշխանության նկատմամբ⁴²:

Իսլամական գործոնի ակտիվացումն իրականացվեց երկբևեռ համակարգի պայմաններում: Այս համատեքստում 20-րդ դարի վերջին քառորդում իսլամական գաղափարական տարածությունում միասնականության բացակայությունը, այստեղ առկա տարաբնույթ հակասությունները հանգեցրին նրան, որ համաշխարհային երկու բևեռները՝ և՛ ԽՍՀՄ-ը, և՛ ԱՄՆ-ը, փորձում էին օգտագործել իսլամական աշխարհի երկրներն ու մուսուլմանական կազմակերպությունները՝ իրենց սեփական շահերին ծառայեցնելու համար:

Մուսուլմանական աշխարհում առաջացավ արմատականների քաղաքականապես ակտիվ շերտ, որը, սեփական երկրներում իրավիճակը փոխելու անհնարինության պատճառով, սկսեց հնարավորություններ փնտրել այլ երկրներում բռնի ուժի միջոցով իրական իսլամական պետություն ստեղծելու համար:

Ճյուղավորվող և ցանցային բնույթ ստացող իսլամական ծայրահեղ արմատական ներուժը չէր կարող անմասն մնալ մու-

⁴² Տե՛ս **Кепель Ж.**, նշվ. աշխ., էջեր 50-51:

սուլմանական աշխարհի մեկ այլ հատվածում՝ Աֆղանստանում, 1970-ական թթ. վերջում տեղի ունեցած զարգացումներից: Աֆղանստանի հեռու գտնվելը արաբական ավտորիտար երկրներից, որտեղ իսլամականներն անընդհատ ճնշումների էին ենթարկվում, ինչպես նաև մի շարք աշխարհաքաղաքական գործընթացներ (հատկապես գերտերությունների շահերի բախումը Աֆղանստանում) հնարավորություն ստեղծեցին մուսուլման արմատականների համար ակտիվ ներգրավվելու աֆղանական պատերազմում:

2.2. Աֆղանական պատերազմ. Աբդալլահ Ազզամի և Ուսամա բեն Լադենի գործունեությունը, «ալ-Կաիդա»-ի ձևավորումն ու ջիհադական պայքարի ցանցայնացումը

1979 թ. դեկտեմբերին խորհրդային բանակի ստորաբաժանումները մտան Աֆղանստան՝ աջակցելու խորհրդային կողմնորոշում ունեցող ուժերին: Խորհրդային զորքերի մուտքն Աֆղանստան դարձավ այն շարժիչ ուժը, որը մուսուլմանական երկրներին դրդեց միասնական դիրքորոշման, և անտարբեր չթողեց մուսուլմանական հասարակական լայն շրջանակներին համամուսուլմանական աֆղանական հիմնախնդրի վերաբերյալ միասնական տեսակետ ունենալու հարցում: Խորհրդային զորքերի՝ Աֆղանստան ներխուժման դեմ քարոզչություն իրականացնելու և մուսուլմանական հասարակական շրջանակներում խորհրդային իշխանությունների նման վարքագծի հանդեպ դժգոհություններ սերմանելու համար մուսուլմանական վարչակարգերը չէին կարող հաշվի չառնել աստիճանաբար ավելացող իսլամական արմատական և ծայրահեղ արմատական միտումները: ԽՍՀՄ հանդեպ ձևավորված հակակրանքն ուղ-

դորդելու և գործնական քայլերի վերածելու համար մուսուլմանական երկրները փորձեցին օգտվել աճող իսլամական արմատական միտումներից և դրանց գաղափարական հենքը հանդիսացող անհատների ծառայություններից՝ դրանք ուղղորդելով խորհրդային գորքերի դեմ պայքարին: Նման կերպ մուսուլմանական վարչակարգերը փորձում էին նաև ձերբազատվել անվստահելի ուժերից ու դրանց ակունքներում կանգնած վտանգավոր անհատներից, որոնք ի վիճակի էին ազդելու այդ երկրներում հակաիշխանական տրամադրությունների վրա:

Մրան զուգահեռ մի շարք տարածաշրջանային և արևմտյան երկրներ, այդ թվում ԱՄՆ-ը, սկսեցին մասնակցել կազմակերպվելիք հակախորհրդային պայքարին՝ աստիճանաբար ավելացնելով իրենց ֆինանսական, քարոզչական և ռազմական օժանդակությունը: Քաղաքացիական պատերազմի մեջ գտնվող Աֆղանստանում շատերը չէին կարող համակերպվել այն մտքի հետ, որ իրենց երկրի ներքաղաքական իրավիճակը գտնվելու էր խորհրդային ուժերի ազդեցության ներքո, և վերջինների դեմ ինչպես Աֆղանստանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս սկսվեց ջիհադական պայքարի կոչը (Da‘ua-عۃ⁴³), որը կազմակերպվեց և իրականացվեց նաև իսլամական կազմակերպությունների միջոցով: Այն լրացվում էր ԱՄՆ կողմից եկող ռազմական օգնությամբ և պակիստանյան կազմակերպությունների հետ համագործակցությամբ, որոնք զբաղվում էին ԽՍՀՄ դեմ պայքարող ուժերին տրամադրվող օգնության բաշխմամբ:

⁴³ Իսլամական ավանդույթում նշանակում է՝ կոչ կամ հրավեր: Ահեդ դատաստանի օրը կոչ է ուղղվելու մահացածներին դուրս գալ գերեզմաններից (տե՛ս The Encyclopaedia of Islam, Volume II. Leiden, E. J. Brill, The Netherlands, 1991, p. 168.):

Զիհադի քարոզն Աֆղանստանում և դրա իրականացումը, մեծ հաշվով, ոչ թե մուսուլմանական երկրների խնդիրներն էին, առավել ևս, որ դրանց մի մասը չէր կարող հանդես գալ ԽՍՀՄ դեմ, այլ վերագրային իսլամական կառույցների, որոնք ձևավորվեցին որոշ ուլեմների շուրջ և կապված էին միմյանց հետ արդեն վաղուց գոյություն ունեցող կազմակերպությունների միջոցով (Իսլամական կոնֆերանս կազմակերպություն (Munathama al-T'āun al-Īslāmī-منظمة التعاون الإسلامي), Իսլամական աշխարհի լիգա (Rābiṭa al-ālam al-Īslāmī-رابطة العالم الإسلامي) և այլն): Այս կազմակերպությունների ակտիվ գործունեությունը մուսուլմանական երկրներում հնարավորություն տվեց իսլամական վերագրային ֆինանսական կառույցներին ակտիվացնել սեփական ներդրումները մուսուլմանական աշխարհում, այդ թվում՝ Աֆղանստանում տեղ գտած զարգացումներում:

Մինչև 1980-ական թթ. կեսերը Աֆղանստանում խորհրդային զորքերի դեմ կռվող մուջահիդներին տրվող աջակցությունը արտահայտվում էր ֆինանսական օժանդակությամբ, ամերիկյան ռազմական օգնությամբ և այդ օգնությունը բաշխելու պակիստանյան հատուկ ծառայությունների գործունեությամբ: Արդեն 1984-1985 թթ. մուջահիդների շրջանում սկսեց անընդհատ ավելանալ օտարերկրյա իսլամականների (հիմնականում արաբ) թվաքանակը՝ սկզբում Փեշավարի շրջանում, այնուհետև՝ հենց աֆղանական տարածքներում⁴⁴: Մի շարք մուսուլմանական երկրներ համախմբվեցին՝ իրենց ֆինանսական և ռազմական աջակցությունը⁴⁵ տրամադրելով աֆղանա-պակիստանյան

⁴⁴ Տե՛ս **Кепель Ж.**, նշվ. աշխ., էջեր 138-139:

⁴⁵ 1970-1995 թթ. Մերձավորարևելյան և Միջինարևելյան տարածաշրջան է ներկրվել առավել քան 138 մլրդ. դոլար ընդհանուր արժողությամբ սպառազինություն, որի 23%-ը Սաուդյան Արաբիայի մասնաբաժինն էր,

սահմանամերձ շրջաններում հավաքվող մուջահիդներին՝ վերջիններին ուղղորդելով խորհրդային զորքերի դեմ պայքարի⁴⁶:

Աֆղանստանում խորհրդային բանակի դեմ ընթացող պայքարը ճիշտ կազմակերպելու, տրամադրվող ռազմական օգնությունը հասցեատիրոջը հասցնելու և ֆինանսական միջոցները տեղին օգտագործելու համար անհրաժեշտ էին վստահելի մարդիկ, որոնք տեղում կազմակերպչական գործառույթներ կստանձնեին:

1980-ական թթ. աֆղանական պատերազմում աչքի ընկան պաղեստինցի Աբդալլահ Յուսուֆ Ազգամն ու սաուդցի Ուսամա բեն Լադենը:

1980-ական թթ. աֆղանական պատերազմի ընթացքում Աբդալլահ Ազգամը դրեց դասական ջիհադի ժամանակակից հայեցակարգի հիմքերը: Նրա առաջ քաշած ջիհադի հայեցակարգային նոր հիմնադրույթների ու գաղափարների ընդհանրական պատկերը հետևյալն էր.

1. Ոչ մուսուլմանական երկրի կողմից մուսուլմանական երկիր ներխուժումը անհապաղ ռազմական միջամտություն էր պահանջում: Բոլոր արական սեռի մուսուլմանները, ովքեր ունակ էին մասնակցելու ռազմական գործողությունների, պետք է պաշտպանեին բռնագավրձված մուսուլմանական երկիրը, աշխարհի որ մասում էլ լինեին:

Իրաքինը՝ ավելի քան 17%, Եգիպտոսինը՝ մոտ 11%, Իրանինը՝ մոտ 10%, Թուրքիայինը՝ ավելի քան 9% (տե՛ս **Жданов Н.**, Исламская концепция миропорядка, М., Междунар. Отношения, 2003, стр. 90-95):

⁴⁶ **Kohlman E.**, Al-Qaida's Jihad in Europe. The Afghan-Bosnian Network, Oxford, New York, 2004, p. 4.

2. Մուսուլմանական երկրում բռնագավթողների դեմ պայքարը մուսուլմանի «անձնական պարտականությունն» էր, որի համար վերջինը կարիք չուներ թույլտվության:
3. Ջիհադը պետք է մշտական բնույթ կրեր, այսինքն՝ լիներ շարունակական, և այն պետք է ընթանար նաև գաղափարական տիրույթում:
4. Ազգամբ կարևորում էր նաև իսլամական աշխարհից դուրս մուսուլմանների կողմից անհավատների դեմ իրականացվող պայքարը:

Ուսամա բեն Լադենի ղեկավարած ջիհադական պայքարին տրվեց համընդհանուր բնույթ՝ հետագայում առաջնահերթությունը տալով «հեռավոր թշնամու» դեմ իրականացվող պայքարին⁴⁷: Բեն Լադենի «Համընդհանուր ջիհադի» հայեցակարգ ներառվեցին երեք հիմնական տարրեր, որոնցով այն տարբերվեց այլ իսլամական ծայրահեղական ուղղությունների առաջ քաշած գաղափարներից. դրանք էին՝

1. ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները հայտարարվեցին հիմնական հակառակորդ, այսինքն՝ «մերձավոր թշնամուց» անցում կատարվեց դեպի «հեռավոր թշնամու» մարտավարությանը:
2. Բեն Լադենը հմտորեն օգտագործեց առկա պանիսլամական քննարկումներն իր նպատակներին ծառայեցնելու համար: Այդ համատեքստում իսլամականների կողմից իրականացվող գործողությունները ներկայացվեցին

⁴⁷ Իսլամականները «հեռավոր թշնամի» էին համարում Արևմուտքը, արևմտյան երկրները, կամ մուսուլմանական երկրներում արևմտյան օբյեկտները, իսկ «մերձավոր թշնամի» մուսուլմանական երկրներում, մեծաթիվ մուսուլմանական բնակչություն ունեցող տարածքներում անհավատ վարչակարգերն ու իսլամականների գաղափարների դեմ հանդես եկող շրջանակները:

որպես իսլամի պաշտպանության գործիք, և խրախուսվեց մուսուլմանական միասնության գաղափարն ընդհանուր թշնամու դեմ⁴⁸:

3. Հայտարարված պատերազմը ստացավ համընդհանուր բնույթ: Թիրախների ընտրության հարցում Բեն Լադենը չսահմանափակվեց մեկ երկրով: Նա կոչ արեց հարվածել ամերիկյան օբյեկտներին և շահերին ամբողջ աշխարհով մեկ:

Արդալլահ Ազգամի և Ուսամա բեն Լադենի քարոզների շնորհիվ աֆղանական պատերազմն անցած հազարավոր ջիհադականներ տարածվեցին աշխարհի տարբեր հատվածներում՝ իրականացվող ջիհադական ռազմաճակատներում՝ մասնակցելով մի շարք ռազմական գործողությունների:

1988 թ. Արդալլահ Ազգամի և Ուսամա բեն Լադենի կողմից ստեղծվեց «Կաիդաթ ալ-Ջիհադ»⁴⁹ (Ջիհադի հիմք, խարիսխ՝ Qā‘dat Al-Ġihād-القاعدة⁵⁰) իսլամական կառույցը, որը ստանձնեց ռազմական ճամբարներում մուջահիդների կենտրոնացման, նրանց մարտական պատրաստության և ջիհադական պայքարին ներգրավելու աշխատանքները⁵¹, և իր ստեղծման առաջին

⁴⁸ Դա ավելի շատ քարոզչական նպատակներ էր հետապնդում, քանզի ընդհանուր թշնամու դեմ միասնություն չէր նկատվում նույնիսկ ջիհադականների շարքերում:

⁴⁹ 2011 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հետո «ալ-Կաիդա» կազմակերպությունը վերածվեց յուրահատուկ «տեքստի», որի շուրջ ձևավորվեց նույն անունը կրող ցանց: Տվյալ դեպքում «ալ-Կաիդա» եզրը կիրառվում է այդ իմաստով:

⁵⁰ «Ալ-Կաիդա» (արաբերենից թարգմանաբար՝ խարիսխ) անվան ծագման մասին տե՛ս **Игнатенко А.**, К истории «Аль-Каиды». System Restore. воскрешение «Бюро по обслуживанию моджахедов», 2008 год, <http://i-r.ru/page/stream-library/index-29419.html> (Մուսք, մայիսի 12, 2014 թ.):

⁵¹ Տե՛ս **Кепель Ж.**, նշվ. աշխ., էջեր 135-148:

տասը տարիների ընթացքում համեստ տեղ էր զբաղեցնում այդ ժամանակվա իսլամական արմատական խմբավորումների ցուցակում:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Աֆղանստան եկած ապագա մարտիկների զգալի մասը պատրաստի ջիհադականներ չէր, և միայն «ալ-Կաիդա»-ի ռազմական ճամբարներում էր դառնում փորձառու մարտիկներ⁵²: Աֆղանստանում խորհրդային զորքերի դեմ պայքարը մեծ ազդեցություն ունեցավ 1990-ական թթ. իսլամական շարժման վրա, ինչը նկատելի է նաև մեր օրերում: Աֆղանական փորձից վերցրած շատ գործոններ (մոբիլիզացիոն մեխանիզմներ, կամավորների հավաքագրում, միջոցների հայթայթում և այլն) օգտագործվեց հետագայում այլ երկրներում իսլամականների կողմից իրականացվող գործողություններում: Աֆղանստանում իրականացվող ջիհադի արդյունքում ձևավորվեց «արհեստավարժ իսլամականների» զանգված, որը համախմբված էր համընդհանուր գաղափարների շուրջ: Այսպիսով, «ալ-Կաիդա»-ն Աբդալլահ Ազգամի, հետագայում Ուսամա բեն Լադենի շնորհիվ վերածվեց իսլամականների համար նոր իսլամական արմատական գաղափարների մշակման և քարոզչության կենտրոնի, իսկ «ալ-Կաիդա»-ի ռազմական պատրաստության ճամբարները դարձան այն դարբնոցը, որտեղից նոր իսլամական գաղափարներով տոգորված և ռազմական պատրաստություն անցած ջիհադականները սփռվեցին աշխարհով մեկ՝ դառնալով աշխարհի տարբեր հատվածներում ջիհադական պայքարի առարկայական դրսևորումների գործիք:

Աֆղանստանի պատերազմից հետո իսլամականների մի մասը վերադարձավ իրենց երկրներ և միացավ հասարակական-

⁵² **Sageman M.**, Understanding Terror Networks, Philadelphia, PA, University of Pennsylvania Press, 2004, p. 220.

հեղափոխական խմբավորումներին (օր. Եգիպտական «ալ-Ջի-հադ» խմբավորումը), իսկ մի մասն էլ շարունակեց պայքարը այլ երկրներում (օր. Բոսնիա և Հերցեգովինա, Տաջիկստան, Չեչնիա, Հորդանան, Իրաք և այլն):

«Ալ-Կաիդա»-ն, որը նախկինում հանդես էր գալիս որպես խմբավորում, վերածվեց շարժման՝ իր կողմից առաջ քաշված «Համընդհանուր ջիհադի» գաղափարախոսությունը տարածելով մեծ թվով մուսուլմանական արմատական խմբավորումների շրջանում:

1996-2001 թթ. ընթացքում «ալ-Կաիդա»-ն և դրան հարող կառույցներն այս կամ այն չափով մասնակցեցին աշխարհի տարբեր հատվածներում իրականացվող զանազան գործողությունների, սակայն դրանց շարքում պետք է առանձնացնել ԱՄՆ-ի դեմ իրականացված 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները:

2.3. 9/11 ահաբեկչական գործողություններն ու իսլամական արմատականության մեջ առկա նոր միտումները

21-րդ դարասկզբում տեղի ունեցավ մի իրադարձություն, որն աննախադեպ էր իր բնույթով⁵³: 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ իրականացվեցին ահաբեկչական գործողություններ, որոնց հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Քոնդոլիզա Ռայսի վկայությամբ, Ջորջ Բուշը խորհրդականների հետ տեսահաղորդակցման ժամանակ իր խոսքը սկսեց «Մենք պատերազմի մեջ

⁵³ Առաջին անգամ իր պատմության ընթացքում ԱՄՆ ենթարկվեց լայնածավալ հարձակման սեփական տարածքում:

ենք» արտահայտությամբ: Նույն ժամանակ Կենտրոնական հետախուզական վարչության տնօրեն Ջորջ Թենետը հայտնեց այն մասին, որ նախնական տվյալների համաձայն՝ սեպտեմբերի 11-ի բռնարարքների հետևում կանգնած է իսլամական ծայրահեղական «ալ-Կաիդա» կազմակերպությունը⁵⁴: Սեպտեմբերի 20-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն ուղերձով հանդես եկավ Կոնգրեսում՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունների մեջ մեղադրելով «ալ-Կաիդա»-ին, պատերազմ հայտարարելով համաշխարհային ահաբեկչությանն ու դրան սատարող պետություններին:

Բուշի կողմից որպես թիրախ հռչակվեցին «ալ-Կաիդա» ահաբեկչական կառույցը, դրա ղեկավար շրջանակն ու անդամները, կազմակերպության և նրան հարող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների տեղակայման, ռազմական պատրաստության ճամբարները, ֆինանսավորման աղբյուրները և այլն⁵⁵:

Ծավալված համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում ԱՄՆ միացած կոալիցիոն ուժերի թիրախն առաջին հերթին «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներին թաքստոց տրամադրած տալիբական Աֆղանստանն էր, որի դեմ ծավալված պայքարի շնորհիվ «Տալիբան» շարժումն Աֆղանստանում հեռացվեց իշխանությունից: «Ալ-Կաիդա»-ի հանդեպ ամբողջ աշխարհով ծավալված հետապնդումներով լուրջ

⁵⁴ Washington Post, Oct. 24, 2001, p. 367.

⁵⁵ 2001 թ. սեպտեմբերի 20, Բուշը պատերազմ է հայտարարում ահաբեկչությանը https://www.youtube.com/watch?v=_CSPbzitPL8 (Մուսք, հուլիսի 19, 2012 թ.):

հարված հասցվեց կազմակերպության կառույցներին, դրա ղեկավարությանը, ֆինանսական ռեսուրսներին և այլն⁵⁶:

Ծրագրելով այդ ահաբեկչական գործողությունները՝ «ալ-Կաիդա»-ն մարտահրավեր նետեց գոյություն ունեցող կարգերին՝ անմիջապես սպառնալով ԱՄՆ-ին և Արևմուտքին՝ հիշեցնելով, որ իսլամական ծայրահեղ արմատականությունն ի վիճակի է ազդել համաշխարհային զարգացումների վրա:

«Ալ-Կաիդա»-ի դիրքերի թուլացմանը զուգընթաց՝ մուսուլմանական աշխարհում ևս ավելացան դժգոհությունները կառույցի կողմից տարվող պայքարի և ռազմավարական ուղղությունների նկատմամբ: Նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ներսում հնչեցին քննադատություններ՝ ուղղված կազմակերպության առաջնորդներին՝ մեղադրելով նրանց 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ նկատմամբ իրականացված աննպատակ ու անհեռատես գործողությունների համար, ինչը, մեծ հաշվով, վնասեց ծայրահեղ իսլամական արմատականությանն ու նրանց ջիհադական պայքարին⁵⁷:

Համաշխարհային ահաբեկչության դեմ իրականացվող պայքարի համատեքստում «ալ-Կաիդա»-ի ղեկավարության կողմից որոշակի փոփոխությունների ենթարկվեց դեռևս 1980-ական թթ. Աբդալլահ Ազգամի և Ուսամա բեն Լադենի մշակված ջիհադական պայքարի ռազմավարությունը՝ իր ազդեցությունն ունենա-

⁵⁶ Տե՛ս **Bonney R.**, նշվ. աշխ., էջեր 359-364:

⁵⁷ **Lia B., Hegghammer Th.**, Jihadi Strategic Studies. The alleged al-Qaida policy study preceeding the Madrid bombings, Studies in Conflict and Terrorism, 27 (5), September-October, 2004, pp. 355-375 (տե՛ս նաև՝ Ուսամա բեն Լադենին հասցեագրված նամակը, Աբդալլահի նամակներ, 14 սեպտեմբեր, 2006 թ. SOCOM-2012-0000018, <http://www.ctc.usma.edu/posts/letters-from-abbottabad-bin-ladin-sidelined> (Մուտք, սեպտեմբերի 30, 2013 թ.)):

լով իսլամականների կողմից «հեռավոր» և «մերձավոր թշնամիների» դեմ ջիհադի պայքարի իրականացման մարտավարության վրա:

Եթե Ուսամա բեն Լադենի ուղերձների մեծ մասը նվիրված էր «հեռավոր թշնամու»՝ ԱՄՆ-ի և դրա դաշնակիցների դեմ պայքարին, և միայն ուղերձների քիչ մասն էր վերաբերում «մերձավոր թշնամուն»⁵⁸, ապա «ջիհադի» գաղափարախոսության նոր հեղինակներից շատերը (Մայֆ Ալ-Ադլ, Աբու Մուսաբ Ալ-Մուրի և այլք) կարևորում էին «մերձավոր թշնամու» դեմ մղվող պայքարը⁵⁹:

Նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ներսում Ուսամա բեն Լադենի հետ հակասություններ առաջացան՝ կապված «հեռավոր և մերձավոր թշնամիների» դեմ պայքար ծավալելու հարցի հետ (օրինակ՝ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո թիրախների ընտրության հարցում Բեն Լադենի և Աբու Մուհամմադ Ալ-Մասրիի միջև ծագած հակասությունները)⁶⁰:

«Ալ-Կաիդա»-ի ներսում և ընդհանրապես իսլամական ծայրահեղ արմատականների շրջանում նկատվեցին այս կամ այն խնդիրների շուրջ հին և նոր սերնդի ներկայացուցիչների միջև հակասություններ:

Իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին առանձնահատուկ տեսակետներ էին հնչում արմատական իսլամի առարկայական

⁵⁸ **Batal al-Shishani M.**, Understanding Strategic Change in al-Qaeda's Central Leadership after Bin Laden, Terrorism Monitor, The Jamestown Foundation, Volume IX, Issue 23, June, 2011, pp. 7-8.

⁵⁹ ابو مصعب السوري، دعوة المقاومة الإسلامية العالمية، ديسمبر، ٢٠٠٤ .
<http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up>

⁶⁰ Տե՛ս **Batal al-Shishani M.**, նշվ. աշխ., էջ 8:

դրսևորումների, նպատակների, պայքարի թիրախների վերաբերյալ: Ի հայտ եկավ ծայրահեղ արմատականների մի շերտ՝ իսլամական արմատական գաղափարներով առաջնորդվող նոր սերունդ, որն ուրույն տեսակետներ առաջ քաշեց վերոհիշյալ դրույթների վերաբերյալ:

20-րդ դարի վերջին իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում, շնորհիվ Աբդալլահ Ազզամի գաղափարների, հիմնավորվեց «մերձավոր թշնամու» դեմ պայքարը որպես բոլոր մուսուլմանների անձնական պարտականություն: Դրա պատճառը ոչ իսլամական երկրի՝ ԽՍՀՄ կողմից մուսուլմանական Աֆղանստանի բռնազավթումն էր: Ուսամա բեն Լադենը իսլամական ծայրահեղականների պայքարին տվեց համընդհանուր բնույթ, երբ Աֆղանստանից խորհրդային զորքերը դուրս բերվեցին և «ալ-Կաիդա»-ն ցանցայնացվեց: Մականյն արդեն 2000-ական թթ. նոր սերնդի իսլամականների կողմից այդ պայքարում ընդգծվեց «մերձավոր թշնամու» դեմ պայքարի առաջնահերթությունը: Ավելին, այն իսլամականների համար, որոնք բնակվում էին «անհավատ» (մուսուլմանական օրենքներով չապրող) մուսուլմանական երկրներում, «հեռավոր թշնամու» դեմ պայքարը չէր խրախուսվում, իսկ ոչ մուսուլմանական երկրների կողմից մուսուլմանական երկրի բռնազավթման դեպքում՝ ջիհադական պայքարի պարտականությունն ընկնում էր տվյալ երկրի բնակիչ մուսուլմանի վրա: Դա համարվեց նրա անձնական պարտականությունը:

Իսլամականների շրջանում լայն քննարկումների պատճառ դարձավ նաև իմամի խնդիրը, այսինքն՝ թե ո՞վ պետք է ղեկավարեր մուսուլմանական համայնքը: Նոր սերնդի որոշ իսլամական ծայրահեղականների տեսակետների համաձայն՝ պետք է լիներ մեկ իմամ, ով պետք է ղեկավարեր իսլամական ումման, և անհավատ էր համարվում այն մուսուլմանը, ով հավատարմության

երդում չէր տալիս նրան: Դրան հակառակ՝ հին սերնդի իսլամական գաղափարախոսների համար ընդունելի էր համարվում մի քանի իմամների միաժամանակյա գոյությունը, երբ մուսուլմանին ընտրության հնարավորություն էր տրվում՝ դրանցից ում հավատարմության երդում տալ:

Բացի դրանից, հին սերունդը հրաժարվում էր անհավատության համար կոլեկտիվ մեղադրանքից: Նրանք պնդում էին, որ անհավատության մեջ կարելի էր մեղադրել միայն անհատին: Նոր սերունդը ընդունում էր անհավատության մեջ մարդկանց խմբի մեղադրանքը՝ հիմնվելով 1950-60-ական թթ. Եգիպտոսում Սաիդ Կուտբի կողմից ողջ եգիպտական հասարակությունն անհավատ բնորոշելու վրա:

Իսլամականները ընդունում էին, որ շարիաթի օրենքներով առաջնորդվող երկրներում ապրողները մուսուլմաններ են, եթե վերջինները չեն ապացուցել հակառակը: Սակայն իսլամականների շրջանում առանձնահատուկ մոտեցում էր նկատվում այն մուսուլմանների հանդեպ, որոնք ապրում էին այն մուսուլմանական երկրներում, որտեղ շարիաթի օրենքներն ամբողջությամբ չէր կիրառվում: Հին սերնդի իսլամականներն այդ երկրներում ապրողներին համարում էին մուսուլմաններ, եթե այնուամենայնիվ այդ երկրի մուսուլմանն իր վարքագծով չէր ապացուցում հակառակը: Նոր սերունդը ներկայացնող իսլամական ծայրահեղականներն այդ երկրներում ապրող մուսուլմաններին, ինչպես և ոչ մուսուլմանական երկրների բնակչությանը համարում էին անհավատներ⁶¹:

⁶¹ **Alshech E.**, The Doctrinal Crisis within the Salafi-Jihadi Ranks and the Emergence of Neo-Takfirism, A Historical and Doctrinal Analysis, Hebrew University, Islamic Law and Society 21 (2014), pp. 436-449.

Իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում հին և նոր սերունդների միջև պայքարի դրսևորումները նկատվեցին նաև Իրաքում: Այս պայքարն էր, որը դարձավ իսլամական ծայրահեղ արմատականության գալիք փոփոխությունների ու 2014 թ. հունիսին հռչակված «Իսլամական պետության» ստեղծման հիմքը:

ԳԼՈՒԽ III

ԱԲՈՒ ՄՈՒՍԱԲ ԱԼ-ԶԱՐԿԱՌԻՆ ԵՎ ԻՐԱՔՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ ԶԻՀԱԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

3.1. Իրաքում ստեղծված իրավիճակը, Սադամ Հուսեյնի իսլամական քաղաքականությունը

Պարսից ծոցի առաջին պատերազմից հետո (1991 թ.) Սադամ Հուսեյնը ձեռնամուխ եղավ Իրաքում այսպես կոչված «Կրոնական արշավի» (الحملة الايمانية)՝ իսլամի ամրապնդման և տարածման քաղաքականությանը, որը միտված էր բաասական և իսլամական միասնական օրակարգի ձևավորման միջոցով իրավիճակի կայունության հաստատմանը միջազգային պատժամիջոցների տակ հայտնված Իրաքում: Այս նպատակներին հասնելու համար Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը պատրաստ էր համագործակցելու իսլամական արմատական ուժերի հետ:

Աշխարհիկ իշխանություն հանդիսացող սադամյան վարչակարգը Ծոցի առաջին պատերազմից հետո փորձեց հակադրվել իր հարևան մուսուլմանական վարչակարգերին (Իրան, Պարսից ծոցի միապետություններ)՝ նպատակ ունենալով ամրապնդել իսլամական կրոնական ավանդույթներն ու չեզոքացնել հիշյալ երկրների ազդեցությունը սեփական երկրում: Դա նաև ուղղված էր նրան, որ հակակշիռ ստեղծվեր «Մուսուլման եղբայրներ»

իսլամական արմատական կառույցին, որը իրական սպառնալիք էր դիտվում իրաքյան վարչակարգի համար հատկապես այն բանից հետո, երբ 1986-1987 թթ. բացահայտվեցին Իրաքում բջիջներ ստեղծելու և իրավիճակն ապակայունացնելու կառույցի հնարավորությունները:

Սադամ Հուսեյնի կրոնական քաղաքականության թիրախներից մեկը իրաքյան կրոնական հաստատությունների նկատմամբ՝ Բադդադի վերահսկողության հաստատումն էր: Սադամ Հուսեյնը ավելացրեց բասսականների ներկայությունը Իրաքի տարբեր կրոնական հաստատություններում՝ փորձելով վերահսկել իրավիճակը տեղերում: Այս նպատակը մեծ հաշվով չիրականացավ, քանզի կրոնական հաստատություններ գործողված զինվորականների զգալի մասը բասսական գաղափարների մեծ ջատագովներ չէին, և շատ արագ ընկան իսլամական արմատական գաղափարախոսության ազդեցության տակ: Հետագայում բասսականներից շատերը, մզկիթներում և այլ կրոնական հաստատություններում ծանոթանալով իսլամական արմատական և ծայրահեղ արմատական գաղափարներին, դարձան չեզոք ոչ թե Սադամ Հուսեյնի վարչակարգին, այլ հենց սալաֆիականությանը, ինչն էլ իրաքյան հետագա զարգացումներում աշխարհիկ ուժեր-իսլամականներ համագործակցության լայն հնարավորություններ ստեղծեց:

Իրաքյան իշխանությունները փորձեցին համագործակցություն հաստատել նաև իսլամական ծայրահեղ արմատական ուժերի, հատկապես «ալ-Գաիդա»-ի հետ: Առաջին փորձերն արվեցին Պարսից ծոցի առաջին պատերազմից հետո՝ 1992 թ., երբ Ուսամա բեն Լադենը գտնվում էր Սուդանում: Վերջինս ցանկանում էր ընդլայնել իր կառույցի հնարավորությունները՝ համագործակցելով իրաքյան վարչակարգի հետ, իսկ Սադամ Հուսեյնը նպատակ ուներ ազդել «ալ-Գաիդա»-ի վրա՝ ՄԱԿ-ի

կողմից պատժամիջոցներով արգելված որոշ զինամթերք ձեռք բերելու հնարավորություն ստանալու համար:

Իրաքի հետախուզության ծառայության և «ալ-Կաիդա»-ի ներկայացուցիչների հետ առաջին հանդիպումը տեղի ունեցավ Խարթումում 1992 թ.: 1993 թ. իրաքյան իշխանություններն ու «ալ-Կաիդա»-ն «չհարձակման համաձայնության» եկան, որից հետո Ուսամա բեն Լադենը արգելեց «ալ-Կաիդա»-ին հարող իսլամական խմբավորումների գործողություններն ընդդեմ իրաքյան իշխանությունների⁶²: Երբ Ուսամա բեն Լադենը 1996 թ. հայտնվեց Աֆղանստանում, Իրաքի դեսպանատունը Պակիստանում դարձավ պաշտոնական Բադդադի և «ալ-Կաիդա»-ի ներկայացուցիչների հանդիպումների հավաքատեղի⁶³:

1996-1997 թթ. Սադամ Հուսեյնի և «ալ-Կաիդա»-ի միջև համագործակցության որոշակի սառեցում նկատվեց, քանզի իրաքյան իշխանությունները ցանկանում էին խորացնել կապերը Սաուդյան Արաբիայի և մերձավորարևելյան այլ վարչակարգերի

⁶² Հիշյալ համաձայնության ժամկետը երկարացվեց ընդհուպ մինչև Սադամ Հուսեյնի իշխանության տապալումը, որից հետո Բեն Լադենը ֆաթվայով հանդես եկավ, որտեղ հայտնում էր, որ ընդդեմ խաչակիրների (Իրաքում հայտնված կոալիցիոն ուժերի)՝ իսլամականների և բաասականների համագործակցությունից վնաս չկա, և «ալ-Կաիդա»-ն ու բաասականները պետք է համախմբվեն Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքում ապստամբական ներուժն ուժեղացնելու համար (տե՛ս The Syrian Intifada, A Myth Revisited. Saddam Hussein Had No Connection To Al-Qaeda, **Orton Kyle**, June 21, 2015, <https://kyleorton1991.wordpress.com/2015/06/21/a-myth-revisited-saddam-hussein-had-no-connection-to-al-qaeda/> (Մուտք, հուլիսի 4, 2015 թ.)): Հետագայում այդ նույն համագործակցությունը նկատվեց նաև 2013-2014 թթ., երբ իսլամականներին հաջողվեց լայնածավալ ռազմական գործողությունների անցնել և նվաճել զգալի տարածքներ Իրաքում:

⁶³ The Syrian Intifada, Saddam and the Taliban, **Orton Kyle**, June 29, 2015, <https://kyleorton1991.wordpress.com/2015/06/29/saddam-and-the-taliban/> (Մուտք, հուլիսի 4, 2015 թ.):

հետ: Սակայն 1998 թ. կեսերին իրավիճակը փոխվեց, և իրաքյան պատվիրակությունները մի քանի հանդիպումներ ունեցան «ալ-Կաիդա»-ի և տալիբների ներկայացուցիչների հետ ինչպես Իրաքում, այնպես էլ Աֆղանստանում⁶⁴:

2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո իսլամական ծայրահեղ արմատական միտումների ակտիվություն նկատվեց՝ պայմանավորված Իրաքի շուրջ տեղի ունեցող զարգացումներով: 2002-2003 թթ. ամերիկյան կառավարությունը քայլեր ձեռնարկեց ապացուցելու, որ Սադամ Հուսեյնի վարչախումբը վտանգ է ներկայացնում աշխարհի համար: Իրաքը մեղադրվում էր զանգվածային զենք ստեղծելու և «ալ-Կաիդա»-ի հետ համագործակցության մեջ: Վաշինգթոնը նույնիսկ իրաքյան իշխանությունների ու «ալ-Կաիդա»-ի միջև փորձում էր կապ տեսնել 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններում, ինչն անհիմն էր, և որի համար փաստեր չունեին անգամ ԱՄՆ հատուկ ծառայությունները: Իրաքի դեմ ռազմական գործողությունները սկսվեցին 2003 թ. մարտի 20-ի առավոտյան: Ի տարբերություն 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի՝ 12 տարի անց կռալիցիոն ուժերը միանգամից ցամաքային գործողությունների անցան՝ առանց երկարատև օդային ռմբակոծությունների: Ապրիլի սկզբին կռալիցիոն ուժերը, իրաքյան ուժերի կողմից չհանդիպելով լուրջ դիմադրության, հայտնվեցին Բաղդադի մատույցներում, իսկ ապրիլի 9-ին Իրաքի մայրաքաղաքը գրեթե առանց կռվի հանձնվեց:

Որոշ իսլամական արմատական գաղափարախոսների մոտ նկատելի էր այն տեսակետը, որ արևմտյան կռալիցիոն ուժերի կողմից Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո

⁶⁴ The 9/11 Commission Report, pp. 65-67. <http://www.9-11commission.gov/report/911Report.pdf#page=83> (Մուսք, մարտի 4, 2014 թ.):

Իրաքը վերածվել էր իսլամականների պայքարի թատերաբեմի, որտեղ պետք է համախմբել իսլամական արմատական ներուժն «անհավատների» դեմ «սրբազան պատերազմ» վարելու համար: Մուսուլմանների շրջանում այնպիսի հեղինակություն վայելող արմատական մտածողներ, ինչպիսիք էին սաուդցի Նասր Ալ-Ֆահդը, քուվեյթցի Համիդ Ալ-Ալիև և ուրիշներ, հրապարակեցին ֆեթվաներ ու իրենց աշխատություններում կարևորեցին Իրաքում «խաչակիրների» դեմ իրականացվող պայքարը: Նրանք Իրաքում ջիհադական պայքարի իրականացումը կարևորվում էին նաև նրանով, որ Իրաքը ԱՄՆ-ի կողմից մուսուլմանների կեղեքման վառ օրինակ էր: Իրաքը արմատական գաղափարախոսների կողմից որպես «սրբազան պատերազմի» իրականացման վայր համարվեց նաև այն պատճառով, որ նրանք Իրաքի տարածքը դիտում էին որպես իսլամական և արևմտյան քաղաքակրթական բախման կենտրոն, որտեղ խաչվում էին զանազան աշխարհաքաղաքական շահեր, իսկ Իրաքը ներկայացվում էր որպես հենակետ, որն ի վիճակի էր կանխելու անհավատների՝ դեպի մուսուլմանական աշխարհ առաջխաղացումը: Ծայրահեղ արմատականների՝ մուսուլմանական զանգվածներին համախմբելու հնարքներից մեկն էլ այն գաղափարների տարածումն էր, որ չպետք է «Իսրայելի սիոնիստական վարչակարգին» հաղթաթղթեր ընձեռել: Մասնավորապես խիստ հոռետեսական տրամադրություններ էին արտահայտվում այն հեռանկարների վերաբերյալ, համաձայն որոնց՝ Իրաքի անկման դեպքում կարող էր իրականություն դառնալ հրեական «Նեղոսից մինչև Եփրատ ձգվող Մեծ Իսրայելի» կարգախոսը⁶⁵:

⁶⁵ Եթե հրեական հասարակական շերտերում 19-20-րդ դդ. ընթացքում որոշակի արտացոլում ունեցող սիոնիզմի գաղափարական արմատավորումը հիմք դրեց 20-րդ դարի կեսին Իսրայել պետության ստեղծման, ապա 20-րդ դա-

Իրաքի շուրջ զարգացումները չէին կարող չհետաքրքրել Ուսամա բեն Լադենին: Վերջինի համար Իրաքը հետաքրքիր էր նաև նրանով, որ Սադամ Հուսեյնի տապալումից հետո երկրում հայտնված արևմտյան կռաւիցիոն ուժերի և իշխանության եկած շիայական վարչախմբի դեմ պայքարի համատեքստում Իրաքը կարող էր դառնալ սուննի ծայրահեղ իսլամականների ջիհադի ճակատներից մեկը⁶⁶:

3.2. Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին որպէս նոր առաջնորդ

Իրաքում ծավալված ջիհադական պայքարում աչքի ընկալ հորդանանցի Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին (Ահմադ Ֆադիլ Նիզալ Ալ-Խալաիլահ): Նա ծնվել էր 1966 թ. հոկտեմբերին հորդանանյան Ջարկա բնակավայրում, որը գտնվում է Ամմանից 30 կմ. դեպի հյուսիս-արևելք: Ալ-Ջարկաուին Բանի Հասան ցեղախմբից էր, որը Հորդանան գետի արևելյան ափին բնակություն

րի վերջին և 21-րդ դարի սկզբին տարածաշրջանում Իսրայել պետության համար առկա հիմնախնդիրների լուծմանն ու հետագա անվտանգությանն են միտված 1982 թ. Օդեդ Բնոնի հրապարակած «Իսրայելի ռազմավարությունը 1980-ական թթ.» վերտառությամբ հոդվածում («Բնոնի ծրագիր») արծարծված, ինչպես նաև հիպերսիոնիզմի (Աբրահամ Շմուլևիչ) և պանսիոնիզմի դրույթներում ամրագրված (Անդրեյ Զելն) գաղափարախոսությունը, որը քարոզում է «Մեծ Իսրայել» պետության հիմնում Նեղոսից մինչև Եփրատ ընկած տարածքներում՝ ներառելով Հորդանանի, Սինայի թերակղզու, Գոլանի, Լիբանանի, Կիպրոսի, Իրաքի, Քուվեյթի տարածքները: Այս գաղափարախոսության հիմքում ընկած է նաև Իսրայելի հեգեմոնիայի գաղափարը Մերձավոր Արևելքի ողջ տարածքում, որը պետք է ապահովվի ոչ միայն ուժի, այլև մտավոր և տնտեսական ազդեցության կիրառմամբ (<http://www.globalresearch.ca/greater-israel-the-zionist-plan-for-the-middle-east> (Մուսք, նոյեմբերի 5, 2013 թ.)):

⁶⁶ Люди, Абу Мусаб Аль-Заркави, http://www.peoples.ru/state/criminal/terrorist/abu_musab_al-zarkavi/ (Մուսք, օգոստոսի 15, 2012 թ.):

հաստատած մի քանի բեղվինական ցեղերի խմբի ընդհանուր անվանումն էր: Վերջիններս հայտնի էին հորդանանյան հաշիմյան թագավորական տան հանդեպ չեզոք վերաբերմունքով:

Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին պատանեկության տարիներին աչքի չէր ընկնում ուսման մեջ առաջադիմությամբ, ընդհակառակը՝ ավելի շատ խմիչքն ու թեթևաբարո կյանքն էր հետաքրքրում երիտասարդ Ալ-Ջարկաուիին: Նա հայտնի էր նաև «կանաչ տղամարդ» մականունով (մականունը նրան տրվել էր մարմնի վրա բազմաթիվ դաջվածքներ ունենալու պատճառով, որոնցից հետագայում նա փորձ էր անում ձերբազատվել)⁶⁷: Այդ իսկ պատճառով նրա մայրը՝ Ում Սայիլը, որոշում է Ալ-Ջարկաուիին ուղարկել Ամմանի «Ալ-Հուսեյն իբն Ալի» մզկիթ, որտեղ Ալ-Ջարկաուիի կրոնական դաստիարակությունը կնպաստեր երիտասարդի կայացմանը: Սակայն մզկիթում Ալ-Ջարկաուին ծանոթանում է իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներին, որոնք էլ իրենց ազդեցությունն են ունենում նրա հետագա կյանքի և գործունեության վրա:

Աֆղանական պատերազմի ավարտից հետո, երբ խորհրդային զորքերը հեռացան Աֆղանստանից, շատ մուջահիդներ մնացին անգործ՝ վերադառնալով իրենց երկրներ: Ինչ վերաբերում է Ալ-Ջարկաուիին, ապա վերջինս 1989 թ. դեկտեմբերին որոշում է մեկնել Փեշավար և այնտեղ զբաղվել լրագրությամբ⁶⁸:

1992 թ. վերադառնալով Հորդանան՝ Ալ-Ջարկաուին անմիջապես ընկնում է թագավորության Գլխավոր հետախուզական վարչության հսկողության տակ: Այդ ժամանակ Ալ-Ջարկաուին

⁶⁷ **Stern J., Berger M. J.**, ISIS: The State of Terror, Ecco, First Edition edition, 2015, pp. 14-16.

⁶⁸ **Weiss M., Hassan H.**, ISIS, Inside the Army of Terror, New York, 2015, pp. 1-7.

հանդիպում է հորդանանցի արմատական գաղափարախոս Աբու Մուհամմադ Ալ-Մակդիսիին, ում հետ ծանոթացել էր դեռևս Պակիստանի Հայաթաբադում: Վերջիններս ձեռնամուխ են լինում հետևորդների հավաքագրման և Հորդանանում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարների տարածման գործին: Ալ-Մակդիսիին հիմնում է «Բայթ ալ-Իմամ» (Իմամի տուն) կառույցը՝ ներգրավելով նաև Ալ-Ջարկաուիին:

Հորդանանում գոյություն ունեցող իսլամական ծայրահեղ արմատական շարժումները մասնատված էին, և Ալ-Մակդիսիին ու Ալ-Ջարկաուիին փորձ են անում համախմբել այդ ներուժը⁶⁹: Ալ-Ջարկաուիի քննադատությունները՝ ուղղված հորդանանյան իշխանություններին և հաշիմյան արքայատոհմի շահերը սպասարկող մուսուլման կրոնագետ-աստվածաբաններին, չէին կարող չանհանգստացել հորդանանյան իշխանություններին, որոնց կողմից 1994 թ. մարտին Ալ-Ջարկաուիին ձերբակալվեց: Նույն տարում Ալ-Ջարկաուիին կանգնում է դատարանի առաջ՝ մեղադրվելով ապօրինի զենք-զինամթերք պահելու և հորդանանյան իշխանությունների դեմ անօրինական գործողություններ ծրագրելու մեջ⁷⁰: Դատարանի կողմից Ալ-Ջարկաուիին դատապարտվում է 15 տարվա ազատազրկման, որը պետք է կրեր «Մուաքա» բանտում, որտեղ շուտով Ալ-Ջարկաուիին միացավ նաև Ալ-Մակդիսիին:

Հորդանանցի իսլամականների շրջանում աճող հակասությունները և լարվածության առաջին նշաններն ի հայտ եկան 1990-ական թթ. կեսերին, երբ Ալ-Ջարկաուիին, գտնվելով բանտում, գլուխ բարձրացրեց հորդանանյան իշխանությունների

⁶⁹ Abu Muḥammad al-Maqdisi's letter, <http://www.tawhed.ws/r?i=fmgd7w80> (Մուսոք, նոյեմբերի 14, 2012 թ.):

⁷⁰ Documentary interview, LBCI Satellite TV (Beirut), November 27, 2004.

դեմ՝ գաղափարական դաշտում հակազդելով նաև Ալ-Մակդիսիին⁷¹:

Ալ-Մակդիսիի և Ալ-Ջարկաուիի միջև մրցակցություն ծավալվեց բանտարկյալների շրջանում ազդեցություն ձեռք բերելու համար, որն ավարտվեց Ալ-Ջարկաուիի հաղթանակով, քանզի վերջինիս ջիհադական պայքարի անցած ուղին և բանտարկյալների շրջանում հակասությունների կարգավորման գործում ունեցած ավանդը ավելի շատ էին գնահատվում բանտարկյալների կողմից: Բանտում Ալ-Ջարկաուին կարողանում է ազդեցիկ դիրք ստանձնել բանտարկյալների շրջանում, ընդունել էմիր տիտղոսը՝ ստվերելով Ալ-Մակդիսիին: Արդեն այդ ժամանակվանից Ալ-Ջարկաուին և Ալ-Մակդիսին հայտնվեցին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենի ուշադրության կենտրոնում:

Հորդանանի թագավոր Հուսեյնի մահից հետո թագավորական իշխանությունը ստանձնեց նրա որդին՝ Աբդալլահ 2-րդը: 1999 թ. մարտին նոր թագավորը համընդհանուր համաներում հայտարարեց, և մոտ 3000 բանտարկյալներ ազատվեցին բանտերից, որոնց մեջ էր նաև Ալ-Ջարկաուին:

1999 թ. ամռանը Ալ-Ջարկաուին կրկին ժամանեց Պակիստան: Ուսամա բեն Լադենի հետ առաջին հանդիպումը տեղի ունեցավ Քանդահարում, որտեղ Բեն Լադենին վստահություն չներշնչեց երիտասարդ հորդանանցին: Բեն Լադենի շրջապատն առավելապես կրթված մարդիկ էին, մինչդեռ Ալ-Ջարկաուին թերի կրթություն ստացած մի անձնավորություն էր⁷²: Սակայն

⁷¹ St' u Memri, Inquiry and Analysis No. 239, Dispute in Islamist Circles over the Legitimacy of Attacking Muslims, <http://www.memri.org/bin/articles.cgi?Area=ia&ID=IA23905&Page=archives> (Մուտք, մարտի 11, 2014 թ.):

⁷² **Stern J., Berger M. J.**, նշվ. աշխ., էջեր 16-20:

Հորդանանում, Սիրիայում և Իրաքում Ալ-Չարկաուիի կապերն ու հնարավորությունները գրավեցին «ալ-Կաիդա»-ին: Կառույցի առանցքային դեմքերից Մայֆ Ալ-Ադլը համոզեց Բեն Լադենին, որ Ալ-Չարկաուիի կապերը կարող են օգտակար լինել «ալ-Կաիդա»-ի համար, և 2000 թ. Ալ-Չարկաուիին հնարավորություն տրվեց Հերաթում⁷³ բացել «Ջունդ ալ-Շամ» (Ալ-Շամի բանակ) ռազմական ճամբարը: Ճամբարի մուտքի վրա փակցված էր «ալ-Թաուհիդ ուա ալ-Ջիհադ» («Միաստվածություն և Ջիհադ», արաբերեն՝ التوحيد والجهاد) կարգախոսը, որը հետագայում դարձավ Իրաքում Ալ-Չարկաուիի ղեկավարած կառույցի անվանումը:

2001 թ. սեպտեմբերի 11-ի նախօրեին Բեն Լադենը փորձեց հավատարմության երդում ստանալ Ալ-Չարկաուիից, սակայն վերջինս մերժեց⁷⁴: ԱՄՆ դեմ նման աննախադեպ ռազմական գործողության գնալուց առաջ Բեն Լադենը դրանով փորձում էր ամրապնդել իր հեղինակությունն ու վստահությունը, ինչպես նաև հավաքել կողմնակիցներ իսլամական ծայրահեղ արմատական ճամբարում, որի բաղկացուցիչ մասն էր կազմում նաև Աբու Մուսաբ Ալ-Չարկաուին և նրա կողմից ղեկավարվող կառույցը:

«Ջունդ ալ-Շամ» ռազմական ճամբարն անցած իսլամականները մի քանի հաջող ահաբեկչական գործողություններ իրա-

⁷³ Հերաթում տեղակայված ռազմական ճամբարի ընտրությունը նույնպես կարևոր էր Ալ-Չարկաուիի համար, քանզի այն գտնվում էր ռազմական գործողություններով հագեցած ու անհանգիստ աֆղանա-պակիստանյան սահմանից հեռու՝ Իրանի սահմանին բավական մոտ: Հետագայում, երբ կռալիցիոն ուժերի և Հյուսիսային դաշինքի ստորաբաժանումներն անցան հարձակման, Հերաթի աշխարհագրական հարմար դիրքը հնարավորություն տվեց Ալ-Չարկաուիին ու նրա զինակիցներին անվնաս հեռանալ Աֆղանստանից: Մա նույնպես պետք է համարել Աբու Մուսաբ Ալ-Չարկաուիի հեռու գնացող նպատակների և հաշվարկների արդյունք:

⁷⁴ **Stern J., Berger M. J.**, նշվ. աշխ., էջեր 16-20:

կանացրին, և երբ Սայֆ Ալ-Ադլն այցելեց Հերաթում գտվող այդ ռազմական ճամբարը, շտապեց զեկուցել Բեն Լադենին Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող կառույցի հաջողությունների մասին: Դա ստիպեց Բեն Լադենին Ալ-Ջարկաուիին և նրա կողմից ղեկավարվող «Ջունդ ալ-Շամ» կառույցը տեսնել «ալ-Կաիդա»-ի հովանու տակ: Դրա համար նույնիսկ Բեն Լադենը նորից դիմեց Ալ-Ջարկաուիին վերջինից հավատարմության երդում ստանալու ակնկալիքով, ինչը դարձյալ մերժվեց: Նման լարված հարաբերությունները Ալ-Ջարկաուիի և «ալ-Կաիդա»-ի միջև պահպանվեցին մինչև 2004 թ.:

Ալ-Ջարկաուիի նման վարքագիծը խոսումն վկայությունն էր այն հեռուն գնացող նպատակների, որոնք ծրագրել էր հորդանանցին. մինչ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների զգալի հատվածը փորձում էր գործել «ալ-Կաիդա»-ի ղեկավարության ներքո, Ալ-Ջարկաուին չէր շտապում նման կերպ վարվել, այլ ամեն ինչ անում էր՝ մնալու ինքնուրույն, «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակից անկախ:

Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին իր զինակիցներից հորդանանցի Աբու Աբդ Ալ-Ռահման Ալ-Շամիին գործուղում է հյուսիսային Իրաք՝ տեղում ջիհադական պայքար կազմակերպելու նպատակով: Ալ-Ջարկաուիի նման ընտրությունը պայմանավորված էր նաև իրաքյան իշխանություններ-քրդեր հակասությունների սրմամբ և Իրաքի հյուսիսը անթռիչք գոտի հռչակմամբ: Դա հնարավորություն էր տալիս մի կողմից ստանալ Սադամ Հուսեյնի վարչակարգի օժանդակությունը քրդերի դեմ ջիհադական պայքար իրականացնելու համար, իսկ մյուս կողմից՝ պաշտպանված մնալ օդային հարվածներից:

Հյուսիսային Իրաքում Ալ-Շամիին հաջողվում է ստեղծել «Ջունդ ալ-Իսլամ» (Իսլամի բանակ) կառույցը, որն իր վերահսկողության տակ ուներ զգալի տարածքներ: 9/11-ի բռնարարք-

ներից և ԱՄՆ կողմից ղեկավարվող կոալիցիայի կողմից Աֆղանստանում ռազմական գործողություններ սկսելուց հետո Իրաքում «Ջունդ ալ-Իսլամը» միավորվեց այլ իսլամական խմբերի հետ՝ վերածվելով «Անսար ալ-Իսլամ» (Իսլամի աջակիցներ) կառույցի:

Երբ ԱՄՆ կողմից ղեկավարվող կոալիցիոն ուժերը սկսեցին պայքարն Աֆղանստանում, Ալ-Ջարկաուին հեռացավ Քանդահար, որտեղից էլ մոտ 300 զինակիցների ուղեկցությամբ մուտք գործեց Իրան: Ալ-Ջարկաուին շրջագայեց Իրանի հյուսիսարևմտյան հատվածներով՝ էլ ավելի խորացնելով կապերը իրան-իրաքյան սահմանամերձ շրջաններում: Ճանապարհորդելով Մերձավորարևելյան տարածաշրջանով՝ Ալ-Ջարկաուին եղավ Լիբանանում, Սիրիայում և Իրաքի սուննիաբնակ տարածքներում՝ հավաքելով համախոհների ջիհադական պայքարի համար: Իրաքում Ալ-Ջարկաուին միացավ «Անսար ալ-Իսլամ» իսլամական արմատական կառույցին: Նրա անդամակցությունն այս կառույցին հետագայում շահարկվեց ԱՄՆ իշխանությունների կողմից որպես Սադամ Հուսեյնի և «ալ-Կաիդա»-ի միջև եղած կապ, իսկ Ալ-Ջարկաուին ամերիկյան վարչակարգը բնորոշեց որպես կապող օղակ «ալ-Կաիդա»-ի և Սադամ Հուսեյնի միջև⁷⁵: Այդ ժամանակ Ալ-Ջարկաուի կողմից ղեկավարվող կառույցը դեռևս «ալ-Կաիդա»-ի կազմի մեջ չէր ներգրավված⁷⁶:

2002 թ. կեսերին Ալ-Ջարկաուին կարողացավ հաստատվել հյուսիսային Իրաքում, որտեղ որոշ տարածքներ գտնվում էին

⁷⁵ 2003 թ. փետրվարին ԱՄՆ պենտագոնի ղեկավար Քոլին Պաուելը ՄԱԿ-ին ուղղված իր ուղերձում նշեց, որ «Անսար ալ-Իսլամը» վերածվել է վտանգավոր մի կառույցի, որն ունի մոտ 500 ք/կմ վերահսկվող տարածք հյուսիսային Իրաքում, և այդտեղ ստեղծում է քիմիական զենք:

⁷⁶ **Stern J., Berger M. J.**, նշվ. աշխ., էջեր 20-24:

«Անսար ալ-Իսլամ» իսլամական խմբավորման վերահսկողության տակ: Ստեղծված իրավիճակն ու Սադամ Հուսեյնի իշխանությունը տապալելու նպատակով հասունացող արտաքին ռազմական միջամտությունը նպաստավոր էր Իրաքում իսլամական ծայրահեղ արմատական ուժերի կողմից ռազմական ակտիվ պայքար ձեռնարկելու համար: Այդ էր պատճառը, որ Ալ-Ջարկաուին իր դիրքերն Իրաքում ամրապնդելու նպատակով երկրի տարբեր շրջաններում, մասնավորապես սուննիաբնակ իրաքյան արևմտյան հատվածներում փնտրում էր տեղացի բնակչության աջակցությունը, ինչպես նաև այլ ապահով տարանցիկ ուղիներ ջիհադական պայքար ծավալելու համար: Այդ նպատակով Ալ-Ջարկաուին ժամանեց նաև հարևան Սիրիա, որի սիրիա-իրաքյան արևելյան սահմանը նա համարում էր դեպի Իրաք ջիհադականների ներհոսքի կազմակերպման ու օժանդակության ապահովման տարածք:

Աֆղանստանից հետո Իրաքը վերածվեց ջիհադական պայքարի խոշոր ռազմաճակատներից մեկի, որտեղ ծավալված պայքարը դարձավ շատ մուսուլմանների, այդ թվում Ալ-Ջարկաուիի և նրա ռազմական ճամբարն անցած իսլամականների ու նոր զինակիցների ակտիվ հարթակ:

3.3. 21-րդ դարի առաջին տասնամյակում իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում նկատվող գաղափարական նոր հենքը. Աբու Բաքր Նաջի, Աբու Մուսաբ Ալ-Մուրի, Սայֆ Ալ-Ադլ

Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուիի գործողությունների գաղափարական հիմքում կարելի է տեսնել 2004 թ. Աբու Բաքր Նաջիի կողմից համացանցում տարածված 113 էջանոց աշխատությունը, որը կոչվում էր «Վայրագության կառավարում» («Իդարաթ ալ-Թաուսիուշ»։ Այնտեղ փորձ էր արվում վեր հանել անցած շրջանի ջիհադական պայքարում տեղ գտած բացթողումները և տրվում էր այդ պայքարի հետագա ուղենիշները⁷⁷:

Ըստ Աբու Բաքր Նաջիի՝ վայրագությունների կառավարումն այն փուլն էր, որը պետք է անցներ իսլամական ումման, և այն համարվում էր ամենակրիտիկականը: Երբ մուսուլմանները հաջողություն արձանագրեին վայրագությունների կառավարման ժամանակ, ապա այդ փուլը կլիներ կամուրջ դեպի իսլամական պետության ստեղծումը, որին մուսուլմանները սպասել են խալիֆայության անկումից հետո: Իսկ եթե մուսուլմանները ձախողեն, ապա դա կբերի վայրագությունների ավելացմանը: Ըստ Նաջիի՝ վայրագությունների ավելացումը գերադասելի և ընդունելի է, քան ապրել կայունության պայմաններում անհավատների իշխանության տակ:

Հիշյալ աշխատությունում Նաջին պնդում էր, որ եթե մուսուլմաններին հաջողվի անցնել վայրագությունների փուլը, ապա մնում էր ստեղծել իսլամական պետություն:

⁷⁷ Stern J., Berger M. J., նշվ. աշխ., էջեր 20-24:

Աշխատությունում նա նախանշում է թուլացող թշնամի վարչակարգերի դեմ ուղղված պայքարի մի ծրագիր: Ըստ Նաջիի՝ ԱՄՆ-ին ներքաշելով Միջին Ասիայում իրականացվող պայքարի մեջ՝ մուսուլմաններն ի վիճակի են հաղթելու ամերիկացի զինվորներին՝ կործանելով ԱՄՆ անպարտելի գերտերության առասպելը: Դրանից հետո մուսուլմանները պետք է կենտրոնացնեն իրենց պայքարը անհավատ մուսուլմանական երկրների և արևմտյան, հատկապես ԱՄՆ մշակութային և տնտեսական թիրախների դեմ: Այդ ժամանակ վայրագությունն ու քառուրդ գլուխ կբարձրացնեն, և այդ տարածաշրջանները կսկսեն վախենալ անվտանգության բացակայությունից և անարխիայից: Նաջին որպես ջիհադական պայքարի իրականացման օրինակ է դիտում Եգիպտոսը, սակայն չի մոռանում նաև Իրաքի մասին, որտեղ կայացավ իսլամականների ներուժի արագ համախմբում, որն օգտագործվեց հարևան երկրներում ջիհադական պայքարն ակտիվացնելու համար⁷⁸: Նաջիի հիշյալ աշխատությունից շարունակում են լայնորեն մեջբերումներ անել: Այն տարածում ունի այժմյան իսլամականների, մասնավորապես «Իսլամական պետության» զինյալների շրջանում:

21-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում իր գաղափարներով աչքի ընկավ Աբու Մուսաբ Ալ-Մուրիին:

⁷⁸ ʿAbī Bakr Najjī, ʿIdārat al-tawhīsh, ʾAḫḍar marḥala sasmir biha al-umma, 2004, ص 3-18 .
https://pietervanostaeyen.files.wordpress.com/2015/02/idarat_al-tawahhush_-_abu_bakr_naji.pdf

Ալ-Սուրիին հեղինակել է մեծ քանակությամբ աշխատություններ⁷⁹, որոնք ջիհադական պայքարի գաղափարախոսության կարևոր բաղկացուցիչներից են⁸⁰:

Իսլամականների շրջանում մեծ տարածում է գտել Ալ-Սուրիի «Իսլամական դիմակայության համընդհանուր կոչ» աշխատությունը⁸¹, որն առաջին անգամ հայտնվեց համացանցում 2004 թ. դեկտեմբերին: 1600 էջից բաղկացած այդ գործում Ալ-Սուրիին ոչ միայն վերլուծության է ենթարկում 20-րդ դարի կեսերից իսլամական ծայրահեղ արմատական կառույցների ծավալած ջիհադական պայքարը, վեր հանում դրա դրական և բացասական կողմերը, այլև մատնանշում իրականացվող և իրականացվելիք ջիհադական պայքարի նպատակներն ու հետագա ընթացքը:

Ալ-Սուրիին և Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին հավանաբար հանդիպել են 1990-ական թթ. սկզբին Աֆղանստանում իրականացվող ջիհադական պայքարի շրջանակներում⁸²: Ալ-Ջարկաուիի որոշ կողմնակիցներ պնդում էին, որ Իրաքում Ալ-Ջարկաուին ընկել է նաև Աբու Մուսաբ Ալ-Սուրիի գաղափարների ազդեցության տակ⁸³:

Բանն այն է, որ «ալ-Կաիդա»-ի ղեկավար որոշ շրջանակներ ընդունում էին շիայական կազմակերպությունների հետ համա-

⁷⁹ St' u **Աբու Մուսաբ Ալ-Սուրի**, նշվ. աշխ., էջ` 201, <http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up> (Մուսք, ապրիլի 4, 2012 թ.):

⁸⁰ **Lia B., Hegghammer Th.**, Jihadi Strategic Studies-The alleged al-Qaida policy study preceeding the Madrid bombings, Studies in Conflict and Terrorism, 27 (5), September-October, 2004, pp. 355-375.

⁸¹ ابو مصعب السوري، دعوة المقاومة الإسلامية العالمية، ديسمبر، ٢٠٠٤
<http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up>

⁸² **Stern J., Berger M. J.**, նշվ. աշխ., էջեր 24-25:

⁸³ Interview with Abd al-Hadi al-Darraj, Al-Manar TV (Beirut), December 2, 2004.

գործակցության հնարավորությունը, մինչդեռ Ալ-Սուրիին ընդհանրապես մերժում էր սուննիների և շիաների միջև համագործակցության որևիցե տարբերակ՝ հիշեցնելով պաղեստինյան հակամարտության ընթացքում դրա բացասական հետևանքները: Շիաների նկատմամբ նման պահվածք նկատվեց նաև Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուիի վարքագծում, ով հանդես էր գալիս Իրաքում շիաների դեմ պայքարելու բացահայտ կոչերով ու մոլեռանդությամբ: Այս երկու գործիչների համագործակցությունը մնաց աննկատ և իր ազդեցությունն ունեցավ և այժմ էլ ունենում է մուսուլմանների շրջանում իսլամական արմատական գաղափարների ու ծայրահեղ արմատական գործելաոճի տարածման վրա:

Հայացք նետելով 20-րդ դարի կեսերից մինչև 2001 թ. ընկած ժամանակահատվածում ջիհադական պայքարի մեթոդներին՝ Ալ-Սուրիին ջիհադ իրականացնող կազմակերպությունները բաժանում է հետևյալ խմբերի.

1. Գաղտնի ռազմական կառույցներ,
2. Բաց ռազմաճակատներում (հակամարտություններ) գործող կառույցներ,
3. Փոքր բջիջներ ներկայացնող և անհատական ջիհադ իրականացնող կառույցներ:

Ընդհանուր առմամբ այս կառույցները վերոհիշյալ ժամանակահատվածում իրականացրած ջիհադական պայքարում հաջողություններ չեն արձանագրել, ինչի պատճառը, ըստ Ալ-Սուրիի, ոչ միայն նրանց կառուցվածքային խնդիրներն էին, այլ նաև արմատական և հեղափոխական փոփոխություններն ու նախադրյալները, որոնք փոխել են պատմության ընթացքը, փոխում են ներկան և հետևաբար նաև կփոխեն ապագան:

Ալ-Սուրիին բացասաբար էր վերաբերվում ջիհադական պայքարում «Տալիբան» շարժման դերակատարման ակտիվության նկատմամբ Բեն Լադենի անվստահությանը, որով վերջինս վտանգում էր արաբական ջիհադական ներկայությունն Աֆղանստանում:

Ալ-Սուրիի առաջ քաշած իսլամական դիմակայության կոչի ռազմական մարտավարությունը հիմնվում էր 2 տեսակ ջիհադի վրա.

1. անհատական ահաբեկչական ջիհադ և սակավաթիվ, միմյանցից անկախ խմբերի գաղտնի գործողությունների ակտիվություն, որը ենթադրում էր պարտիզանական պայքարի միջոցով թշնամու դիրքերի կազմաքանդում,
2. անհրաժեշտ նախադրյալների առկայությամբ բաց ռազմաճակատներում մասնակցություն, որն իր հերթին ենթադրում էր տարածքների վերահսկողություն, որոնց ազատագրումից հետո կսահմանվեն շարիաթի օրենքները:

Ըստ Ալ-Սուրիի՝ առկա իրավիճակում մուսուլմանների կողմից ԱՄՆ և նրա դաշնակիցների դեմ ծավալվող իսլամական դիմակայության ռազմական ակտիվությունը պետք է իրականացվեր պարտիզանական մարտերի, քաղաքացիական ահաբեկչության, միմյանցից անկախ և անջատ սակավաթիվ խմբերի և գաղտնի մեթոդների կիրառմամբ անհատական գործողությունների շրջանակներում: Ջիհադի և իսլամական դիմակայության օգտին ուժային հավասարակշռության ցանկացած փոփոխություն կնվազեցնի ամերիկյան ազդեցությունը, կավելացնի բաց ռազմաճակատներում գործելու հնարավորությունը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով իսլամական տարածքների ազատագրման ու այստեղ շարիաթի օրենքների ամրագրման համար:

Փաստորեն այդ փուլում (այսինքն՝ 2000-ական թթ. սկիզբ) ԱԼ-Սուրիին նախապատվությունը տալիս էր անհատական ասիաբեկչությանն ու միմյանցից անկախ ջիհադական խմբերի գաղտնի գործողությունների ակտիվությանը, քան բաց ռազմաճակատներում ջիհադական պայքարի իրականացմանը, որի հնարավորությունը իսլամականների համար տվյալ փուլում բացակայում էր: Սակայն, ըստ ԱԼ-Սուրիի, շարիաթի օրենքներով առաջնորդվող իսլամական պետության ստեղծմանը կարելի էր հասնել հիմնականում բաց ռազմաճակատներում իրականացվող պայքարի շնորհիվ:

Ըստ ԱԼ-Սուրիի՝ հնարավոր է անհատական ջիհադ իրականացնել մուսուլմանական երկրներում և ընդհանրապես աշխարհի տարբեր հատվածներում, քանի որ չի պահանջվում որոշակի պայմանների առկայություն, սակայն բաց ռազմաճակատների ջիհադի հաջող իրականացումը կախված է որոշ ռազմավարական նախադրյալների գոյության հետ, որոնք են՝

1. Աշխարհագրական նախադրյալներ. կապված են տարածքի հետ և իրենց մեջ ներառում են՝

ա. Ընդարձակ տարածքներ,

բ. Երկարաձիգ սահմաններ ունեցող տարածքներ,

գ. Պաշարման կամ շրջափակման համար դժվարին տարածքներ,

դ. Քարքարոտ վայրեր և քարանձավներ ունեցող լեռնային, ինչպես նաև անտառապատ տարածքներ, որտեղ հնարավոր կլինի կենտրոնացնել ռազմում թշնամուն դիմակայելու համար: Ցանկալի է, որ այստեղ լինեն անտառապատ լեռնային տարածքներ,

ե. Տարածքներ, որտեղ սննդի և ջրի պաշարները բավարար լինեն մուսուլմանների համար թշնամու կողմից երկարատև պաշարման դեպքում:

2. Բնակչության գործոն. ենթադրում է զգալի թվով բնակիչների առկայություն, որոնց շրջանում խմորումներն ու շարժումները բավական անվերահսկելի են, հատկապես եթե այս տարածքներում խիտ բնակեցված են քաղաքներն ու գյուղական համայնքները: Բացի դրանից, այս տարածքներում բնակվող երիտասարդությունը պետք է աչքի ընկնի ռազմական համառությամբ, պայքարելու ունակությամբ, իսկ զինապաշարները պետք է հասանելի լինեն երիտասարդությանը:

3. Քաղաքական գործոն. ենթադրում է, որ տարածքը պետք է ունենա այնպիսի բնակչություն, որին դյուրին կլինի ջիհադի պայքարին ներգրավել՝ համախմբելով նրանց ջիհադականների շուրջ, վերջիններիս ֆինանսական և այլ տիպի աջակցություն տրամադրելով: Բնակչության կողմից իսլամական դիմակայություն ապահովելու կարևոր նախապայմաններից էր նաև արտաքին ագրեսիան, ինչպես նաև իսլամական դիմակայությանն ու ջիհադի պայքարին նպաստող կրոնական, քաղաքական, տնտեսական և սոցիալական անբարենպաստ պայմանների առկայությունը տվյալ տարածքներում:

Ալ-Սուրիին, համադրելով վերոհիշյալ նախադրյալներն ու գործոնները, առանձնացնում է բաց ռազմաճակատների առումով հարմար հետևյալ տարածքները՝ Աֆղանստանը, Կենտրոնական Ասիայի երկրները, Եմենը և Արաբական թերակղզին, Մարոկոն և Հյուսիսային Աֆրիկան, Լևանտը (Սիրիա, Լիբանան) և Իրաքը⁸⁴:

Հետագայում Իրաքում Ալ-Սուրիի առաջ քաշած բաց ռազմաճակատի գաղափարի հնարավորությունից օգտվեց Աբու Մուսաբ Ալ-Չարկաուին, ով հասավ այն բանին, որ իր կառույցի

⁸⁴ ابو مصعب السوري، دعوة المقاومة الإسلامية العالمية، ديسمبر، ٢٠٠٤، ص ١٣٦٧-١٣٧٣ .

<http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up>

կողմից վերահսկվող իրաքյան շրջաններում ստեղծվեին իսլամական օրենքներով առաջնորդվող տարածքներ: Իսկ ավելի ուշ՝ արդեն սիրիական հակամարտության ընթացքում, ըն-
ձեռնված հնարավորությունից օգտվեց Ալ-Ջարկաուիի հետնոր-
դը՝ Աբու Բաքր Ալ-Բադդադին, ով Իրաքի և Սիրիայի զգալի
հատվածներում 2014 թ. հունիսի վերջին հռչակեց «Իսլամական
պետություն»:

Այդ ժամանակ Ալ-Սուրիի և Ալ-Ջարկաուիի ծրագրերը
համընկնում էին, ինչը վնասում էր «ալ-Կաիդա»-ի ցանցային
ջիհադական պայքարին՝ ստվերելով կառույցը: Հավանաբար դա
էր պատճառը, որ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակն ամեն ինչ
արեց, որպեսզի Ալ-Ջարկաուին գործի «ալ-Կաիդա»-ի դրոշի
ներքո՝ իրենց տեսադաշտում պահելով հորդանանցուն, թուլաց-
նելով Ալ-Սուրի-Ալ-Ջարկաուի կապը: «Ալ-Կաիդա»-ի ղեկավար
շրջանակի կողմից Ալ-Ջարկաուին լիազորվեց համակարգել
Սիրիայից դեպի Իրաք շարժվող իսլամականների ներհոսքը:
Սակայն Ալ-Ջարկաուին նման նշանակումներից և առաջադ-
րանքներից նույնպես փորձում էր օգուտներ քաղել և իսլամա-
կանների տեղաշարժերի համակարգումով կախվածության մեջ
էր դնում ջիհադականներին «ալ-Թաուհիդ ուա ալ-Ջիհադ» կա-
ռույցից, հեղինակություն և ազդեցիկություն ձեռք բերում դեպի
Իրաք շտապող ջիհադականների շրջանում⁸⁵:

Երկու առանցքային իսլամական ծայրահեղ արմատական
գործիչների՝ Ալ-Սուրիի և Ալ-Ջարկաուիի տեսական և գործնա-
կան մոտեցումների ընդհանրացման ու Իրաքում դրանց իրա-
գործման վտանգավորությունն «ալ-Կաիդա»-ի համար առաջին

⁸⁵ **Gambill G.**, The Jamestown Foundation, Abu Musab aL-Zarqawi. A Biogra-
phical sketch, 15 Desember, 2004, [http://www.jamestown.org/single/?tx_tt-
news%5Btt_news%5D=27304#.VN5UAuaUeSp](http://www.jamestown.org/single/?tx_tt-news%5Btt_news%5D=27304#.VN5UAuaUeSp) (Մուտք, հոկտեմբերի 22, 2013 թ.):

անգամ գիտակցեց Սայֆ Ալ-Ադլը: Նա իր ռազմական գիտելիքների և փորձի շնորհիվ կարողացավ շատ արագ տեղ գտնել «ալ-Գաիդա»-ի ղեկավար օղակում՝ հետագայում ստանձնելով կազմակերպության ռազմական գործողությունների պլանավորման թևի ղեկավարությունը: Նրա առաջ քաշած նոր մարտավարության համաձայն՝ «ալ-Գաիդա»-ն իրեն հարող բջիջների օգնությամբ պետք էր իրականացնէր փոքր ահաբեկչական ակտեր, որոնցով Արևմուտքին հասցված հարվածն էլ ավելի զգայուն կլինէր, քան մեկ, խոշոր ահաբեկչական գործողությունը: Ալ-Ադլը պնդում էր, որ իսլամական արմատականության գործողություններն անարդյունավետ են, քանի որ դրանք մեծ մասամբ ինքնաբուխ էին և լավ կազմակերպված չէին: Ալ-Ադլը կոչ էր անում «ալ-Գաիդա»-ին և դրան հարող կառույցներին կենտրոնանալ իսլամական պետություն հիմնելու վրա, որն առարկայական կդարձներ ջիհադի պայքարը, որտեղ առաջին հերթին կարևորվելու էր «մերձավոր թշնամու» դեմ ուղղված գործողությունները⁸⁶: Սայֆ Ալ-Ադլը կարևորում էր իսլամական արմատական կառույցների անվտանգության խնդիրների և նրանց կողմից իրականացվող հետախուզական գործունեության ապահովումը, որն ուղղված կլինէր իսլամա-

⁸⁶ The Telegraph, Osama bin Laden appoints new commander to spearhead war on West, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/asia/8123261/Osama-bin-Laden-appoints-new-commander-to-spearhead-war-on-West.html> (Մուտք, դեկտեմբերի 12, 2012 թ.): Եթե Ուսամա բեն Լադենի ուղերձների մեծ մասը նվիրված էր «հեռավոր թշնամու»՝ ԱՄՆ և դրա դաշնակիցների դեմ պայքարին, և միայն ուղերձների քիչ մասն էր վերաբերում «մերձավոր թշնամուն», ապա «ջիհադի» գաղափարախոսության արդի հեղինակներից շատերը (Այման Ալ-Ջաուահիրի, Սայֆ Ալ-Ադլ, Աբու Մուսաբ Ալ-Մուրի և այլք) իրենց գաղափարներում կարևորում էին «մերձավոր թշնամու» դեմ մղվող պայքարը (տե՛ս سيف العدل ، الأمن والاستخبارات, <http://www.ansar1.info/showthread.php?t=33433> (Մուտք, ապրիլի 4, 2012 թ.):)

կանների կորուստների նվազեցմանն ու գործողությունների արդյունավետության բարձրացմանը⁸⁷:

3.4. Իսլամական ծայրահեղ արմատականությունն Իրաքում Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո

Սադամյան վարչակարգի ժամանակ իսլամական արմատական գաղափարների տարածման նախադրյալների առկայությունը նպաստեց հետսադամյան Իրաքում իսլամական արմատական, հատկապես ծայրահեղ արմատական կառույցների ակտիվությանը:

Սադամ Հուսեյնի կրոնական քաղաքականության մեջ իր առանձնահատուկ դերն ունեցավ Իզզաթ Իբրահիմ Ալ-Դուրին: Նա զբաղեցնում էր Իրաքի փոխնախագահի պաշտոնը և ազդեցիկ դերակատարում ուներ սադամյան և հետսադամյան իրաքյան զարգացումներում⁸⁸:

2003 թ. Սադամ Հուսեյնի սուննիական իշխանության տապալումը հանգեցրեց Իրաքի սուննիաբնակ շրջաններում շիայական վարչակարգի դեմ խռովության բարձրացմանը, որը բաղկացած էր երեք հիմնական տարրերից՝

⁸⁷ Տե՛ս **Սայֆ Ալ-Ադլ**, նշվ. աշխ., <http://www.ansar1.info/showthread.php?t=33433> (Մուտք, հոկտեմբերի 11, 2013 թ.):

⁸⁸ 2015 թ. ապրիլի 17-ին ՋԼՄ-ներում լուրեր տարածվեցին Իզզաթ Ալ-Դուրիի սպանության մասին (տե՛ս Hussein deputy, insurgent leader al-Douri killed, Iraqi TV reports, **Hamdi Alkhshali**, **Jason Hanna** and **Michael Martinez**, CNN, April 17, 2015, <http://edition.cnn.com/2015/04/17/middleeast/iraq-al-douri-killed/index.html>), սակայն մայիսի 15-ին տարածված Իզզաթ Ալ-Դուրիի 15 րոպեանոց ձայնագրությունը հերքեց սպանության լուրերը (տե՛ս <https://www.youtube.com/watch?v=jnazVpMoAJM>):

1. Սադամյան վարչակարգից, որոնք համալրվեցին բանտերից ազատ արձակված մոտ 100.000 բանտարկյալներով:
2. Սուննի ցեղերից, որոնք ժամանակին ստացել էին սադամյան վարչակարգի օժանդակությունն ու մաքսանենգության շահույթներից օգտվելու հնարավարություն:
3. Օտարերկրյա ջիհադականների հոսքերից⁸⁹:

Իզզաթ Ալ-Դուրին կարողացավ իր ձեռքում կենտրոնացնել վերոհիշյալ 3 տարրերի համակարգումն ու ուղղորդումը:

Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքում նախկին վարչակարգին պատկանող մոտ 90.000 տարրեր կային, որոնց մեջ էին իրաքյան մոտ 26.000 հատուկ գվարդիականներ, Սադամ Հուսեյնի մոտ 30.000 ֆիդայիներ և նախկին վարչակարգի մոտ 30.000 սպաներ, հետախուզական ծառայությունների և բաասական այլ աշխատակիցներ ու զինվորականներ:

Սադամ Հուսեյնի ուժային կառույցների 65000-95000 ներկայացուցիչներ մնացին անգործ այն բանից հետո, երբ Պոլ Բրեմերի գլխավորած Ժամանակավոր կռակիցիոն ղեկավարությունը լուծարեց Իրաքի ռազմական համակարգը: Բադդադի գրավումից 10 օր անց Պոլ Բրեմերի կողմից տրվեց հակաբաասականության քաղաքականության մեկնարկն Իրաքում: Դրանից հետո նախկին «ԲԱԱՍ» կուսակցության անդամների զգալի հատվածը համալրեց կռակիցիոն իշխանությունների վարած քաղաքականությունից դժգոհների բանակն Իրաքում:

Սադամյան սուննիական վարչակարգի տապալումից ու շիայական իշխանությունների ձևավորումից հետո Իրաքի

⁸⁹Izzat ad Douri and ISIS, **Orton Kyle**, Baghdad Invest, Jule 4, 2015, <http://www.baghdadinvest.com/izzat-ad-douri-isis/>. Մուսք, հուլիսի 4, 2015 թ.:

սուննիաբնակ շրջաններում նույնպես աստիճանաբար սկսեցին նկատվել հակաշիայական տրամադրություններ: Ավանդապես այդ հատվածները զբաղեցնող սուննիական ցեղախմբերը, որոնք ազդեցիկ դիրքեր են ունեցել սադամյան իշխանության տարիներին, չէին կարող հաշվի նստել գնալով լուսանցքում հայտնվելու սեփական կարգավիճակի հետ: Դա ստիպեց սուննի ցեղերի և ցեղախմբերի զգալի հատվածին համալրել պաշտոնական Բաղդադի դեմ ընդվզող ուժերի շարքերը:

Վերոհիշյալ դժգոհությունների և ռեսուրսների համակարգման համար ստեղծվեց ցանցային համակարգ, որի ղեկավարությունը ստանձնել էին (համենայն դեպս մինչև 2005 թ.) նախկին սադամյան վարչակարգի առաջնորդներից Իզզար Ալ-Դուրին և Մուհամմադ Յունուս Ալ-Ահմադը: Վերջիններս, հայտնվելով ընդհատակում, տեղափոխվեցին Սիրիա (Իրաքում կռավիցիոն ուժերի հայտնվելուց հետո բասսականներից շատերը տեղափոխվեցին հարևան Սիրիա, որտեղ նրանց ապաստան տված սիրիական իշխանությունները փորձում էին հետագայում այդ ներուժն Իրաքում օգտագործել սեփական նպատակների իրականացման համար), որտեղից իրականացնում էին Իրաքում գլուխ բարձրացնող ընդվզումը, մանավանդ, որ խռովարարների ճամբարը դեռևս բավարար ամուր չէր, որպեսզի ստանձներ Իրաքում իշխանության եկած շիայական վարչակարգի դեմ պայքարի ղեկավարությունը: Անգամ այդ ժամանակ Իրաքում ակտիվ գործող Աբու Մուսաբ Ալ-Չարկաուիի կողմից ղեկավարվող կառույցը դեռևս չունեւ այն բավարար ներուժը՝ ստանձնելու սուննիական պայքարի ղեկավարումը, և ստիպված էր Իրաքում գործող այլ ուժերի հետ համագործակցության գնալ:

Այդ համատեքստում Մադամ Հուսեյնը կենտրոնացրեց իր վերահսկողության տակ մնացած ռազմական ներուժը սիրիական սահմանից եկող ռազմական ու ֆինանսական օգնությունը

վերահսկելու, ինչպես նաև մարդկային հոսքերն ու իսլամական ծայրահեղական ու չափավոր ուժերը համակարգելու համար: Սադամյան վարչակարգի և իսլամական ծայրահեղ արմատական ուժերի համագործակցության արդյունք էր նաև 1990-ական թթ. վերջում Իրաքի հյուսիսային հատվածներում քրդերի դեմ «Անսար ալ-Իսլամ» իսլամական ծայրահեղ արմատական խմբավորման օգտագործումը, որը համալրվում էր Աֆղանստանից և Պակիստանից եկող իսլամականներով, Իրաքի հյուսիսում իր վերահսկողության տակ ուներ տարածքներ ու ռազմաբազաներ, որտեղ ռազմական պատրաստություն էին անցնում մեծ թվով իսլամականներ: Այդ համագործակցությունը հետագայում հնարավորություն տվեց Իզզաթ Ալ-Դուրիին 2003 թ. վերջում սալաֆիական ներուժն օգտագործել Իրաքում ահաբեկչական ակտիվության և երկրում կռալիցիոն ուժերի դեմ պայքարելու համար⁹⁰:

2003 թ. արդեն գործում էին գաղտնի ուղիներ, որոնցով Միջին Ասիայից և Հյուսիսային Աֆրիկայից իսլամականներ էին տեղափոխվում Իրաք՝ կռալիցիոն ուժերի դեմ ջիհադական պայքար իրականացնելու համար: Այդ ժամանակվանից սկսած՝ Իրաքում, մասնավորապես ալ-Ֆալուջայում, կառույցի կողմից տարվող ջիհադական պայքարն էլ ավելի սուր բնույթ ստացավ:

Իրաքում ծավալված պայքարում տեղի սուննիական խմբավորումները առաջնային դիրքերում էին «ալ-Կաիդա»-ի կողմից

⁹⁰ Մինչ 2006 թ. վերջը (Սադամ Հուսեյնը մահապատժի ենթարկվեց 2006 թ. դեկտեմբերին) Իզզաթ Ալ-Դուրին գտնվում էր ստվերում և Միջինայից ղեկավարում էր Իրաքում ծավալվող հակաիշխանական պայքարը: Սակայն Սադամ Հուսեյնի մահապատժից հետո Ալ-Դուրին հանդես եկավ արդեն Իրաքում համասուննիական պայքարի լիդերի դիրքերից՝ ստեղծելով Նակշբանդիական սուֆիական միաբանության ռազմական թևը՝ «Նակշբանդիական ուղղության տղաների բանակը» (جيش رجال الطريقة النقيبندية):

ուղղորդվող սուննիական խմբավորումների հանդեպ, սակայն հետագայում Իրաքում սուննիական հակակառավարական պայքարում առանցքային դիրքերում հայտնվեցին իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումները հորդանանցի Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող իսլամական ծայրահեղ արմատական կառույցի գլխավորությամբ⁹¹:

Ալ-Ջարկաուին և «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Բեն Լադենը չէին վստահում միմյանց, սակայն Իրաքի շուրջ ստեղծված իրողությունը ստիպեց նրանց համագործակցության եզրեր փնտրել: Բեն Լադենն Իրաքի ժողովրդին հասցեագրված ուղերձով հանդես եկավ՝ կոչ անելով նրանց նախապատրաստվել իսլամական հինավուրց մայրաքաղաքի (Բաղդադի) նվաճմանն ու երկրում հայտնված կռաւիցիոն «անհավատ» ուժերի դեմ համընդհանուր դիմակայության: Ուղերձում նշվում էր նաև, որ Սադամ Հուսեյնի սոցիալիստ-անհավատների (բասսականների) հետ կարող է լինել արժանի համագործակցություն Իրաքում հայտնված ամերիկյան ուժերի դեմ պայքարում: Տվյալ փուլում «հեռավոր թշնամու» դեմ պայքարում «մերձավոր թշնամու» հետ համագործակցությունը ողջունելի էր «ալ-Կաիդա»-ի ղեկավարության կողմից: Դա պետք է տևեր այնքան ժամանակ, մինչև Իրաքում իսլամականները ապահովեին իրենց հաղթանակը⁹²:

Հիշյալ համագործակցությունը երկար ժամանակ տևեց՝ հետագայում ապահովելով 2013-2014 թթ. ընթացքում Սիրիայում և Իրաքում իսլամականների հաղթանակներն ու առաջխաղացումը և իրականություն դարձնելով 2014 թ. հունիսի վերջին «Իսլամական պետության» հռչակումը:

⁹¹ Izzat ad Douri and ISIS, **Orton Kyle**, Baghdad Invest, July 4, 2015, <http://www.baghdadinvest.com/izzat-ad-douri-isis/> (Մուտք, հուլիսի 4, 2015 թ.):

⁹² **Weiss M., Hassan H.**, Նշվ. աշխ., էջեր 11-19.

Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող իսլամականների ջիհադական պայքարի սկիզբը դրվեց 2003 թ. օգոստոսին Իրաքում տեղի ունեցած հնչեղ ահաբեկչական երեք բռնարարքներով, որոնք իրականացվեցին «ալ-Թաուհիդ ուա ալ-Ջիհադ» իսլամական արմատական կառույցի կողմից⁹³:

2004 թ. հոկտեմբերին Ալ-Ջարկաուին հավատարմության երդում տվեց Բեն Լադենին, որից հետո Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող կառույցը կոչվեց «Թանզիմ Կաիդա ալ-Ջիհադ ֆի Բիլադ ալ-Ռաֆիդայն» (تنظيم قاعدة الجهاد في بلاد الرافدين)՝ «Ջիհադի խարիսխ երկու գետերի միջև ընկած երկրում», կամ պարզապես՝ «ալ-Կաիդա-ն Իրաքում» (ԱԿԻ))՝ վերածվելով «ալ-Կաիդա»-ի ճյուղավորման Իրաքում⁹⁴: 2004 թ. դեկտեմբերին Բեն Լադենն ընդունեց Ալ-Ջարկաուիի հավատարմության երդումը՝ նրան տալով ԱԿԻ կառույցի էմիր տիտղոսը⁹⁵:

Այդ ժամանակից սկսած՝ Ալ-Ջարկաուիի ղեկավարությամբ գործող սուննի իսլամականների խնդիրը Իրաքում իշխանության եկած շիայական վարչախմբի, շիայական հասարակական-քաղաքական առանցքային գործիչների և նրանց հետ համագոր-

⁹³ Առաջին ահաբեկչական գործողությունը օգոստոսի 7-ին Բադդադում՝ Հորդանանի դեսպանատան մոտ, տեղի ունեցած պայթյունն էր, որի հետևանքով զոհվեց 17 մարդ, երկրորդը՝ ՄԱԿ-ի ներկայացուցչության շենքի մոտ տեղի ունեցած պայթյունն էր, որի հետևանքով զոհվեցին 22 մարդ, իսկ վերջինը՝ Նաջաֆում՝ Իմամ Ալիի մզկիթի մոտ, տեղի ունեցած պայթյունն էր, որի հետևանքով զոհվեց 95 մարդ, այդ թվում՝ Այաթոլլահ Մուհամմադ Բաքիր Ալ-Հաքիմը՝ Իրաքում իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի հոգևոր առաջնորդը (տե՛ս **Lister C.**, Profiling the Islamic State, Brookings Doha Center Analysis Paper, November, 2014, pp. 6-7, http://www.brookings.edu/~media/Research/Files/Reports/2014/11/profiling%20islamic%20state%20lister/en_web_lister.pdf (Մուտք, դեկտեմբեր 1, 2014 թ.):

⁹⁴ **Stern J., Berger M. J.**, նշվ. աշխ., էջ 24:

⁹⁵ **Weiss M., Hassan H.**, նշվ. աշխ., էջեր 20-36:

ծակցող ուժերի դեմ պայքարն էր, որի ընթացքում հաճախակի օգտագործվում էր պայթուցիկներով բեռնված մեքենաների և ճանապարհների պայթեցման ռազմավարությունը: Ալ-Ջարկաուիին Իրաքում հրահրում էր էթնիկ-դավանական թշնամանք, որն առաջին հերթին ուղղված էր շիաների դեմ⁹⁶: Բացի դրանից, Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող իսլամականները լայնորեն կիրառում էին օտարերկրացի պատանդների գլխատման և այդ բռնարարքների մասին տեղեկատվությունը համացանցով տարածելու մարտավարությունը: Ալ-Ջարկաուիի կողմից ղեկավարվող իսլամական ծայրահեղ արմատականների մոլեռանդ գործելառճը հարուցեց ինչպես ոչ մուսուլմանական, այնպես էլ մուսուլմանական արմատական, նաև ծայրահեղ արմատական շրջանակների բացասական վերաբերմունքը՝ Իրաքում իրականացվող ջիհադական պայքարի հետ կապված: Նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներից Ալ-Ջարկաուիին ուղղված քննադատական ուղերձներ եղան Իրաքում շիաների հանդեպ անհանդուրժող և թշնամական վերաբերմունքի համար՝ չմոռանալով Ալ-Ջարկաուիին հիշեցնել ջիհադական պայքարի նպատակներից մեկը՝ Իրաքում իսլամական իշխանություն կամ էմիրություն հիմնելու մասին: Սակայն այդ ուղերձներում հազվադեպ էր հնչում Իրաքում իսլամական խալիֆայություն (պետություն) ստեղծելու անհրաժեշտությունը՝ նշելով Իրաքում նույնիսկ էմիրության ստեղծման համար անհրաժեշտ պայմանների բացակայության, մասնավորապես տեղի բնակչության շրջանում վստահության աճող կորստի և բացասական վերաբերմունքի խորացման մասին: Այս ամենը վկայում էին, որ

⁹⁶ **Kazimi N.**, Zarqawi's Anti-Shia Legacy. Original or Borrowed?, Hudson Institute, November 1, 2006, <http://www.hudson.org/research/9908-zarqawi-s-anti-shia-legacy-originalor-borrowed-#BkMkToFoot2> (Մուսըք, հունիսի 5, 2012 թ.):

ջիհադական պայքարում Ալ-Չարկաուին իր մոլեռանդությամբ և դաժանությամբ դուրս էր եկել անգամ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակների վերահսկողությունից, իսկ Իրաքում շարունակվող իսլամականների մոլեռանդ վարքագիծը չփոխվեց նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներից հնչող քննադատություններից հետո⁹⁷:

Ալ-Չարկաուին կարողացավ որոշակի գործողություններ կազմակերպել նաև Իրաքի սահմաններից դուրս: Նրան է վերագրվում, օրինակ՝ 2005 թ. նոյեմբերին Հորդանանի մայրաքաղաք Ամմանում մահապարտ ահաբեկիչների կողմից իրականացված պայթյունների կազմակերպման պատասխանատվությունը և այլն⁹⁸:

Ալ-Չարկաուին ԱՄՆ, դրա դաշնակից եվրոպական երկրները, ՄԱԿ-ը, Իրաքի շիա վարչակարգը տեսնում էր մեկ ճամբարում, որոնց նպատակը ամբողջ աշխարհի սուննիներին իրենց ժառանգությունից զրկելն էր: Նա սկսեց պայքարը Իրաքում հայտնված «անհավատ» ուժերի դեմ՝ ստեղծելով ռազմական ճամբարներ, հավաքելով զինամթերք և կամավորներ մուսուլմանական աշխարհից:

Իսլամականների ու բասսականների դրդմամբ իրաքյան սուննիաբնակ հատվածներում բոյկոտվեցին 2005 թ. հունվարի խորհրդարանական ընտրությունները, որոնք նպաստեցին

⁹⁷ Zawahiri to Zarqawi, July 9, 2005, Global Security.org, http://www.global-security.org/security/library/report/2005/zawahiri-zarqawi-letter_9jul2005.htm, Libi to Zarqawi, December 10, 2005, Combating Terrorism Center at West Point, <https://www.ctc.usma.edu/wpcontent/uploads/2013/10/Atiyahs-Letter-to-Zarqawi-Original.pdf> (Մուսք, հունվարի 14, 2013 թ.):

⁹⁸ BBC Russian.com, Досье. Абу Мусаб Заркави, http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_3683000/3683384.stm (Մուսք, փետրվարի 12, 2013 թ.):

սուննի խոռվության մեջ ԱԿԻ կառույցի դիրքերի ամրապնդմանն ու Իրաքում ահաբեկչական ակտիվության խորացմանը:

Ինչ վերաբերում է Իրանի ազդեցությանն Իրաքում, ապա Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո իրանական ազդեցության տարածման լայն հնարավորությունն ստեղծվեց: Բաղդադի հյուսիս-արևելքում՝ Սադամ Սիթի կոչված բնակավայրում, Մուհամմադ Սադիկ Ալ-Սադրի (սպանվեց 1999 թ. իրաքյան գաղտնի ստորաբաժանումների կողմից) որդին՝ Մուքթադա Ալ-Սադրը բաասական իշխանության տապալումից հետո հիմնեց Սադր Սիթին՝ մինչ այդ հիմք դնելով «Զայլ ալ-Մահդի» (Մահդիի բանակ) կառույցի ստեղծման համար: Ալ-Սադրը դրանով փորձեց Իրաքում հիմնել լիբանանյան «Հիզբալլահ» շիայական կառույցի նմանօրինակը՝ օգտվելով Իրանի աջակցությունից և ամրապնդելով իր ազդեցության գոտիներն Իրաքում: Իրանի ազդեցության տարածման հնարավորություններից մեկն էլ ստեղծվեց այն ժամանակ, երբ իրան-իրաքյան պատերազմի տարիներին դեպի Իրան գաղթած հարյուրհազարավոր իրաքյան շիաներ Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո հնարավորություն ստացան վերադառնալ շիա վարչակարգ ունեցող հետսադամյան Իրաք: Վերոշարադրյալը լրացուցիչ ապակայունացնող գործոն հանդիսացավ իրանական ազդեցության տակ գործող շիայական զանազան կառույցների ու խմբավորումների և իրաքյան սուննիների միջև⁹⁹:

2006 թ. արևմտյան փորձագիտական որոշ շրջանակների կողմից տրված գնահատականների համաձայն՝ ԱԿԻ կառույցը մյուս սուննիական ապստամբ կառույցների հետ միասին ի վիճակի էին տարեկան ապահովել 70-200 մլն. դոլար ապօրինի

⁹⁹ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 36-57:

շահույթ¹⁰⁰: Իսլամականները դա իրականացնում էին զանազան միջոցներով. օրինակ՝ Իրաքում գտնվող ամերիկյան սպառազինության հափշտակություն և վաճառք, մարդկանց հափշտակություն և պատանդների փրկագների ստացում, իրաքյան նավթահորերից ստացված նավթի վաճառք (օրինակ՝ Բաջիի նավթավերամշակման համալիրի շահագործումը)¹⁰¹ և այլն: Նման ֆինանսական հոսքերը ԱԿԻ կառույցը դարձրին ինքնաֆինանսավորման բարձր գործակից ունեցող հարուստ մի գործոն: 2005-2010 թթ. ընթացքում Օոցի միապետություններից և այլ արտաիրաքյան աղբյուրներից իրաքյան իսլամականներին եկող ֆինանսական օժանդակությունը կազմեց ԱԿԻ կառույցի բյուջեի ներհոսքի ընդամենը 5 տոկոսը¹⁰²: Իրաքում նման ֆինանսական հնարավորություններն ու ազդեցությունն «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակին ստիպեցին էլ ավելի կենտրոնանալ ԱԿԻ կառույցի վրա: 2005 թ. հուլիսին Այման Ալ-Ջաուահիրին նամակով դիմեց Ալ-Ջարկաուիին, որտեղ մատնանշեց ԱԿԻ կառույցի կողմից իրականացվող ռազմավարական 3 ուղենիշները՝

1. Վտարել ամերիկյան զինուժն Իրաքից,
2. Հիմնել իսլամական էմիրություն Իրաքի սուննիաբնակ տարածքներում,

¹⁰⁰ Washington institute for Near East Policy, US House Financial Services Committee, November 13, 2014, financialservices.house.gov/uploadedfiles/hhrg-113-ba00-wstate-mlevitt-20141113.pdf. (Մուսք, հոկտեմբերի 13, 2013 թ.):

¹⁰¹ **Bahney B., Shatz J. H.,** Ganiem C., McPherson R., Sude B., An Economic Analysis of the Financial Records of al-Qa'ida in Iraq, National Defense Research Institute, 2010, Oil smuggling from the Baiji Oil Refinery, **Cordon R. M., Trainer E. B.,** The Endgame. The Inside Story of the Struggle for Iraq, from George W. Bush to Barack Obama, New York, Vintage Books, 2013, p. 231.

¹⁰² Washington institute for Near East Policy, US House Financial Services Committee, November 13, 2014, financialservices.house.gov/uploadedfiles/hhrg-113-ba00-wstate-mlevitt-20141113.pdf. (Մուսք, հոկտեմբերի 13, 2013 թ.):

3. Օգտագործել Իրաքի տարածքն արաբական այլ երկրների դեմ իրականացվելիք ահաբեկչական հարձակման համար:

Ալ-Չաուահիրին կոչ հղեց Ալ-Չարկաուիին՝ չկրկնել տալիքների սխալները, որոնք իրենց գործողություններում սահմանափակվեցին Պակիստանի և Աֆղանստանի որոշ տարածքներով: Իր ուղերձում Ալ-Չաուահիրին կոչ էր անում նաև զերծ մնան իրանցիներին վնաս պատճառելուց, քանզի իրենք և իրանցիներն այս անգամ թիրախավորվում են ամերիկացիների կողմից:

2005 թ. Աբու Մուսաբ Ալ-Չարկաուիին հասցեագրված Այման Ալ-Չաուահիրիի նամակը չտվեց ցանկալի արդյունք «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակին:

Ալ-Չարկաուիի սպանությունից 6 ամիս առաջ՝ 2005 թ. դեկտեմբերին, «ալ-Կաիդա»-ն ևս մեկ նամակ հասցեագրեց հորդանանցուն՝ այս անգամ Աթիա Աբդ Ալ-Ռահմանի¹⁰³ կողմից: Աբդ Ալ-Ռահմանը նույնպես հորդանանցի էր, առանցքային դիրք էր զբաղեցնում «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակում՝ համարվելով Բեն Լադենի մոնետիկը, ով անձամբ ապահովում էր կապը կառույցի կենտրոնի և ճյուղավորումների միջև:

Նամակում ևս քննադատության էր ենթարկվում Ալ-Չարկաուիի մարտավարությունն Իրաքում: Աբդ Ալ-Ռահմանը հորդորում էր Ալ-Չարկաուիին առավել մեղմ գտնվել սուննի ցեղերի առաջնորդների ու շիադավանների նկատմամբ, ռազմական

¹⁰³ Աթիա Աբդ Ալ-Ռահմանը «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակի՝ Ուսամա բեն Լադենի ու Այման Ալ-Չաուահիրիի, և աշխարհի տարբեր անկյուններում գործող «ալ-Կաիդա»-ի ճյուղավորումների միջև կապող օղակ էր: Նրա միջոցով էր նաև «ալ-Կաիդա»-ն ուղերձներ հղում կառույցին հարող իսլամական ծայրահեղ արմատական այլ խմբավորումներին:

գործողությունների ժամանակ խորհրդակցել «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակների հետ և այլն:

Աթիա Աբդ Ալ-Ռահմանի նամակը տվեց իր որոշակի արդյունքները՝ ԱԿԻ-ն ու մի քանի այլ սուննի իսլամական ծայրահեղ արմատական կառույցներ համախմբվեցին: 2006 թ. հունվարին Ալ-Ջարկաուին հայտարարեց «Մաջլիս Շուրա ալ-Մուջահիդին ֆի իլ-Իրակ»-ի ստեղծման մասին: Այն բաղկացած էր սալաֆիական 6 տարբեր խմբավորումներից, որոնցից 5-ը իրաքյան կառույցներ էին, իսկ ոչ իրաքյանը ԱԿԻ-ն էր, որն էլ իրականացնում էր խորհրդի գործողությունների կենտրոնական ղեկավարումը:

Սակայն ընդհանուր առմամբ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակների հորդորները անտեսված մնացին Ալ-Ջարկաուիի կողմից: 2006 թ. փետրվարի 22-ին Իրաքի ՆԳ նախարարության աշխատակիցների հանդերձանքով ԱԿԻ կառույցի զինյալները մի քանի պայթուցիկներ գործի դրեցին Սամարրա քաղաքի «ալ-Ասքարի» մզկիթում, որը համարվում էր շիաների հայտնի սրբատեղիներից մեկը՝ ամփոփելով իր մեջ շիայական 12 իմամներից երկուսի դամբարանները: Իրաքի ալ-Անբար նահանգի մի քանի սուննի ցեղապետեր սպանվեցին¹⁰⁴: Իրաքյան շիայական շրջանակներից էլ ավելի լսելի դարձան հակասուննիական կարգախոսները, և երկրում էլ ավելի սրվեցին դավանաբանական հակասությունները:

Ալ-Ջարկաուիի գտնվելու վայրը կռալիցիոն ուժերին անհայտ էր: Ըստ Բրյուս Ռիդելի՝ Ալ-Ջարկաուին իրաքյան

¹⁰⁴ The Washington Post, **Karen De Young**, Staff Writer Monday, October 2, 2006, Letter Gives Glimpse of Al-Qaeda's Leadership, <http://www.washingtonpost.com/wpdyn/content/article/2006/10/01/AR2006100101083.html> (Մուսք, հոկտեմբերի 14, 2014 թ.):

իրավապահ մարմինների կողմից մի քանի անգամ ձերբակալվել էր, սակայն վերջիններս պատկերացում չեն ունեցել, թե ով է ընկել իրենց ձեռքը, և ազատ են արձակել նրան: Սակայն 2006 թ. սկզբից կռաւիցիոն ուժերն ու իրաքյան հատուկ ստորաբաժանումները լրացուցիչ ջանքեր գործադրեցին Ալ-Ջարկաուիին հայտնաբերելու համար: Ամերիկյան հատուկ ծառայությունները կարողացան հայտնաբերել Ալ-Ջարկաուիին, ով այդ պահին գտնվում էր Բաղդադից հյուսիս-արևելք գտնվող Հիբիբում: 2006 թ. հունիսի 7-ին ամերիկյան F-16 ինքնաթիռը ուժերով ձերբակալեց Ալ-Ջարկաուիի հնարավոր գտնվելու վայրը: Իրաքյան ուժերն առաջինը հայտնաբերեցին դեռևս ողջ, բայց մահացու վնասված Ալ-Ջարկաուիին¹⁰⁵:

Մի շարք իսլամական ծայրահեղ արմատական շրջանակներից Ալ-Ջարկաուիին ուղղված մահախոսականները չուշացան: Նույնիսկ «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենն իր ուղերձում Ալ-Ջարկաուիին անվանեց «Ջիհադի սուր և առյուծ»՝ մոռանալով մինչ այդ իրենց միջև տարաձայնությունները¹⁰⁶: Արու Մուսաբ Ալ-Ջարկաուիի սպանությունից հինգ օր անց «Մաջլիս Շուրա ալ-Մուջահիդին»-ը նոր առաջնորդ հայտարարեց եգիպտացի Արու Համգա Ալ-Մուհաջիրին (կամ Արու Այյուբ Ալ-Մասրին), ով դարձյալ իրաքցի չէր: 2006 թ. հոկտեմբերի 13-ին ԱԿԻ կառույցը վերանվանվեց «Դաուլա ալ-

¹⁰⁵ **Cordon R. M.**, Trainer E. B., The Endgame. The Inside Story of the Struggle for Iraq, from George W. Bush to Barack Obama, New York, Vintage Books, 2013, pp. 206-207.

¹⁰⁶ **Riedel B.**, The Search for Al-Qaeda. Its Leadership, Ideology, and Future, Washington, D.C., Brookings Institutions Press, 2010, p. 106.

Իսլամիա ֆի իլ-Իրաք» («Իրաքում իսլամական պետություն» (ԻԻՊ)), որի առաջնորդ հռչակվեց Աբու Ումար Ալ-Բադդադիին¹⁰⁷:

Ալ-Մուհաջիրը լավ ծանոթ էր և՛ Ալ-Ջաուահիրիին, և՛ Ալ-Ջարկաուիին: Նա պատկանում էր 1980-ական թթ. ջիհադականների սերնդին: Ալ-Մուհաջիրը քայլեր ձեռնարկեց Իրաքում իրականացվող պայքարում իրաքցիների դիրքերի ուժեղացման ուղղությամբ: 2006 թ. հոկտեմբերին Աբու Համզա Ալ-Մուհաջիրի կողմից ղեկավարվող իսլամականների ջիհադական պայքարի արեալն ընդգրկեց Իրաքի սուննիաբնակ Նինաուա, ալ-Անբար, Սալահ ադ-Դին նահանգները, ինչպես նաև իրաքյան այլ հատվածները (օրինակ՝ Բաքիլ, Ուասիտ, Դիյալա, Բադդադ, Քիրքուք և այլն):

Ալ-Մուհաջիրն իր մարտավարությամբ մոտ էր «ալ-Կաիդա»-ի ղեկավար օղակի որդեգրած ռազմավարությանը, և ԻԻՊ-ի առաջնորդ իրաքցի Աբու Ումար Ալ-Բադդադիի հետ համագործակցության խորացմամբ փորձեց հարթել դեռևս Ալ-Ջարկաուիի ժամանակ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակների և Իրաքի իսլամական ծայրահեղ արմատական խմբերի միջև ստեղծված լարվածությունը¹⁰⁸: Խնդիրն այն էր, որ շատ սուննիական ծայրահեղ արմատական խմբավորումների նպատակը, որոնք միացել էին ԻԻՊ-ին Իրաքում, Իրաքի ազատագրումն էր արևմտյան զինուժից, այլ ոչ թե՛ իսլամական պետության

¹⁰⁷ Naval Postgraduate School, Al-Qaida in Iraq (AQI), Archived from the original on 1 April 2007. Retrieved 14 July 2014., <http://web.archive.org/web/20070401114027/http://www.nps.edu/Library/Research/SubjectGuides/SpecialTopics/TerroristProfile/Current/AlQaidaIraq.html>. (Մուսք, հոկտեմբերի 19, 2013 թ.):

¹⁰⁸ **Rayburn J.**, Iraq After America. Strongmen, Sectarians, Resistance, Stanford, California, Hoover Institution Press, 2014, p. 128.

ստեղծումն էր, ինչպես ցանկանում էին Ալ-Մուհաջիբն ու Ալ-Բադդադին¹⁰⁹:

ԻԻՊ-ի զինյալների ահաբեկչական գործողություններին արդյունավետություն և ազդեցիկություն էին տալիս իսլամականների կողմից ինքնաշեն պայթուցիկներով բռնված մեքենաների օգտագործումն ահաբեկչական հարձակումների ժամանակ¹¹⁰:

2006 թ. վերջում ԻԻՊ-ն Իրաքում իր վերահսկողության տակ ուներ էներգակիրներով հարուստ զգալի տարածքներ, վերածվել էր տարեկան 150-200 մլն դոլար շահույթ ստացող, ինքնաբավ ու ինքնաֆինանսավորվող մի կառույցի, որն իր ֆինանսական ռեսուրսները համալրում էր հիմնականում նավթամթերքի ապօրինի վաճառքից, պատանդների փրկագներից և այլ աղբյուրներից հավաքագրվող միջոցների հաշվին¹¹¹:

2006 թ. ալ-Անբարում «ալ-Կաիդա»-ն ռազմական ակտիվ գործողություններ սկսեց, որոնք ուղեկցվեցին ահաբեկչական բռնարարքներով և սպանություններով իրաքյան ուժերի, արևմտյան զինվորականների, ինչպես նաև տեղի ցեղերի և դրանց առաջնորդների շրջանում: Արդյունքում ալ-Անբարում ձևավորվեց «Սահուա» (الصحة)-թարգմանաբար՝ զարթոնք) շարժումը՝ ուղղված իսլամականների դեմ, որտեղ առաջնագծում էին

¹⁰⁹ **Hashim S. A.**, The Islamic State. From al-Qaeda Affiliate to Caliphate, Middle East Policy Council, Vol. 21, No. 4, Winter 2014, www.mepc.org/journal/middle-east-policy-archives/islamic-state-al-qaeda-affiliate-caliphate. (Մուսք՝ մայիսի 10, 2014 թ.).

¹¹⁰ **Cordon R. M., Trainer E. B.**, The Endgame. The Inside Story of the Struggle for Iraq, from George W. Bush to Barack Obama, New York, Vintage Books, 2013, pp. 233-234.

¹¹¹ **Levitt M.**, Declaring an Islamic State, Running a Criminal Enterprise, The Hill, July 7, 2014, <http://thehill.com/blogs/pundits-blog/211298-declaring-an-islamic-state-running-a-criminal-enterprise> (Մուսք՝ հուլիսի 10, 2014 թ.).

սունսի ցեղախմբերը: Շարժումն այնքան տարածվեց, որ նույնիսկ առանձին սունսիաբնակ հատվածներում իսլամականներին դրդեց համագործակցել իրենց դեմ ուղղված ցեղախմբերի հետ:

ԻԻՊ-ի դիրքերը սկսեցին թուլանալ՝ պայմանավորված ամերիկյան նոր քաղաքականությամբ, և դրա շրջանակներում ռազմական ներկայության ընդլայնմամբ:

Սակայն այս ամենը դեռ չէր նշանակում, որ իսլամականները կորցնում են իրենց ազդեցությունն Իրաքի այլ հատվածներում: Բակուբայի գրավման ժամանակ ամերիկյան ուժերը հանդիպեցին լավ կազմակերպված դիմադրության՝ զուգորդված ծուղակներով, ահաբեկչական պայթյուններով, դիպուկահարների ներգրավմամբ և այլ ռազմական գործողություններով: Նման մարտավարական հնարքների դիմեց նաև «Իսլամական պետությունը» արդեն 2013-2015 թթ. Սիրիայում և Իրաքում:

Ամերիկյան և իրաքյան ուժերի կողմից Իրաքի տարբեր հատվածներում ստեղծված բանտերը (օրինակ՝ Բուքա¹¹², Աբու Ղրայբ և այլն բանտերը, որտեղ ազատագրված էր եղել նաև ներկայիս «Իսլամական պետության» խալիֆ Աբու Բաքր Ալ-Բադդադին) դարձան այն վայրերը, որտեղ տեղի ունեցավ իսլամականների մերձեցում, որն էլ ավելի մոտեցրեց ջիհադական գաղափարներով առաջնորդվող իսլամականներին: Բանտերն այն ապահով վայրերն էին, որտեղ իսլամականները հեռու էին մնում ռազմական ակտիվ գործողություններից, հետևաբար՝ սպանվելուց: Երբ բանտարկյալները ազատ էին արձակվում,

¹¹² Բացվել է 2003 թ. և անվանվել է Նյու Յորքի հրշեջներից Ռոնալդ Բուքայի անունով, ով մահացել է 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչության ժամանակ:

նրանք արդեն ունեին միմյանց հեռախոսահամարներն ու հասցեները կապ հաստատելու համար¹¹³:

2000-ական թթ. երկրորդ կեսին ԻԻՊ-ը կանգնած էր Իրաքում ջիհադական պայքարի առաջնագծում՝ աչքի ընկնելով մոլեռանդ վարքագծով, ահաբեկչական ակտիվությամբ, իր մեջ համախմբելով մի քանի սուննիական ծայրահեղ իսլամական արմատական խմբավորումներ: Իրաքում կռաւիցիոն ուժերի հայտնվելուց հետո (2003 թ.) մեկ տարվա ընթացքում գրանցվեցին 78 ահաբեկչական հարձակումներ: Հաջորդ 12 ամսվա ընթացքում Իրաքում ահաբեկչական հարձակումների թիվը հասավ 302-ի: 2007 թ. ահաբեկչությունների հետևանքով Իրաքում սպանվեց 5425 մարդ, 9878 մարդ տարբեր վնասվածքներ ստացավ¹¹⁴:

Այնուամենայնիվ, Իրաքում 2007 թ. կռաւիցիոն ուժերի և շիայական իշխանությունների կողմից իսլամական ծայրահեղ արմատականության դեմ վարվող պայքարի և «Սուննիական վերափոխման խորհուրդների» ձևավորման արդյունքում ԻԻՊ-ը զգալի վնասներ կրեց: Այդ համատեքստում Իրաքի իսլամական ծայրահեղ արմատական շրջանակներում մշակվեցին ռազմավարական և մարտավարական ուղենիշներ պարունակող գաղափարներ, որոնք «Իրաքում իսլամական պետության քաղաքական դիրքը բարելավելու ռազմավարական ծրագիր»¹¹⁵ վերտառությամբ հրապարակայնվեցին 2010 թ. մայիսին՝ ԻԻՊ-ի առաջնորդ Աբու Ումար Ալ-Բադդադիի և նրա ռազմական թևի ղեկավար Աբու Համզա Ալ-Մուհաջիրի սպանությունից մեկ

¹¹³ **Chulov M.**, Isis: The Inside Story, The Guardian, December 11, 2014, http://www.theguardian.com/world/2014/dec/11/-sp-isis-the-inside-story?CMP=share_btn_tw

¹¹⁴ **Stern J., Berger M. J.**, նշվ. աշխ., էջեր 26-27:

خطة استراتيجية لتعزيز الموقف السياسي لدولة العراق الإسلامية، يناير.

<http://www.hanein.info/vb/showthread.php?t=1584332010>.

ամիս անց: Ծրագրում առաջ քաշվեց 5 կետ, որոնցով առաջնորդվելով՝ ԻԻՊ-ը կունենար էլ ավելի ամուր դիրքեր և Իրաքից կռալիցիոն ուժերի հետանալուց հետո պատրաստ կլիներ կյանքի կոչել իսլամական պետություն հիմնելու սեփական նկրտումները: Դրանք էին՝

1. *Համախմբում.* համախմբել Իրաքում իսլամականների ջանքերը՝ ապացուցելու համար, որ իսլամական պետությունը իրականությունն է: Աստիճանաբար ամրապնդել սեփական դիրքերը ալ-Ֆալուջա և Մոսուլ քաղաքներում:

2. *Ռազմական պլանավորման հավասարակշռում.* ուներ 3 բաղկացուցիչ՝

ա) *9 փամփուշտ ուղղված «անհավատներին» և 1 փամփուշտ՝ «խաչակիրներին».* այն հետապնդում էր նպատակ՝ ավելացնել վախի մթնոլորտը իրաքյան հասարակական շրջանակներում, քանզի Իրաքում սովորական էր դարձել իրավապահ մարմիններին և ուժային կառույցներին իրաքցիների անդամակցության դեպքերը:

բ) *Մաքրագերծում.* նպատակը իսլամականների կողմից այն տարածքների զբաղեցումն էր, որտեղ գտնվում էին իրաքյան ուժային ստորաբաժանումները: Իսլամականները, աստիճանաբար ռազմական բախումների բռնվելով վերջիններիս հետ, կփորձեին հեռացնել նրանց այդ վայրերից:

դ) *Իրաքյան քաղաքական և ռազմական առանցքային պաշտոնյաների սպանություն:*

3. *Ջիհադական վերափոխման խորհուրդների ձևավորում.* հնարավորություն էր տալիս տեղացի սուննիներին ստեղծել մարտական խմբեր իրաքյան ուժային կառույցներից սեփական տարածքները պաշտպանելու համար՝ աստիճանաբար ավելացնելով վերահսկողությունն այդ տարածքների նկատմամբ:

4. *Քաղաքական խորհրդանիշ*. դրա հիմնական իմաստը քաղաքական և կրոնական առաջնորդի հոչակման անհրաժեշտությունն էր, ինչը կարևոր քայլ էր իսլամական պետություն ստեղծելու ճանապարհին:

5. *Ոչ մուսուլմանների պաշտպանություն*. այս բաղկացուցիչը ենթադրում էր, որ իսլամական պետության կազմում հայտնված ոչ մուսուլմանները գտնվելու են իսլամականների պաշտպանության ներքո, շարիաթում ամրագրված սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով այն բացասական կարծիքը, որը տիրապետում էր ՁԼՄ-ներում իսլամականների վերաբերյալ¹¹⁶:

2010 թ. հունիսին Պենտագոնը ներկայացնող գեներալ Օդիերնոյի մամուլի ասուլիսի ժամանակ նշվեց, որ ամերիկյան ուժերը ոչնչացրել են ԻԻՊ-ի ղեկավար շրջանակի 42 անձանցից 34-ին, և կառույցին զգալի հարված է հասցվել՝ խզելով կապը Աֆղանստանում և Պակիստանում տեղակայված «ալ-Կաիդա»-ի ղեկավար օղակի հետ¹¹⁷: Այնուամենայնիվ, 2010-2011 թթ. Իրաքից ամերիկյան զինուժի հեռացումը հնարավորություն տվեց իսլամականներին վերականգնել կորցրածը, իսկ վերոհիշյալ ծրագրի առկայությունն ու դրանում նախանշված ռազմավարական և մարտավարական ուղենիշներով առաջնորդվելը պարարտ հող նախապատրաստեցին իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների ազդեցության տարածման համար ոչ միայն Իրաքում, այլև դրանից դուրս¹¹⁸:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹¹⁷ **Weiss M., Hassan H.**, նշվ. աշխ., էջեր 60-81:

¹¹⁸ McCants W., Inside the ISIS Blueprint for Winning, The Daily Beast, September 29, 2015, <http://www.thedailybeast.com/articles/2015/09/29/inside-the-isis-blueprint-for-winning.html> (Մուսք, սեպտեմբերի 29, 2015 թ.)

ԳԼՈՒԽ IV

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ» ՈՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ

4.1. Իսլամական ծայրահեղ արմատականության ներկա միտումները

21-դարի առաջին տասնամյակի վերջում ի հայտ եկած համաշխարհային տնտեսական ճգնաժամը, մուսուլմանական ավտորիտար վարչակարգերի սոցիալ-տնտեսական ձախողված քաղաքականությունը լրացուցիչ խնդիրներ առաջացրին արաբական հասարակական-քաղաքական շերտերում: 2010 թ. իսլամական աշխարհում ծավալվող այսպես կոչված «Արաբական գարունը» խաթարեց երկար տարիներ վերափոխման գործընթացներից հեռու մնացած մուսուլմանական մի շարք երկրների անդորրը: 2010 թ. վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումների ու ցույցերի արդյունքում Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում տապալվեցին ավտորիտար վարչակարգերը, հակակառավարական ցույցեր անցկացվեցին Ալժիրում, Մարոկոյում, Մավրիտանիայում, Հորդանանում, Իրաքում, Եմենում, Բահրեյնում, Սուդանում, Լիբանանում, բարդ իրավիճակ ստեղծվեց Քուվեյթում և Սաուդյան Արաբիայում, ճգնաժամի մեջ հայտնվեցին Սիրիան և Իրաքը: Այս գործընթացներում նկատելի է իսլամական արմատական կազմակերպությունների, հատկապես ծայրահեղ արմատական խմբավորումների ակտիվ դերակատարումը միջինասիական,

հյուսիսաֆրիկյան, Կենտրոնական Ասիայի և այլ տարածաշրջաններում:

«Ալ-Կաիդա»-ն ուշիուշով հետևում էր 2010 թ. վերջից մուսուլմանական երկրներում սկսված ցնցումներին և հեղափոխություններին: 2010-2011 թթ. գտնվելով Աբուտաբադում՝ Ուսամա բեն Լադենը իր ուշադրության կենտրոնում էր պահում մուսուլմանական աշխարհում 2010 թ. տեղ գտած վերափոխումները՝ իր նամակներում կոչ անելով պայքարել անհավատ մուսուլման վարչախմբերի դեմ¹¹⁹:

Իր գլխավոր մունետիկի՝ Աթիա Աբդ Ալ-Ռահմանի միջոցով հրահանգներ էին գնում դեպի իսլամական ծայրահեղ արմատական այլ խմբավորումներ՝ ջիհադական պայքարը տեղերում կազմակերպելու համար: Հրահանգներ էին տրվում թիրախների ընտրության մեջ առավելապես կենտրոնանալ արևմտյան օբյեկտների վրա (մասնավորապես մուսուլմանական երկրներում գտնվող ամերիկյան ռազմական և դիվանագիտական թիրախների վրա)՝ խուսափելով տեղի ուժային կառույցների և կառավարական օբյեկտների վրա հարձակումներից: Ըստ «ալ-Կաիդա»-ի ղեկավարների՝ դա կարող էր վնասել մուսուլմանական երկրներում սկսված հեղափոխական գործընթացներում գլուխ բարձրացնող իսլամական

¹¹⁹ Իր մահից մեկ շաբաթ առաջ գրած նամակներից մեկում Բեն Լադենը անդրադառնում է մուսուլմանական աշխարհում տեղ գտած վերափոխումներին՝ կոչ անելով դուրս գալ անհավատ վարչակարգերի դեմ պայքարի, ինչպես նաև շարունակել ջիհադական պայքարն Աֆղանստանում (տե՛ս Ուսամա բեն Լադենի նամակը շեյխ Մահմուդին, 26 ապրիլ, 2011 թ. Աբուտաբադ նամակներ, SOCOM-2012-0000010, <http://www.ctc.usma.edu/posts/letters-from-abbottabad-bin-ladin-sidelined> (Մուսք, սեպտեմբերի 30, 2014 թ.)):

ծայրահեղ արմատականությանը¹²⁰:

Դեռևս Ուսամա բեն Լադենի կողմից հայտարարված «հեռավոր թշնամու» դեմ կենտրոնանալն իր ազդեցությունը թողեց «ալ-Կաիդա»-ի հետագա մարտավարության վրա, որը զգացվեց նաև 2010 թ. մուսուլմանական երկրներում ծայր առած զարգացումներում իսլամականների ջիհադական պայքարի ժամանակ:

Աֆղանա-պակիստանյան սահմանային հատվածում պատրաստարված «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակը, գիտակցելով Մերձավորարևելյան և Հյուսիսաֆրիկյան տարածաշրջաններում ծայր առած հակամարտություններից հեռու գտնվելու հանգամանքն ու դրանցում ակտիվ ներգրավման կարևորությունը, իր կառույցներին (մասնավորապես Մերձավոր Արևելքում գտնվող իսլամական խմբավորումներին) հասցեագրված ուղերձներ էր հղում՝ փորձելով սահմանել վերջինների համար ջիհադական պայքարի ուղենիշները, որոնց նպատակը «ալ-Կաիդա»-ին հարող կառույցները սեփական ուղեծրում պահելն էր¹²¹: «Ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակին մտահոգում էր տեղերում իրականացվող ջիհադական պայքարի հետևանքով անմեղ մուսուլմանների սպանությունը, ինչն իր բացասական ազդեցու-

¹²⁰ Տե՛ս Office of the Director of the National Intelligence, Bin Laden's Bookshelf, Letter Addressed to Atiyah, <http://www.dni.gov/files/documents/ubl/english/Letter%20from%20UBL%20to%20Atiyah.pdf>, կամ՝ <http://www.dni.gov/files/documents/ubl/english/Letter%20Addressed%20to%20Atiyah.pdf> (Մուտք, հոկտեմբերի 25, 2013 թ.):

¹²¹ Տե՛ս Աբուտաբալի նամակներ, SOCOM-2012-0000016, <http://www.ctc.usma.edu/posts/letters-from-abbottabad-bin-ladin-sidelined> (Մուտք, սեպտեմբերի 30, 2014 թ.):

թյունն էր ունենում տվյալ ջիհադական ճակատներում¹²²: Այս համատեքստում 2011 թ. «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներում քննադատվում էին ԻԻՊ-ի և պակիստանյան տալիբների մարտավարությունն ու թիրախների ընտրությունը՝ քննարկելով այդ կառույցներից «ալ-Կաիդա»-ի հեռու մնալու խնդիրները¹²³:

2011 թ. մայիսի 2-ին Պակիստանի Աբուտաբադ քաղաքում ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից իր առանձնատանը սպանվեց Ուսամա բեն Լադենը: Նրա գտնվելու վայրը, նույնիսկ առանձնատան հարկը և սենյակը հայտնի էր ամերիկյան հատուկ ծառայություններին: Մայիսի 2-ին Ուսամա բեն Լադենը սպանվեց գլխին ուղղված երեք կրակոցներից: Նրա դիակը տեղափոխվեց Ջալալաբադի ամերիկյան ռազմակայան՝ հատուկ ծառայությունների կողմից այն հետազոտելու և ճանաչելու համար, որից հետո դիակը տեղափոխվեց Բադրամ¹²⁴: Ամերիկյան իշխանությունների որոշմամբ Ուսամա բեն Լադենի

¹²² Անգամ Ուսամա բեն Լադենն ուղերձներով հանդես եկավ՝ կոչ անելով իր հետևորդներին զերծ մնալ այնպիսի վայրերում իրականացվելիք ռազմական գործողություններից, որոնք կարող էին անմեղ մուսուլմանների սպանությունների պատճառ դառնալ: Դրանով Բեն Լադենը փորձում էր վերադարձնել մուսուլմանական հասարակությունում ջիհադականների հանդեպ վստահությունը (տե՛ս Ուսամա բեն Լադենի նամակը Մուստաֆա Աբու Յազիդ, 10 մայիս, 2011 թ. Աբուտաբադի նամակներ, SOCOM-2012-0000019, <http://www.ctc.usma.edu/posts/letters-from-abbottabad-bin-ladin-sidelined> (Մուսք, սեպտեմբերի 30, 2014 թ.)):

¹²³ Տե՛ս Ադամ Ղադանի նամակը հասցեատերը պարզ չէ, Աբուտաբադի նամակներ, SOCOM-2012-0000004, <http://www.ctc.usma.edu/posts/letters-from-abbottabad-bin-ladin-sidelined> (Մուսք, սեպտեմբերի 30, 2014 թ.):

¹²⁴ Այդ մասին է վկայում Հետազոտական լրագրության կենտրոնի (Կալիֆոռնիա, Բերկլի) ղեկավար Ֆիլ Բրոնստայնի ամերիկյան հատուկ ծառայության աշխատակցի (աշխատակցի անունը չի հրատարակվում) հետ հարցազրույցը: Վերջինը Բեն Լադենի գլխին արձակած երեք կրակոցի հեղինակն է. <http://esquire.ru/what-it-feels-like-88> (Մուսք, հունիսի 23, 2013 թ.):

դիակը հետագայում նետվեց բաց ծով՝ իսլամականների կողմից հետագա երկրպագումը բացառելու և Բեն Լադենի գերեզմանը սրբատեղիի չվերածելու համար:

Հարկ է արձանագրել, որ իսլամական արմատական շրջանակները պատրաստվել էին դեպքերի նման զարգացմանը: Դեռևս 2010 թ. հուլիսի 16-ին համացանցում տարածված տեսանյութում Աբու Յահյա Ալ-Լիբին, փառաբանելով ամերիկյան ռազմական ինքնաթիռների ուժակոծությունից սպանված ԻԻՊ-ի առաջնորդներին՝ Աբու Ումար Ալ-Բադդադիին և Աբու Համզա Ալ-Մուհաջիբին, շեշտում էր, որ «չկա որևէ մուջահիդ, լինի առաջնորդ կամ սովորական մարտիկ, ով պատրաստ չէ անձնագոհության և հետ կանգնի ջիհադի պայքարից: Իրական մուսուլմանը սպասում է այդ պահին ամեն ժամ, ամեն վայրկյան: Ջիհադը, որը մեր հաղթական հավատքի մասն է կազմում, չի կարող ընդհատվել, հետաձգվել կամ դադարեցվել ջիհադականներից որևէ մեկի սպանությամբ՝ անկախ ջիհադի պայքարում նրա զբաղեցրած դիրքից»¹²⁵: Սրանով շեշտվում էր, որ նույնիսկ «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենի սպանությունը չի կարող խանգարել իսլամականների կողմից իրականացվող ջիհադական պայքարին:

Ուսամա բեն Լադենի սպանությունը, «Արաբական գարնան» հետ կապված զարգացումներն ու աշխարհաքաղաքական նոր միտումներն «ալ-Կաիդա»-ին ստիպում են փնտրել նոր առաջնորդներ, որոնք օժտված կլինեն գաղափարական, մարտավարական-ռազմավարական ունակություններով, շարիաթի իմացությամբ և ընդունակ կլինեն ձկուն արձագանքել մուսուլ-

¹²⁵ **Scheuer, M.**, Abu Yahya al-Libi. Al-Qaeda's Theological Enforcer-Part 1”// Terrorism Focus.-Jamestown Foundation, Volume IV, Issue 25, http://www.jamestown.org/news_details.php?news_id=265 (Մուսք, մայիսի 2, 2014 թ.):

մանական աշխարհում տեղի ունեցող գործընթացներին: Բեն Լադենից հետո կազմակերպության ղեկավարումը ստանձնեց Այման Ալ-Ջաուահիրին:

Հետքենլադենյան «ալ-Կաիդա»-ն Այման Ալ-Ջաուահիրիի կողմից ղեկավարվելու մասին է խոսում 2011 թ. հունիսի 8-ին համացանցում հայտնված ուղերձը, որտեղ Այման Ալ-Ջաուահիրին վերահաստատում է իր հավատարմության երդումը հավատացյալների առաջնորդ (Ամիր ալ-Մումինին) Մուլլա Ումարին՝ նշելով, որ ինքը լիազորված է դա անել «ալ-Կաիդա»-ի առաջամարտիկների անունից¹²⁶:

Բոլորովին այլ էր իրավիճակը ԻԻՊ-ի դեպքում, որի հիմնադիրը ջիհադական պայքարի թիրախավորման հարցում առանձնահատուկ մոտեցում ուներ, ինչը հակասում էր «ալ-Կաիդա»-ի նախանշած իսլամական ծայրահեղ արմատականների պայքարի ուղենիշներին: Իրաքում ակտիվություն ցուցաբերող ԻԻՊ-ը իր առջև հստակ խնդիր էր դրել ջիհադական պայքարն ուղղորդել «մերձավոր թշնամու»՝ իրաքյան վարչակարգի, ուժային կառույցների, շիադավանների ու իրենց գաղափարները չլիսող սուննիների դեմ:

Ներքաղաքական իրավիճակն Իրաքում 21-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբում նույնպես մնում էր լարված (երբ 2003 թ. կոալիցիոն ուժերը հայտնվեցին Իրաքում, Սադամ Հուսեյնը կոչով դիմեց մուսուլմաններին գալ և պայքարել ամերիկյան ուժերի դեմ: Իշխանությունից զրկված Իրաքի նախագահի կոչը արձագանք գտավ ինչպես իսլամականների, այնպես էլ սիրիա-իրաքյան սահմանային տարածքներում բնակվող զանազան ցեղերի և ցեղախմբերի շրջանում: Վերջիններս Իրաք էին

¹²⁶ Ayman Al-Zawahiri's message, <http://www.as-ansar.com/vb/showthread.php?p=193941> (Մուսք, դեկտեմբերի 13, 2013 թ.):

Ժամանում սիրիական Դար ալ-Զուր և ալ-Հասաքա նահանգներից, որոնք վերածվել էին տարանցիկ ուղիների (հետագայում՝ 2012 թ. սկզբից, այդ նույն ճանապարհներով Իրաքում հայտնված իսլամականներն անցան Սիրիա և սկսեցին իրենց պայքարը Բաշար Ալ-Ասադի դեմ): Իրաքում հայտնված կռիվներն ուժերի դեմ պայքարելու համար Բաշար Ալ-Ասադի սիրիական վարչակարգը փորձ արեց կազմակերպել իսլամականների ներհուսքը դեպի Իրաք: Միևնույն ժամանակ, սիրիական իշխանությունները ձգտում էին հեռացնել արմատներ գցող իսլամական ծայրահեղական տրամադրությունները սեփական երկրից: Դա որոշակի լարվածություն առաջացրեց նաև Բաղդադ-Դամասկոս հարաբերություններում¹²⁷: Չնայած 2009-2010 թթ. իրաքյան կենտրոնական իշխանությունների կողմից ԻԻՊ-ի դեմ ճնշումներին ու աճող ծայրահեղ իսլամական դրսևորումների դեմ հետևողական պայքարին, իսլամականների ակտիվությունն Իրաքում չնվազեց¹²⁸: Դա չթուլացավ նաև 2010 թ., երբ սպանվեցին ԻԻՊ-ի առաջնորդներ Աբու Ումար Ալ-Բաղդադին և Աբու Այյուբ Ալ-Մսարին: Ավելին՝ ԻԻՊ-ի բռնի գործողություններն էլ ավելի լայն թափ ստացան, որոնք իրականացվեցին 2 փուլով՝

1. 2012 թ. հուլիսից մինչև 2013 թ. հուլիս: Նշված ժամանակահատվածում ԻԻՊ-ի զինյալների հարձակման թիրախ էին Իրաքի տարբեր հատվածներում գտնվող բանտերը՝

¹²⁷ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 98-113:

¹²⁸ ԻԻՊ-ը մարտավարական նոր գործողություններ որդեգրեց՝ Իրաքի տարբեր հատվածներում առկա բանտերի վրա հարձակումներ, իրաքյան մի քանի շրջաններում միևնույն ժամանակ (մեկ ժամվա տարբերությամբ) տասնյակ ահաբեկչական պայթյուններ, որոնց հետևանքով հարյուրավոր զոհեր էին գրանցվում (տե՛ս Factbox, Security Developments in Iraq, August 15, Reuters, 15 August 2011, <http://www.trust.org/item/?map=factbox-security-developments-in-iraq-august-15/>. (Մուսք, մարտի 12, 2014 թ.)):

ազատագրելով կառույցի անդամներին ու այլ դատապարտյալներին:

2. 2013 թ. հուլիսից մինչև 2014 թ. հուլիս: Այդ ժամանակահատվածում ԻԻՊ-ի զինյալների հարձակման կիզակետում էին իրաքյան իրավապահ մարմինների, անվտանգության ուժերի ու իշխանական շրջանակների ներկայացուցիչները:

2012-2013 թթ. ԻԻՊ-ն Իրաքում ձեռնարկեց «Պատերի քանդում» ռազմական գործողությունը, որն ընթացավ 4 փուլով՝

1. Հարձակումներ 4 բանտերի վրա: 2012 թ. սեպտեմբերին Թիքրիթի բանտի վրա հարձակման հետևանքով իսլամականների կողմից ազատագրվեցին մոտ 100 բանտարկյալներ, որոնց մոտ կեսը «ալ-Կաիդա»-ի անդամներ էին:
2. Հարձակումներ Իրաքի կենտրոնական իշխանությունների և Քուրդիստանի ռեգիոնալ կառավարության (ՔՌԿ) թիրախների վրա:
3. Հարձակումներ Բաղդադում իրաքյան անվտանգության ուժերի կայանատեղիների ու շիայական բնակավայրերի վրա ինքնաշեն պայթուցիկներով բեռնված մեքենաների և այլ զինատեսակների օգտագործմամբ:
4. Հարձակումներ շիաների դեմ՝ սրելով դավանաբանական հակասությունները¹²⁹:

Իրաքի վարչապետ Նուրի Ալ-Մալիքիի վարչակարգի կողմից ներիրաքյան քաղաքական զարգացումներում նկատվեցին բացթողումներ և սխալներ, որոնք նպաստում էին Իրաքում իրա-

¹²⁹ **Lewis J.**, Institute for the Study of War Iraq Updates, Al Qaeda in Iraq's "Breaking the Walls" Campaign, July 7, 2013, <http://iswiraq.blogspot.com/2013/07/al-qaeda-in-iraqs-breaking-walls.html> (Մուտք, սեպտեմբերի 13, 2014 թ.):

վիճակի վատթարացմանը: Մուննի (և ոչ միայն) քաղաքական գործիչների հանդեպ ճնշումներն ու հալածանքները ավելացնում էին սուննիաբնակ տարածքներում և այլ հատվածներում Ալ-Մալիքիի իշխանության նկատմամբ բացասական տրամադրությունները՝ դրդելով ցույցերի և անհնազանդությունների կենտրոնական իշխանությունների հանդեպ: 2013 թ. ապրիլի 13-ին Քիրքուքի հարևանությամբ գտնվող Հաուիջա բնակավայրում բողոքի ակցիայի ժամանակ իրաքյան իրավապահ մարմինների կողմից սպանվեցին 20 և տարբեր կարգի վնասվածքներ ստացան հարյուրից ավելի սուննիներ: Հաուիջայի բռնարարքները սկիզբ դրեցին Իրաքի տարբեր հատվածներում բողոքի ակցիաների, որոնց ընթացքում հարձակումների ենթարկվեցին ոստիկանական տեղամասերն ու զինվորական հենակետերը: Իրաքի խորհրդարանի նախագահ Ուսամա Ալ-Նուջայֆին կոչ արեց Ալ-Մալիքիին հրաժարական տալ: Ցույցերն ու դժգոհությունների ալիքը տարածվեցին նաև Բաղդադ և Մոսուլ, որտեղ իրականացվեցին նաև անհաբեկչական բռնարարքներ¹³⁰:

Ռազմական գործողությունների ընթացքում 2013 թ. ամռան դրությամբ Իրաքում ամեն ամիս ավելի քան 700 խաղաղ բնակիչներ էին սպանվում: Դեկտեմբերին Ալ-Մալիքի վարչակարգը իրաքյան զինուժի որոշ ստորաբաժանումներ ուղարկեց ալ-Ռամադի՝ ճնշելու ապստամբական տրամադրությունները, սակայն զուլխ բարձրացրած սուննի ցեղախմբերի դիմակայությունը ստիպեց նրանց ետ նահանջել: Հետագայում՝ 2014 թ. հունվարին, ԻԻՊ-ին հաջողվում է ամբողջական վերահսկողություն հաստատել նաև ալ-Ֆալուջա քաղաքում:

¹³⁰ **Rayburn J.**, Iraq Is Back on the Brink of Civil War, New Republic, May 8, 2013, <http://www.newrepublic.com/article/113148/iraqs-civil-war-breaking-out-again> (Մուսք, մայիսի 30, 2015 թ.):

2011 թ. մարտից հարևան Սիրիայում սկսված հակամարտությունը սկզբնական փուլում չգրավեց իրաքյան իսլամականներին: 2012 թ. դեկտեմբերին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Այման Ալ-Ջաուհիրին ուղերձով հանդես եկավ՝ կոչ անելով բոլոր իսլամականներին գնալ և մասնակցել Սիրիայում տեղի ունեցող ջիհադին: Այս ուղերձը լայն արձագանք գտավ աշխարհի տարբեր հատվածներում բնակվող իսլամականների շրջանում, սակայն, մեծ հաշվով, մնաց անարձագանք Իրաքի «ալ-Կաիդա»-ի ճյուղավորման կողմից: Ավելին՝ ԻԻՊ-ի ղեկավարությունը փորձում էր ջիհադականներին հնարավորինս հեռու պահել Սիրիա մեկնելուց: Մտավախություն կար, որ դրանով կթուլանար իսլամականների ներուժն Իրաքում:

Սակայն դեպքերի հետագա զարգացումը, աշխարհի տարբեր անկյուններից դեպի Սիրիա եկող իսլամականների աճող թվաքանակը, ծավալված ջիհադական պայքարի լայն թափը ստիպեցին ԻԻՊ-ին ակտիվորեն ներգրավվել սիրիական հակամարտությանը:

4.2. Սիրիական հակամարտությունն ու դրանում իսլամական արմատական խմբավորումների ներգրավվածությունը

Արաբական վերափոխումները, որոնք սկսվեցին Թունիսում 2010 թ. վերջից, աստիճանաբար իրենց ուղեծրի մեջ ընդգրկեցին մուսուլմանական մի շարք երկրներ, այդ թվում՝ Սիրիան:

1960-ական թթ. սկսած, երբ իշխանության եկավ ԲԱԱՍ կուսակցությունը, և էթնիկ-դավանական շիա-ալաուիական փոքրամասնության ներկայացուցիչ Հաֆեզ Ալ-Ասադը հռչակվեց Սիրիայի նախագահ, իսլամական արմատական տրամադրություններին զգալի հարված հասցվեց: Առավելապես լար-

վածությունն նկատվեց 1979-1982 թթ., երբ աշխարհի տարբեր մուսուլմանական համայնքներում 1950-ական թթ. ճյուղավորումներ ստեղծած եգիպտական «Մուսուլման եղբայրներ»¹³¹ (ՄԵ) իսլամական արմատական կառույցը Սիրիայում ընդլվաց շիա-ալաուիական վարչախմբի դեմ: Արդյունքն եղավ այն, որ 1982 թ. Համմա քաղաքում իրենց ներուժը համախմբած ՄԵ-ին վճռական հարված հասցվեց¹³²: Հաֆեզ Ալ-Ասադի, հետագայում՝ 2000 թ., նրա որդու՝ Բաշար Ալ-Ասադի իշխանության տարիներին Սիրիան առանձնացավ իսլամական արմատական տրամադրությունների ճնշմամբ և երկրի էթնիկ-դավանական փոքրամասնությունների իրավունքների ընդլայնմամբ:

2011 թ. մարտին Սիրիայի Դարա քաղաքում 15 դպրոցականներ իրենց դպրոցի պատին հակակառավարական գրառում-

¹³¹ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը հիմնադրվել է Եգիպտոսում Հասան Ալ-Բաննայի կողմից 1928 թ., որի ձևավորման սկզբնական շրջանում (1928-1936 թթ.) գործողությունների հիմքում դրվեց կրոնական-հասարակական ուղղվածություն, սակայն հետագայում այն կրեց քաղաքական բնույթ (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume III, Leiden, E. J. Brill, 1986, էջ՝ 1068.), որին հաջորդեցին 1952 թ. Եգիպտոսում իշխանության եկած «Ազատ սպաների» կողմից կազմակերպության նկատմամբ ճնշումները ու կեղեքումները: 1950-60-ական թթ. կազմակերպության մի շարք առանցքային դերակատարներ մահապատժի ենթարկվեցին, իսկ բազմաթիվ անդամներ հայտնվեցին բանտում: Ենթարկվելով ճնշումների և ձեռքակալությունների՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը ստիպված էր տեղափոխվել և իր կենտրոններն ու կառույցները հիմնել ոչ միայն այլ մուսուլմանական երկրներում, այլև աշխարհի այլ հատվածներում: Այն աստիճանաբար վերածվեց ցանցային կառույցի՝ տարածելով իսլամական արմատական գաղափարներ (տե՛ս **Pargeter, A.**, The New Frontiers of Jihad, Radical Islam in Europe, London, I. B. Tauris, 2008, p. 22.):

¹³² **Հովհաննիսյան Ն.**, Արաբական երկրների պատմություն: Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005 թթ./-Եր.: Զանգակ-97, 2007, էջեր՝ 522-525:

ներ անելու համար ձերբակալվեցին սիրիական իրավապահ մարմինների կողմից, որը դարձավ սիրիական ճգնաժամի ծավալման սկիզբը: Աստիճանաբար խորացող ճգնաժամը ստիպեց Բաշար Ալ-Ասադին քայլեր ձեռնարկել երկրում լարվածությունը թուլացնելու ուղղությամբ: Դրանցից մեկն էլ 2011 թ. մայիսի 31-ին Սիրիայում հայտարարված համաներումն էր, ինչի հետևանքով մեծ թվով իսլամականներ դուրս եկան բանտերից՝ համալրելով աստիճանաբար ակտիվացող ընդդիմադիր ճամբարը¹³³:

Սիրիական հակամարտությունն իր սկզբնավորման ժամանակահատվածից առավելապես սոցիալական բնույթի էր, որը հետագայում աստիճանաբար ընդունեց սուր քաղաքական ուղղվածություն՝ երկիրը կանգնեցնելով խոր ճգնաժամի առջև: Աստիճանաբար ակնառու դարձան Սիրիայում ներգրավված հակամարտող կողմերը՝ ներկայիս իշխանություններն ու հիմնականում դրսից (Պարսից ծոցի արաբական միապետություններ, Թուրքիա, Հորդանան և այլն) կազմակերպվող ու ֆինանսավորվող ընդդիմադիր զանգվածը, որը սկզբնական շրջանում ներկայացված էր առավելապես աշխարհիկ «չափավոր» ուժերով (մասնավորապես «Սիրիայի ազատ բանակի» الجيش السوري الحر (ՄԱԲ) ստորաբաժանումները, որոնց զինյալները ռազմական պատրաստություն էին անցնում Թուրքիայի տարածքում և այնտեղից հարձակումներ էին գործում սիրիական բնակավայրերի վրա՝ աստիճանաբար իրենց վերահսկողության տակ առնելով Թուրքիայի հետ սահմանակից սիրիական որոշ շրջաններ¹³⁴),

¹³³ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 131-144:

¹³⁴ Sté u BBC News, Galpin R., Syria crisis. Turkey training rebels, says FSA fighter, 4 August, 2012, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-19124810> (Մուտք, 13 հունիսի, 2013 թ.):

թեպետ նրանց շարքերում նկատվում էին նաև իսլամական արմատական ու ծայրահեղ արմատական խմբավորումներ:

Այնուամենայնիվ, 2012 թ. ընթացքում Սիրիայում ընդդիմադիր չափավոր խմբավորումների հետ գուգահեռ ակտիվություն սկսեցին ցուցաբերել իսլամական արմատական, նաև ծայրահեղ արմատական ուժերը: Հակամարտության սկզբից իսլամական ծայրահեղ արմատականները, հատկապես «ալ-Կաիդա»-ի զինյալները Սիրիա էին ներթափանցում Իրաքի տարածքից: Հիշյալ ուղիները հիմնականում սիրիաիրաքյան սահմանային այն ճանապարհներն էին, որոնք Սադամ Հուսեյնի իշխանության վերջին տարիներին և հատկապես սադամյան վարչակարգի տապալումից հետո օգտագործվում էին իսլամականների կողմից Սիրիայից դեպի Իրաք անցնելու և Իրաքում արևմտյան (կոալիցիոն) ուժերի դեմ պայքարելու համար: Սիրիական հակամարտության խորացմանը զուգընթաց ավելացավ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների և ջիհադականների ներհոսքը դեպի Սիրիա, որտեղ իր տեղն ապահովեց նաև «ալ-Կաիդա»-ն: 2012 թ. դեկտեմբերին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Այման Ալ-Ջաուհիրին հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշեց, որ իր կողմից ղեկավարվող կառույցն աջակցելու և ակտիվորեն մասնակցելու է Սիրիայում հակակառավարական պայքարին՝ կոչ անելով Սիրիայի ժողովրդին ջիհադի՝ ընդդեմ Բաշար Ալ-Ասադի վարչակարգի¹³⁵: Իրաքի արտագործնախարար Հոշիար Ջիբարին Բաղդադում կայացած մամլո ասուլիսի ժամանակ հայտնեց, որ «ալ-Կաիդա»-ի բազմաթիվ մարտիկներ իրաքյան սահմանից անցել են Սիրիա՝ ահաբեկչական գործողություններ ծրագրելու և

¹³⁵ Ayman Al-Zawahiri's audio message <https://www.youtube.com/watch?v=YpT0Zx4vgyw> (Մուսք, հունվարի 12, 2013 թ.):

իրականացնելու համար: Նա նաև հայտնեց, որ միշտ զգուշացրել է սիրիական կողմին սիրիական սահմանը հատելու արմատականների ակտիվության մասին¹³⁶:

Իրաքի սահմանը դարձավ «ալ-Կաիդա»-ի զինյալների ներթափանցման հիմնական ճանապարհ: Սակայն իսլամականների հիմնական զանգվածի դեպի Սիրիա ներթափանցման ճանապարհին անցնում էր Թուրքիայի տարածքով:

Թուրքիայի տարածքում տեղակայված էին ռազմական ճամբարներ, որտեղ պատրաստություն էին անցնում նաև իսլամականներ՝ ջիհադի պայքարին գործուն մասնակցություն ունենալու համար: Այս ճամբարներում ռազմական հմտություններ էին սովորում աշխարհի տարբեր երկրներից հավաքագրվող ջիհադականները, որոնք՝ իսլամական կոչին արձագանքելով, ակտիվ ներգրավվեցին սիրիական հակամարտությանը:

Իսլամականների թվաքանակի ավելացումը, սիրիական կառավարական ուժերի, այլախոհների և այլադավանների հանդեպ վայրագությունները իրական սպառնալիք ստեղծեցին երկրի էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների համար¹³⁷: Սիրիական հակամարտության սկզբից նկատվեց

¹³⁶ Iraq's Foreign Minister holds a news briefing to clear his country's position, <http://pik.tv/ru/news/story/42017-v-sirii-deystviut-boyci-al-kaidi> (Մոսկո, հուլիսի 12, 2014 թ.):

¹³⁷ Սիրիական ընդդիմադիր հակաբաշարյան ճամբարում գերազանցապես աշխարհիկ կառույց հանդիսացող ՄԱԲ-ը սկսած 2013 թ. զիջեց դիրքերը իսլամական արմատական ուժերին: Դրա հիմնական պատճառներից էին ՄԱԲ-ի ռազմական որոշ անհաջողությունները, ռազմական փորձի պակասը, վատ սպառազինվածությունն ու ֆինանսավորումը: Հակառակ դրան՝ իսլամականները լավ սպառազինված էին, օգտվում էին ֆինանսական զգալի օժանդակությունից, ունեին ռազմական գործողությունների փորձ և այլն (տե՛ս The Guardian, **Jason B.**, Al-Qaida leader Zawahiri urges Muslim support for Syrian

երկրում ավանդապես ազդեցիկ դիրքեր ունեցող «Մուսուլման եղբայրներ» իսլամական արմատական խմբավորման ակտիվ ներգրավվածությունը: Դրան զուգահեռ Սիրիայում ակտիվություն ցուցաբերեցին նաև իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումներ, որոնց շարքում աչքի ընկան «Ջաբհաթ ալ-Նուսրա» (جبهة النصرة), «Ահրար ալ-Շամ» (حركة أحرار الشام الإسلامية), «Լիուա ալ-Թաուհիդ» (لواء التوحيد), «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (الدولة الإسلامية في العراق والشام) և այլ խմբավորումներ): Վերջինների ֆինանսական օժանդակությունը, սպառազինության մատակարարումն ու իսլամականներով համալրումն իրականացվում էին Սիրիային հարակից երկրներից՝ Թուրքիայից, Իրաքից, Հորդանանից և Լիբանանից, ինչպես նաև Պարսից ծոցի հարուստ միապետություններից:

uprising, 12 February, 2012, <http://www.theguardian.com/world/2012/feb/12/alqaida-zawahiri-support-syrian-uprising> (Մուսք, հունվարի 9, 2013 թ.):

ԳԼՈՒԽ V

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՈՒՄԸ

5.1. «Ալ-Կաիդա»-ն սիրիական հակամարտությունում. «Ջաբհաթ ալ-Նուսրա»

2012 թ. սկզբից Սիրիայում ընդդիմադիր աշխարհիկ խմբավորումների հետ զուգահեռ ակտիվություն սկսեցին ցուցաբերել իսլամական արմատական, նաև ծայրահեղ արմատական ուժերը:

Սիրիայում ընթացող ջիհադական պայքարում ակտիվացավ նաև «ալ-Կաիդա»-ն, որի Իրաքի ճյուղավորումը՝ ԻԻՊ-ը, փոքր գորաջոկատ ուղարկվեց Սիրիա:

Ութ ջիհադականներ (վեց սիրիացի, մեկ սաուդյի և մեկ հորդանանցի) 2011 թ. օգոստոսին Իրաքից անցան սիրիական ալ-Հասաքա նահանգ, որտեղից էլ սկսվեց ԻԻՊ-ի ճյուղավորման՝ «Ջաբհաթ ալ-Նուսրա» (այսուհետ՝ ՋՆ) իսլամական ծայրահեղ արմատական խմբավորման ակտիվ պայքարը Բաշար Ալ-Ասադի վարչակարգի դեմ¹³⁸: Այդ ջիհադականների թվում էր նաև

¹³⁸ Կառույցի առաջին ահաբեկչական գործողությունը 2011 թ. դեկտեմբերի 27-ի հարձակումն էր Դամասկոսի անվտանգության ուժերի տեղակայման վայրերից մեկի վրա: Մոտ մեկ ամիս անց՝ 2012 թ. հունվարի 23-ին, ՋՆ-ն 8 բռնական ձայնագրություն տարածեց, որում հայտարարվեց կառույցի ձևավորման մասին:

Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանին, որը դարձավ այդ կառույցի առաջնորդը¹³⁹:

Ալ-Ջուլանիի ղեկավարության տակ ՋՆ-ն դարձավ Սիրիայի իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների շրջանում ամենաազդեցիկ կառույցներից մեկը: Սիրիայում ՋՆ-ն քաղաքային վայրերում սկսեց իրականացնել մահապարտ-ահաբեկիչների ու մեքենաների պայթեցումներ և ճանապարհներին տեղադրված պայթուցիկների գործադրումներ՝ ուղղված հիմնականում սիրիական կառավարական հիմնարկների, ռազմական օբյեկտների և տեխնիկայի ու պաշտոնատար անձանց դեմ՝ տարածելով այդ գործողությունների տեսանյութերը համացանցում:

Բացի ահաբեկչական բռնարարքների նախապատրաստման և իրականացման գործողություններից, ՋՆ-ն իրականացրեց նաև սոցիալական բազմաթիվ ծրագրեր՝ անապահով խավերին բաժանելով սննդամթերք և այլ օգնություն: Այս ենթատեքստում ՋՆ-ն փորձեց Սիրիայի հասարակական լայն շրջանակներում, այդ թվում էթնիկ-դավանական փոքրամասնությունների շրջանում, վստահություն վաստակել՝ իր գործողությունները ներկայացնելով որպես պայքար զուտ ալաուիական իշխող փոքրամասնության դեմ:

Սկզբնական շրջանում լինելով բավական փակ, գործելով ծածուկ և զբաղվելով հիմնականում ահաբեկչական գործողու-

¹³⁹ **Abouzeid R.**, The Jihad Next Door, The Syrian roots of Iraq's newest civil war, June 23, 2014, Politico Magazine, http://www.politico.com/magazine/story/2014/06/al-qaeda-iraq-syria108214_Page2.html#.VSwMztyUeSo (Մուսք, մարտի 13, 2015 թ.):

թյուններով՝ ՋՆ-ն հետագայում սկսեց ընդլայնել իր ռազմական գործողությունների աշխարհագրությունը Սիրիայի կառավարական ուժերի դեմ մղվող ռազմական գործողություններում: Կառույցը ներառեց մի շարք սիրիական ընդդիմադիր ջիհադական խմբեր, որոնք, օգտվելով նաև օտարերկրացի ջիհադականների ծառայություններից, ներգրավվեցին Դամասկոսի և Դար ալ-Ձուրի շրջակայքում իրականացվող գործողություններում՝ ակտիվություն ցուցաբերելով նաև Հալեպի, Իդլիբի, Դարաայի, Համմայի և այլ շրջաններում, ստանալով ֆինանսական, ռազմական և գաղափարական աջակցություն հակամարտության մեջ ներգրավված արտաքին ուժերից և զանազան այլ կազմակերպություններից:

Հակակառավարական պայքարն արդյունավետ դարձնելու համար ՋՆ-ի շարքերում, բացի տեղացի երիտասարդ իսլամականներից, ներկայացված էին սիրիացի մի շարք փորձառու ծայրահեղականներ և օտարերկրացի ջիհադականներ, որոնք մինչ այդ գործում էին ջիհադի այլ ճակատներում: Նրանք ունեին ռազմական գործողությունների հարուստ փորձ և ամուր կապեր «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներում:

ՋՆ-ի շարքերը համալրվում էին նոր մարտիկներով հավաքագրման բավական բարդ և ոչ թափանցիկ համակարգով: Սիրիական հակամարտության սկզբից այստեղ ներկայացված ընդդիմադիր առավել չափավոր ուժերի, այդ թվում ՍԱԲ-ի (Սիրիայի ազատ բանակ) հանդեպ ՋՆ-ն դրսևորեց հանդուրժող վարքագիծ՝ կոչ անելով բոլոր սկզբունքային առաջնահերթությունները, մարտավարական տարաձայնություններն ու հակասությունները հետաձգել մինչև բաշարյան իշխանության տապալումը: ՋՆ նպատակ ուներ նաև օգտվել արտասիրիական

որոշ ուժային կենտրոններից սիրիական չափավոր ընդդիմությանը, նաև ՄԱԲ-ին տրամադրվող օժանդակությունից:

2013 թ. դեկտեմբերի 18-ին «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը մոտ մեկ ժամանոց ռեպորտաժ ներկայացրեց, որտեղ ցուցադրեց ՋՆ իսլամական ծայրահեղական խմբավորման առաջնորդ Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանիի հարցազրույցը: Ալ-Ջուլանին նշեց, որ պատերազմն արդեն ավարտվում է, և Սիրիայի տարածքի մոտ 70 տոկոսն արդեն վերահսկվում է իսլամականների կողմից: Բաշար Ալ-Ասադի տապալումից հետո ՋՆ-ն չի ձգտելու ապագա Սիրիայում միանձնյա իշխանության: Սիրիայի հետագա դեկավարման համար, ըստ ալ-Ջուլանիի, պետք է մշակվի Աստծո օրենքների հիման վրա մի ծրագիր, որին կներգրավվեն մուսուլմանական իրավունքի գիտականեր, Սիրիայի տարբեր ցեղերի ներկայացուցիչներ և այլն:

Ենթադրվում է, որ դրանով փորձ էր արվում քանդել Սիրիայում հետագա իշխանությունը արմատական իսլամականների կողմից միանձնյա բռնագրավելու կարծրատիպը՝ տալով «կառուցողական» առաջարկներ, թե ինչ շերտեր են ներգրավված լինելու հետագա իշխանության մեջ: Իսկ Ալ-Ջուլանիի արտահայտած միտքն առ այն, որ տարածաշրջանում ԱՄՆ-Իրան հարաբերությունների ջերմացմամբ սպառնալիք է ստեղծվում Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև սաուդյան էներգետիկ ռեսուրսների համար, ՋՆ-ի առաջնորդի կողմից փորձ էր չնեղացնել իր ֆինանսավորումն ապահովող և սիրիական հակամարտության մեջ ներգրավված ընդդիմադիր խմբավորումների հիմնական դոնորներ համարվող ուժերին (Մ. Արաբիա, Կատար և այլն): Դրանով նաև ՋՆ-ի առաջնորդը ցու-

ցաղրեց տարածաշրջանային զարգացումներին տեղյակ լինելու և վերլուծելու իր ունակությունները¹⁴⁰:

Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանիի ռազմավարությունը Սիրիայում տվեց իր արդյունքները. եթե հաշվի առնենք, որ ԻՇԻՊ-ը (այս կառույցի մասին կխոսենք աշխատության հաջորդ հատվածում) համալրված էր հիմնականում օտարերկրյա զինյալներով (այս համատեքստում ավելորդ չի լինի ասել, որ ինչքան երկարաձգվում էր հակամարտությունը, այնքան օտարերկրացի վարձկանների նկատմամբ բացասական վերաբերմունքն ավելի էր խորանում) և փորձում էր բռնի և բիրտ միջոցներով հաստատել շարիաթի օրենքներ, ապա ՋՆ-ն իր շարքերում ընդգրկում էր հիմնականում սիրիացի ջիհադականների, որոնցից շատերը Իրաքում պայքարել էին ամերիկյան ուժերի դեմ (այսինքն՝ ունեին զինված պայքարի փորձ), ծանոթ էին տեղանքներին, իսկ կառույցի մոտեցումները ազգային փոքրամասնությունների, իսլամական օրենքների և այլնի վերաբերյալ ըմբռնելի էին մուսուլմանների համար (համենայն դեպս՝ այդ փուլում):

¹⁴⁰ Al-Jazeera Interview with Abu Mohamed Golani, The Head of al-Nusra in Syria, 18 December, 2013, <https://www.youtube.com/watch?v=X8uTGdun5Fg> (Մուսք, հունվարի 12, 2015 թ.):

5.2. «Իրաքում և Շամում իսլամական պետության» ակտիվ ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը. «Իսլամական պետության» հռչակումը

Սիրիական հակամարտությունում ՋՆ-ի նման առաջխաղացումը ԻԻՊ-ին ստիպեց ակտիվացնել ներկայությունը Սիրիայում, որը կառույցն իրականացրեց իր հովանու տակ գործող «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (ԻՇԻՊ) խմբավորման միջոցով: Վերջինս ակտիվորեն ներգրավվեց հակամարտությանը և իր վերահսկողության տակ անցած տարածքներում փորձեց ինքնուրույն քաղաքականություն իրականացնել՝ իր ցույց դնելով պետական միավոր ստեղծելու ԻԻՊ-ի առաջնորդ Աբու Բաքր Ալ-Բադդադիի նկրտումները: Նման վարքագիծն ու սիրիական հակամարտությունում տարվող ինքնուրույն մարտավարությունը հարուցեցին ընդդիմադիր ճամբարի զայրույթն ու թշնամանքը՝ հանգեցնելով ԻՇԻՊ-ին, ինչպես նաև ԻԻՊ-ին ու դրա առաջնորդին ուղղված սուր քննադատության և բացահայտ ռազմական բախումների այլ ընդդիմադիր խմբավորումների հետ:

Ոգեշնչվելով 2012-2013 թթ. ընթացքում Սիրիայում ձեռք բերած որոշ ռազմական հաջողություններից և համալրվելով տարբեր իսլամական խմբավորումներով ու ջիհադականներով՝ ԻՇԻՊ-ը գնաց ռազմական առճակատման ինչպես կառավարական ուժերի, այնպես էլ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների դեմ¹⁴¹:

¹⁴¹ 2013 թ. փետրվարի 3-ին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Այման Ալ-Ջաուհիդին ուղերձով հանդես եկավ առ այն, որ ԻՇԻՊ-ը «ալ-Կաիդա»-ի ճյուղավորումը չէ Սիրիայում՝ կոչ անելով իսլամական խմբավորումներին դադարեցնել պայքարը միմյանց դեմ (տե՛ս <http://azelin.files.wordpress.com/>

2013 թ. ապրիլի սկզբին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Այման Ալ-Ջաուահիրին հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ բարձր գնահատեց շարունակվող իսլամական խմբավորումների պայքարը Սիրիայում, Իրաքում և Մալիում՝ շեշտելով այդ պայքարի կարևորությունը շարիաթի վրա հիմնված իսլամական պետության ստեղծման համար: Համացանցում հայտնված Այման Ալ-Ջաուահիրիի ուղերձը պատահականություն չէր: Բացի Ղուրանից հատվածներ ու պատմական փաստեր մեջբերելուց, «ալ-Կաիդա»-ի առաջնորդի հայտարարությունը պարունակում էր մի շարք կարևոր ուղերձներ:

1. Այման Ալ-Ջաուահիրին դրանով հաստատում էր Ուսամա բեն-Լադենից հետո «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակում իր առաջնորդությունն ու կենտրոնական դերակատարությունը, որը կարևոր էր վերջին 10 տարիների ընթացքում անընդհատ ճնշումների ենթարկվող և թուլացող կազմակերպության և դրան հարող իսլամական ծայրահեղական այլ կառույցների համար:

2. Ալ-Ջաուահիրին իր ուղերձում կարևորում էր Սիրիայում, Իրաքում և Մալիում իրականացվող ջիհադական պայքարը՝ կոչ անելով շարունակել մարտունակ պահել իսլամական ծայրահեղական ներուժը: Ուղերձը պարունակում էր նաև սպառնալիք՝ ուղղված իսլամականների պայքարի դեմ հանդես եկող ուժերին, այդ թվում մուսուլմանական այն երկրներին, որոնք կառավարվում են «դավաճան կառավարիչների» կողմից:

3. Ուղերձում տրվում էր իսլամականների պայքարի գաղափարական հիմքը, սահմանվում էր պայքարի վերջնական նպատակը՝ ստեղծել շարիաթի օրենքներով առաջնորդվող իսլամական խալիֆայություն:

Ալ-Ջաուահիրիի ուղերձին անմիջապես հաջորդեցին ԻԻՊ-ի առաջնորդ Աբու Բաքր Ալ-Բադդադիի և Սիրիայում մարտնչող ՋՆ կազմակերպության ղեկավար Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանիի հայտարարությունները, որոնք տարածվեցին համացանցում:

ԻԻՊ-ի առաջնորդ Աբու Բաքր Ալ-Բադդադիի ապրիլի 8-ի ուղերձում նշվեց, որ ՋՆ-ն ԻԻՊ-ի ճյուղավորումն է Սիրիայում: ԻԻՊ-ը ու դրա ճյուղավորումները պետք է միավորվեն «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (ԻՇԻՊ) ընդհանուր կառույցի մեջ¹⁴²: Ինչ վերաբերում էր ՋՆ-ի առաջնորդի ուղերձին, ապա Ալ-Ջուլանին մի քանի կարևոր հանգամանքներ մատնանշեց. նախ Ալ-Ջուլանին շեշտեց այն փաստը, որ ՋՆ-ն տեղեկացված չի եղել ԻԻՊ-ի հետ միավորման մասին՝ ընդունելով սակայն, որ կառույցի ձևավորման հիմքում կանգնած է եղել հենց ԻԻՊ-ը: Բացի դրանից, Ալ-Ջուլանին իր ուղերձում հավատարմության երդում տվեց Այման Ալ-Ջաուահիրիին, ճանաչեց վերջինիս առաջնորդությունը ջիհադական պայքարում՝ կարևորելով Սիրիայում ընթացող ռազմական գործողություններում իսլամական արմատական այլ կառույցների դերակատարությունը: Մեծ հաշվով Ալ-Ջուլանիի ուղերձը ենթատեքստում մեղադրանքներ էր պարունակում ԻՇԻՊ-ի առաջնորդ Ալ-Բադդադիի դեմ:

Շուտով Այման Ալ-Ջաուահիրին վերոհիշյալ երկու կառույցների առաջնորդներին կոչ արեց՝ դադարեցնել բախումները միմյանց դեմ՝ մատնանշելով երկու կառույցների համար ջիհադական պայքարի սահմանները, որոնք ՋՆ-ի համար սահման-

¹⁴² **Caillet R.**, The Global Think Tank, The Islamic State, Leaving Al-Qaeda behind, December 27, 2013, <http://carnegieendowment.org/syriaincrisis/?fa=54017>, (Մուտք, հունվարի 24, 2014 թ.):

վեցին Սիրիան, իսկ ԻՇԻՊ-ի համար՝ Իրաքը: Բացի դրանից, նա լիազորեց Սիրիայում «ալ-Կաիդա»-ի ներկայացուցիչ Աբու Խալիդ Ալ-Սուրիին¹⁴³ դատավորի դեր ստանձնել իսլամականների միջև ծագած խնդիրները հարթելու համար:

Ալ-Սուրին ԻՇԻՊ-ին հասցեագրված քննադատություններով հանդես եկավ: Մասնավորապես, 2014 թ. հունվարի 21-ին տարածված ուղերձում Ալ-Սուրին շեշտեց, որ ԻՇԻՊ-ը Սիրիայում պայքարող իսլամական արմատական խմբավորումներից մեկն է, այլ ոչ թե՝ պետություն՝ մատնանշելով վերջինիս դերն ու կարգավիճակը տարածաշրջանային ջիհադական պայքարում¹⁴⁴:

Որոշ մուսուլմանական արմատական խմբավորումներ քննադատեցին ԻՇԻՊ-ի նման վարքագիծը՝ սկսած կառույցի առաջնորդի՝ Աբու Բաքր Ալ-Բադդադիի տիտղոսների շարքում ալ-Կուրայշի «տիտղոսի»¹⁴⁵ չարաշահումից, մինչև սիրիական իշխանությունների կողմից հովանավորվելու մեղադրանքները: Որոշ ընդդիմադիր ուժեր քննադատեցին նաև ՋՆ-ի հանդես գալը որպես «ալ-Կաիդա»-ի ճյուղավորում, որը մինչ այդ չէր բարձրաձայնվում:

Իսլամական արմատական շրջանակներում ներքին բախումները կանխելու համար այլ մտահղացումներ ու նախաձեռնություններ ի հայտ եկան¹⁴⁶, որոնք մերժվեցին ԻՇԻՊ-ի

¹⁴³ 2014 թ. փետրվարին Ալ-Սուրին սպանվեց ահաբեկչության հետևանքով (ահաբեկչական հարձակման ետևում հավանաբար կանգնած էր ԻՇԻՊ-ը):

¹⁴⁴ Заявление Абу Халида ас Сури касательно ИГИШ, 21 января, 2014, www.youtube.com/watch?v=YiD0vQgyIsg. (Մուտք՝ հունվարի 23, 2014 թ.):

¹⁴⁵ Աբու Բաքր Ալ-Բադդադին մեծարվում էր ալ-Կուրայշի «տիտղոսով», որով ընդգծվում էր Աբու Բաքրի՝ Մուհամմադ մարգարեի ցեղակից լինելու հանգամանքը:

¹⁴⁶ Մասնավորապես հեղինակավոր շեյխ Աբդալլահ իբն Մուհայսինին հունվարի 23-ին նոր «Ումմայի նախաձեռնությամբ» հանդես եկավ, որտեղ

կողմից: Ավելին՝ հունվարի 27-ին կառույցը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ մերժեց բոլոր նախաձեռնությունները, պահանջեց, որ Սիրիայում կովող բոլոր իսլամական ուժերը կտրեն իրենց կապերը Հորդանանի, Կատարի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի և այլ երկրների, ինչպես նաև Արևմուտքի կողմից աջակցություն ստացող ընդդիմադիր «անհավատ» խմբերի հետ՝ հայտնելով, որ եթե դա տեղի չունենա, կառույցը շարունակելու է իր պայքարն այդ ուժերի դեմ¹⁴⁷:

Սիրիայում ծավալած իր գործողություններով ԻՇԻՊ-ը անցավ նույնիսկ «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ալ-Ջաուհիրիի գծած «թույլատրելի սահմանը»: Արդյունքը եղավ այն, որ ԻՇԻՊ-ը ոչ միայն դուրս չեկավ, այլև շարունակեց պայքարը Սիրիայում՝ գնալով ռազմական առճակատման ինչպես կառավարական ուժերի, այնպես էլ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների դեմ՝ ընդլայնելով Սիրիայում իր կողմից վերահսկվող տարածքները: Դա նշանակեց հակասությունների սրում մի կողմից «ալ-Կաիդա»-ի և ՋՆ-ի, իսկ մյուս կողմից՝ ԻՇԻՊ-ի միջև:

հակամարտող կողմերին կոչ արվեց դադարեցնել բախումներն ու վեճերի լուծման համար ստեղծել շարիաթական կոմիտե, որը պետք է կազմված լինի կողմերի համար ընդունելի ու այդ բախումներից հեռու մնացած փոքր իսլամական արմատական խմբերի կողմից առաջ քաշված 10 անդամներից և այլն (տե՛ս Mubadara al-Umma, bi Abdlallah bin Muhammad al-Muhaysini, January 21, 2014, <https://www.youtube.com/watch?v=rmYu5kr2zS0&feature=youtu.be>. (Մուսք, հունվարի 23, 2014 թ.)):

¹⁴⁷ New statement from the Islamic State of Iraq and al-Shām. Position on the Initiative of Shaykh al-Muhaysini, January 27, 2014, <http://jihadology.net/2014/01/27/new-statement-from-the-islamic-state-of-iraq-and-al-sham-position-on-the-initiative-of-shaykh-al-mu%E1%B8%A5aysini/>, (Մուսք, հունվարի 29, 2014 թ.):

Այս հակասությունները նպաստեցին նաև օտարերկրյա ջի-
հադականների շարքերում մասնատման. Սիրիայում հայտնված
օտարերկրյա ջիհադականներից շատերը լքեցին ՋՆ՝ մտնելով
ԻՇԻՊ-ի շարքերը:

Ընդդիմադիր այլ կառույցների հետ հակասություններն էլ
ավելի խորացան, երբ ԻՇԻՊ-ի զինյալները սպանեցին ընդ-
դիմադիր մի քանի առաջնորդների՝ սկսելով բացահայտ
պայքար ընդդիմադիր ճամբարի մյուս կառույցների դեմ:

Սիրիական հակամարտության մեջ ներգրավված իսլամա-
կան ծայրահեղ արմատական ճամբարում այս զարգացումներից
հետո՝ 2014 թ. փետրվարի 3-ին, «ալ-Կաիդա»-ի ղեկավար
շրջանակի կողմից լրատվական մի շարք ռեսուրսներում հաղոր-
դագրություն տարածվեց, որ «ալ-Կաիդա»-ն կապ չունի ԻՇԻՊ
կազմակերպության և դրա գործունեության հետ, և վերջինս
կառույցի ճյուղավորումը չէ Սիրիայում:

Այս հաղորդագրությամբ «ալ-Կաիդա»-ի ղեկավարությունը
վերջակետ դրեց Սիրիայում պայքարող իսլամական ծայրահեղ
արմատական խմբավորումների շրջանում խնդրահարույց մի
հարցի՝ որոնք են «ալ-Կաիդա»-ի հովանու տակ գործող
կառույցները Սիրիայում¹⁴⁸:

2013 թ. կեսերից ԻՇԻՊ-ն ընդլայնեց իր կողմից վերահսկվող
տարածքները Սիրիայում, որի սահմանները ձգվում էին Սի-
րիայի հյուսիսային շրջաններից մինչև սիրիա-իրաքյան սահ-
մանը: 2013 թ. կեսերից սիրիական ալ-Ռաֆկա քաղաքն ընկավ
իսլամականների վերահսկողության տակ՝ դառնալով Սիրիա-
յում ԻՇԻՊ-ի կենտրոնը: Կառույցը, աստիճանաբար վերածվելով
ազդեցիկ գործոնի, քայլ առ քայլ ընդլայնեց իր կողմից վերա-

¹⁴⁸ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 179-196:

հսկվող տարածքները ոչ միայն Միլիտարիզմի, այլև 2014 թ. սկզբից՝ նաև հարևան Իրաքում: Տարվա սկզբից իսլամականների վերահսկողության տակ անցան իրաքյան ալ-Անբար նահանգի որոշ հատվածներ, իսկ 2014 թ. հունիսի սկզբից լայնամասշտաբ ռազմական գործողությունների դիմեց Իրաքի հյուսիսում. հունիսի 10-ին ԻՇԻՊ-ին հաջողվեց ամբողջությամբ իրեն ենթարկել Իրաքի հյուսիսային Մոսուլ քաղաքը, փախուստի մատնել իրաքյան կառավարական ուժերին¹⁴⁹, շարժվել դեպի հարավ, կարճ ժամանակում նվաճել մի շարք քաղաքներ՝ մոտենալով մայրաքաղաք Բաղդադին:

Մադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքի սուննիաբնակ արևմտյան շրջաններում ավելացող հակաշիալական տրամադրությունները, իսկ 2014 թ. սկզբից իսլամական

¹⁴⁹ Իրաքի ազգային անվտանգության նախկին խորհրդականներից մեկը «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ նշեց, որ Ֆեյսուբն ու Թվիթթերը Մոսուլում տեղակայված 30000 զինվորականների իրենց սպառազինությունը թողնելու և քաղաքը լքելու պատճառ դարձան (տե՛ս Head to Head-Will ISIL Put an End to Iraq?, Al-Jazeera, English, November 21, 2014, <http://youtu.be/Xkj19UbG2lo>.): Իսլամականների հարձակման հետևանքով Մոսուլ քաղաքն ու հարակից բնակավայրերը լքեցին մոտ 500.000 մարդ, այդ թվում՝ Մոսուլում բնակվող մոտ 65 ընտանիք հայեր: Հունիսի 10-ին «Ազդակ» օրաթերթը, հղում կատարելով Իրաքի հայ ազգային իշխանության պատասխանատու Պարույր Հակոբյանին, իր կայքէջում հրապարակել է տեղեկություն, համաձայն որի՝ Մոսուլում բնակվող հայերի 65 ընտանիք և ծխատեղ քահանան լքել են քաղաքը, մարդկային կորուստներ չկան (Ազդակ, 65 հայ ընտանիքներ հեռացան Մոսուլից, հունիսի 10, 2014 թ., <http://www.aztagdaily.com/archives/189376>): Հունիսի 12-ին նույն աղբյուրի փոխանցմամբ Մոսուլից գաղթած հայ ընտանիքները տեղափոխվել են հյուսիսային ապահով շրջաններ (Ազդակ, Պարույր Հակոբյանը ներկայացնում է Մոսուլի հայ համայնքի վիճակը, հունիսի 12, 2014 թ., <http://www.aztagdaily.com/archives/189590>): Բասրա քաղաքի հայկական համայնքի վարչական մարմինը հայտարարություն է տարածել, որտեղ նշվել է, որ համայնքը պատրաստ է ընդունել Մոսուլից գաղթած հայերին (<https://www.facebook.com/armenian.ch.basrah/posts/787461767955310?fref=nf>):

արմատական գաղափարների լայն տարածումը, որոշ իրաքյան բնակավայրեր իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների վերահսկողության տակ անցնելը պայմանավորված էին նաև Նուրի Ալ-Մալիքիի գլխավորած իրաքյան շիայական վարչակարգի ձախողված քաղաքականությամբ հատկապես իրաքյան սուննիաբնակ տարածքներում: Շիայական իշխանությունների անհետատես քաղաքական վարքագիծը սուննիներով բնակեցված արևմտյան տարածքների նկատմամբ (այստեղ հակաահաբեկչական խիստ օրենքները, էթնիկ-դավանաբանական կոչերով միախառնված կառավարական ուժերի հակահաբեկչական ռազմարշավները, սուննի բնակչության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները և այլն), հանգեցրեց նրան, որ 2014 թ. հունիսից դեպի Իրաքի խորքերը ԻՇԻՊ-ի զինյալների առաջխաղացումը տեղաբնիկները դիտեցին նաև որպես շիայական իշխանություններից ազատվելու միջոց:

ԻՇԻՊ-ի գործողություններում նկատվող նպատակայնացումն ու գաղափարական հիմնավորումները նույնպես կարևոր դեր խաղացին: Մինչ տարածաշրջանային իսլամական շատ ուժեր հայտարարում էին, որ պայքարում են իսլամական պետություն ստեղծելու համար, ԻՇԻՊ-ն իր անվանումով («Իրաքում և Շամում իսլամական պետություն») ենթադրում էր արդեն իսլամական պետության գոյություն, որին կարող են միանալ մուսուլմանները, իսկ իր առաջնորդի՝ Աբու Բաքր Ալ-Բադդադիի տիտղոսներում Մուհամմադ մարգարեի ցեղանվան ու առաջին խալիֆ Աբու Բաքրի անվան վկայակոչումը (Աբու Բաքր Ալ-Բադդադիի Ալ-Կուրայշի Ալ-Հաշիմի) նպատակ էր հետապնդում ընդգծել մարգարեի ցեղին պատկանող ԻՇԻՊ-ի առաջնորդի

անձի կարևորությունն ու առանձնահատուկ վերաբերմունքը մուսուլմանների կողմից¹⁵⁰:

ԻՇԻՊ-ի վերահսկողության տակ էին էներգակիրներով հարուստ սիրիական և իրաքյան որոշ տարածքներ, որտեղ կառույցը զբաղվում էր նավթագազային պաշարների վաճառքով, ինչպես նաև կարողանում էր որոշակի օգուտներ քաղել սիրիական հարակից տարածքներով անցնող նավթամուղներով և գազամուղներով փոխադրվող էներգետիկ ռեսուրսների ապահով տեղափոխումից, ինչը ևս լրացուցիչ ֆինանսական հոսքեր էր ապահովում կառույցին¹⁵¹: ԻՇԻՊ-ի ֆինանսական ռեսուրսները հնարավորություն էին տալիս իսլամականներին սպառազինվելու, նոր անդամներ հավաքագրելու և ռազմական գործողությունների վրա զգալի միջոցներ ծախսելու համար:

Իրաքյան զարգացումներում մի բան ևս հստակ էր դառնում: ԻՇԻՊ-ը միակ ուժը չէր, որը կանգնած էր այս հարձակումների հետևում: Իրաքյան ուժերի դեմ պայքարում էին նաև այլ ուժեր՝ Իրաքի նախկին նախագահ Սադամ Հուսեյնի զինակիցներից բաղկացած սուննիական ստորաբաժանումներ, ինչպես նաև որոշ իսլամական կրոնական ուժեր, մասնավորապես սուֆֆիական «Նակշբանդիա» միաբանության զինյալ խմբերը և որոշ

¹⁵⁰ Նման տիտղոսներով վկայակոչվում էր նաև Աբու Բաքր Ալ-Բադդադիին նախորդած ԻԻՊ-ի առաջնորդ Աբու Ումար Ալ-Բադդադիին, ինչը խոսում է այն մասին, որ կառույցը դեռ Իրաքում իր ակտիվ գործունեության ժամանակ հեռուն գնացող նպատակներ ուներ (տե՛ս **Fishman B.**, Redefining the Islamic State, The Rise and Fall of Al-Qaeda in Iraq, National Security Studies Program Policy Paper, New America Foundation, August 2011, http://security.newamerica.net/sites/newamerica.net/files/policydocs/Fishman_Al_Qaeda_In_Iraq.pdf).

(Մուսք, հուլիսի 3, 2013 թ.):

¹⁵¹ «داعش» بلجا لـ«السوق السوداء» لبيع نفط العراق وسوريا.. والحصيلة 3 ملايين دولار يوميًا .

(Մուսք, օգոստոսի 23, 2014 թ.) <http://m.almasryalyoum.com/news/details/494565>,

ցեղերից բաղկացած խմբավորումներ¹⁵²: Վերջիններն առաջնային դերակատարում են ունեցել Մոսուլի, Թիքրիթի և այլ ուղղություններով ԻՇԻՊ-ի զինյալ խմբավորումների հարձակումների մարտավարության և առաջխաղացման ժամանակ:

2014 թ. հունիսի 29-ին ԻՇԻՊ-ի կողմից հայտարարություն տարածվեց առ այն, որ կառույցը այսուհետ կոչվելու է «Իսլամական պետություն» (այսուհետ՝ ԻՊ), իր կողմից վերահսկվող տարածքներում հռչակվում է խալիֆայություն՝ հայտարարելով նոր խալիֆի անունը. դա կառույցի առաջնորդ Աբու Բաքր Ալ-Բադդադին էր¹⁵³:

Հուլիսի 5-ին Իրաքի Մոսուլ քաղաքի «ալ-Նուրի» մզկիթում (ճիշտ այն վայրից, որտեղից դարեր առաջ երկրորդ խաչակրաց արշավանքի դեմ ռազմական գործողություններ սկսելու նախօրեին Սալահ ադ-Դինը ուղերձով հանդես եկավ մզկիթում հավաքված հավատացյալների առաջ) ուրբաթ օրվա խուտբայի (քարոզ) ժամանակ մոսուլմաններին ներկայացավ ԻՊ-ի նորահռչակ խալիֆը (Աբու Բաքր Ալ-Բադդադին կամ խալիֆ Իբրահիմը)՝ կոչ հղելով մոսուլմաններին հավատարմության երդում տալ իրեն¹⁵⁴:

¹⁵² Shafaq, "Baath" and "Naqshbandi" Militants wage assassinations campaign against leaders of ISIL organization in Diyala, July 9, 2014, <http://english.shafaq.com/index.php/security/10463-baath-and-naqshbandi-militants-wage-assassinations-campaign-against-leaders-of-isil-organization-in-diyala> (Մուսք, օգոստոսի 2, 2014 թ.):

¹⁵³ Abu Mohammed al-Adnani made the announcement in an audio statement, <https://www.youtube.com/watch?v=BTiqYjulJik&feature=youtu.be> (Մուսք, հուլիսի 2, 2014 թ.):

¹⁵⁴ First Appearance of ISIS leader Abu Bakr Al Baghdadi (English Subtitles), 5 июля 2014, <https://www.youtube.com/watch?v=VOORW63ioY0>. (Մուսք, հուլիսի 6, 2014 թ.):

5.3. «Իսլամական պետության» ղեկավար շրջանակը՝ Աբու Բաքր Ալ-Բադդադի, Հաջի Բաքր, Աբու Ումար Ալ-Շիշանի

Աբու Բաքր Ալ-Բադդադի. Աբու Բաքր Ալ-Բադդադին ծնվել է 1971 թ. Սամարրա քաղաքի մոտ: Սովորել է Բադդադի Ադամիա արվարձանում գտնվող Իսլամագիտության համալսարանում, որտեղ ստացել է իսլամագիտության գիտական աստիճան: Ալ-Բադդադին բնակվել է Իրաքի մայրաքաղաքի սուննիներով և շիաներով բնակեցված արևմտյան հատվածում՝ «ալ-Թուրշի» մզկիթի մոտ¹⁵⁵:

Նրա հետաքրքրությունների շրջանակներում են եղել մուսուլմանական սուրբ տեքստերը, մասնավորապես ուսումնասիրել է Ղուրանը: Մտերիմ հարաբերություններ է ունեցել Իրաքի «Մուսուլման եղբայրներ» կառույցի առաջնորդներից Մուհամմադ Հարդանի հետ, վերջինիս ազդեցությամբ անդամակցել է «Ջայշ ալ-Մուջահիդին» խմբավորմանը:

¹⁵⁵ 222-227 էջերի հավելվածում ներկայացված են Աբու Բաքր Ալ-Բադդադիին վերաբերող որոշ փաստաթղթեր, որտեղ նշված է, որ նա ծնվել է 1971 թ. հուլիսի 1-ին, հաճախել է Սամարրա քաղաքի գիմնազիան: Դպրոցի փաստաթղթերից մեկում նշված է, որ նա մեկ անգամ նույն դասարանում է մնացել: Անգլերենից ստացել է 57, իսկ մաթեմատիկայից՝ 98 միավոր: Նշված է նաև, որ հետագայում, որպես «շահիդի եղբայր», լրացուցիչ գնահատականներ է ստացել (նրա կրտսեր եղբայրը զոհվել էր Իրաքի բանակում ծառայելիս): Ներկայացված են 1996 թ. բժշկական հետազոտության արդյունքները, որոնց համաձայն նա միանգամայն առողջ է և կարող է ստանալ բարձրագույն կրթություն: Միայն տեսողական խնդիրներ ունի, քանի որ կարճատես է: 1999 թ. նա ստացել է մագիստրոսի աստիճան, որից հետո սկսել է աշխատել դոկտորի աստիճան ստանալու համար: 2004 թ. փետրվարին նա ձերբակալվել և տեղափոխվել է Բուքա բանտը: Այդ ամենի մասին տեղյակ էին նաև Բադդադի իսլամագիտության համալսարանում: 2004թ. հունիսի 30-ին նրա ֆակուլտետի ղեկավարը նշել է. «Ինձ հետ կապ չի հաստատել»:

Երբ ամերիկյան զորքերը հայտնվեցին Իրաքում, Ալ-Բադդադին հիմնեց «Ջայշ Ահլ ալ-Մուննա ուա ալ-Ջամաա» խմբավորումը¹⁵⁶:

Ալ-Ֆալուջայում իր ընկերոջը՝ Նասայիֆ Նուման Նասայիֆին այցելելու ժամանակ Աբու Բաքրը իր մեկ այլ ընկերոջ՝ Աբդ Ալ-Ուահիդ Ալ-Մումայրի հետ ձերբակալվեց ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից 2004 թ. հունվարի 31-ին: Վերջինների թիրախը ոչ թե Աբու Բաքրն էր, այլ նրա ընկերը՝ Նուսայիֆը:

Ալ-Բադդադիին տեղափոխում են Բուքքա բանտ, որի ղեկավարությունը իսլամագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող Աբու Բաքրին օգտագործում էր բանտարկյալների մեջ ծագած զանազան վեճերը լուծելու համար, ուստի ավելանում է Աբու Բաքրի ազդեցիկ դիրքերը բանտարկյալների և ընդհանրապես իրաքյան սուննի մուսուլմանների շրջանում:

Աբու Բաքրը բանտից ազատվեց 2004 թ. դեկտեմբերի 6-ին, իսկ 2007 թ. միացավ «Մուջահիդների խորհրդին»՝ դուրս գալով «Մուսուլման եղբայրներ»-ից և «Ջայշ ալ-Մուջահիդին»-ից:

2010 թ.՝ Աբու Ումար Ալ-Բադդադիի և Աբու Համզա Ալ-Մուհաջիրի սպանությունից հետո, Աբու Բաքրը ԻԻՊ էմիր ընտրվեց Մուջահիդների խորհրդի 11 անդամներից 9-ի կողմից: Աբու Բաքրի ընտրությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

1. Աբու Բաքր Ալ-Բադդադին Կուրայշ ցեղից էր, որին պատկանել է Մուհամմադ մարգարեն¹⁵⁷:

¹⁵⁶ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 114-118:

¹⁵⁷ Բահրեյնցի Թուրքի Ալ-Բինալին Աբու Բաքր Ալ-Բադդադիի ծագումնաբանությունը սկսում է նույնիսկ Մուհամմադ մարգարեից՝ Արմուշ իբն Ալի իբն Այդ իբն Բադր Ալ-Դին իբն Խալիլ իբն Հուսեյն իբն Աբդալլահ

2. Աբու Բաքրը ԻԻՊ-ի խորհրդի անդամ էր հանդիսանում և մտերիմ էր Աբու Ումարին:
3. Նա երիտասարդ էր, քան էմիրի համար առաջադրվող մյուս թեկնածուները:

Աբու Բաքր Ալ-Բադրիի էմիր ընտրվելուց հետո ԻԻՊ-ում ավելացավ նախկին բասսականների դիրքերը: ԲԱԱՍ կուսակցության նախկին անդամների ներկայությունն ազդեց կառույցի մարտավարության և կառավարման մեթոդների վրա:

Աբու Բաքր Ալ-Բադրիի ղեկավարությամբ գործող կառույցը վերածվեց ազդեցիկ գործոնի մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներում, իսկ Ալ-Բադրիին բազմաթիվ մուսուլմանների համար դարձել է առաջնորդ, ում համար ԱՄՆ պետքարտուղարությունը պատրաստ էր վճարել 10 մլն. դոլար գլխագին¹⁵⁸:

Կառույցի ղեկավարման մեջ Աբու Բաքր Ալ-Բադրիին աջակցել և աջակցում են նախկին բասսական զինվորականներ.

Աբու Աբդ Ալ-Ռահման Ալ-Բիլաուին՝ իրաքյան ալ-Անբար նահանգից (սպանվեց 2014 թ. հունիսին Մոսուլի գրավման ժա-

իրն Իբրահիմ Աուա իրն Ալ-Շարիֆ Յահյա Ազ Ալ-Դին իրն Շարիֆ իրն Բաշիր իրն Մաջիդ իրն Ատիա իրն Յալա իրն Դաուիդ իրն Մաջիդ իրն Աբդ Ալ-Ռահման իրն Կասիմ իրն Ալ-Շարիֆ Իդրիս իրն Ջաֆար Ալ-Ջաքի իրն Ալի Ալ-Հադի իրն Մուհամմադ Ալ-Ջաուադ իրն Ալի Ալ-Ռիդա իրն Մուսա Ալ-Կադիմ իրն Ջաֆար Ալ-Սադիկ իրն Մուհամմադ Ալ-Բաքիր իրն Ալի Ջայն Ալ-Աբիդին իրն Հուսեյն իրն Ալի իրն Աբու Տալիբ ուա Ֆատիմա

عروش بن علي بن عبد بن يدري بن بدر الدين بن خليل بن حسين بن عبد الله بن إبراهيم الأواه بن الشريف يحيى عز الدين بن شريف بن بشير بن ماجد بن عطية بن يعلى بن دويد بن ماجد بن عبد الرحمن بن قاسم بن الشريف إدريس بن جعفر الزكي بن علي الهادي بن محمد الجواد بن علي الرضا بن موسى الكاظم بن جعفر الصادق (un' u Syria Comment, Meet the Badries, March 13, 2015, <http://www.joshualandis.com/blog/meet-the-badris/>, (Մոսք, մարտի 25, 2015 թ.)):

¹⁵⁸ US Department of State, Terrorist Designation of Ibrahim Awwad Ibrahim Ali al-Badri, <http://www.webcitation.org/62HxbVjBF>. (Մոսք, հուլիսի 13, 2015 թ.):

մանակ): Լինելով Սադամ Հուսեյնի իրաքյան բանակի սպա՝ Աբու Աբդ Ալ-Ռահման Ալ-Բիլաուին անդամակցել էր ԱԿԻ-ին դեռևս Ալ-Ջարկաուիի ժամանակվանից:

Մյուս ազդեցիկ անձն Աբու Ալի Ալ-Անբարին է՝ նույնպես իրաքյան բանակի նախկին սպա:

Աբու Այման Ալ-Իրակին մյուս ազդեցիկ զինվորականն է, որը ծառայել է Սադամ Հուսեյնի ռազմաօդային ուժերում:

Ֆադլ Ահմադ Աբդալլահ Ալ-Հիյալի՝ (Աբու Մուսլիմ Ալ-Թուրքմանի), սադամյան բանակի հատուկ ուժերի նախկին սպա (սպանվեց ամերիկյան ռազմաօդային ուժերի հրթիռակոծության հետևանքով¹⁵⁹):

Աբու Բաքրի աջակիցների շարքում էր նաև Հաջի Բաքրը: Նա մեծ ազդեցություն է ունեցել իսլամականների հաջողությունների և հետագա առաջխաղացման գործում:

Հաջի Բաքր. Իրաքյան ռազմաօդային ուժերի նախկին սպան ամենաազդեցիկ մարդկանցից էր ԻԻՊ-ի կազմում և 2012 թ. արդեն ծրագրել էր Սիրիայի և Իրաքի որոշ հատվածներում ստեղծել իսլամական պետություն, տվել էր դրա ներքին կառուցվածքային բաղադրիչները¹⁶⁰: Բացահայտվել են Հաջի Բաքրին պատկանող փաստաթղթեր, զծագրեր, ձեռագրեր, զանազան փաստաթղթեր, որոնցում ներառված են Սիրիան աստիճանաբար նվաճելու ուղեկիշներ, հրահանգներ, տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ, կառույցի դիրքերն ազդեցիկ դարձնելու որոշումներ, ԻՇԻՊ-ի անվտանգության ապահովմանը միտված հետախուզության և հակահետախուզության

¹⁵⁹ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 124-126:

¹⁶⁰ Հայտնաբերվել են Հաջի Բաքրի կողմից «Իսլամական պետության» ստեղծման ու վերջինիս նահանգային կառավարման կառուցվածքին առնչվող գրառումներ (տե՛ս 228-229 էջերի հավելվածում):

մարմիններ ստեղծելու հրահանգներ, սահմանված են ստեղծվելիք պետության կազմում նախկին իրաքցի բաասականների դերակատարությունը, իսլամականների ներգրավման ճանապարհները և այլն¹⁶¹:

Հաջի Բաքրը սպանվեց սիրիական Թալ-Ռիֆաթ քաղաքում 2014 թ. հունվարին ընդդիմադիր այլ խմբավորումների կողմից¹⁶²:

Աբու Ումար Ալ-Շիշանի. Աբու Բաքրի մերձավոր շրջակայքում մեկ բացառություն նկատվեց: Աբու Բաքր Ալ-Բադդադին ԻՊ-ի ղեկավար օղակում ընդգրկեց ծագումով չեչեն Աբու Ումար Ալ-Շիշանին:

Աբու Ումար Ալ-Շիշանին (Թարխան Բաթիրաշվիլի) ծնվել է 1986 թ., և ծագումով Վրաստանի Պանկիսի կիրճի Բիրկիանի գյուղից է: Ալ-Շիշանին, իր «Ջայշ ալ-Մուհաջիդին ուա ալ-Անսար» խմբավորման հետ դեռևս 2013 թ. կեսերին հավատարմության երդում տալով Աբու Բաքր Ալ-Բադդադիին, ԻՇԻՊ-ի (հետագայում՝ ԻՊ) կազմում ակտիվորեն մասնակցեց տարբեր ճակատամարտերին՝ դառնալով ջիհադական պայքարի առանցքային դերակատարներից մեկը Սիրիայում: Ալ-Շիշանիի հայտնվելը զանազան ռազմաճակատներում մեծ ցնծություն ու խանդավառություն էր առաջացնում իսլամականների շրջանում¹⁶³: Թերևս սա բացատրվում էր նրանով, որ մինչև սիրիա-

¹⁶¹ St' u **Reuter Ch.**, The Terror Strategist: Secret Files Reveal the Structure of Islamic State, Shpiegel On Line International, April 18, 2015, <http://www.spiegel.de/international/world/islamic-state-files-show-structure-of-islamist-terror-group-a-1029274.html> (Մուտք, մայիսի 12, 2015 թ.):

¹⁶² Սիրիայում Հաջի Բաքրը մնացել էր Թալ Ռիֆաթի այն հատվածում, որը չէր վերահսկվում ԻՇԻՊ-ի զինյալների կողմից: Աննկատ մնալու համար Հաջի Բաքրը որոշում է չտեղափոխվել այլ վայր, սակայն նրան հայտնաբերում և սպանում են:

فرحة الأخوة بقدم الشيخ عمر الشيشاني حفظه الله إلى إعرار 163

կան հակամարտությունն Աբու Ումար Ալ-Շիշանին անցել էր ռազմական պատրաստություն՝ 2006-2007 թթ. հատուկ հետախուզական խմբավորման կազմում ծառայելով Վրաստանի կանոնավոր բանակում: Հաջվի առնելով ՆԱՏՕ-Վրաստան այդ ժամանակվա ռազմական համագործակցությունը՝ հավանաբար Ալ-Շիշանին անցել էր լուրջ ռազմական պատրաստություն արևմտյան փորձագետների մոտ: 2008 թ. մասնակցել էր ռուս-վրացական պատերազմին, որի ընթացքում Ալ-Շիշանիի խումբը հետախուզական գործունեություն էր իրականացրել, ռուսական տեխնիկայի տեղաշարժերի և տեղակայման տվյալներ հաղորդել վրացական հրետանային գնդերին:

Ալ-Շիշանիի ռազմական փորձն անշուշտ իր դերը խաղացել է Սիրիայում տեղի ունեցող պատերազմում՝ ռազմական գործչի համբավ ապահովելով մարտական գործողությունների փորձառություն չունեցող իսլամականների շրջանում: Ալ-Շիշանիի ռազմական գործի գիտակ լինելուն զուգահեռ՝ իսլամական ծայրահեղ արմատականների մեջ շրջանառվեցին նաև հակառակ տեսակետներ: Մասնավորապես, Աբու Ումարի զինակիցներից Խալիդ Ալ-Շիշանին համացանցում տարածած իր ուղերձում Աբու Ումարին ներկայացրեց որպես ռազմական գործին չտիրապետող, մարտավարական ունակություններից զուրկ մի մարդ, ում համար ջիհադական պայքարում մուջահիդների կյանքն ատոչինչ է, իսկ ռազմական գործողություններում նրա համար կարևոր են դափնիները¹⁶⁴:

Ալ-Շիշանին բազմիցս հանդես է եկել ուղերձներով ու

<https://www.youtube.com/watch?v=n-yTFX3MQxQ> (Մուսք, հուլիսի 12, 2015 թ.):

¹⁶⁴ Տե՛ս From Chechnya to Syria, Translation of statement by Khalid Shishani regarding Umar Shishani, November 6, 2014, <http://www.chechensinsyria.com/?p=22813> (Մուսք, դեկտեմբերի 14, 2014 թ.):

հայտարարություններով՝ քարոզչության ոլորտում կարևորելով ակտիվ գործունեությունը: Վերոշարադրյալի համատեքստում ուշագրավ են ջիհադականներին հասցեագրված իր ուղերձներում ԻՇԻՊ-ի առաջնորդին՝ Աբու Բաքր Ալ-Բադդադիին տրված հավատարմության երդման շեշտումը, ինչը պատճառ էր դարձել կովկասցի իսլամականների միջև հակասությունների սրման: Ալ-Շիշանին իր ուղերձներում ընդգծում էր, որ միայն ԻՇԻՊ-ն է ժամանակին պատրաստակամություն հայտնել աջակցել իր դեկավարության տակ գործող չեչեն իսլամականներին՝ օժանդակելով վերջիններիս ջիհադական պայքարը Կովկասում:

2016 թ. հուլիսի 13-ին ՋԼՄ-ներում տարածված տեղեկության համաձայն՝ Աբու Ումար Ալ-Շիշանին սպանվել է Իրաքի Մոսուլ քաղաքի շրջակայքում իրաքյան կառավարական ուժերի և իսլամականների միջև տեղի ունեցած բախումների ժամանակ:

5.4. «Իսլամական պետության» կրոնական-գաղափարական, քարոզչական, ֆինանսական, ռազմական-մարտավարական ներուժը

Ներկայիս իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում ԻՊ-ն առանձնանում է իր կրոնական-գաղափարական, քարոզչական, ֆինանսական ու ռազմական-մարտավարական ներուժով, որի շնորհիվ այն դարձել է արդի ջիհադական պայքարի առաջամարտիկը՝ վերածվելով իսլամական ծայրահեղական ճամբարում ի հայտ եկած նոր իրողության:

Կրոնական-գաղափարական. ԻՊ-ն ստեղծվեց մուսուլմանական աշխարհի կենտրոնում՝ Իրաքի և Սիրիայի զգալի հատվածներում: Կառույցն իր առաջնորդ Աբու Բաքր Ալ-Բադդադիին հայտարարեց խալիֆ, ում տիտղոսներում Մուհամմադ մար-

գարեի ցեղի վկայակոչումը (Աբու Բաքր Ալ-Բադդադի Ալ-Կուրայշի Ալ-Հաշիմի) նպատակ է հետապնդում ընդգծել մարգարեի ցեղին պատկանող ԻՊ-ի առաջնորդի անձի կարևորությունը մուսուլմանների համար: ԻՊ-ի գաղափարական հիմնադրույթներից է որպես պետություն հանդես գալը, որով այդ կառույցն առանձնացնում է իսլամական արմատական այլ խմբավորումներից («պետություն» բառը ներմուծվել է կառույցի անվան մեջ դեռևս 2000-ական թթ. կեսերից Իրաքում): Մինչ տարածաշրջանային իսլամական շատ ուժեր հայտարարում են, որ պայքարում են իսլամական պետություն ստեղծելու համար, ԻՊ-ն իր անվանումով ենթադրում է արդեն «պետության» գոյության իրողություն, որին կարող են միանալ մուսուլմաններն աշխարհի տարբեր անկյուններից:

Քարոզչական. «Իսլամական պետության» հռչակումը դարձավ մի նոր առիթ տարբեր ուղղությունների պատկանող սուննի ալիմների ու իսլամականների վիճաբանության և բազմաթիվ այսպիսիների և հադիսների վկայակոչմամբ՝ իրարամերժ կարծիքներ արտահայտելու համար: Հակասությունը շատ սուր բնույթ է ստացել, իսկ դրսևորման ձևերն էլ բազմազան են՝ սկսած հաստատվող գրքեր լույս ընծայելուց, համացանցով դասախոսություններ տարածելուց մինչև մզկիթներում քարոզի ընթացքում հակառակորդներին պախարակելը: Ոճը նույնպես շատ տարբեր է. այն տատանվում է անհավատության մեջ փոխադարձ մեղադրանքներից և հայհոյանքներից մինչև սրբազան տեքստերի վկայակոչում և վերլուծում¹⁶⁵:

¹⁶⁵ **Հովհաննիսյան Դ.**, Սուննիական ծայրահեղականության դրսևորումները. «ներկան» և «ապագան», ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր N7, Երևան, 2015 թ., էջ 22:

21-րդ դարասկզբից ջիհադականների՝ ՋԼՄ-ների օգտագործման մարտավարությունը փոխվեց՝ ընդօրինակելով նոր տեխնոլոգիաներն ու հարմարվելով արտաքին փոփոխություններին: Իսլամականները լայնորեն կիրառում են ժամանակակից տեխնոլոգիաները: Համացանցը ջիհադականները վերածել են գաղափարական պայքարի բավական արդյունավետ միջոցի՝ ծայրահեղականների հավաքագրման և պատրաստման վիրտուալ տարածքի: Լայն տարածում ունեցող սոցիալական ցանցերում առաջանում են ջիհադի քարոզչության հարյուրավոր վիրտուալ խմբեր, ստեղծվում են իսլամական ֆորումներ: Արդի իսլամական համացանցային հարթակում քննարկումներին և ֆորումներին մասնակցող հազարավոր իսլամականները համացանցային տիրույթում արտահայտում են մտքեր, ստանում են տեղեկություններ իսլամական պայքարի տարբեր հատվածներում տեղի ունեցող իրադարձություններից¹⁶⁶: Սա ևս վկայում է այն մասին, որ տեղեկատվական-վիրտուալ ջիհադը դարձել է «ալ-Կաիդա»-ի և դրան հարող ջիհադական խմբերի տեղեկատվական ռազմավարության հիմնասյուններից մեկը:

Համացանցում յուրաքանչյուր սկսնակ ջիհադականի համար կան բավական նյութեր և օպերատիվ ցուցումներ ջիհադի գործին ինքնուրույն ծանոթանալու և ահաբեկչություն իրականացնելու համար: Համացանցի միջոցով ինքնագոհ մարտիկների և ջիհադական տեղական խմբերի պատրաստումը և ակտիվ գործողությունները դարձել են իսկական գլխացավանք աշխարհի շատ երկրների ու հատուկ ծառայությունների համար, քանի որ այդ վիրտուալ-մահապարտ ահաբեկիչների ու ծայրահեղ-

¹⁶⁶ **Hegghammer Th.**, Global Jihadism After the Iraq War, Middle East Journal, 2004, pp. 11-17.

արմատական խմբերի բացահայտման ու չեզոքացման համար այդ երկրները լուրջ խոչընդոտների են հանդիպում:

Մուսուլմանների շրջանում ջիհադը գրավիչ դարձնելու նպատակով ԻՊ-ն օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաներ (IT մասնագետներ, համացանց, բարձր որակի գովազդային տեսահոլովակներ և այլն), որոնց միջոցով իրականացնում է «Հանուն Աստծո սրբազան պատերազմ վարելու քարոզչություն»: Աշխարհի տարբեր հատվածներում բնակվող երիտասարդ մուսուլմանների համար «Իսլամական խալիֆայության և մուսուլմանական ումմայի շենացման», ջիհադական պայքար իրականացնելու, «անհավատների» դեմ պայքարելու և այլ իսլամական արմատական գաղափարները կյանքի կոչելու հնարավորություն է ստեղծվել, որն ապահովում է ԻՊ-ն քարոզչության միջոցով:

Իսլամականների քարոզչության փաստարկները չափազանց պարզ են և խոստումներով լի, ընդ որում պարունակում են ուղերձներ բոլոր տեսակի հասցեատերերին, ուստի և ապահովում են բավականին լայն հասարակական օժանդակություն¹⁶⁷:

Հատկանշական է իսլամականների կողմից «Դաբիկ»¹⁶⁸ լրատվական հանդեսի հրապարակումը, որի էջերում անդ-

¹⁶⁷ **Հովհաննիսյան Դ.**, Մունիական ծայրահեղականության դրսևորումները. «ներկան» և «ապագան», ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր N7, Երևան, 2015 թ., էջեր 23-24:

¹⁶⁸ «Դաբիկ» անվանումը պատահաբար չի ընտրված: ԻՊ-ի գաղափարախոսները հաճախ են մեջբերում մուսուլմանների սուրբ աղբյուրներում Սի-րիայի հյուսիսում գտնվող Դաբիկ անվանումով տեղանքը: Ըստ իսլամականների՝ Դաբիկը այն վայրն է, որտեղ բախվելու են մուսուլմանների և Հռոմի («խաչակիրների») բանակները, և մուսուլմանները վերջնականապես ջախջախելու են խաչակիրների զինուժը (տե՛ս **Մուսլիմ Սահիհ**՝ 6924-http://searchtruth.com/book_display.php?book=041&trans-lator=2&start=0&number=6924):

րադարձ է կատարվում ԻՊ-ի գործունեությանը, դրանք հիմնավորվում մուսուլմանների սուրբ տեքստերից մեջբերումներով, տրվում իսլամականների ներկա և ապագա գործունեության ուղենիշները, քննարկվում աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և շատ այլ հարցեր:

Ֆինանսական. ԻՊ-ի ֆինանսական ռեսուրսները հնարավորություն են տալիս իսլամականներին սպառազինվելու, նոր անդամներ հավաքագրելու և ռազմական գործողությունների վրա զգալի միջոցներ ծախսելու համար: ԻՊ-ի վերահսկողության տակ են էներգակիրներով հարուստ սիրիական և իրաքյան որոշ տարածքներ, որտեղ կառույցը զբաղվում է նավթագազային պաշարների վաճառքով:

Սակայն պետք է նշել նաև, որ ենթակառուցվածքների առումով ԻՊ-ի կողմից վերահսկվող նավթավերամշակման կայանները խոշոր չեն և հիմնականում շահագործվում են պարզունակ եղանակով: Ի տարբերություն սրա՝ ԻՊ-ն վերահսկում է խոշոր գազի արդյունահանման կայաններ (հիմնականում Սիրիայում): Գազային ենթակառուցվածքների համար պայքարում նկատվում է, որ թե՛ սիրիական իշխանությունները և թե՛ ԻՊ-ի զինյալները գիտակցում են այդ համակարգերի վերականգնման դժվարությունները և փորձում են հնարավորինս վնասներ չհասցնել դրանց:

ԻՊ-ը կարողանում է որոշակի օգուտներ քաղել սիրիական և իրաքյան տարածքներով անցնող նավթամուղներով և գազամուղներով փոխադրվող էներգետիկ ռեսուրսների ապահով տեղափոխումից: Նավթի սև շուկան կազմակերպելու համար ԻՊ-ն օգտագործում է հիմնականում ինքնաշեն խողովակաշարեր և ավտոցիստերներ՝ վաճառելով նավթը ինչպես սիրիական կողմին, այնպես էլ՝ քրդական և թուրքական:

ԱՄՆ գլխավորած կոալիցիայի ռմբահարումները, ինչպես նաև ռուսական ավիահարվածները նշանակալի վնասներ են հասցնում ԻՊ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքների նավթային ենթակառուցվածքներին, որի հետևանքով նավթա-արդյունաբերությունը այդ տարածքներում նվազում է: ԻՊ-ի գազային ենթակառուցվածքները նույնպես թիրախավորվում են, սակայն պետք է նշել, որ դրանք սաստող բնույթի են, քանի որ կետային հարվածներ են և առանձնապես չեն խափանում այդ ենթակառուցվածքների աշխատանքը¹⁶⁹:

ԻՊ-ն զգալի շահույթ է ստանում նաև պատերազմների ժամանակ ստացվող ավարից, ինչպես նաև իր կողմից վերահսկվող տարածքներում հայտնված պատմամշակութային արժեքավոր հուշարձանների և թանկարժեք հինավուրց իրերի վաճառքից և գերեվարվածների համար վճարվող փրկագներից¹⁷⁰:

ԻՊ-ը վայելում է նաև տարածաշրջանային որոշ երկրների ֆինանսական կենտրոնների և առանձին անհատ հովանավորների ֆինանսական օժանդակությունը, ինչը ևս լրացուցիչ ֆինանսական հոսքեր է ապահովում կառույցին: Վերոշարադրյալը ԻՊ-ին դարձրել է ամենահարուստ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումն աշխարհում: Մինչ կոալիցիոն օդուժի օդային հարվածները իսլամականների՝ նավթի վաճառ-

¹⁶⁹ **Քոչարյան Հ.**, «Իսլամական պետության» ածխաջրածնային հզորությունները, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր N7, Երևան, 2015 թ., էջեր 213-215:

¹⁷⁰ Dispatch from the Field, Islamic State, Ammunition in Iraq and Syria, Conflict Armament Research, October 2014, http://www.conflictarm.com/wp-content/uploads/2014/10/Dispatch_IS_Iraq_Syria_Ammunition.pdf (Մուտք՝ մայիսի 3, 2015 թ.).

քից ստացվող ամսական շահույթը կազմում էր 1-2 մլն ամերիկյան դոլար¹⁷¹:

ԻՊ-ը, եներգակիրներով հարուստ տարածքներից ստանալով նավթ և վաճառելով այն, շահույթը համաչափ բաշխում է այլ քաղաքներում և բնակավայրերում՝ համակարգելով նավթի գնագոյացումը¹⁷²:

ԻՊ-մ ֆինանսական հոսքեր ունի նաև զաքաթից (չքավորներին տրվող հարկ, նվիրատվություն) ստացվող եկամուտներից (մոտ 2,5 տոկոս տարեկան եկամուտներից կամ ընդհանուր կապիտալից, գյուղատնտեսական ապրանքներից և այլն):

Իսլամականների կողմից վերահսկվող տարածքներում այլադավաններից հավաքվում է նաև գլխահարկ (ջիզիա)¹⁷³:

¹⁷¹ CNN, **Bronstein S., Griffin D.**, Self-funded and deep-rooted: How ISIS makes its millions, October 7, 2014, <http://edition.cnn.com/2014/10/06/world/meast/isis-funding/> (Մուտք, մարտի 24, 2015 թ.):

¹⁷² 230 Էջի հավելվածում ներկայացված են «Իսլամական պետության» Քիրքուքի նահանգում նավթի վճարման ստացականներ, որտեղ նշվում է, որ 1 լ նավթը գնվել է 12 դոլարով:

¹⁷³ 231-232 Էջերի հավելվածում ներկայացված են «Իրաքում և Շամում իսլամական պետություն» կառույցի առաջնորդ Աբու Բաքր Ալ-Բադդադիի և ալ-Ռակկայի քրիստոնյա բնակչության միջև կնքված պայմանագիրը, որով սահմանվում են քրիստոնյաների կացութաձևը, իրավունքներն ու պարտականությունները ԻՇԻՊ-ի կողմից վերահսկվող Սիրիայի ալ-Ռակկա նահանգում: Պայմանագրում մասնավորապես նշվում է, որ քրիստոնյաներն իրավունք չունեն կառուցել (կամ վերակառուցել) եկեղեցիներ, ցուցադրել քրիստոնեական խաչը, լսելի դարձնել աղոթքի կոչերն ու եկեղեցական զանգերը: Չպետք է մասնակցեն իսլամական պետության դեմ որևիցե թշնամական գործողությունների կամ օգնեն դրանք իրականացնողներին, չպետք է իրականացնեն պաշտամունքային արարողություն եկեղեցուց դուրս, չպետք է խոչընդոտեն այլ քրիստոնյաներին ընդունել իսլամ, պետք է հարգեն իսլամն ու այն դավանողներին և չքննադատեն վերջիններին, պետք է ջիզիա (գլխահարկ) վճարեն, որի չափը 4 դինար է ոսկով: Չի թույլատրվում գենք կրել, մուսուլմաններին վաճառել խոզի միս կամ ալկոհոլ, այն օգտագործել հանրային

Իսլամականները բռնագավթում են նաև տարհանվածների կամ իսլամականների դեմ կովոդ անձանց ունեցվածքը¹⁷⁴:

Ռազմական-մարտավարական. ԻՊ-ն, համալրված լինելով փորձառու զինյալներով ու արհեստավարժ հրամանատարներով, ռազմական գործողությունների ժամանակ կիրառելով մարտավարական նոր հնարքներ, իր սպառազինության մեջ ավելացնելով նորանոր զինտեխնիկա ու զինատեսակներ, ազդեցիկ գործոն է դարձել, որի հետ ստիպված են հաշվի նստել: ԻՊ-ը գաղափարական մոտեցումների, ռազմական և ֆինանսական զգալի ռեսուրսների շնորհիվ համալրվում է աշխարհի տարբեր հատվածներից եկող իսլամականներով, որոնց թիվը 2014 թ. ընթացքում ուներ ավելանալու միտում: 2014 թ. կեսերի դրությամբ ԻՊ-ի զինյալների թիվը կազմեց շուրջ 40.000, որոնց մեջ օտարերկրյա իսլամականների թվաքանակը անցնում էր 20.000-ը:

վայրերում: Թույլատրվում է ունենալ սեփական զերեզմանատները, և անհրաժեշտ է ընդունել իսլամական պետության կողմից սահմանված ցուցումներն ու կանոնները (առնչվող հագուստին, առևտրին և այլն): Պայմանագրի վերջում նշվում է, որ եթե քրիստոնյաները չընդունեն այս ցուցումները, ապա նրանք չեն համարվի զիմմի, և ԻՇԻՊ-ը նրանց հետ կվարվի այնպես, ինչպես իր թշնամիների հետ: Բացի դրանից, 233 էջի հավելվածում ներկայացված են նաև 2014 թ. հունիսի սկզբին Իրաքի Մոսուլ քաղաքը նվաճելուց հետո «Իսլամական պետության» կողմից Մոսուլի քրիստոնյաներին հասցեագրված փաստաթղթերից մեկը, որտեղ նրանց առաջարկվում է ընտրության 3 հնարավորություն՝ ընդունել իսլամ, կնքել զիմմիի պայմանագիր (վճարել գլխահարկ) կամ մահ: Ինչպես նաև 234 էջի հավելվածում ներկայացված է «Իսլամական պետության» ալ-Ռակկա քաղաքում այլադավանի վճարած գլխագնի ստացական, որտեղ նշվում է, որ գլխագին է վճարվել 27000 սիրիական դրամ:

¹⁷⁴ CNN, **Bronstein S., Griffin D.**, Self-funded and deep-rooted: How ISIS makes its millions, October 7, 2014, <http://edition.cnn.com/2014/10/06/world/meast/isis-funding/> (Մուտք, մայիսի 7, 2015 թ.):

Միևնույն ժամանակ արհեստավարժ ռազմավարության շնորհիվ ԻՊ-ը կարողանում է իր կայանատեղիներին ու օբյեկտներին ուղղված օդային հարվածներից վնասները նվազագույնի հասցնել՝ ստիպելով հակառակորդին զգալի ռազմական ռեսուրսներ և ժամանակ վատնել:

Սիրիայի քրդաբնակ Քոբանիի հետ կապված զարգացումները վերոշարադրյալի վկայությունն են: Ըստ ԻՊ-ի խոսնակ Աբու Մուհամմադ Ալ-Ադնանիի՝ կռալիցիոն օդուժն իր հարվածների մոտ 70% իրականացնում էր Քոբանիում: Թուրքիայի սահմանին գտնվող փոքրիկ քրդաբնակ բնակավայրը նվաճելու համար ԻՊ-ն զգալի ներուժ էր կուտակել, սակայն այն նվաճելու ԻՊ-ի փորձերը մեծ կորուստներով ձախողվեցին: Սակայն հետադարձ հայացք նետելով ու հետևելով հետագա ռազմական գործողությունների ընթացքի ու ԻՊ-ի վարքագծի տրամաբանությանը՝ հասկանում ենք, որ ԻՊ-ն որդեգրել է հետևյալ մարտավարությունը. մինչ ԻՊ-ի զինյալները ներխուժել էին Քոբանի ու շարունակում էին համառորեն պայքար մղել քրդական և այլ սիրիական ընդդիմադիր զինյալ խմբավորումների դեմ՝ ենթարկվելով ինտենսիվ օդային հարվածների, ԻՊ-ն այլ հատվածներում ամրապնդում էր սեփական դիրքերը ալ-Ռակկայում կամ Մոսուլում ևս իրենց կողմից վերահսկվող տարածքներում բնակվող ցեղերի ու ցեղախմբերի հետ աշխատանքի միջոցով:

Իսլամականների մարտավարության բաղկացուցիչ մաս է շարժունակ փոքր խմբերով ռազմգործողությունները, որոնք դժվար խոցելի են դառնում կռալիցիոն օդուժի հարվածներից (դրանք ոչ միայն ժամանակատար են և մեծ հաշվով ոչ արդյունավետ, այլև թանկ են նստում ժամանակակից օդային զինտեխնիկա ու թանկարժեք հրթիռներ օգտագործող կողմի համար), և այդ ամենի միջոցով ԻՊ-ը կարողանում է ապահովել այլ ռազմաճակատներում ուժային հավասարակշռություն:

Ռազմական գործողություններում ԻՊ-ն օգտագործում է սեփական ԱԹՄ-ները (Անօդաչու թռչող սարք), որոնք ապահովում են իսլամականների համար ռազմական գործողությունների թատերաբեմի հստակ պատկերացումը: Ռազմական հարձակումներն իրականացվում են վատ եղանակային պայմաններում, որը նվազեցնում է կռիվից զոհվող կողմից ԻՊ-ի զինյալներին ուղղված հարվածների արդյունավետությունը: Այս մարտավարական հնարքները իսլամականների գրոհները դարձնում են հանկարծակի, սրընթաց և հուժկու:

Միևնույն ժամանակ ԻՊ-ն մանրամասնորեն է ընտրում իր թիրախները, որպեսզի շատ ռեսուրս չլի իրենցից և որոշ սպառազինության հայթայթման հնարավորություն տա: Դրանց տիրանալով՝ իսլամականները կարող են տևական ժամանակ ճակատամարտի բռնվել հակառակորդի հետ՝ ժամանակ շահելով այլ հատվածներից օգնության եկող իսլամականներով համալրվելու համար:

Հարձակումը զուգորդվում է քարոզչությամբ: Շարժունակ փոքր խմբերի հայտնվելն այս կամ այն հատվածներում, դրանց հուժկու գրոհը, մահապարտ ահաբեկիչների կողմից մեքենաների պայթեցումները, կատաղի պայքարի բռնվելն ու այդ ամենի թիրախային քարոզչությունը միտված են հակառակորդի շարքերում խուճապ առաջացնելուն: Նման մարտավարությունը նույնպես լայնորեն կիրառվում է ԻՊ-ի կողմից, որը տեսանելի է թե՛ Սիրիայում, թե՛ Իրաքում իսլամականների գրոհներում:

Մի քանի ուղղություններով հարձակումները զգոն են պահում հակառակորդին, հակահարվածի դեպքում մասնատում են ռեսուրսները, ստիպում են չկենտրոնանալ մեկ ուղղությունից սպասվող հարվածի վրա՝ մտածելով պաշտպանության մասին:

Հիշյալ մարտավարական հնարքները հնարավորություն են տալիս ԻՊ-ին ընդլայնվելու, իսկ վերջինիս դիրքերին ուղղված օդային հարվածները դարձնում են անարդյունավետ:

ԻՊ-ն իր կողմից վերահսկվող տարածքների բնակիչների, ցեղերի և ցեղախմբերի նկատմամբ ունի մշակված ռազմավարություն:

Իսլամականների վերահսկողության տակ անցած սուննիական ցեղերով բնակեցված սիրիական և իրաքյան տարածքները բավական ապահով վայրեր են թաքնվելու և այստեղից հակառակորդի դեմ գործելու համար: Բացի դրանից, տեղի ցեղերի և ցեղախմբերի մեջ նկատելի են ընդդիմադիր ճամբարին, այդ թվում իսլամական ծայրահեղական կառույցներին միանալու միտումներ:

Հակամարտության ընթացքում ընդդիմադիրների կողմից վերահսկվող տարածքներում, մասնավորապես Դար ալ-Ջուրում, ցեղերի և ընդդիմադիր խմբավորումների մեջ նկատվեցին այստեղ գտնվող էներգակիրներից ստացվող շահույթի բաշխման հետ կապված հակասություններ, որոնցից հետագայում օգտվեց ԻՊ-ն:

Իսլամականներին հաջողվում է ցեղերի շրջանում հակասություններ հրահրելով թուլացնել վերջիններին և դարձնել հնազանդ (օրինակ՝ Շայթաթ ցեղի հետ կապված դեպքերը սիրիական Դար ալ-Ջուրում 2014 թ. օգոստոսին, կամ Ալբու Նիմր ցեղի հետ կապված զարգացումները իրաքյան Հիթ քաղաքում 2014 թ. հոկտեմբերին և այլն): Սա խոսում է այն մասին, որ իսլամականներին հաջողվում է ԻՊ-ի դեմ սիրիական կամ իրաքյան սուննիական ցեղերի ցանկացած ընդվզում վերածել միմյանց դեմ բախումների: Նրանց հնազանդ պահելու համար իսլամականները օգտագործում են ներցեղային հակասությունները, ինչպես նաև նրանց առաջարկվում է ազդեցիկ դիրքեր իրենց

տարածքներում և էներգակիրներից ստացված շահույթի որոշ մաս: Իսլամականների կողմից քայլեր են ձեռնարկվում շարիաթի սկզբունքների վրա հիմնված տեղացի գործարարությունը քաջալերելու ուղղությամբ: Նման վարքագիծն օգտագործելով՝ ԻՊ-ն կարողանում է ընդլայնել իր կողմից վերահսկվող տարածքները Սիրիայում և Իրաքում՝ էլ ավելի ամրապնդելով սեփական դիրքերը:

ԻՊ-ի կողմից բռնի ուժի և արդյունավետ կառավարման համադրությունը կանխում է տեղացիների մեջ դժգոհությունների ալիքի խորացումը: Նման քաղաքականությունը դժվարություններ է առաջացնում արտաքին ուժերի համար այդ տարածքներում ընդդեմ իսլամականների շարժում ձևավորելու առումով¹⁷⁵:

ԻՊ-ն ունի հետախուզության և հակահետախուզության մարմիններ: Դրանց օգնությամբ ու տրամադրվող տեղեկությունների հիման վրա ԻՊ-ն կարողանում է հստակ պատկերացում կազմել տեղերում տիրող իրավիճակի վերաբերյալ:

Իրենց կողմից չվերահսկվող տարածքներում իսլամականներն ունեն «քնած բջիջներ», որոնց օգնությամբ կարողանում են շատ արագ ոտքի հանել ընդդիմադիր զանգվածին և ուղղորդել դրանց:

Վերոշարադրյալով են պայմանավորված ԻՊ-ի առաջխաղացումներն ու հաջողությունները Սիրիայում, Իրաքում, մուսուլմանական որոշ երկրներում և մուսուլմանաբնակ այլ հատվածներում 2013-2015 թթ.՝ չնայած արդեն 2015 թ. սկզբից կառույցի գործունեության մեջ նկատվեցին որոշ ձախողումներ:

¹⁷⁵ Weiss M., Hassan H., նշվ. աշխ., էջեր 226-232:

5.5. «Իսլամական պետությունը» Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս

Դեռևս 2014 թ. օգոստոս ամսից Իրաքում, իսկ սեպտեմբերից նաև Սիրիայում կռավիցիոն ուժերի կողմից սկսված «Իսլամական պետության» կայանատեղիներին ու նավթահանման տեղանքներին ուղղված օդային հարվածները, ինչպես նաև տարածաշրջանային որոշ ուժերի կողմից իսլամականների դեմ իրականացվող ռազմական հաջող գործողությունները ստիպեցին ԻՊ-ին որոշակի փոփոխություններ մտցնել իր վարքագծում՝ ուշադրության կենտրոնում պահելով իր տիրապետության տակ անցած տարածքներում սեփական դիրքերի ամրապնդումը, սակայն, դրան զուգահեռ, չմոռանալով նաև իր ազդեցությունը տարածել Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս:

ԻՊ-ն իր մարտավարության մեջ առաջնորդվում է նաև «Բակիյա ուա Թաթամադդադ» (باقية وتتمدد-հիմնվել և ընդլայնվել) կարգախոսով¹⁷⁶: Այն ընդգծում է կառույցի զավթողական նկրտումները առաջին հերթին մուսուլմանական երկրներում¹⁷⁷:

Հիշյալ մարտավարությունը ԻՊ-ն հիմնականում իրականացնում է Մերձավոր Արևելքում ռազմական գործողություն-

¹⁷⁶ باقية وتتمدد ولكن الى اين ثم أين؟ “استراتيجية الدولة” المركز الاوربي للعلاقات الخارجية 18 نوفمبر, 2014, http://majalesport.com/%D8%A8%D8%A7%D9%82%D9%8A%D8%A9_%D9%88%D8%AA%D8%AA%D9%85%D8%AF%D8%AF_%D9%88%D9%84%D9%83%D9%86_%D8%A7%D9%84%D9%89_%D8%A7%D9%8A%D9%86_%D8%AB%D9%85_%D8%A7%D9%8A%D9%86%D8%9F_%D8%A7%D8%B3%D8%AA%D8%B1 (Մուսք, հունվարի 4, 2015 թ.):

¹⁷⁷ European Council on Foreign Relations, **Al-Tamimi A.**, The Islamic State's regional strategy, October 2, 2014, http://www.ecfr.eu/article/commentary_the_islamic_states_regional_strategy326 (Մուսք, նոյեմբերի 15, 2014 թ.):

ների, ինչպես նաև Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս մուսուլմանական երկրներում ակտիվություն և ԻՊ-ի հովանու տակ գործելու ցանկություն ցուցաբերող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների ջիհադական ակտիվ պայքարի միջոցով:

Շատ հաճախ ԻՊ-ի խալիֆ Աբու Բաքրին հասցեագրված հավատարմության երդումով և վիլայեթի հռչակումով վերոհիշյալ երկրներում զարկ է տրվում ԻՊ-ի հովանու տակ իրականացվելիք ջիհադական պայքարին:

ԻՊ-ի խալիֆի կողմից իրեն ուղղված հավատարմության երդումն ընդունելն ու դրան հավելյալ վիլայեթ հռչակելը հենց այնպես չեն արվում: Վիլայեթ հռչակվում է այն տարածքներում, որտեղ իսլամականները բավական ակտիվ են եղել, և կա բավական ազդեցիկ իսլամական ծայրահեղ արմատական ներուժ, ինչը կարող է ապահովել ԻՊ-ի ազդեցության արդյունավետ տարածումը դրա կազմի մեջ մտնող նորահռչակ տարածքներում ու դրանցից դուրս: Հայտնի են դեպքեր, երբ Աբու Բաքր Ալ-Բադդադին չի ընդունել իրեն հասցեագրված հավատարմության երդումը: Մասնավորապես Հնդկաստանում գործող «Թանզիմ Անսար ալ-Թաուհիդ» իսլամական կառույցը հավատարմության երդում էր տվել ԻՊ-ի խալիֆին դեռևս 2014 թ. հոկտեմբերին, սակայն այն չէր արժանացել խալիֆի ուշադրությանը: Աբու Բաքրը հավանաբար կարևորություն չի տալիս այդ կառույցի ջիհադական պայքարին Հնդկաստանում՝ այն համարելով ոչ ազդեցիկ և ոչ արդյունավետ: Ուստի, «Թանզիմ Անսար ալ-Թաուհիդ» խմբավորումը սահմանափակվել է Հնդկաստանում ԻՊ-ի գործունեության քարոզչությամբ¹⁷⁸: Մուսուլմանական

¹⁷⁸ Aymenn Jawad Al-Tamimi, **Al-Tamimi A.**, The Islamic State and Its “Sinai

երկրներում գործող իսլամական զանազան խմբավորումների հավատարմության երդումը հավանության արժանացնելով՝ ԻՊ-ն փորձում է իր ուղեծրում պահել այդ խմբավորումները, դրանց կողմից իրականացվող ջիհադական պայքարը՝ տրամադրելով գաղափարական, ռազմական և ֆինանսական աջակցություն: Բացի դրանից, ԻՊ-ն պետք է համոզված լինի, որ այդ խմբավորումները ազդեցիկ են և շատ ակտիվ են լինելու իրենց տարածքներում: Դա ենթադրում է, որ այս խմբավորումների հավատարմության երդումն ընդունելն ու նոր վիլայեթի հռչակումը պետք է արդարացվեն հետագա ակտիվ պայքարով: Այն պետք է կոչված լինի նաև ԻՊ-ի և դրա առաջնորդի ազդեցության բարձրացմանը մուսուլմանական այն երկրներում, որտեղ իրականացվում է այդ պայքարը:

«Իսլամական պետությունը» Հյուսիսային Աֆրիկայում. ԻՊ-ի ուշադրության կենտրոնում մշտապես եղել է Հյուսիսաֆրիկյան տարածաշրջանը:

Եգիպտոս. Եգիպտոսի Սինայի թերակղզում ակտիվ է «Անսար Բայթ ալ-Մակդիս» իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումը: Այն ձևավորվել է 2011 թ. Սինայի թերակղզում, որտեղ իսլամական ծայրահեղական ներուժը, հատկապես Եգիպտոսում ծայր առած խռովությունների և անկայունության պայմաններում, պարարտ հող գտավ ջիհադական պայքարի համար: Կառույցը համարվում էր «ալ-Կաիդա»-ին հարող խմբավորումներից մեկը (ժամանակին «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Այման Ալ-Ջաուհիրին «Անսար Բայթ ալ-Մակդիս»-ի անդամներին տվել էր «մեր եղբայրներն են Սինայ թերակղզում» բնորոշումը), որն իր գործողություններով և փոփոխվող

Province”, March 26, 2015, <http://www.aymennjawad.org/16345/the-islamic-state-and-its-sinai-province> (Մուսք, հունիսի 4, 2015 թ.):

մարտավարությամբ փորձում էր ետ չմնալ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակների կողմից քարոզվող ջիհադական պայքարից¹⁷⁹։ Կառույցի գործողությունների թիրախը սկզբնական շրջանում Իսրայել պետությունն էր՝ հարձակումներ եգիպտա-իսրայելական սահմանային անցակետերի վրա, Եգիպտոսի տարածքով դեպի Իսրայել գնացող գազամուղների պայթեցումներ և այլն, որոնք զուգորդվում էին իսրայելական տարածքների պարբերական հրթիռակոծմամբ (օրինակ՝ 2014 թ. հունվարի 20-ին, երբ Իսրայելի Էիլաթ քաղաքը հրթիռակոծության ենթարկվեց Եգիպտոսի տարածքից, որի պատասխանատվությունն անմիջապես ստանձնեց «Անսար Բայթ ալ-Մակդիս»-ը)։ Մակայն «Անսար Բայթ ալ-Մակդիս»-ի կողմից որդեգրած ջիհադական պայքարի աշխարհագրական արեալն աստիճանաբար ընդլայնվեց՝ տեղափոխելով արդեն մայրցամաք և խոշոր քաղաքներ։ Ակտիվության պատճառներից էին եգիպտական իշխանությունների կողմից արդեն ընդդիմության վերածված «Մուսուլման եղբայրներ» իսլամական արմատական կառույցի դեմ վարվող պայքարն ու ճնշումները։ Դրանք շեղեցին եգիպտական անվտանգության մարմինների ուշադրությունը երկրի հյուսիս-արևելյան Սինայ թերակղզուց, որտեղ աստիճանաբար գլուխ էին բարձրացնում ծայրահեղ իսլամական խմբավորումները՝ ի դեմս թերակղզու դժվարամատչելի լեռնային շրջաններում պատսպարված «Անսար Բայթ ալ-Մակդիս» խմբավորման։

2013-2014 թթ.՝ հատկապես Մուհամմադ Մուրսիի պաշտոնանկությունից հետո, «Անսար Բայթ ալ-Մակդիս»-ն իր ջիհադական պայքարն աստիճանաբար սկսեց կենտրոնացնել եգիպտա-

¹⁷⁹ Reuters, **Georgy M.**, From desert hideout, shadowy Ansar militants rattle Egypt, February 19, 2014, <http://uk.reuters.com/article/2014/02/19/uk-egypt-militants-analysis-idUKBREA110I120140219> (Մուսք, մարտի 3, 2014 թ.)։

կան զինուժի և բարձրաստիճան պաշտոնյաների դեմ, իսկ 2014 թ. փետրվարի 16-ին եգիպտական Տաբա քաղաքում զրոսաշրջիկներ տեղափոխող ավտոբուսի պայթեցումն ապացուցեց, որ «Անսար Բայթ ալ-Մակդիս» խմբավորման թիրախի է վերածվում եգիպտական տնտեսական շահերը սպասարկող ու կարևոր բաղկացուցիչը համարվող զրոսաշրջության ոլորտը:

Կառույցը գերծ չմնաց նաև Մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող զարգացումներից, մասնավորապես իսլամական ծայրահեղ արմատական ճամբարում տեղի ունեցող գործընթացներից՝ 2014 թ. նոյեմբերին հավատարմության երդում տալով ԻՊ-ին և իր կողմից վերահսկվող տարածքներում հայտարարելով ԻՊ-ի Սինայի վիլայեթ¹⁸⁰:

Նիգերիա. «Բոկո Հարամ» (թարգմանաբար նշանակում է Արևմուտքի մերժում) իսլամական ծայրահեղ արմատական խմբավորման հիմքերը դրվել են դեռևս 1995 թ., սակայն կառույցի ակտիվ գործունեության փուլը սկսվեց 2002 թ., երբ խմբավորումը գլխավորեց Մուհամմադ Յուսուֆը: Գործելով Նիգերիայի հյուսիս-արևելքում՝ «Բոկո Հարամ»-ը իր նպատակը տեսնում էր շարիաթի սկզբունքների վրա հիմնված իսլամական պետության ստեղծումը: 2009 թ. Նիգերիայի իշխանությունները ճնշումներ սկսեցին գործադրել կառույցի նկատմամբ, որն արդեն 2010 թ. ակտիվ ռազմական գործողություններ սկսեց հենց այդ ժամանակվանից նախագահ ընտրված, քրիստոնյա Գուդլաք Ջոնաթանի վարչակարգի և կառավարական ուժերի դեմ:

¹⁸⁰ Al-Arabiya, **Bushra Sh.**, Egypt's Ansar Bayt al-Maqdis swears allegiance to ISIS. statement, November 4, 2014, <http://english.alarabiya.net/en/News/middle-east/2014/11/04/Egypt-s-Ansar-Bayt-al-Maqdis-swears-allegiance-to-ISIS.html> (Մուսք, դեկտեմբերի 3, 2015 թ.):

«Բոկո Հարամ»-ի նկատմամբ նիգերիական իշխանությունների կողմից ճնշումներն էլ ավելի էին սրում հարաբերությունները կառույցի ներսում հանդուրժողական և առավել արմատական թևերի միջև, որի արդյունքում «Բոկո Հարամ»-ի մեջ ձևավորված ծայրահեղ թևը Աբու Բաքր Շիքուի ղեկավարությամբ որդեգրեց առավել ծայրահեղական դիրքորոշում: Վերջինս 2009 թ. փոխարինեց սպանված Մուհամմադ Յուսուֆին կառույցի առաջնորդի պաշտոնում՝ հանդես գալով նոր մարտավարությամբ և անհանդուրժողական կեցվածքով ինչպես կառույցի ներսում, այնպես էլ դրանից դուրս իր այլախոհների հանդեպ:

Մինչ 1960 թ. անկախությունը բրիտանական գաղութային իշխանությունները Նիգերիայի հյուսիսը (որը հիմնականում բնակեցված է մուսուլմաններով) ու հարավը (բնակեցված քրիստոնյաներով) կառավարում էին առանձին, ինչը սոցիալ-տնտեսական և կրթական անհավասար պայմաններ էր ստեղծել Նիգերիայի այդ հատվածներում բնակվող նիգերիացիների համար, ինչը նկատելի է նաև մեր օրերում:

Նիգերիայում 2010 թ. նախագահական ընտրություններին հաջորդած ամիսներն աչքի ընկան լարվածության թեժացմամբ և անկայունությամբ, ինչն անկասկած իր ազդեցությունն ունեցավ ներնիգերիական զարգացումների վրա, որից անմիջապես շտապեց օգտվել «Բոկո Հարամ»-ը: Վերջինս ակտիվություն է ցուցաբերում հիմնականում Նիգերիայի հյուսիսային հատվածներում՝ իր շարքերը համալրելով այստեղ բնակվող չքավոր և գործազուրկ երիտասարդ մուսուլմաններով, որոնք հեշտությամբ են տրվում իսլամականների քարոզներին: Նիգերիայում առկա էթնիկ-դավանական զանազանությունը լրացուցիչ բարդություններ է ստեղծում իսլամական ծայրահեղական այդ կառույցի դեմ կառավարական ուժերի պայքարն արդյունավետ դարձնելու առումով: 2015 թ. մարտին «Բոկո Հարամը» հա-

վատարմության երդում տվեց ԻՊ-ին՝ իր կողմից վերահսկվող տարածքները դարձնելով ԻՊ-ի հերթական վիլայեթը¹⁸¹:

Լիբիա. Լիբիայի աշխարհագրական դիրքը գրավիչ է իսլամականների համար: Այն գտնվում է հյուսիսաֆրիկյան արաբական առանցքային երկրների՝ Ալժիրի ու Եգիպտոսի միջև: Միաժամանակ սահմանակից լինելով նաև Թունիսին, Նիգերին, Չադին և Սուդանին՝ Լիբիայում ամրացած իսլամականները կարևոր ռազմավարական դիրք են ունենում: Երկրի լեռները և անապատները բնական թաքստոցներ են իսլամականների և նրանց ռազմական ճամբարների համար, իսկ Լիբիայի բավական երկար ծովափնյա գոտին հեշտացնում է իսլամականների մուտքը Միջերկրական ծովից դեպի Եվրոպա:

Լիբիան հարուստ է էներգակիրներով, ինչը դրդում է ԻՊ-ին ակտիվացնել ներկայությունը նաև այս երկրում: Դա լրացուցիչ ֆինանսական հոսքերի երաշխիքներ է ստեղծում:

Լիբիական զինանոցներում հսկայական ծավալի սպառազինության առկայությունը (թեթև զինատեսակներից մինչև ծանր զինտեխնիկա, ընդհուպ մինչև ՀՕՊ համակարգեր (օրինակ՝ SAM-7)) նույնպես գրավիչ է ԻՊ-ի համար, որի Մերձավորարևելյան տարածաշրջանի ռազմական ակտիվության հիմքում նաև Սիրիայի և Իրաքի զինանոցների վրա հարձակումն ու այնտեղի սպառազինության հափշտակումն էր¹⁸²:

¹⁸¹ CNN, **Elbagir N.**, Boko Haram purportedly pledges allegiance to ISIS, March 9, 2015, <http://edition.cnn.com/2015/03/07/africa/nigeria-boko-haram-isis/index.html> (Մուտք, ապրիլի 12, 2015 թ.):

¹⁸² Quilliam Foundation, **Winter Ch.**, Libya. The Strategic Gateway for the Islamic State, Translation and Analysis of IS Recruitment Propaganda for Libya, February 4, 2015, <http://www.quilliamfoundation.org/wp/wp-content/uploads/publications/free/-libya-the-strategic-gateway-for-the-is.pdf> (Մուտք, մարտի 3, 2015 թ.):

Լիբիայում ակտիվ գործող իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների կողմից ԻՊ-ի խալիֆին ուղղված հավատարմության երդում տրվեց 2014 թ. հոկտեմբերին ծովափնյա Դարնա քաղաքից: Դրան հաջորդեց Աբու Բաքր Ալ-Բադդադիի կողմից Լիբիայի տարածքում՝ արևելքում՝ Բարկա, հարավում՝ Ֆիզան և արևմուտքում՝ Տարաբլուս երեք վիլայեթներ հռչակելու մասին հայտարարությունը¹⁸³:

Կենտրոնական Ասիա. «Իսլամական պետության» «Բակիա ուա Թաթամադդադ» (Հիմնվել և ընդլայնվել) կարգախոսի առարկայական դրսևորումների հերթական տարածքը դարձան Աֆղանստանն ու Պակիստանը, որտեղ 2013 թ. վերջից սկսված՝ ԻՊ-ն ակտիվորեն սկսեց հավաքագրել կողմնակիցներ, իսկ արդեն 2015 թ. սկզբին սեփական վիլայեթն ունենալու հայտներ կայացրեց: 2015 թ. հունվարի 26-ին ԻՊ-ի խոսնակ Աբու Մուհամմադ Ալ-Ադնանիի տարածած հայտարարության մեջ նշվեց, որ ստեղծվել է ԻՊ-ի Խորասանի վիլայեթը Աֆղանստանի և Պակիստանի որոշ տարածքներում: Ալ-Ադնանին հայտնեց նաև վիլայեթի ղեկավարի անունը, ով տալիբական շարժման նախկին ղեկավարներից Հաֆեզ Սաիդ Խանն է: Վերջինս արդեն հավատարմության երդում էր տվել խալիֆ Աբու Բաքր ալ-Բադդադիին¹⁸⁴:

¹⁸³ The New York Times, **Schmitt E., Kirkpatrick D.**, Islamic State Sprouting Limbs Beyond Its Base, February 14, 2015, http://www.nytimes.com/2015/02/15/world/middleeast/islamic-state-sprouting-limbs-beyond-mideast.html?_r=1 (Մուսք, մայիսի 3, 2015 թ.):

¹⁸⁴ Pieter Van Ostaen wordpress, **Ostaen P.**, Audio Statement by IS Spokesman Abu Muhammad al-‘Adnani as-Shami, Die in your Rage, January 26, 2015, <https://pietervanostaeyen.wordpress.com/2015/01/26/audio-statement-by-isspokesman-abu-muhammad-al-adnani-as-shami-say-die-in-your-rage/> (Մուսք, փետրվարի 7, 2015 թ.):

ԻՊ-ի համար չափազանց կարևոր էր Կենտրոն-ասիական տարածաշրջանում հայտարարել սեփական վիլայեթի ստեղծման մասին, որը իսլամականները միշտ դիտարկել են «ալ-Կաիդա»-ի ձևավորման և տալիբական շարժման բնօրրան: Այստեղից սկսվեցին իսլամական ծայրահեղ արմատական արդի միտումները, որոնք հանգեցրին դրանց ցանցայնացմանը, այստեղ դրվեցին ջիհադական պայքարի ժամանակակից ուղենիշները, այստեղ պատասպարվեց և ցայժմ թաքնված է «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակը՝ իրականացնելով ջիհադական պայքարի պլանավորումն ու ղեկավարությունը: Եվ հետևաբար, ԻՊ-ն որպես իսլամական ծայրահեղ արմատականության առաջնագծում հայտնված «ալ-Կաիդա»-ի համար այլընտրանք, չէր կարող ավանդապես «ալ-Կաիդա»-ի ազդեցության գոտում գտնվող Աֆղանստանում և Պակիստանում չունենալ իր սեփական վիլայեթն ու իր ուղեծրում գործող իսլամական խմբավորումները:

ԻՊ-ին հարող «Դաբիկ» հանդեսի էջերում հայտնվեցին Աֆղանստանի և Պակիստանի այն տեղանքների անվանումները, որտեղ իսլամական խմբավորումներն ընկել էին ԻՊ-ի ազդեցության տակ: Դրանք էին՝ Աֆղանստանում՝ Նուրիստան, Կունար, Կանդահար, Խոստ, Պակտիա, Պակտիկա, Ղազնի, Վարդակ, Հելմանդ, Կունդուզ, Լոգար, Նանգարհար և այլն, իսկ Պակիստանում՝ Խայբեր տարածաշրջանը (Փեշավար, Սվատ, Մայդան, Մարվատ, Քուքի Խել, Թոր Դարա, Դիր, Հանգու և այլն), Բաջաուր, Օրաքզայ, Քուրրամ, Վազիրիստան և այլն¹⁸⁵:

¹⁸⁵ Dabiq, From Hypocrisy to Apostasy, No. 7, pp. 34-35. <http://media.clarionproject.org/files/islamic-state/islamic-state-dabiq-magazine-issue-7-from-hypocrisy-to-apostasy.pdf> (Մուսք, մայիսի 23, 2015 թ.):

ԻՊ-ի աճող ազդեցությունը հնարավորություն տվեց հավաքագրել իսլամականներ՝ Աֆղանստանից և Պակիստանից դուրս ջիհադական պայքարին մասնակցելու համար: Բացի դրանից, իսլամականների շրջանում հեղինակություն վայելող Մուլլա Ումարին տված հավատարմության երդումը մեծ թվով տալիֆներ փոխեցին Աբու Բաքր Ալ-Բադդադիին տված երդումով¹⁸⁶: Աֆղանա-պակիստանյան իսլամական ճամբարում հակասություններն էլ ավելի խորացան, երբ նորահռչակ իսալիֆ Աբու Բաքր Ալ-Բադդադին տալիֆների առաջնորդ Մուլլա Ումարին բնորոշեց հիմար և անգրագետ¹⁸⁷: Աբու Բաքրը դրանով կասկածի տակ դրեց Մուլլա Ումարի հեղինակությունը որպես հոգևոր առաջնորդի, ով դեռևս 1996 թ. ընդունել էր «Հավատացյալների էմիր» (Amīr Al-Mʿuminīn-أمير المؤمنين) տիտղոսը՝ ընդգծելով իր քաղաքական և կրոնական բացարձակ իշխանությունն Աֆղանստանում:

Աֆղանստանի և Պակիստանի իսլամական ծայրահեղ արմատական տիրություն ԻՊ-ի առաջխաղացումը ի ցույց դրեց հետևյալ հիմնական նախանշանները՝

1. Տեղացի իսլամական ծայրահեղ արմատական տիրություն նույնպես նկատելի են անջատողական տրամադրություններ ազդեցիկ դիրքեր ունեցող «ալ-Կաիդա»-ից և տալիֆական շարժումից: Ինչն ապահովում է բավական փորձառու ջիհադականներով ԻՊ-ի շարքերի համալրումը:

¹⁸⁶ Khaama Press, Taliban fighters divert to ISIS, February 1, 2015, <http://www.khaama.com/taliban-fighters-divert-to-isis-nbc-news-28099> (Մուսք, փետրվարի 3, 2015 թ.):

¹⁸⁷ Khamma Press, Mullah Omar is a fool and illiterate warlord, al-Baghdadi says, January 29, 2015, <http://www.khaama.com/mullah-omar-is-a-fool-and-illiterate-warlord-al-baghdadi-says-9291> (Մուսք, փետրվարի 3, 2015 թ.):

2. Նկատելի դարձան իսլամական ծայրահեղ արմատականների շրջանում աճող դժգոհությունները նաև Մուլլա Ումարից: Այն գուգորդվեց խալիֆ Աբու Բաքր Ալ-Բադդադիի ձեռքբերումների համեմատությամբ, որոնք, ըստ ԻՊ-ի կողմնակիցների, վերջին 2 տարվա ընթացքում անհամեմատ ավելի շատ բան տվեցին ծայրահեղ իսլամական արմատականությանը, քան վերջին 20 տարիներին Մուլլա Ումարի գործունեությունը որպես «Հավատացյալների էմիր»:

Ըստ որոշ վերլուծաբանների՝ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գլոբալ զարգացումների կիզակետը լինելու է Կենտրոնական Ասիան, որտեղ բախվելու են ուժային կենտրոնների շահերը¹⁸⁸, ուստի ԻՊ-ի գաղափարախոսները չէին կարող անտեսել այս չափազանց կարևոր տարածաշրջանը: Վիլայեթի հռչակումը աֆղանա-պակիստանյան տարածքներում ԻՊ-ի հետևողական աշխատանքի արդյունք էր, որը կարողացավ գտնել բարենպաստ հասարակական-քաղաքական միջավայր և հավաքագրել հետևորդներ՝ ունենալով հակառակորդներ «ալ-Կաիդա»-ի և տալիբական շարժման ղեկավարության, դրանց հովանու տակ գործող իսլամական խմբավորումների և

¹⁸⁸ Գտնվելով Արևմուտքի ու Արևելքի միջնամասում Կենտրոնական Ասիան դոմինանտ դիրքում է. այս համատեքստում հատկանշական է ամերիկյան քաղաքագիտական դպրոցի ակնառու ներկայացուցիչների՝ Հալֆորդ Մաքինդերի (**Halford Mackinder**) և Նիկոլաս Սպիկմենի (**Nicholas Spykman**) կողմից 20-րդ դարի 40-ական թթ. առաջ քաշված «Հարթլենդի» (Heartland, («երկրի սիրտ, կենտրոն») գաղափարը, ըստ որի՝ հենց Աֆղանստանի տարածքն է համարվում երկրագնդի քարտեզի կենտրոնը: Ով տիրում է այդ կենտրոնին, տիրում է ամբողջ աշխարհին (տե՛ս **Spykman N.**, *The Geography of the Peace*, Harcourt, Brace and Company, 1944, pp. 34-35.):

ընդհանրապես աֆղանցի և պակիստանցի իսլամականների շրջանում¹⁸⁹:

Կովկասյան տարածաշրջան. Կովկասյան տարածաշրջանը նույնպես չվրիպեց ԻՊ-ի ուշադրությունից: ԻՊ-ի կազմում Սիրիայի և Իրաքի տարբեր հատվածներում կռվող ծագումով կովկասցի իսլամականները (Կովկասը ներկայացնող իսլամականները սերում են հիմնականում Ռուսաստանի կովկասյան շրջաններից, ինչպես նաև հարավկովկասյան հանրապետություններից՝ Վրաստանից ու Ադրբեջանից), ռազմական փորձ ձեռք բերած, վերադառնում են իրենց երկրները, որոնց միջոցով ԻՊ-ը փորձում է իր ազդեցությունը տարածել նաև Կովկասում:

2014 թ. վերջից և 2015 թ. սկզբից անընդհատ հարվածներ կրող ու թուլացող ԻՊ-ի ազդեցության տարածման փորձեր են նկատվում Կովկասյան տարածաշրջանում, որտեղ նկատելի են իսլամի արմատական գաղափարների խորացման ու սուննի ծայրահեղ արմատականների պայքարի առարկայական դրսևորումների փորձեր: Կովկասցիները ուղևորվում են ջիհադական պայքարի նաև գումար վաստակելու համար, իհարկե նրանց մեջ վերջին տեղում չէ կրոնագաղափարական հակվածությունը: Հատկապես երիտասարդ սերնդի շրջանում ազդեցիկ է սալաֆիականությունը: Ռուսաստանի հյուսիսկովկասյան շրջաններում լուրջ անվտանգության միջոցառումների առկայությունը մղում է իսլամականներին դեպի հարավ, ավելի «անպաշտպան» ջիհադական ճակատներ, որոնցից է նաև Սիրիան: Աշխարհագրորեն Թուրքիայի մոտ լինելը նույնպես նպաստում է

¹⁸⁹ International Business Times, **Varghese J.**, Former Taliban Leader Mullah Abdul Rauf now Recruiting for ISIS in Afghanistan?, January 14, 2015, <http://www.ibtimes.co.in/former-taliban-leader-mullah-abdul-rauf-now-recruiting-isis-afghanistan-620398> (Մուտք՝ փետրվարի 22, 2015 թ.).

կովկասյան իսլամական ներուժի կողմից թուրքական տարածքներում ստեղծված ռազմական ճամբարներն օգտագործելու և դեպի Սիրիա ու աշխարհի այլ հատվածներ տանող տարանցիկ ուղիները սեփական նպատակներին ծառայեցնելու համար: Բացի դրանից, ջիհադականներն ուղղորդվում են. նրանց գործողություններն ու ակտիվությունը ծառայեցվում է ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար: Առաջին հերթին փորձ է արվում Կովկասյան տարածաշրջանը լարված պահել հենց սիրիական պատերազմում փորձ ձեռք բերած ջիհադականներով, ընդ որում, այդ ուղղորդումը նկատվում է տարածաշրջանում որոշ պետական շրջանակների և ակտիվ գործող ոչ պետական այլ կառույցների կողմից, այսինքն՝ իսլամականներն ունեն բազմակողմանի աջակցություն:

Կասկածից վեր է, որ տարածաշրջանային գործոնի վերածված իսլամական արմատական ներուժն ուղղորդելու և դեպի Սիրիա կովկասցիների արտահոսքը վերահսկելու փորձեր են անում նաև հենց կովկասցի ծայրահեղ իսլամական առաջնորդները՝ կոչ անելով վերադառնալ Կովկաս և այստեղ կյանքի կոչել ջիհադական պայքարը, և սա տալիս է իր արդյունքը: Ռազմական պատրաստություն և լայնածավալ ռազմական գործողությունների փորձ ձեռք բերած կովկասցի իսլամականները ունակ են ջիհադական պայքար վարել կովկասյան և այլ տարածաշրջաններում: Սիրիայում և Իրաքում ընթացող պայքարը կովկասցի իսլամականներին աչքի ընկնելու լավ հնարավորություն տվեց, քանզի կովկասցիները մեծ հաշվով չեչենական պատերազմներից հետո ռազմական լայնածավալ գործողությունների չէին մասնակցել և սահմանափակվել էին լոկալ հարձակումներ և ահաբեկչական բռնարարքներ իրականացնելով: Այս ամենը պատճառ դարձան նաև նոր սերնդի կովկասցի ջիհադականների համար մարտական առաջին մկրտությունը ստանալու Սի-

րիայում և Իրաքում՝ պատրաստվելով պատերազմի այլ ճակատներում, հատկապես Կովկասում: «Իսլամական պետության» գաղափարախոսները փորձում են օգտագործել կովկասցի իսլամականների ներուժը ինչպես Մերձավորարևելյան, այնպես էլ Կովկասյան տարածաշրջանի ռազմաճակատներում: Ասածի վկայությունը եղավ ԻՊ-ի խալիֆ Աբու Բաքր Ալ-Բադդադիի կողմից Կովկասը ներկայացնող իսլամականների հավատարմության երդումի ընդունումը, այստեղ ԻՊ-ի կազմի մեջ մտնող նոր տարածքի՝ Կովկասի վիլայեթի ստեղծումն ու կովկասցի իսլամականների նոր էմիրի՝ Աբու Մուհամմադ Ալ-Գադարիի նշանակումը¹⁹⁰:

«Իսլամական պետության» վիլայեթների և դրանցում ակտիվորեն ներգրավված իսլամականների թիվը միտում ունի ավելանալու, ինչը հատկապես նկատվեց 2015 թ. ընթացքում: 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ Հյուսիսաֆրիկյան, Մերձավորարևելյան, Կենտրոնասիական տարածաշրջաններում գործում են «Իսլամական պետության» շուրջ 40 վիլայեթներ (տե՛ս 236 էջի հավելվածը), որտեղ իսլամականներն ակտիվ ջիհադական պայքար են իրականացնում «Իսլամական պետության» խալիֆի ղեկավարության և ԻՊ-ի սև դրոշի ներքո¹⁹¹:

¹⁹⁰ Այդ մասին հայտարարություն տարածվեց ԻՊ-ի առաջնորդներից Աբու Մուհամմադ Ալ-Ադնանիի կողմից 2015 թ. հունիսի 23-ին (տե՛ս Pieter Van Ostaen wordpress, Audio Statement by Shaykh Abu Muhammad al-‘Adnani as-Shami, June 23, 2015, <https://pietervanostaeyen.wordpress.com/2015/06/23/o-our-people-respond-to-the-caller-of-allah-audio-statement-by-shaykh-abu-muhammad-al-adnani-as-shami/> (Մուսք, հունիսի 24, 2015 թ.)):

¹⁹¹ Kurdistan.ru, Вилаят Кавказ-34-ый вилайет Исламского государства, Григорян С., 12 июля, 2015 г., http://kurdistan.ru/2015/07/12/articles-24478_Vilayat_Kavkaz_-3.html (Մուսք, հուլիսի 20, 2015 թ.):

Այլ տարածաշրջաններ. 2014 թ. վերջում և հատկապես 2015 թ. ընթացքում ԻՊ-ն Մերձավոր Արևելքում աստիճանաբար կորցրեց տարածքներ: Ռուսական և կոալիցիոն օդուժերի հարվածները, «Իսլամական պետության» դեմ զուգահեռաբար ընթացող սիրիական և իրաքյան կառավարական ուժերի (ղրանց աջակցող այլ խմբավորումների), ընդդիմադիր որոշ կառույցների և քրդական ուժերի ցամաքային արդյունավետ գործողությունները ստիպում են ԻՊ-ին «մերձավոր թշնամուց» (մուսուլմանական երկրներ) զատ կենտրոնանալ նաև «հեռավոր թշնամու» (մուսուլմանական աշխարհից դուրս) դեմ իրականացվող ջիհադական պայքարի մարտավարության վրա: Այն նաև ենթադրում է արևմտյան երկրներում ԻՊ-ին հարող իսլամական ծայրահեղ արմատական ներուժի և սեփական ջիհադական բջիջների օգտագործմամբ ահաբեկչական ակտիվություն, որի առարկայական դրսևորումները հատկապես 2015 թ. նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում իրականացված աննախադեպ ահաբեկչական բռնարարքներն էին:

Ինչքան Սիրիայում և Իրաքում ԻՊ-ն ձախողվում է, այնքան ավելանում է կառույցի ակտիվությունը Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս, ինչը հատկապես նկատվեց 2015 թ. վերջում:

5.6. Իսլամականներ-Էթնիկ-դավանական փոքրամասնություններ հակասությունների խորացումը Սիրիայում և Իրաքում (հայերի, քրդերի և եզդիների օրինակով)

2012-2013 թթ. Սիրիայում հաճախակի դարձան հարձակումներն էթնիկ փոքրամասնությունների ու նրանց բնակավայրերի վրա ինչպես երկրի հյուսիսում, այնպես էլ՝ այլ հատվածներում՝ իրականացնելով նաև քրիստոնյաների առևանգումներ: Իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների նպատակը ոչ միայն Բաշար Ալ-Ասադի ալաուիական վարչակարգի տապալումն էր, այլև շարիաթի վրա հիմնված իսլամական պետության (խալիֆայության) հիմնումը: Դրան հասնելու համար սիրիական հակամարտության ընթացքում տարաբնույթ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների վարքագծում և որդեգրած մարտավարության մեջ նկատվեցին որոշակի տարբերություններ¹⁹², որոնք վերաբերում էին նաև Սիրիայի

¹⁹² Որոշ իսլամական կառույցներ (օրինակ՝ ՋՆ-ն) Սիրիայում ընթացող «ջիհադական պայքարում» առաջնորդվում էին 21-րդ դարի առաջին տասնամյակում մուսուլմանական երկրներում էթնիկ-դավանական փոքրամասնություններին առնչվող իսլամականների վարքագծի վերաբերյալ «ալ-Կաիդա»-ի գաղափարախոսների կողմից առաջ քաշված գաղափարներով. այն է՝ հանդուրժող վարքագիծ դրսևորել ջիհադական պայքարի իրականացման տարածքներում էթնիկ-դավանական փոքրամասնությունների նկատմամբ (տե՛ս **Աբու Մուսաբ Ալ-Մուրի**, նշվ. աշխ., էջեր՝ 429-456 (տե՛ս <http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up> (Մուսր, ապրիլի 4, 2013 թ.)): Այս համատեքստում, պատահական չեն «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներից ԻՇԻՊ-ի այս վարքագիծը քննադատող ուղերձները, հատկապես լսելի են դառնում ԻՇԻՊ-ին ուղղված այն մեղադրանքները, որ ԻՇԻՊ-ը «խմբավորում է, ոչ թե պետություն»՝ մատնանշելով վերջինիս դերն ու կարգավիճակը տարածաշրջանում վարվող ջիհադական պայքարում (տե՛ս Beladusham.com, Al-Qaeda's letter to Syrian islamists, 3 January, 2014, <http://www.beladusham.com/0626.html> (Մուսր, հունվարի 25, 2014 թ.):

Էթնիկ-դավանական փոքրամասնությունների նկատմամբ դիրքորոշման և քաղաքականության տեսլականին¹⁹³: Մակայն, իսլամական որոշ ծայրահեղ արմատական ուժերի (օրինակ՝ ԻՇԻՊ, «Ջալշ ալ-Մուհաջիբին ուա ալ-Անսար» (جيش المهاجرين والأنصار) և այլն), կողմից դրսևորվեց էականորեն տարբերվող վարքագիծ: Այս կառույցները Սիրիայում ցուցաբերեցին բացառիկ մոլեռանդություն և անհանդուրժողական վարքագիծ ոչ միայն այլադավանների, այլև իսլամական ծայրահեղ արմատական այլ խմբավորումների և դրանց անդամների հանդեպ, ինչը հանգեցրեց հակասությունների խորացմանը սիրիական հակամարտության ընդդիմադիր ճամբարում¹⁹⁴: Սիրիայում ԻՇԻՊ-ի հետ մեկտեղ աչքի ընկան նաև մի շարք այլ իսլամական ծայրահեղական ուժեր: Մասնավորապես «ալ-Կաիդա»-ին հարող ՋՆ իսլամական ծայրահեղական կառույցը դարձավ Սիրիայի ընդդիմադիր խմբավորումների շրջանում ամենաազդեցիկներից մեկը¹⁹⁵, և, ի տարբերություն ԻՇԻՊ-ի, ցուցաբերեց սիրիական էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ հստակ մշակված քաղաքականություն և «հանդուրժողական» վարքագիծ¹⁹⁶:

¹⁹³ The National, **Hassan H.**, A jihadist blueprint for hearts and minds is gaining traction in Syria, March 4, 2014, <http://www.thenational.ae/thenationalconversation/comment/a-jihadist-blueprint-for-hearts-and-minds-is-gaining-traction-in-syria#full> (Մուսք, մարտի 27, 2014 թ.):

¹⁹⁴ St' u Beladusham.com, նույն տեղում:

¹⁹⁵ ՋՆ-ն սիրիական կոնֆլիկտում իր ներգրավվածության մասին հայտարարեց 2012 թ. հունվարից:

¹⁹⁶ ՋՆ-ն փորձում է հանդես գալ որպես զուտ սիրիական կառույց, որի թիրախը Բաշար Ալ-Ասադի «անհավատ» վարչակարգի տապալումն ու Սիրիայում իսլամական պետության ստեղծումն է: Այդ է պատճառը, որ ՋՆ-ն փորձում է հարաբերությունները չարել Սիրիայի էթնիկ-դավանաբանական փոքրամասնությունների հետ՝ ձգտելով օգտագործել վերջիններիս ներուժը ալաուիական

Բաղամականներ-հայեր. 2011 թ. մարտից Սիրիայում ծավալվող ներքադաքական գործընթացներն իրենց ազդեցությունն ունեցան նաև սիրիահայ համայնքի վրա, որի վարքագծում հակամարտության սկզբնական փուլում նկատվեց համակրանք դեպի Բաշար ալ-Ասադի վարչակարգը, ինչը չվրիպեց սիրիական ընդդիմադիր ուժերի ուշադրությունից, որոնց կողմից եղան ինչպես հակահայկական հայտարարություններ, այնպես էլ սիրիահայ համայնքի դեմ ուղղված գործողություններ (առևանգումներ, ռազմական հարձակումներ և այլն)¹⁹⁷:

Դրական չեզոքություն պահպանելու նպատակահարմարությունից ելնելով՝ սիրիահայ համայնքը սկսեց հանդես գալ հակամարտության շուտափույթ դադարեցման ու Սիրիայում ծայր առած ճգնաժամի խաղաղ կարգավորման մասին հայտարարություններով¹⁹⁸:

իշխանությունների տապալման համար (տե՛ս The National, **Hassan H.**, A jihadist blueprint for hearts and minds is gaining traction in Syria, March 4, 2014, <http://www.thenational.ae/thenationalconversation/comment/a-jihadist-blueprint-for-hearts-and-minds-is-gaining-traction-in-syria#full> (Մուսք, մարտի 27, 2014 թ.)):

¹⁹⁷ 2011 թ. վերջից և 2012 թ. սկզբից Սիրիայում ակտիվ ռազմական գործունեություն ծավալած «Սիրիայի ազատ բանակի» (ՄԱԲ) ստորաբաժանումները նույն թվականի փետրվար-մարտ ամիսներին հարձակումներ գործեցին հայկական եկեղեցիների, ինչպես նաև Հալեպի հայաբնակ որոշ թաղամասերի վրա (Assyrian International News Agency, Syrian Rebels Torch Armenian Church in Aleppo, 11 March, 2012, <http://www.aina.org/news/20121103174722.htm> (Մուսք՝ մարտի 3, 2014 թ.))՝ դրանք հիմնավորելով Բաշար Ալ-Ասադի վարչակարգին պատմականորեն սիրիահայերի աջակցությամբ (տե՛ս The Daily Star, Extortion, sectarianism rife in lawless northern Syria, November 02, 2012, <http://www.dailystar.com.lb/News/Middle-East/2012/Nov-02/193661-extortion-sectarianism-rife-in-lawless-northern-syria.ashx#ixzz2BI2T3jSD> (Մուսք, հուլիսի 4, 2014 թ.)):

¹⁹⁸ Սիրիայի երեք հայկական կրոնական համայնքների ղեկավարները՝ Հայ Առաքելական եկեղեցու Բերիո թեմի առաջնորդ Շահան Եպիսկոպոս Սարգսյանի, Բերիո թեմի Հայ Կաթողիկե եկեղեցու առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարիաթյանի և Սիրիայի հայ ավետարանական համայնքի

Ռազմական գործողություններն էլ ավելի թեժացան 2012 թ. կեսերին Սիրիայի երկրորդ խոշոր քաղաքում՝ հայաշատ Հալեպում և դրա արվարձաններում: Իսլամական ծայրահեղական ուժերի կողմից 2012-2013 թթ. հաճախակի դարձան հարձակումները սիրիահայերի նկատմամբ ոչ միայն Հալեպում, այլև Սիրիայի տարբեր հատվածներում՝ իրականացնելով նաև հայերի առևանգումներ, դրանց դիմաց պահանջելով փրկագներ և այլն¹⁹⁹:

2012 թ. սեպտեմբերից սիրիահայ համայնքում ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնք, զինվելով նաև սեփական միջոցներով, ձեռնամուխ եղան պաշտպանելու հայկական թաղամասերը, հոգևոր-մշակութային հաստատություններն ու ունեցվածքը²⁰⁰: Սա առաջին հերթին վերաբերում էր հայաբնակ այն տարածքներին, որոնք անմիջապես սահմանակից էին ընթացող ռազմական գործողություններին և կարող էին հարձակման թիրախ դառնալ:

Սիրիահայերի համար լուրջ ահազանգ էր 2014 թ. գարնան իրադարձությունները, երբ մարտի 21-ի վաղ առավոտյան սիրիական հակակառավարական զինյալ խմբավորումները հաստեցին թուրք-սիրիական սահմանը Լաթակիայի նահանգի հյուսիսում՝ մի քանի ուղղություններով հարձակվելով հայա-

համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանի դրական չեզոքության վերաբերյալ համատեղ հայտարարությամբ հանդես եկան (տե՛ս Առավոտ, Սիրիահայ եկեղեցականները հայտարարել են, որ պատերազմում չեզոք դիրք են գրավում՝ ոչ իշխանությանը, ոչ՝ ընդդիմադիրներին չեն սատարելու, <http://www.aravot.am/2012/09/18/110608/> (Մուսք, հուլիսի 13, 2014 թ.)):

¹⁹⁹ Ազատություն ռադիոկայան, Նաիրա Բուլդադարյան, Սիրիայում կրկին հայեր են առևանգվել, օգոստոսի 12, 2013 թ., <http://www.azatutyun.am/content/article/25073355.html> (Մուսք, սեպտեմբերի 2, 2014 թ.):

²⁰⁰ Armenians In Aleppo Get Armed To Defend Themselves, 9 August, 2012,

<http://www.youtube.com/watch?v=aPPtwc6CdLw> (Մուսք, մարտի 3, 2015 թ.):

բնակ Քեսաբի ու շրջակա գյուղերի վրա: Քեսաբի և հարակից հայկական գյուղերի վրա 2014 թ. մարտի 21-ին սիրիական ընդդիմադիր խմբավորումների, մասնավորապես իսլամական արմատական խմբավորումների հարձակումը ակնառու դարձրեց թուրքական իշխանությունների ներգրավվածությունը սիրիական հակամարտությունում: Իսլամականների մոտ 5000 հոգուց բաղկացած զորաջոկատները, Թուրքիայի կողմից անարգել հատելով սահմանը (ընդ որում հենց անմիջապես սահմանային անցակետը), հարձակվեցին Քեսաբի և շրջակա գյուղերի վրա: Իսլամականների գրոհը ստացավ նաև սահմանամերձ հատվածում տեղակայված թուրքական զորամիավորումների անմիջական աջակցությունը, որոնք կրակ բացելով Սիրիայի տարածքում տեղակայված սիրիական ուժերի, ինչպես նաև իսլամականների դիքերը հրթիռակոծող սիրիական ռազմաօդային ուժերին պատկանող ինքնաթիռի վրա, ապահովեցին իսլամականների անվտանգ ներխուժումը սիրիական տարածք: Իսլամականների շրջանում կային թյուրքական ծագումով բազմաթիվ ջիհադականներ, որոնց ակտիվությունը տվյալ հատվածում նույնպես բխում էր Թուրքիայի շահերից²⁰¹:

Հարձակման հետևանքով Քեսաբի և շրջակա գյուղերի շուրջ 670 հայ ընտանիքներ տարհանվեցին Լաթակիա և հարակից այլ բնակավայրեր: Քեսաբահայության տարհանումն ու Լաթակիայում նրանց ընդունման ու տեղավորման գործն իրականացվեց

²⁰¹ Թուրքիան միշտ փորձել է իր ուշադրության կենտրոնում պահել իրեն սահմանակից սիրիական տարածքներում բնակվող թուրքումաններին՝ փորձելով ամրապնդել վերջիններիս դիրքերն այս տարածքներում, ձգտելով ամրապնդել նրանց նկատմամբ թուրքական իշխանությունների ազդեցությունը: Դրանով են պայմանավորված նաև սիրիա-թուրքական սահմանագծի երկայնքով Թուրքիայի կողմից աջակցություն ստացող թուրքական ծագումով իսլամականների թվաքանակի ավելացումն ու ակտիվությունը:

բավականաչափ կազմակերպված, ինչը վկայությունն էր այն բանի, որ քեսաբահայությունն, այնուամենայնիվ, պատրաստ էր նման հարվածի. այդ էր վկայում նաև այն հանգամանքը, որ հայերի շրջանում գոհեր չգրանցվեցին: Ինչևէ, Քեսաբն ու հարակից որոշ բնակավայրեր անցան սիրիական ընդդիմադիր ուժերի վերահսկողության տակ, նույնիսկ ընդդիմադիրներին հաջողվեց դուրս գալ դեպի Միջերկրական ծով: Սիրիայի Լաթակիա նահանգի հյուսիսում ծայր առած ռազմական գործողությունները տևեցին շուրջ երեք ամիս, որից հետո սիրիական կառավարական ուժերին հաջողվեց կտրել ընդդիմադիրների ելքը ծովեզերք, վերանվաճել Քեսաբն ու հարակից բնակավայրերը: Քեսաբի ազատագրումից հետո քեսաբահայության որոշ հատվածը ցանկություն հայտնեց վերադառնալ իրենց բնակավայրերը: Ընդդիմադիրները, այս տարածքներից հեռանալով, իրենց հետևից թողեցին թալանված հայկական տներ, կրոնամշակութային օջախներ, վնասված եկեղեցիներ, որոնց վերակառուցման ու վերականգնման աշխատանքների իրականացմանն անցավ սիրիահայ համայնքը²⁰²:

Թուրքական իշխանությունների կողմից թյուրքերով և չեչեններով համալրված իսլամական խմբավորումների ուղղորդման մասին են վկայում նաև այդ խմբավորումները ղեկավարող մի շարք առանցքային իսլամականների՝ Թուրքիայում գտնվելու և սիրիա-թուրքական սահմանամերձ շրջաններում ռազմական ճամբարներ ունենալու փաստերը²⁰³: Սիրիայում հիմնականում

²⁰² Այսօր, 250 ընտանիք վերադարձել է ազատագրված Քեսաբ, հունիսի 17, 2014 թ., <http://www.aysor.am/am/news/2014/06/17/qessab/> (Մուտք, հուլիսի 13, 2014 թ.):

²⁰³ Չեչեն առաջնորդներից (ղաշտային հրամանատարներից) Սայֆուլլահ Ալ-Շիշանին երկար ժամանակ ապրել է Թուրքիայում, որտեղից տեղափոխվել

թուրքերով (թուրքեր, ադրբեջանցիներ, թաթարներ և այլն) և չեչեններով համալրված իսլամական ծայրահեղական խմբավորումների թվաքանակի ավելացում նկատվեց հատկապես Հալեպի և Իդլիֆի նահանգներում և հյուսիսային այլ շրջաններում, որոնց ռազմական, ֆինանսական և այլ բնույթի օժանդակություն էր ցուցաբերում Թուրքիան, քանի որ իրեն սահմանակից սիրիական տարածքների վերաբերյալ ուներ սեփական ծրագրեր: Դա հատկապես նկատվեց 2015 թ. սկզբին, երբ վերոհիշյալ սիրիական շրջաններում ընդդիմադիրները լայնածավալ ռազմական գործողությունների անցան մի քանի ուղղություններով՝ հարձակվելով Իդլիֆ քաղաքի և հարակից բնակավայրերի վրա: 2015 թ. մարտի վերջին Իդլիֆ քաղաքը և դեպի արևմուտք ընկած մի քանի բնակավայրեր անցան ընդդիմադիրների վերահսկողության տակ: 2015 թ. վերջին ամիսներին չնվազեց ընդդիմադիր խմբավորումների ռազմական ակտիվությունը նաև Հալեպ քաղաքում՝ շարունակելով ուժեղացնել իրենց կառավարական ուժերի կողմից վերահսկվող նաև հայաբնակ թաղամասերի ուղղությամբ:

Իսլամականներ-քրդեր. Սիրիայում իրենց տարածքները պաշտպանելու նպատակով քրդերը ստեղծեցին ինքնապաշտ-

է Սիրիա (տե՛ս The Jamestown foundation, Islamist North Caucasus Rebels Training a New Generation of Fighters in Syria, Terrorism Monitor, Volume, 12 Issue 3, February 7, 2014, http://www.jamestown.org/single/?tx_ttnews%5Bpointer%5D=3&tx_ttnews%5Btt_news%5D=41927&tx_ttnews%5BbackPid%5D=228&cHash=3736d9357ce52140d1d6f985402a80c3#.VCgINGeSySo, (Մուտք, մարտի 16, 2014 թ.): Մեկ այլ չեչեն՝ Մուրադ Մարգոշվիլին (Մուսլիմ Ալ-Շիշանի), Սիրիայում ղեկավարում էր «Ջունուդ ալ-Շամ» խմբավորումը: Թուրք-սիրիական սահմանի մոտ՝ սիրիական հատվածում, Մարգոշվիլին ուներ ռազմական ճամբար (տե՛ս U.S. Department of State, Designations of Foreign Terrorist Fighters, September 24, 2014, <http://www.state.gov/r/pa/prs/ps/2014/09/232067.htm>, (Մուտք, սեպտեմբերի 24, 2014 թ.)) և այլն:

պանական սեփական ջոկատներ: Սակայն ի տարբերություն գերազանցապես քաղաքաբնակ սիրիահայերի (հայերը Սիրիայում հիմնականում բնակվում են Հալեպում, Դամասկոսում և այլ սիրիական քաղաքներում, և չեն կարող ինքնիշխան տեղական մարմիններ ձևավորել), քրդերն աստիճանաբար ձևավորեցին ինքնիշխան տեղական միավորներ՝ իրավիճակից ելնելով ինքնուրույն իրականացնելով սեփական տարածքների կառավարումը²⁰⁴:

Դեպքերի նման ընթացքը չէր կարող գոհացնել սիրիական զինված ընդդիմադիրներին, հատկապես իսլամական արմատականներին, որոնք, ստանալով աջակցություն Թուրքիայից և Պարսից ծոցի հարուստ միապետություններից, պայքարում էին շարիաթի նորմերի վրա կառուցվելիք իսլամական պետություն հիմնելու համար, ուստի ընդդիմադիրների և քրդերի միջև բախումներն էլ իրենց սպասեցնել չտվեցին: Այս և մի շարք այլ գործոնների հետևանքով 2012 թ. կեսերից տեղի ունեցան Սիրիայի քրդերի և ընդդիմադիրների միջև առաջին բախումները:

Սիրիական հակամարտության սկզբից նեթ քրդերի շրջանում ակնառու էին միասնականության բացակայություն ու բազ-

²⁰⁴ 2011 թ. հունիսին սիրիական իշխանությունների և քրդերի միջև բանակցություններ սկսվեցին: Այս համատեքստում Բաշար Ալ-Ասադի կառավարությունը գնաց զիջումների. առաջին հերթին կասեցվեց N 49 հրամանագիրը (2011 թ. մարտ), քրդերին տրվեց որոշակի արտոնություններ՝ նրանց բաժանելով սիրիական անձնագրեր (2011 թ. ապրիլ): Սիրիայի քրդաբնակ տարածքներից (Ռոժավա՝ Սիրիայում քրդերով բնակեցված երեք տեղանքների՝ Աֆրինի, Քոբանիի և ալ-Ջազիրայի ընդհանուր անվանումը) կառավարական ուժերը դուրս հանվեցին՝ բացառությամբ երկու խոշոր բնակավայրերի՝ ալ-Հասաքայի և ալ-Կամիշլիի: Սա հնարավորություն տվեց սիրիական կանոնավոր բանակին զինված ընդդիմադիրների դեմ պայքարում կենտրոնանալ հակամարտության առավել թույլ պաշտպանված և խոցելի տարածքներում:

մաթիվ հակասություններ: Սիրիական քրդաբնակ տարածքներում մեծ ազեցություն ունեցող «Քուրդիստանի աշխատավորական կուսակցությունը» (ՔԱԿ) ձգտում էր ամրապնդել սեփական դիրքերն այստեղ: Մյուս կողմից սիրիաբնակ քրդերի շրջանում «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ) դիրքերն ամրապնդելու նպատակով իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին քրդերի հաշտեցման ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկեց՝ կազմակերպելով համատեղ «հաշտեցման» հանդիպումներ իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլում: Չնայած դրան, ՔԱԿ-ի և ՔԴԿ-ի ազդեցության տակ գործող Սիրիայի քրդական կառույցների, մասնավորապես «Քրդական դեմոկրատական միության» (ՔԴՄ) և «Քրդական ազգային խորհուրդի» (ՔԱԽ) միջև էլ ավելի սրվեցին հակասությունները՝ շատ հաճախ հանգեցնելով արյունալի բախումների հենց քրդերի միջև²⁰⁵:

Սիրիական հակամարտության առաջին 5 տարիների ընթացքում քրդերը հիմնականում ներգրավված չէին միջազգային հարթակներում տեղի ունեցող սիրիական հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված համաժողովներին: Դա առիթ դարձավ քրդական որոշ շրջանակներին հիմնավորելու քրդական ինքնավարության ծրագրերը: 2014 թ. հունվարին՝ «Ժնև-2» միջազգային խորհրդաժողովի նախօրեին, Սիրիայի հյուսիսային ալ-Ջազիրա, Աֆրին և Բոբանի շրջաններում քրդերը հանդես եկան ինքնավարություն հիմնելու հայտարար-

²⁰⁵ ՔԴՄ-ն առավել ազդեցիկն է Սիրիայի քրդաբնակ տարածքներում: Այն համարվում է ՔԴԿ-ի հովանու տակ գործող կառույց, մինչդեռ ՔԱԽ-ը հարում է Քուրդիստանի ռեգիոնալ կառավարությանը (ՔՌԿ):

րություններով, ինչը միանշանակ չընդունվեց ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Սիրիայի քրդերի շրջանում²⁰⁶:

Վերոհիշյալ ինքնավար մարմիններում քրդերը փորձեցին ներգրավել այլ էթնիկ խմբերի՝ արաբների, հայերի, ասորիների, թուրքոմանների և այլն, ինչը քրդերի կարծիքով արդյունավետ կդարձներ տեղերում իրականացվող կառավարումը: Բացի դրանից, քրդերի շրջանում առավել լսելի էին դառնում այն տեսակետները, որ իրենք պատրաստ են իրենց բնակության վայրերում պաշտպանել «իրենց եղբայրներին»՝ քրիստոնյաներին, դրուզներին, ալաուիներին և այլն²⁰⁷: Քրդերը Սիրիայում ստեղծեցին ինքնավար տարածքներ, սեփական ինքնապաշտպանական զինված ուժեր և 2013 թ. սկզբից իրականացնում էին սեփական տարածքների ինքնապաշտպանությունը սիրիական ընդդիմադիր, առավելապես իսլամական ծայրահեղ արմատական ուժերի մշտական հարձակումներից:

2012 թ. վերջից և հատկապես 2013 թ. սկզբից կատաղի մարտեր գրանցվեցին քրդերի և ընդդիմադիր իսլամական ծայրահեղ արմատական ուժերի միջև: Հատկապես 2014 թ. ընթացքում չդադարեցին բախումները քրդական «Ժողովրդական պաշտպանության ջոկատների» (ԺՊԶ)²⁰⁸ և ԻՇԻՊ-ի միջև Սիրիայի քրդա-

²⁰⁶ Syrian Kurds' Declaration of Autonomous "Rojava" Scorned by Turkey, Assad—Even by Iraqi Kurds, 21 November, 2013, <http://springtimeofnations.blogspot.com/2013/11/syrian-kurds-declaration-of-autonomous.html> (Մուսոք, հունվարի 11, 2015 թ.):

²⁰⁷ الكوردستاني بسوريا "هون الشرين". وأكراد "الحر" ضد الأسد
(<http://pdksp.org/arabic-ar/nuce/kurdistan/1959-pdksp.html>

Մուսոք, հոկտեմբերի 23, 2014 թ.):

²⁰⁸ «Ժողովրդական պաշտպանության ջոկատները» համարվում են ՔԲԿ-ի հովանու տակ գործող և ՔԴՄ կուսակցության ռազմական թևը, որոնք իրականացնում են Սիրիայի քրդաբնական տարածքների ինքնապաշտպանությունը: ԺՊԶ-ի ուսերին է ընկած ընդդիմադիր զինյալների՝ հատկապես իսլա-

բնակ Քոբանիի տարածքում, որտեղ քրդերը փորձում էին կանխել իսլամականների առաջխաղացումը դեպի իրենց բնակավայրեր, իսկ իսլամականները ձգտում էին ընդլայնել Թուրքիայի հետ սահմանային շփման գիծը՝ պայքարելով իրենց առջև կանգնած քրդերի դեմ: 2014 թ. սեպտեմբերի կեսերից ԻՊ-ի ստորաբաժանումները լայնածավալ հարձակման անցան Քոբանիի ուղղությամբ²⁰⁹, մեկը մյուսի հետևից նվաճելով երկու տասնյակ քրդական գյուղեր, սպանելով հազարավոր քրդերի և սեղմելով վերջիններիս սիրիա-թուրքական սահմանին²¹⁰: 2014 թ. դեկտեմբեր ամսից քրդական զինված ստորաբաժանումները, ՔԱԿ-ի զինյալների, իրաքյան Քուրդիստանից և այլ երկրներից հավաքված քրդերի և սիրիական ընդդիմադիր այլ զինված խմբերի օժանդակությամբ հաղթանակներ արձանագրեցին իսլամականների նկատմամբ Քոբանիում, իսկ 2015 թ. սկզբին անցան հակահարձակման և մի քանի ուղղություններով հաղթանակներ տարան ԻՊ-ի զինյալների նկատմամբ՝ ազատագրելով Քոբանին և դրան հարակից մի շարք բնակավայրեր:

մական ծայրահեղական ուժերի դեմ պայքարի ծանրությունը:

²⁰⁹ Քոբանին գտնվում է Սիրիայի խոշոր քրդաբնակ մյուս երկու տարածքների՝ արևմուտքում Ռաս ալ-Այնի և արևելքում ալ-Ջազիրայի միջև, և իսլամականները, Քոբանիի վրա հարձակվելով, փորձում են սեպ խրել այդ տարածքների միջև:

²¹⁰ الأكراد يعلنون التعبئة بعد تقدم "تنظيم الدولة" بشمال سوريا

<http://m.aljazeera.net/news/arabic/2014/9/18/%D8%A7%D9%84%D8%A3%D9%83%D8%B1%D8%A7%D8%AF-%D9%8A%D8%B9%D9%84%D9%86%D9%88%D9%86-%D8%A7%D9%84%D8%AA%D8%B9%D8%A8%D8%A6%D8%A9-%D8%A8%D8%B9%D8%AF-%D8%AA%D9%82%D8%AF%D9%85-%D8%AA%D9%86%D8%B8%D9%8A%D9%85-%D8%A7%D9%84%D8%AF%D9%88%D9%84%D8%A9-%D8%A8%D8%B4%D9%85%D8%A7%D9%84-%D8%B3%D9%88%D8%B1%D9%8A%D8%A7> (Մուսք, սեպտեմբերի 19, 2014 թ.).

2015 թ. հունիսի սկզբից քրդական ստորաբաժանումներն ու նրանց աջակցող սիրիական ընդդիմադիր որոշ ուժեր հարձակման անցան Սիրիայի հյուսիսային Թալ Աբյադ բնակավայրում և հարակից տեղանքներում ամրացած ԻՊ-ի դիրքերի ուղղությամբ: Քրդական ուժերի հարձակումը սկսվեց երկու ուղղություններից. Քոբանիից քրդերը շարժվեցին դեպի արևելք, իսկ ալ-Հասաքայից՝ դեպի արևմուտք՝ սեղմելով իսլամականներին Թուրքիայի սահմանամերձ Թալ Աբյադում: Հունիսի 15-ին քրդական և սիրիական ընդդիմադիր այլ խմբավորումները գրավեցին Թալ Աբյադը ԻՊ-ից՝ փաստացիորեն միավորելով սիրիական երեք՝ միմյանց հետ սահման չունեցող բնակավայրերից երկուսը՝ Քոբանին և ալ-Հասաքան իրար, իսկ 2015 թ. հոկտեմբերի 21-ին Սիրիայի քրդերը Թալ Աբյադը հռչակեցին սիրիական Քուրդիստանի բաղկացուցիչ մաս, ինչը տարածաշրջանային մի շարք երկրների կողմից Սիրիայի քրդերի հասցեին ուղղված քննադատությունների պատճառ դարձավ²¹¹:

Սիրիայում 2015 թ. վերջում իսլամականներ-քրդեր հակամարտությունում առավելությունը քրդերի կողմն էր, որոնք աստիճանաբար զարգացնում էին հաջողությունները՝ նվաճելով տարածքներ հատկապես ԻՊ-ից, ինչպես ալ-Հասաքա նահանգի հարավում, այնպես էլ Եփրատ գետի արևմտյան ափին (քրդերի ակտիվությունը հատկապես Եփրատ գետի արևմտյան հատվածում անցանկալի դիտարկվեց թուրքական իշխանությունների կողմից): ԻՊ-ի զինյալների դեմ 2016 թ. կեսերից սկսված ռազմ-գործողությունները հնարավորություն տվեցին քրդերին օգուտոսի կեսերին նվաճել Հալեպ նահանգում գտնվող Մանբիջ քա-

²¹¹ St' u Daily News, PYD names Tal Abyad part of its canton, October 21, 2015 (<http://www.hurriyetaidailynews.com/pyd-names-tal-abyad-part-of-its-canton.aspx?pageID=238&nID=90184&NewsCatID=352> , Մուսք՝ հոկտեմբերի 23, 2015 թ.).

դաքը և շարժվել դեպի հյուսիս՝ սիրիա-թուրքական սահմանին գտնվող Ջարաբլուս բնակավայրի ուղղությամբ:

Սիրիայի այդ հատվածում տիրող իրավիճակը ստիպեց Թուրքիային էլ ավելի ակտիվ գործել: Ջարաբլուսը ԻՊ-ի վերահսկողության տակ գտնվող կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայր էր, և Թուրքիան անտարբեր չմնաց հենց իր սահմանին մոտ գտնվող այդ քաղաքի շուրջ ծավալվող զարգացումներին. օգոստոսի 24-ի վաղ առավոտյան թուրքական հատուկ նշանակության ուժերը, անցնելով սահմանը, ցամաքային գործողությունների անցան Ջարաբլուս քաղաքի ուղղությամբ՝ աջակցելով տեղի ընդդիմադիր թուրքամետ խմբավորումներին: Հրետանային հարվածներից հետո գործի դրվեցին թուրքական ռմբակոծիչներն ու տանկերը: Օգոստոսի 24-ի երեկոյան ընդդիմադիր ուժերը թուրքական զինուժի աջակցությամբ ԻՊ-ի զինյալներից նվաճեցին Ջարաբլուսն ու հարակից մի շարք բնակավայրեր: Ջարաբլուսի նվաճումից հետո բախումներ նկատվեցին նաև թուրքամետ ընդդիմադիր խմբավորումների և այստեղ ակտիվ գործող քրդական ուժերի միջև:

Ըստ էության, վերահսկելով Սիրիայի հյուսիսային այդ հատվածը՝ Թուրքիան փորձեց առարկայական տեսք տալ անթոխք գոտու ծրագրին²¹², որը երկար ժամանակ պլանավորված էր Անկարայի կողմից, սակայն դեպքերի բերումով այն չէր իրականացվում:

Բացի դա, պաշտոնական Անկարան Սիրիայի այս հատվածում ցանկանում է տեսնել առավել կանխատեսելի ընդդիմադիր ուժերի, քան անկանխատեսելի դարձած ԻՊ-ի, կամ Թուրքիայի համար վտանգավոր քրդերի, որոնք 2016 թ. երկրորդ կեսից բավական ակտիվացել էին Սիրիայի այս հատվածում:

²¹² Հալեպ նահանգի հյուսիսում՝ Ջարաբլուսից մինչև Ազազ, 100 կմ երկարությամբ և 60 կմ խորությամբ ձգվող գոտին:

Իսլամականներ-եզդիներ. 2014 թ. օգոստոսի 2-ին իսլամականները, անցնելով հարձակման իրաքյան հյուսիսային բնակավայրերի ուղղությամբ, իրենց վերահսկողությունը հաստատեցին հիմնականում եզդիաբնակ և քրիստոնեաբնակ մի շարք բնակավայրերի նկատմամբ: ԻՊ-ի զինյալների հարձակման թիրախում հայտնվեցին Սինջարի եզդիաբնակ շրջանները: Սկզբնական շրջանում եզդիներից կազմված ինքնապաշտպանական խմբերը պայքարեցին ԻՊ-ի զինյալների դեմ, սակայն որոշ ժամանակ անց զինամթերքի սպառման հետևանքով Սինջարի հարավային որոշ ինքնապաշտպանական խմբեր ստիպված եղան նահանջելու: Օգոստոսի 3-ին Սինջարի հարավային հատվածն անցավ ԻՊ-ի վերահսկողության տակ: Եզդիները ստիպված հեռացան լեռներ, իսկ մնացածների որոշ մասին իսլամականները սպանեցին: Քրդական փեշմերգան²¹³, որը մինչ այդ իրականացնում էր եզդիաբնակ տարածքների պաշտպանությունը, առանց կռվի հեռացավ այս տարածքներից՝ որևէ կերպ չօգնելով եզդի աշխարհագորին դիմակայել իրենց վրա հարձակվող իսլամականներին²¹⁴: Օգոստոսի 3-ից Քուրդիստանի ինքնապաշտպանական ուժերն ու սիրիական ԺՊՁ-ի («Ժողովրդական պաշտպանության ջոկատներ») զինյալները սկսեցին Սինջարի պաշտպանությունը: Վերջիններին հաջողվեց անվտանգության միջանցք ստեղծել, որպեսզի մագապուրծ եղած եզդիները կարողանան պատասպարվել լեռներում: Օգոստոսի 8-ին քրդական ստորաբաժանումները հակազդրոհի անցան իսլամականների ուղղությամբ սիրիական ալ-Ջազիրայի և իրաքյան Սինջար լեռան կողմից՝ և միջանցք

²¹³ Իրաքյան Քուրդիստանի քրդական ռազմական ստորաբաժանում:

²¹⁴ Ջազրոս, օգոստոս, 2014, թիվ 8 (84), Հայաստանի մայրաքաղաք Երևանում անցկացված հանրահավաքը, էջ 4:

բացելով մեծ թվով եզդիների հնարավորություն տվեցին դուրս գալ ռազմական գործողությունների գոտուց²¹⁵:

Սիրիայից և Թուրքիայից Իրաքի այս հատվածում հայտնված ՔԱԿ-ի և ՔԴԴ-ի զինյալների շնորհիվ մոտ 20.000 եզդիներ կարողացան անվտանգ դուրս գալ ռազմական գործողությունների շրջանից՝ տեղափոխվելով Սիրիա և Թուրքիա: Օգոստոսի 8-ին ԻՊ-ի զինյալները հարձակվեցին իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլի ուղղությամբ: Նույն օրը ԱՄՆ կողմից ղեկավարվող միջազգային կոալիցիոն օդուժն առաջին հարվածները հասցրեց Իրաքի հյուսիսում լայնածավալ ռազմական հարձակման անցած իսլամականների դիրքերին, ինչը ստիպեց վերջիններին դադարեցնել հարձակումն Էրբիլի ուղղությամբ՝ ծրագրելով երկրորդ խոշոր հարձակումն իրաքյան հյուսիսային, հիմնականում եզդիաբնակ գյուղերի նկատմամբ: Իրենց վրա հարձակվող իսլամականներից փրկվելու համար եզդիներից շատերը լքեցին իրենց բնակավայրերը՝ շարժվելով առավել ապահով իրաքյան Քուրդիստան, եզդիների մի ստվար հատվածն էլ բարձրացավ Սինջար լեռը՝ պատսպարվելով ԻՊ-ի զինյալներից: Իսլամականների կողմից գերեվարված եզդիներին առաջարկվեց հանձնել գենքն ու ընդունել իսլամ, իսկ շատերն էլ ուղղակի սպանվեցին:

Մերձավորարևելյան տարածաշրջանում, հատկապես Սիրիայում և Իրաքում էթնիկ-դավանական փոքրամասնությունների մասնավորապես հայերի, քրդերի ու եզդիների առաջ ծառացած հիմնախնդիրներից կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

²¹⁵ Զագրոս, դեկտեմբեր, 2014, թիվ 11-12 (87-88), Ժողովրդական ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար Մուրատ Կարայիլան. «Մեր պարտքն է փրկել Շանգալը»:

▪ Հայերն ու քրդերը Սիրիայում հիմնականում բնակվում են այն տարածքներում (Սիրիայի հյուսիսային շրջաններում), որոնք հակամարտության սկզբից դարձան ակտիվ ռազմական բախումների թատերաբեմ: Հայերը, Սիրիայում հիմնականում լինելով քաղաքացիներ, չեն ունեցել տարածքներ, հետևաբար նաև տարածքային ինքնակառավարման մարմիններ և այլն: Մինչդեռ սիրիական հակամարտության սկզբից քրդերն իրենց բնակության վայրերում անմիջապես հայտարարեցին ինքնավարություններ՝ ձեռնամուխ լինելով այդ տարածքների ինքնավաշտպանության կազմակերպմանը: Հայերի և քրդերի տեսլականը Սիրիայի ապագայի հարցում տարբերվում է նրանով, որ հայերը ցանկանում են տեսնել միասնական Սիրիա, մինչդեռ քրդերի զգալի հատվածի նպատակը իրենց զբաղեցրած տարածքներում սիրիական կենտրոնական իշխանություններից կիսանկախ ինքնավարության հասնելն է: Հարկ է նշել նաև Սիրիայում բնակվող հայերի և քրդերի միջև թվաքանակի տարբերությունը²¹⁶:

²¹⁶ Մինչ սիրիական հակամարտության սկիզբը (2011 թ. մարտ) սիրիահայ համայնքը պաշտոնապես հաշվվում էր 100.000: Համայնքի թվաքանակի վերաբերյալ շրջանառվող ոչ պաշտոնական տվյալներով սիրիահայերի թվաքանակը տատանվում էր՝ 60.000-80.000-ի միջև: Սիրիահայերի մեծ մասը կենտրոնացված էր Հալեպում (շուրջ 40.000-50.000), մնացյալը՝ Դամասկոսում (շուրջ 6.000-7.000), Լաթակիայի, Հոմսի, ալ-Ռակկայի, ալ-Հասաքայի, Դար ալ-Ջուր նահանգներում (ավելի քան 30.000) (տե՛ս Հայերն այսօր, Սփյուռքի նախարարության նախագիծ, նոյեմբերի 25, 2013 թ., <http://hayernaysor.am/%D5%BD%D5%AB%D6%80%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84/> (Մուռք, հունվարի 23, 2014 թ.)): Ըստ Մուստաֆա Նազդարի՝ 1976 թ. դրությամբ Սիրիայում բնակվում էր մոտ 825000 քուրդ, որոնք ըստ տարածաշրջանների բաշխված էին հետևյալ կերպ՝ Քուրդ-Դալ՝ 290000, Ջաբալ Մաման և Ազազ՝ 30000, Այն ալ-Արաբ՝ 60000, Հյուսիսային Ջազիրա՝ 360000, Հարավային Ջազիրա՝ 10000, Հալեպ՝ 10000, Համա՝ 5000, Դամասկոս՝ 30000, այլ վայրեր՝

▪ Սիրիայում հայերին և քրդերին սպառնացող հիմնական վտանգը (համենայն դեպս հակամարտության սկզբից մինչև 2015 թ. վերջ) իսլամական արմատական խմբավորումներն են, մասնավորապես ծայրահեղ իսլամական արմատական կառույցները, որոնց վերաբերմունքը Սիրիայի էթնիկ և կրոնա-դավանական փոքրամասնությունների հանդեպ անհանդուրժողական է:

▪ Սիրիայի էթնիկ-դավանական փոքրամասնություններին սպառնացող հիմնական վտանգը, որն ակնառու դարձավ 2013 թ. կեսերից, ԻՊ-ն է: Սիրիայի հայ և քուրդ համայնքներին սպառնում են նաև Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ուղղորդվող իսլամական ծայրահեղ արմատական այլ ուժեր: Մասնավորապես թյուրք, հատկապես ադրբեջանցի ծայրահեղ իսլամականներից բաղկացած խմբավորումները իրենց գործողություններով կարող են սպառնալիք լինել հայկական և քրդական համայնքների համար:

▪ Սիրիայում կովող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին տեղեկությունները քիչ են: Ըստ ունեցած տեղեկությունների՝ ադրբեջանցիները հիմնականում ծագումով Ադրբեջանի հյուսիսային լեզգիաբնակ և ավարաբնակ շրջաններից են, որտեղ զգալի թիվ են կազմում սուննիադավանները: Ադրբեջանական իրավապահ մարմինների կողմից վերոհիշյալ շրջաններ-

30000, ընդամենը՝ 825000 (տե՛ս՝ **Nazdar M.**, The Kurds in Syria, A People Without a Country. The Kurds and Kurdistan, New York, 1994. p. 194.): Հաշվի առնելով քրդերի մոտ ծնելիության բարձր մակարդակը՝ Սիրիայի քրդերի ընդհանուր թիվն այսօր կկազմի մոտ 1.5մլն (տե՛ս՝ سورية في المشكلة الكردية <http://hem.bredband.net/cdpps/s410.htm> (Մուսթ, սեպտեմբերի 23, 2014 թ.)), կամ՝ The Centre of Near and Middle Eastern Studies, **Kreyenbrock Ph., Allison Ch.**, Kurdish Culture and Identity, London and New Jersey, 1996, p. 8-9.):

րում պարբերաբար անցկացվող ստուգումները, ձերբակալությունները հատկապես սուննիական արմատական գաղափարներով առաջնորդվողների հանդեպ թուլացնում են վերջիններիս դիրքերը, որոնք իրենց գաղափարների առարկայական դրսևորումները փնտրում են այլ երկրներում, մասնավորապես Սիրիայում:

- Դրանց գուգահեռ ավելանում են նաև ադրբեջանական քաղաքական և կրոնական իշխանությունների կողմից իսլամական ծայրահեղ արմատական վտանգավոր միտումները երկրի սահմաններից դուրս հանելուն միտված քայլերը, ադրբեջանցի իսլամականների ներուժը այլ երկրներում կիրառելու ուղղորդումներ: Իսլամական սուննի ծայրահեղ արմատականությունը ճնշումների է ենթարկվում Ադրբեջանի ներկայիս ներքաղաքական կյանքում՝ ադրբեջանական իշխանությունների շարունակական հետապնդումների և ճնշումների համատեքստում: Դրանով է պայմանավորված նաև ադրբեջանցի իսլամականների ավելացող թվաքանակն ու ջիհադական այլ ճակատներում (Ադրբեջանից դուրս) մասնակցության ակտիվությունը: Սակայն սուննի արմատականության ընդհանուր ակտիվացման միտումներից զերծ չի մնում նաև Ադրբեջանը, և եթե դա շարունակվի, Ադրբեջանում նույնպես կտեսնենք իսլամի արմատական գաղափարների խորացման ու սուննի ծայրահեղ արմատական պայքարի առարկայական դրսևորումների փորձեր:

- Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ուղղորդվող իսլամականները կարող են սպառնալիք լինել սիրիահայ համայնքին պատկանող կրոնամշակութային հուշարձանների համար՝ հարված հասցնելով ՀՀ և աշխարհասփյուռ հայերի շահերին (Քեսաբի հայկական եկեղեցիների ավերումներն ու թալանը,

Դար ալ-Զուրի Սրբոց նահատակաց եկեղեցու պայթեցումը և այլն²¹⁷):

▪ Շարունակվող սիրիական հակամարտությունը հղի է անկանխատեսելի զարգացումներով և հետևանքներով Սիրիայի էթնիկ-դավանական փոքրամասնությունների համար, և որպես վերջինիս բաղկացուցիչ՝ հայերն ու քրդերը բավականին բարդ իրավիճակում են հայտնվել՝ փորձելով դիմակայել այն սպառնալիքներին: 2013 թ. կեսերից սիրիական ընդդիմադիր խմբավորումների շարքում ակտիվություն ցուցաբերող ԻՇԻՊ-ի վերահսկողության տակ անցած տարածքներն անմիջապես սահմանակից էին սիրիական քրդաբնակ շրջաններին և հայաբնակ Հալեպին («Իսլամական պետության» սահմանը 2014 թ. հոկտեմբերի դրությամբ անցնում էր Հալեպից 30 կմ հեռավորության վրա գտնվող ալ-Բաբ քաղաքով): Այդ կառույցի կազմում կոմոյ թյուրք իսլամականների գործողությունները կարող են սպառնալ հավասարապես Սիրիայի քուրդ և հայ փոքրամասնությունների անվտանգությանը: Միաժամանակ հայկական և քրդական բնակավայրերում հայերն ու քրդերը ստիպված են եղել կազմակերպել սեփական տարածքների ինքնապաշտպանությունն ու համայնքային գոյատևման համար անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել՝ ջանքեր գործադրելով ստեղծված բարդ

²¹⁷ Ինչ վերաբերում Իրանի Իսլամական Հանրապետությանը, ապա վերջինս ծայրահեղ իսլամականների դեմ պայքարում ունի կարևոր դերակատարում, որը պայմանավորված է ինչպես սուննիա-շիա ավանդական գաղափարական հակասությունների տրամաբանությամբ, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության պահպանման նկատառումներով: Առհասարակ, ԻԻՀ հոգևոր-քաղաքական շրջանակներում իշխում է այն համոզմունքը, որ իսլամական ծայրահեղական շարժումները խիստ ժամանակավոր երևույթ են և չեն կարող փոխել իսլամի պատմությունը: Դրանք, ըստ իրանական հասարակական կարծիքի, նոր երևույթ չեն և ունակ են կրկնվելու (տե՛ս: *حامد ابدالصمد، زوال جهان اسلام: یک پیش بینی، کلن، ۱۳۹۰، ص ۲۰۰*)

իրավիճակում ազգային ինքնության պահպանման ուղղությամբ, չբացառելով նաև հայ-քրդական համագործակցության և ներհամայնքային փոխառնչությունների հնարավորությունները:

▪ Դեռևս հստակ չէ իսլամականների կողմից Իրաքի հյուսիսում սպանված եզդիների թիվը: Ըստ որոշ գնահատականների՝ 2014 թ. օգոստոս ամսին սպանվել էին մոտ 500 եզդիներ, 100-ից ավելի եզդի կանայք վաճառվել էին ստրկության, մոտ 40.000 եզդիներ տարահանվել էին իրենց բնակավայրերից²¹⁸: Սակայն սպանված եզդիների թիվն անհամեմատ ավելի մեծ կարող է լինել, քանի որ ԻՊ-ից ազատագրված իրաքյան տարածքներում դեռևս հայտնաբերվում են եղբայրական գերեզմաններ, որտեղ թաղված են մեծ թվով եզդիներ, իսկ իսլամականների տիրապետության տակ հայտնված բազմաթիվ եզդիների ճակատագրեր դեռևս անհայտ են: 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ իրաքյան եզդիաբնակ որոշ բնակավայրեր դեռևս գտնվում են ԻՊ-ի վերահսկողության տակ, իսկ Սինջար լեռան վրա դեռևս կան մեծ թվով եզդիներ, որոնց կյանքը նույնպես վտանգված է:

5.7. Ադրբեջանցի իսլամականների ներգրավվածությունը Միրիայում և Իրաքում իրականացվող ջիհադական պայքարին

Ադրբեջանն անմասն չմնաց ակտիվացող արմատական իսլամական տրամադրություններից: Իսլամական խմբավորումներն այս երկրում նկատվել են դեռևս ԽՍՀՄ փլուզման ժամանակահատվածից:

²¹⁸ The Independent, Withnall A., "Iraq crisis: Islamic militants 'buried alive Yazidi women and children in attack that killed 500, August 10, 2014, <http://www.independent.co.uk/news/world/middle-east/iraq-crisis-islamic-militants-buried-alive-yazidi-women-and-children-in-attack-that-killed-500-9659695.html> (Մուտք, օգոստոսի 11, 2014 թ.):

նակաշրջանից ի վեր, երբ իսլամի շիայական, սուննիական (նաև ծայրահեղ արմատական, սալաֆիական), սուֆֆիական ուղղությունները (նակշբանդիա, կադիրիա և այլն), ինչպես նաև թուրքամետ իսլամական ուղղությունները (նուրսիզմ, գյուլենականություն և այլն), ստանալով աջակցություն մի շարք արտաքին մուսուլմանական ուժային կենտրոններից, զանազան մարդասիրական ու բարեգործական ծրագրերի քողի տակ հաստատվեցին և շատ դեպքերում խոր արմատներ ձգեցին այս երկրում²¹⁹:

Հարաբաղյան հակամարտության ժամանակ Ադրբեջանի կողմից մարտնչում էին Աֆղանստանից եկած «ալ-Կաիդա»-ի առաջնորդների (Ուսամա բեն Լադեն, Այման Ալ-Չաուսհիրի և այլն) անմիջական ղեկավարությամբ գործող զինյալները (Շամիլ Բասաև, Խատտաբ և այլն), որոնց մի մասը Ադրբեջանից հետագայում տեղափոխվեց Չեչնիա՝ զինված գործողություններին մասնակցելու համար, իսկ մյուս մասը մնաց Ադրբեջանում՝ ակտիվ դերակատարում ստանձնելով երկրում արմատական շարժումներ կազմակերպելու գործում²²⁰: Ադրբեջանական իսլամական կառույցները մասնակցել են այնպիսի հնչեղություն ստացած ահաբեկչական գործողություններին, ինչպիսիք են 1996 թ. Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումը, 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական

²¹⁹ Տե՛ս **Юнусов А.**, Исламская Палитра Азербайджана, Баку, 2012, стр. 7-10, <http://www.kavkazoved.info/images/myfls/files/au-full.pdf> (Մուտք, փետրվարի 3, 2015 թ.):

²²⁰ **Charalampidis I.**, Sponsored to Kill, Mercenaries and Terrorist Networks in Azerbaijan, Moscow 2013, pp. 20-21, <http://karabakhfacts.com/wp-content/uploads/-2013/02/Ioannis-Charalampidis-Sponsored-to-Kill-ENG.pdf> (Մուտք, մայիսի 13, 2015 թ.):

գործողությունները և այլն²²¹։ Փաստ է, որ «Իսլամական ջիհադ», «ալ-Կաիդա» և այլ իսլամական արմատական կազմակերպությունները Ադրբեջանում վաղուց ունեին իրենց բջիջները։ Այս ամենը իրականացվում էր ադրբեջանական իշխանությունների իմացությամբ, և Բաքուն նախաձեռնություն չէր ցուցաբերում երկրում «ալ-Կաիդա»-ի և այլ իսլամական ահաբեկչական կառույցների բջիջների հայտնաբերման և վերացման ուղղությամբ։

Ադրբեջանցի իսլամական ծայրահեղ արմատականների ակտիվությունն արդի մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներում. Ադրբեջանցի իսլամականներն անմասն չմնացին իսլամական ծայրահեղ արմատական գործընթացներից՝ իրենց անմիջական մասնակցությունն ունենալով միջազգային զինված հակամարտություններում ջիհադական պայքարին։ Ադրբեջանցիները մասնակցել են Սիրիայում, Իրաքում, Աֆղանստանում, Պակիստանում և այլ հատվածներում իրականացվող ջիհադին²²²։ Մասնավորապես Սիրիայում կառավարական ուժերի կողքին կռվել են ադրբեջանցի շիաներ, իսկ սիրիական՝ առավելապես սուննիական ընդդիմադիր ճամբարում գտնվող իսլամական խմբավորումների կազմում կային սուննի ադրբեջանցիներ²²³։

²²¹ **Demoyan H.**, The Islamic Mercenaries in the Karabakh War: The Way International Terrorist Networks Penetrated Azerbaijan, Yerevan 2004, pp. 5-17, http://www.karabakhcenter.com/images/menus/315/the_islamic.pdf (Մուտք, հունվարի 3, 2015 թ.):

²²² **Փաշայան Ա.**, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Նորավաթ հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2014, էջ՝ 130-131։

²²³ St' u Jihadology, **Zelin A.**, Azerbaijani foreign fighters in Syria, January 28, 2014, <http://jihadology.net/2014/01/28/guest-post-azerbaijani-foreign-fighters-in-syria/> (Մուտք, մարտի 14, 2015 թ.):

Աղրբեջանցի իսլամականներն ու խմբավորումները Սիրիայում և Իրաքում։ Աղրբեջանցիները սկզբնական շրջանում ներգրավված էին «Ջայշ ալ-Մուհաջիբին ուա ալ-Անսար» իսլամական ծայրահեղ արմատական խմբավորման մեջ, հետագայում նրանք ներգրավվեցին իսլամական այլ ծայրահեղ արմատական խմբավորումների կազմում սիրիական կառավարական ուժերի դեմ պայքարում։ 2013 թ. կեսերին Սիրիայում նկատվեցին աղրբեջանցիներով համալրված զինյալ խմբեր՝ աղրբեջանցի ջիհադական լիդերներով։ Վերջիններս Սիրիայից կոչեր էին հղում իրենց հայրենակիցներին՝ միանալ Մերձավոր Արևելքում իրականացվող ջիհադին։

2013 թ. սկզբից աղրբեջանցիները համախմբված էին «Ջայշ ալ-Մուհաջիբին ուա ալ-Անսար» խմբավորման կազմում գործող «Աղրբեջանական ջամաա»-ի («Աղրբեջանական խմբավորում») մեջ։ Վերջինը ղեկավարվում էր Աբու Յահյա ալ-Ազերիի կողմից, որի սպանությունից հետո աղրբեջանցի ջիհադականները բաշխվեցին մի շարք իսլամական խմբավորումների մեջ։

«Իսլամական պետության» կազմում գործող և աղրբեջանցի ջիհադականներով համալրված իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումները։ ԻՊ-ի կազմում կովող աղրբեջանցի իսլամականներով համալրված առաջին կառույցներից մեկը «Ջունդուլլահ» խմբավորումն էր, որտեղ աղրբեջանցիներից գատ ներգրավված էին նաև թուրքեր։ Խմբավորումը գործում էր սիրիական ալ-Ռակկա նահանգում և ակտիվորեն մասնակցում էր Սիրիայի հյուսիսում քրդաբնակ Քոբանիի վրա իսլամականների հարձակումներին։ Մյուս խմբավորումը, որը համալրված էր աղրբեջանցի և թուրք ջիհադականներով, Իրաքում ակտիվ գործող «Խատաբ» խմբավորումն էր (կոչվում է առաջնորդի՝ Խատաբ ալ-Ազերիի անունով)։ Որոշ աղրբեջանցիներ գործում

էին նաև «Աբու Քամիլ» խմբավորման կազմում, որը հիմնականում համալրված էր չեչեններով:

Չնայած այն հանգամանքին, որ ադրբեջանցիների զգալի հատվածը ներգրավված էր ԻՊ-ի կազմում գործող իսլամական խմբավորումների կազմում, քիչ չէին ադրբեջանցիները նաև Սիրիայում ակտիվություն ցուցաբերող այլ իսլամական ծայրահեղ արմատական կառույցների, մասնավորապես ՋՆ-ի կազմում:

Ադրբեջանցի իսլամական առաջնորդները Սիրիայում և Իրաքում.

Աբու Յահյա Ալ-Ազեբի (Նիքաթ Աշուրով). Աբու Յահյան խարիզմատիկ և հեղինակավոր ադրբեջանցի առաջնորդներից էր: Նա Սիրիայում ղեկավարում էր ադրբեջանցիներից կազմված խմբավորում և հեղինակություն էր վայելում ոչ միայն ադրբեջանցի, այլև այլազգի ջիհադականների շրջանում: Աբու Յահյա Ալ-Ազեբին մի քանի ուղերձներով հանդես եկավ՝ ուղղված Ադրբեջանում ապրող իր «եղբայրներին»: Նա կոչ էր անում ադրբեջանցիներին գալ և միանալ ոչ միայն Սիրիայում, այլև մուսուլմանական այլ երկրներում ընթացող ջիհադական պայքարին: Աբու Յահյա Ալ-Ազեբին սպանվեց 2013 թ. սեպտեմբերին Սիրիայում:

«Ղարաբաղի պարտիզաններ» կոչված ադրբեջանցի իսլամականները նույնպես հեղինակություն էին վայելում ջիհադականների շրջանում: Նրանք ունեցել են ջիհադական պայքարի փորձ, եղել են Աֆղանստանում և Չեչնիայում, ներգրավված են եղել նաև Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի դեմ իրականացվող ռազմական գործողություններում: «Ղարաբաղի պարտիզաններից» ումանք 2004 թ. ձեռքակալվել էին ադրբեջանական իշխանությունների կողմից՝ մեղադրվելով «Ղարաբաղի ազատագրման» համար ջիհադական պայքար ծրագրելու մեջ:

2010 թ. նրանց մի մասն ազատ արձակվեց, որոնց մեջ էին նաև Սիրիայում աչքի ընկած Ռուստամ Ասքերովը (սպանվեց 2013 թ. դեկտեմբերին) և Ռովշան Բադալովը (սպանվեց Քոբանիում 2014 թ. հոկտեմբերին):

Աբու Յահյա ալ-Ազերիի սպանությունից հետո ադրբեջանական ջիհադականների ղեկավարությունը ստանձնեց Մուսաբ Ալ-Ազերին (Մուսաբ Աբդ Ալ-Ռահիմ Աբդ Ալ-Մաջիդ), սակայն վերջինս 12 այլ ադրբեջանցիների հետ սպանվեց քրդական զինված ստորաբաժանումների կողմից 2014 թ. մարտին:

Մուսաբ Ալ-Ազերիի մահից հետո ադրբեջանցի ջիհադականների ղեկավարությունն անցավ Մուհամմադ Ալ-Ազերիին:

Մեկ այլ ադրբեջանցի՝ Ջոհրաբ Մամեդովը, թուրք-ադրբեջանական խմբավորման («Ջունդուլլահ») առաջնորդն էր:

Մյուս ազդեցիկ ադրբեջանցի իսլամականը Խատաբ Ալ-Ազերին էր: Դեռ երիտասարդ տարիքում (մոտ 30 տարեկան)՝ մեծ հեղինակություն է վայելել ադրբեջանցի ջիհադականների շրջանում և համարվել է ամենահայտնի ադրբեջանցի իսլամական առաջնորդը Սիրիայում և Իրաքում²²⁴:

2013 թ. կեսերից ԻՊ-ի վերահսկողության տակ անցան Սիրիայի էներգակիրներով հարուստ ալ-Ռակկա և Դար ալ-Ջուր նահանգները: Այստեղից նավթի ու գազի վաճառքն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ապահովեց իսլամականների համար, որը հնարավորություն տվեց ֆինանսավորելու աշխարհի տարբեր հատվածներից Սիրիայում, իսկ 2014 թ. կեսերից Իրաքում հավաքվող ջիհադական ներուժը, այդ թվում նաև ադրբեջանցի

²²⁴ Jihadology, **Zelin A.**, The Clear Banner. The Forgotten Fighters. Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, February 2, 2015, <http://jihadology.net/2015/02/0-2/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/> (Մուսթ, ապրիլի 24, 2015 թ.):

ջիհադականներին: Իսլամականների ֆինանսավորման աղբյուրներ են նաև մուսուլմանական տարբեր երկրներից հավաքվող ֆինանսական միջոցները (որոշ մուսուլմանական իշխանական շրջանակներից, տարբեր երկրների մուսուլմանական համայնքներից և անհատական նվիրատվություններից և այլ ճանապարհներով գոյացող ֆինանսական ռեսուրսները): Աղբբեջանցի իսլամականները նույնպես ֆինանսավորվել են այս աղբյուրներից և հենց Աղբբեջանում հավաքվող նվիրատվություններից:

Ներկայումս աղբբեջանական իշխանությունների նկատմամբ ձևավորված անվստահության մթնոլորտը, քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրոնական չլուծված խնդիրները լուրջ դժգոհությունների պատճառ են դարձել աղբբեջանական հասարակական տարբեր շերտերում, որոնք փորձում են օգտագործել իսլամական ծայրահեղ արմատական ուժերը («Անտառային եղբայրներ», «Ջեյշուլլահ», «Հիզբալլահ», «ալ-Ջիհադ» և այլն): Նրանք կենտրոնանալով Աղբբեջանի հյուսիսային շրջաններում, իսկ վերջին ժամանակներում գործունեություն ծավալելով նաև երկրի կենտրոնական, արևմտյան և հարավային շրջաններում, իրենց արմատական գաղափարներով և ահաբեկչական գործողություններով փորձում են ակտիվացնել իրենց գործունեությունն Աղբբեջանում: Իսլամականները մզկիթների և բարեգործական ուսումնական հաստատությունների քողի տակ ծավալած քարոզչությամբ կարողացել են կարճ ժամանակում համախմբել զգալի թվով մարդկանց և իրենց մտահոգող խնդիրները բարձրաձայնելու համար անցկացնել բողոքի ցույցեր:

Բացի երկրի համար իսլամի ավանդական շիական ուղղության հետևորդներից՝ Աղբբեջանում շատ են կրթված և ապահովված երիտասարդներ, որոնք արմատական սալաֆիական ուղղության հետևորդներ են և հաճախում են հատուկ մզկիթներ,

ինչպիսին է Աբու-Բաքր մզկիթը Բաքվում, որտեղ, բացի կրոնական հարցերից, քննարկվում են նաև քաղաքական խնդիրներ: Ադրբեջանական բանակը ևս անմասն չի մնում արմատականների ազդեցությունից: Ըստ ԶԼՄ-ների՝ հաճախակի են ադրբեջանական բանակում արմատական հայացքներ ունեցողների դասալքության դեպքերը: Նրանք փախչելով իրենց հետ վերցնում են նաև զենք և զինամթերք՝ ահաբեկչական գործողություններում օգտագործելու նպատակով:

Հարկ է նշել, որ վերջին շրջանում ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից երկրի տարբեր հատվածներում, այդ թվում նաև մայրաքաղաք Բաքվում, իսլամական ծայրահեղական խմբավորումների նկատմամբ հետապնդումները, «ալ-Կաիդա»-ի և այլ իսլամական արմատական կառույցների հետ համագործակցության մեջ մեղադրվող անձանց ձերբակալությունները և իսլամական ուժերի մեջ առաջնորդների ու միասնության բացակայությունը որոշակի ազդեցություն են ունենում Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների գործունեության վրա:

Սակայն Ադրբեջանում առկա խնդիրները, ընդդիմադիր ուժերի նկատմամբ (այդ թվում նաև իսլամական արմատականների) իշխանությունների բռնություններն ու հետապնդումները, էներգակիրների վաճառքից ստացված շահույթի անհամաչափ բաշխումը, հսկայական չափերի հասնող կաշառակերությունը, ցանկացած այլակարծության բռնի ճնշումը, դարաբաղյան հակամարտության հարցում ալիևյան կլանի վարած անպտուղ քաղաքականությունն ավելի են խորացնում հասարակական ճգնաժամը երկրում, ինչից կարող են օգտվել ադրբեջանցի ծայրահեղ իսլամականները:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Իսլամական պետության» ի հայտ գալն ու հետագա առաջ-խաղացումը Մերձավոր Արևելքում պատահական չէին:

Մի շարք գործոններ նպաստեցին Մերձավորարևելյան տարածաշրջանում, մասնավորապես Իրաքում և Սիրիայում իսլամական արմատական գաղափարների արմատավորմանը՝ նպաստելով իսլամական ծայրահեղ արմատական կառույցների ակտիվությանը:

Հայտնի է, որ ԻՊ-ի հիմքը դրվեց Աֆղանստանում, որտեղ Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուիին հաջողվեց ստեղծել ռազմական ճամբար Հերաթ քաղաքում: Այստեղ կենտրոնանալու և ռազմական ճամբար ունենալու ընտրությունը նույնպես պատահական չէ, քանզի Հերաթի աշխարհագրական դիրքը (այն գտնվում է Աֆղանստանի հյուսիս-արևմուտքում՝ Իրանի սահմանին մոտ) հնարավորություն էր տալիս խուսափել ռազմական ակտիվ գործողությունների թատերաբեմից, ինչն էլ իր հերթին հնարավորություն էր ստեղծում Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուիի և իր կողմից ղեկավարվող կառույցին անվնաս հեռանալ կռաւիցիոն ուժերի ռազմական ակտիվ գործողությունների կիզակետում հայտնված Աֆղանստանից:

2001 թ. Աֆղանստանում ռազմական գործողությունների ծավալման և «ալ-Կաիդա»-ի դեմ սկսված պայքարի համատեքստում Ալ-Ջարկաուին որոշեց իր կառույցի կողմից իրականացվող ջիհադական պայքարի կենտրոնը տեղափոխել Իրաք,

որտեղ ծավալած ակտիվ գործունեությունը «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակներին ստիպեց ուշադրություն դարձնել Ալ-Ջարկատուիի և նրա կողմից ղեկավարվող կառույցի վրա:

Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից և Իրաքում արևմտյան ուժերի հաստատումից հետո երկրում ձևավորվեցին նախադրյալներ իսլամական արմատական գաղափարների տարածման և դրանց հիման վրա իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումների խորացման համար:

ԻՊ-ի հիմնադիր Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին կարողացավ կազմակերպել ջիհադական պայքարն Իրաքում՝ լավագույնս օգտագործելով 2003 թ. այստեղ հայտնված արևմտյան ուժերի դեմ գլուխ բարձրացրած ջիհադականների ներուժը: Ալ-Ջարկատուիի ղեկավարության տակ գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների գործողություններում նկատվող ակտիվությունը վկայեց հետսադամյան Իրաքում հեռու գնացող նպատակներ ունենալու, մեծամասամբ շիադավան երկրում հիմնվելու և սուննիներով բնակեցված տարածքներում ջիհադական պայքարը կենտրոնացնելու մասին: Այդ զարգացումների առաջնագծում կանգնեցին Աբու Մուսաբ Ալ-Ջարկաուին և նրա կողմից ղեկավարվող «ալ-Թաուհիդ ու ալ-Ջիհադ» կառույցը: 2000-ական թթ. կեսերից հիշյալ կառույցն իր ակտիվությամբ ու ջիհադական պայքարում մոլեռանդ կեցվածքով արժանացավ նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ղեկավար շրջանակի քննադատությանը, իսկ Արևմուտքի դեմ ուղղված գործողություններով վաստակեց ամենավտանգավոր իսլամական կառույցներից մեկի համբավ: Նման վարքագիծը չխանգարեց Աբու Մուսաբ Ալ-Ջարկատուիի կողմից ղեկավարվող կառույցին հեռու գնացող նպատակներ ունենալ, վերածվել Իրաքում «ալ-Կաիդա»-ի

Ճյուղավորման և հանդես գալ սեփական դիրքերն Իրաքում ամրապնդելու նախաձեռնություններով, որոնք դրսևորվեցին ինչպես պայքարի գաղափարական, այնպես էլ՝ գործնական կիրառման լայն հնարավորություններով:

Նույնիսկ 2010 թ. արդեն որպես «ալ-Կաիդա»-ի պաշտոնական Ճյուղավորում «Իրաքում իսլամական պետություն» (ԻԻՊ) անվամբ գործող կառույցի պայքարի հիմնական վայրը որոշված էր Իրաքը: Ավելին՝ 2011 թ. մարտից սիրիական ճգնաժամի խորացման պայմաններում ԻԻՊ-ի ակտիվության ուղղվածությունը մնաց Իրաքը՝ փորձելով հնարավորինս հեռու պահել Սիրիա մեկնող իրաքյան իսլամականներին: Մտավախություն կար, որ Սիրիա մեկնելով կթուլանար իսլամականների ներուժն Իրաքում:

Միայն սիրիական հակամարտության խորացումն ու ջիհադական պայքարի համար ստեղծված նպաստավոր պայմանները ստիպեցին ԻԻՊ-ին Սիրիան դիտել որպես ընդլայնվող և լայն թափ ստացող ջիհադական պայքարի թատերաբեմ, որը հնարավորություն կտար ԻԻՊ-ին Իրաքից բացի արմատներ գցել նաև Սիրիայում, առավել ևս, որ 2012 թ. դեպի Սիրիա շարժվեցին իսլամականներ աշխարհի տարբեր ծայրերից, և ֆինանսական զգալի հոսքեր ուղղվեցին սիրիական ընդդիմադիր ճամբարին Բաշար ալ-Ասադի դեմ պայքարը կազմակերպելու համար:

2012 թ. վերջից ակտիվորեն ներգրավվելով սիրիական հակամարտության մեջ՝ ԻՊ-ը նոր թափ հաղորդեց Բաշար Ալ-Ասադի վարչակարգի դեմ իրականացվող ջիհադական պայքարին: 2013 թ. կեսերից այն իր վերահսկողությունը հաստատեց

Միրիայի զգալի հատվածի նկատմամբ, իսկ 2014 թ. սկզբից ընդլայնեց իր ազդեցության տարածքներն Իրաքում:

2013 թ. ապրիլ ամսից ԻՇԻՊ անվամբ գործող, իսկ 2014 թ. հունիսից արդեն «Իսլամական պետություն» հռչակված կառույցը բացահայտ ներկայացրեց իր նպատակները, այն է՝ Միրիայի և Իրաքի զգալի հատվածներում շարիաթի օրենքներով առաջնորդվող պետություն ձևավորելու, մեծ ֆինանսական հնարավորություններով և զգալի ռազմական ներուժ ունեցող պետության հիմքեր զցելու, բոլոր մուսուլմանների համար հավաքատեղի դարձնելու ձգտումները:

«Իսլամական պետության» հռչակման սկզբից նեթ իսլամականների կողմից «Բակիա ուա Թաթամադդաթ» (հիմնվել և ընդլայնվել) կարգախոսի շրջանակներում սկսվեց կիրառվել ուրույն մարտավարություն: Դրանով դրվեց ԻՊ-ի տեսական գաղափարների առարկայական դրսևորումների հիմնավորումը: Դա ենթադրում էր ջիհադական պայքարի արմատավորում իրենց կողմից վերահսկվող սիրիական և իրաքյան տարածքներում ու այդ պայքարի արդյունքում ձևավորված ներուժի ուղղորդում դեպի մուսուլմանական հարակից և ոչ հարակից երկրներ:

Այսպիսով, Մերձավոր Արևելքում իսլամական արմատական գաղափարների ակտիվացման նախադրյալները նկատվեցին դեռևս 20-րդ դարի վերջում, որոնք ԻՊ-ի հիմնադիր Ալ-Ջարկաուիի կողմից օգտագործվեցին սեփական իսլամական կառույցի դիրքերն ամրապնդելու և այս տարածքներում ջիհադական պայքարի դրոշակակրի վերածվելու համար: Իսկ «Բակիա ուա Թաթամադդաթ» կարգախոսի ներքո ԻՊ-ն պայքարի առարկայական դրսևորումների ուղղվածությունը դարձրեց

Մերձավորարևելյան տարածաշրջանն ու այն բնակեցնող անցանկալի տարրերը՝ այնտեղից տարածվելու նպատակ հետապնդելով դեպի մուսուլմանական այլ երկրներ:

Նման վարքագիծն անշուշտ իր ազդեցությունն ունեցավ Մերձավորարևելյան տարածաշրջանը բնակեցնող էթնիկ-դավանաբանական փոքրամասնություններին ուղղված քաղաքականության վրա: «Իսլամական պետության» վերաբերմունքը Սիրիայի և Իրաքի էթնիկ և կրոնական-դավանական փոքրամասնությունների հանդեպ անհանդուրժողական էր:

Մերձավորարևելյան տարածաշրջանում ի հայտ եկավ մի ուժ՝ իսլամական ծայրահեղ արմատական մի կառույց, որը մարտահրավեր նետեց աշխարհին: ԻՊ-ի կողմից խալիֆայության ստեղծման վերաբերյալ հունիսի 29-ի հայտարարությունը, փաստորեն, արձանագրեց իրողությունը, այն է՝ արդեն փաստացի իսլամական պետության գոյությունը: Այս համատեքստում կարելի է առանձնացնել մի քանի գործոններ, որոնք ԻՊ-ն օժտում են որոշակի առանձնահատկություններով՝

1. ԻՊ-ն հանդես է գալիս որպես նոր պետական միավոր, ասել է թե՛ այսպես կոչված «իսլամական խալիֆայություն», որը հիմնվել կամ հիմնվում է արաբական աշխարհի սրտում: Նոր ժամանակներում մուսուլմանական աշխարհում նման պետություն գոյություն չի ունեցել: Տալիբական Աֆղանստանը, որը նույնպես առաջնորդվում էր շարիաթի օրենքներով, և գոյատևեց 1996-2001 թթ., խալիֆայություն կոչվելու հավակնություններ չունեցավ: Բացի դրանից, մուսուլմանական աշխարհի կենտրոնում ստեղծված խալիֆայության առաջնորդի տիտղոսներում Մուհամմադ մարգարեի ցեղակից լինելու հանգամանքի շեշտումը

կոչված է բարձրացնելու նորահռչակ խալիֆայի հեղինակությունն իսլամական աշխարհում:

2. ԻՊ-ն ունի որոշակի ռազմական ներուժ, որը գործնականում ընդլայնում է ԻՊ-ի տարածքները, և որտեղ ավելանում է ռազմական փորձ ունեցող զինյալների թվաքանակը: Վերջիններքը պատրաստ են գործելու աշխարհի այլ հատվածներում արդեն գոյություն ունեցող իսլամական ծայրահեղ արմատական ցանցերի միջոցով:

3. ԻՊ-ն ունի ֆինանսական ռեսուրսներ, և ըստ տարբեր փորձագիտական գնահատականների՝ ԻՊ-ի ինքնաֆինանսավորման գործակիցը բավական բարձր է, հետևաբար միայն արտաքին դոնորներից կառույցի ֆինանսավորման դադարեցումը չի կազմալուծի այն ֆինանսապես:

4. ԻՊ-ն մեծ գումարներ է ներդնում գաղափարական-քարոզչական ոլորտում: Այն իր գաղափարները քարոզելու և գրավիչ դարձնելու համար կիրառում է ժամանակակից տեխնոլոգիաներ, IT մասնագետներ, համացանց, բարձր որակի գովազդային ու տեղեկատվական տեսահոլովակներ և այլն, որոնք նախկինում բացակայել են այլ իսլամական ծայրահեղ արմատական կառույցներում:

5. Կառույցի ինքնուրույնությունն ու ֆինանսական ինքնաբավությունը, որոնց մշտապես ձգտել է ԻՊ-ն, հիմք են տալիս պնդելու, որ այն անկախ է: Նույնիսկ եթե ընդունենք, որ ԻՊ-ն 2011-2012 թթ. որպես սիրիական հակամարտության հակաբաշարյան ճամբարի բաղկացուցիչ մաս, ստացել է որոշ աջակցություն (ռազմամթերք, ֆինանսական օժանդակություն, մարդկային հոսքեր և այլն), դա չի նշանակում, որ ԻՊ-ն պետք է դիտել մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածա-

շրջանային որոշ պետությունների կամ ուժային կենտրոնների կողմից ներդրված նախագիծ: Դա խանգարում է ճիշտ ընկալելու իսլամական ծայրահեղ արմատական արդի զարգացումներն ու դրանցում ԻՊ-ի դերակատարումը, համապատասխան գնահատականներ տալու ԻՊ-ի գործունեությանը, վերլուծելու իսլամականների ներկայիս տեսական և գործնական հնարավորությունները: Ջիհադական պայքարում ԻՊ-ի առաջնորդների առանձնահատուկ մոտեցումներն ու կառույցի վարքագծում նկատվող յուրահատկությունները ԻՊ-ը դարձրին գործոն, որը, սակայն, հետագայում կարող է ուղղորդվել (ինչն արդեն նկատելի է) այս կամ այն ուժերի կողմից:

Այս ամենի հանրագումարը ԻՊ-ն վերածում է նոր իրողության ոչ միայն մերձավորարևելյան, այլև համաշխարհային աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական զարգացումներում: 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ այն ամենահարուստ իսլամական ծայրահեղ արմատական կառույցն ու ջիհադական պայքարի առաջամարտիկն է՝ ստվերելով անգամ «ալ-Կաիդա»-ին:

Իրաքում ԻՊ-ի դեմ պայքարի՝ 2006-2008 թթ. հաջողված փորձը հուշում է, որ հնարավոր է չեզոքացնել այս արմատական կառույցը: Սակայն հիշյալ կառույցի դեմ պայքարն Իրաքում լոկալ բնույթ էր կրում, որի մեջ հասարակական լայն շրջանակներից, ամերիկյան և իրաքյան զինուժից զատ ներգրավված էին նաև տեղի զանազան սուննի և շիա ցեղեր, այլ էթնիկ-դավանական խմբեր:

ԻՊ-ի մերօրյա իրականությունը խոսում է այն մասին, որ կառույցը վերածվել է գլոբալ իրողության, որի դեմ պայքարը չպետք է սահմանափակվի միայն մուսուլմանական աշխարհով:

ԻՊ-ն հետևանք է աշխարհի տարբեր հատվածներում, հատկապես մուսուլմանական շրջանակներում ընթացող որոշակի գործընթացների, որոնց շուտափույթ բացահայտման, վերլուծման ու համապատասխան քայլերի ձեռնարկման շնորհիվ հնարավոր կլինի նվազեցնել նմանատիպ կառույցների ի հայտ գալու հնարավորությունը հետագայում:

Саркис Григорян

Исламское государство От истоков до провозглашения халифата

Резюме

Истоки исламского радикализма восходят к раннему периоду мусульманской веры. Исламские радикальные идеи имели свои проявления в священных книгах мусульман, Коране и Сунне, которые сыграли определённую роль в расширении мусульманских территорий и в формировании исламского халифата. Средневековые Крестовые походы, направленные против исламского мира, и, в этой связи, новая геополитическая ситуация создали благоприятные условия для формирования в мусульманской среде новой волны толкований радикальных исламских идей.

После Крестовых походов Запад постепенно начинает занимать преобладающую роль в мировом развитии. Распространение западных ценностей, усиление военной мощи Европы и ослабление Османской Империи благоприпятиствовали распространению реформаторских идей в мусульманских кругах. Панисламистское движение возникшее в мусульманском мире в 70-ых гг. 19 века активизировало исламские идеи. В мусульманских странах под знаменем этих идей объединились широкие общественные слои.

По договору Сайкс–Пико заключённому между Великобританией и Францией в годы первой мировой войны была решена дальнейшая судьба арабских владений Османской империи, которая спровоцировала антиколониальную борьбу и национально-освобо-

дительные движения, вследствие чего уже в 40-ых гг. 20-го века возникли независимые арабские государства. Последствием этих процессов, а также вместе с аннулированием в 1924 г. Мустафой Кемалем халифата и структур султаната, в мусульманском мире активизировались радикальные исламские идеи и появились структуры, руководствующиеся исламской радикальной идеологией.

К середине 20 века идеи Хасан аль-Банна, Саида Кутба и Саида Абул Ала Маудуди нашли распространение в мусульманском мире и многие известные (радикальные и умеренные) руководители исламских группировок, вдохновившись выдвинутыми ими идеями ислама, исламской революции и “джихада”, призывали вернуться к исламским традициям для того, чтобы противостоять вызовам Запада.

Исламские крайнерадикальные силы не могли оставаться в стороне от произошедших в конце 70-ых гг. 20-го века событий в другом регионе исламского мира, в Афганистане, тем более, что в 1979 г. советские войска вторглись в Афганистан.

Для правильной организации борьбы против советских войск, адресной доставки предоставлявшейся военной помощи и правильного использования финансовых средств, антисоветскому лагерю нужны были надёжные деятели на местах, которые взяли бы на себя организационные функции в афганской войне. В этой сфере особенно отличились палестинец Абдаллах Йусуф Аззам и саудовец Усама бен Ладен, которые в 1988 г. основали исламскую организацию “Каидат аль-Джихад” (Основа, якорь Джихада). “Аль-Каида” занималась работами по сбору муджахедов в военных лагерях, организации их военной подготовки и вовлечению их в священную войну.

В 1980-ых гг. Абдаллах Аззам заложил основы современной концепции джихада, а Бен Ладен придал текущей джихадистской войне “всеобщий” характер, сделав акцент, в дальнейшем, на первостепенность борьбы ведущейся против “Далёкого врага”.

Из-за таких действий “аль-Каида”, которая раньше выступала как группировка, превратилась в движение, распространив выдвинутую ею идеологию “Всеобщего джихада” в среде радикальных мусульманских группировок. Итогом вышеупомянутой активности стали террористические действия “аль-Каиды” против США 11 сентября 2001 г., которые были беспрецедентными в истории этой страны.

Была сформирована международная коалиция, объявлена борьба с терроризмом, целью которой были террористическая организация “аль-Каида”, её руководящие круги, места расположения примыкающих к ней радикальных структур, лагеря военной подготовки, источники финансирования и тд.

Вследствие развёрнутой по всему миру борьбы против “аль-Каиды” был нанесен значительный ущерб структурам организации, её руководству и финансовым ресурсам.

Параллельно с ослаблением позиций “аль-Каиды”, в мусульманском мире также усилилось недовольство ведущейся борьбой и её стратегическим направлением. Даже внутри “аль-Каиды” прозвучала критика, направленная против руководства организации за бесцельные и недальновидные действия против США 11 сентября 2001 г., которые нанесли вред крайнему исламскому радикализму и проводящейся им священной борьбе. В этом контексте внутри “аль-Каиды” наметились противоречия между представителями старого и нового поколений, связанные с теми или иными проблемами. В первом десятилетии 21-го века и, в особенности, в течение второго десятилетия, в сфере крайнего исламского радикализма противоречия между старым и новым поколениями привели к формированию новых теоретических и практических подходов, которые наметились особенно в связи с развитиями вокруг Ирака.

До падения режима Саддама Хусейна, в Ираке были созданы все предпосылки для распространения радикальных идей и для деятельности радикальных суннитских структур. Первые шаги в этом направлении были сделаны после первой войны в Персидском

заливе (1991 г.), когда Садм Хусейн предпринял так называемую “Религиозную компанию” – политику утверждения и распространения ислама – целью которой было при помощи формирования единой баасской и салафийской повестки добиться стабилизации ситуации в Ираке, который оказался под международными санкциями.

До начала второй войны в Персидском заливе (2003 г.) американское правительство предприняло шаги для того, чтобы доказать, что режим Саддама Хусейна представляет угрозу для мира. Ирак обвинялся в создании оружия массового уничтожения и в сотрудничестве с “аль-Каидой”. Военные действия против Ирака начались утром 20-го марта 2003 г., а уже в начале апреля коалиционные силы, не встретив серьёзного сопротивления со стороны иракской армии, оказались на подступах к Багдаду, а 9-го апреля почти без сопротивления столица сдалась силам коалиции.

В некоторых радикальных исламистских кругах было отмечено мнение, что после свержения силами коалиции режима Саддама Хусейна, Ирак превратится в арену борьбы исламистов, где должен сконцентрироваться весь радикальный потенциал для ведения священной войны против “неверных” (коалиционные войска, шииты и тд.)

После появления коалиционных сил в Ираке в 2003 г., падения режима Саддама Хусейна и передачи власти в руки шиитов, маргинализированные суннитские круги продолжили активную борьбу против шиитских властей и содействующих им коалиционных сил. К этой борьбе присоединились также радикальные группировки, действующие в Ираке и за его пределами.

В происходящей джихадистской борьбе, в постсаддамовском Ираке, выделился иорданец Абу Мусаб аль-Заркави. Еще в 1990-ых гг. в Афганистане Абу Мусабу аль-Заркави удалось создать военный лагерь в городе Герат. Герат, как место сосредоточения и дислокации военного лагеря, также был выбран не случайно, так как географическое положение города (он находится на западе

Афганистана, близ границы с Ираном) позволяло избежать арены активных военных действий. Это давало Абу Мусабу аль-Заркави и руководимой им структуре возможность без какого-либо ущерба покинуть Афганистан, оказавшийся посреди зоны активных боевых действий коалиционных сил. В контексте разворачивающихся в Афганистане в 2001 г. военных действий и начавшейся борьбы против “аль-Каиды”, аль-Заркави решил перенести центр борьбы возглавляемой им джихадистов в Ирак.

Особое значение в деятельности аль-Заркави имел один из идеологов “аль-Каиды” нового поколения Абу Мусаб аль-Сури, который разработал задачи практического применения идеологии джихада в современных условиях, сделал анализ джихадистской борьбы в разные периоды истории, а также представил ее сильные и слабые стороны. Одной из идеологических основ действий исламистов в Ираке составила 113-страничная работа Абу Бакра Наджи, которая называлась “Идарат ат-Тауахуш” (Управление жестокостью), где были сделаны попытки выявить недостатки джихадистской борьбы. Абу Бакр Наджи указывал на то, что джихадистам необходимо пройти через период жестокости, охваченной некоторыми мусульманскими странами результатом джихадистской борьбы, конечной целью которой было бы провозглашение исламского государства.

Активная вовлеченность исламистов в проходящую в Ираке борьбу заставила руководящие круги “аль-Каиды” обратить внимание на Абу Мусаба аль-Заркави и возглавляемую им структуру, который уже с 2006 г. начал действовать в Ираке в качестве официального филиала “аль-Каиды” под названием “Исламское государство в Ираке” (ИГИ).

Между Абу Мусабом аль-Заркави и руководством “аль-Каиды” были замечены разные подходы и противоречия в выборе целей джихада и других тактических шагов. Организация ИГИ ставила задачу направления борьбы против “Ближнего врага”, то есть иракского правительства, структур шиитов, последователей шиизма

и против суннитов, которые не разделяли их взгляды. Подобная тактика подверглась критике со стороны руководства “аль-Каиды”, которое считало, что подобная позиция Абу Мусаба аль-Заркави ставит под угрозу борьбу сторонников джихда в Ираке, имеющим значительное шиитское население.

В течение 2006-2010 гг. позиции организации ИГИ начали слабеть. Это произошло, в основном, из-за убийства Абу Мусаба аль-Заркави (7 июня 2006 г.), а также вследствие возникшего в населённых суннитами районах Ирака движения “Сахуа” (пробуждения), в первых рядах которого были суннитские племена. “Ас-Сахва” была направлена против исламистов Ирака. К этим факторам добавилась новая американская политика в Ираке, расширение военного присутствия в этом контексте и помощь оказываемая шиитскому правительству. Более того, в 2010 г. организация ИГИ лишилась руководителей, заменивших Абу Мусаба аль-Заркави, Абу Умара аль-Багдади и Абу-Хамза аль-Мухаджира. Руководство организацией взяли на себя Абу Бакр аль-Багдади (нынешний халиф “Исламского государства” провозглашённый 29 июня 2014 г.) и Хаджи Бакр.

Активность действующей под патронажем аль-Багдади ИГИ свидетельствовала о наличии далеко идущих планов, обосновании в населенной преимущественно шиитами стране и сосредоточении борьбы джихадистов в заселенных суннитами районах Ирака. Более того, в 2011 г. в условиях углубления сирийского кризиса Ирак оставался вектором активности ИГИ, пытаясь максимально удерживать иракских исламистов от отъезда в Сирию, что ослабило бы потенциал исламистов в Ираке.

Лишь углубление сирийского конфликта и благоприятные условия, созданные для борьбы джихадистов, заставили ИГИ рассматривать Сирию как расширяющуюся и получающую широкий размах арену борьбы джихадистов, которая позволила бы ИГИ укорениться и в Сирии, тем более, что с начала 2012 г. здесь стал заметен приток исламистов со всех концов света. В середине 2012 г.

из Ирака в Сирию со стороны ИГИ был послан отряд состоящий в основном из не иракцев, позже ставший в Сирии влиятельной исламской радикальной группировкой под названием “Джабат аль-Нусра”. К этому прибавилась и финансовая и военная поддержка, оказываемая сирийскому оппозиционному лагерю, в том числе и исламистам, для организации борьбы против Башара Асада. Помимо этого, ИГИ привлекали также богатые энергоресурсами сирийские регионы.

В дальнейшем в сирийском конфликте были замечены противоречия не только в оппозиционном лагере в целом, но и разногласие между исламскими радикальными группировками, которые переросли в войну в том числе между ИГИ и “Джабат аль-Нусра”. Это заставило руководителей ИГИ Абу Бакру аль-Багдади и Хаджи Бакру лично приехать в Сирию в апреле 2013 г. и объявить, что “Джабат аль-Нусра” это группировка входящая в состав ИГИ, и что с этого времени две группировки объединяются в одну организацию под названием “Исламское государство в Ираке и Шаме” (ИГИШ).

Позже, организация ИГИШ вышла из состава “аль-Каиды” и пошла на явные стычки не только с “аль-Каидой”, но и с другими группировками, втянутыми в противостояние в Сирии.

С 29 июня 2014 г. ИГИШ провозгласившая себя “Исламским государством” (ИГ) открыто представила свои цели – создание в значительных частях Сирии и Ирака государства для всех мусульман. Объявление о создании государства (халифата), фактически, зарегистрировало реальность о фактически существующем исламском государстве, которое построено, или же строится в самом сердце арабского мира. В новые времена в мусульманском мире такого государства не существовало.

ИГ в подконтрольных ему сирийских и иракских территориях создало руководящие структуры, осуществляет фискальную политику, социальные программы, суд по законам шариата и тд.

Провозглашение лидера – халифа ИГ, созданного в центре мусульманского мира, и тот факт, что в эпитетах нового халифа Абу Бакра аль-Багдади подчёркивается его родственная связь с пророком Мухаммедом, повышает авторитет провозглашённого халифата и халифа в исламском мире.

ИГ имеет определённое количество вооружения и военный потенциал, который пополняется исламистами из разных концов света. Последние вовлечены в активные военные действия в Сирии и Ираке, пытаясь расширить территорию ИГ. Они готовы использовать свои способности и военный опыт при помощи существующих в других регионах крайне радикальных исламистских сетей.

ИГ распространяет своё влияние при содействии радикальных исламистских группировок действующих в разных регионах мусульманского мира, принимая их клятвы в верности халифу ИГ Абу Бакру аль-Багдади. За этим следует провозглашение вилайята на тех территориях мусульманской страны, где исламисты достаточно активны и где существует влиятельный радикальный исламистский потенциал, что может обеспечить эффективное распространение влияния ИГ на эти территории.

ИГ имеет финансовые ресурсы и, согласно разным экспертным оценкам коэффициент самофинансирования ИГ достаточно высок, следовательно прекращение финансирования структуры только внешними донорами не может развалить организацию с финансовой точки зрения.

ИГ придаёт большое значение идейно-пропагандистской активности. Для распространения своих идей и для придания им притягательности оно применяет современные технологии – высококачественные рекламные и информационные видеоматериалы, привлекает IT специалистов, пользуется интернетом и тд., которые раньше не использовались в таком объёме со стороны иных радикальных исламистских структур.

С начала провозглашения “Исламского государства” со стороны исламистов началось использование стратегии “Бакия ва Татамаддад” (Основаться и расширяться). Таким образом, были положены основы практических действий ИГ, которые подразумевали укрепление джихадской борьбы на контролируемых ими сирийских и иракских территориях, а также направление накопленного религиозного, идеологического, и военного потенциала в сторону соседних мусульманских и не мусульманских стран. Таким образом ИГ превращается в новую реальность и во влиятельный фактор. На январь 2016 г. ИГ самая богатая крайне радикальная организация и лидер джихадистской борьбы, затмевая даже “аль-Каиду”.

Sargis Grigoryan

**Islamic State
From Roots to the Proclamation of Caliphate**

Summary

The origins of the Islamic radicalism date back to the early stage of the Muslim faith. The radical Islamic ideas were manifested in the holy books of the Muslims – in Quran and Sunni that played a considerable role in the expansion of the Muslim territories and in the formation of the Islamic caliphate. The medieval crusades launched against the Muslim world and, in this respect, the new geopolitical situation created favorable conditions for the formation of a new wave of interpretations of the radical Islamic ideas in the Muslim environment.

